

ՀԵՅԹՈՒՆԻ



ՀԵՅԹՈՒՆԻ

ՀԵՅԹՈՒՆԻ

ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ

Բ Մ Ա Ն

Դ Ո Ր Ի Ն

1907

ԶԷՅԹՈՒՆՅԻ

Զ Է Յ Թ Ո Ւ Ն Յ Ի

Ա Ն Յ Ե Ա Լ Է Ն Ե Ի Ն Ե Ր Կ Ա Յ Է Ն

Բ. Մ Ա Ս Ն

Բ Ա Ր Ի Ձ

1903

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Խոստմանն հատեմաս ահա լոյս կ'ընծայեմ « Զէյթունի անցեալէն ու ներկայէն » աշխատութեանս երկրորդ մասը եւս որ կը պարունակէ Զէյթունի նորագոյն շրջանի մինչև մեր օրերը :

Առաջին մասին մէջ նկարագրուեցան Զէյթունի հերոսական կռիւները ու պատերազմները, իր ասանձնաշորհումները ու կիսանկախ դիրքը պահպանելու համար բրտած ճիգերը, Երկրորդ մասին մէջ՝ Զէյթունի պատերազմները այլ եւս դուրս կելեն իրենց անհատական ու լեռնական բնաւորութենէն և քիչ շատ ազգային նկարագիրը կստանան :

Զէյթունցին, իր կողմացած վիճակին մէջ այլ եւս անտարբեր չհանդիսանար ազգային ճակատադրին և Հայաստանի անցուզարձեւումն, ան ահանջ կը դնէ հեռաւոր արձագանքներուն, իր հայրենակիցներու ցաւերուն, ազատութեան ազագակներուն և իրերու անսղոք բերումով կը մանկ ազգային բնոյհանուր շարժման ալիքներուն մէջ, միշտ պահելով սակայն իր յստուկ պատերազմողի մասնաւոր գրոշմը :

Իրր ահանաատն և մասնակից ջանացի, այս նոր մասին մէջ, ամիսի և լման գծերով տեղեկադրել ազգային ազլաններուն դուրսթաց Զէյթունի վերջին մեծ պատերազմը, անոր արիական զմտգրութիւնը Մուսթաֆա Բէմզի և Էահէմ Փաշաներու ահեղ բանակին դէմ, և այդ պատերազմին հերոսական գրուագները, սրոնք, կարծես, ազգային բնոյհանուր սուղի ժամանակ, կու գային միութարութեան և սիրտանքի ճառագայթ մը կաթնեցնել հայ սրտերու :

վրայ: Եկարագրած եմ, թշնամուն պարտութենէն յետոյ, երոպական միջամտութիւնը, հաշտութեան պայմանները և քրիստոնեայ կառավարչի մը ընտրութիւնը:

Այսի լայնօրէն ծանօթացնելու համար Զէյթունի կեանքը հայ հասարակութեան, յարմար գաւեցի անհատական բաջազոր-
 օսութիւններու մէկ քանի օրինակներ գնել, բիշ մը ընդարձակ կենսագրութիւններով, ինչպէս Տէլի Քէշիշ Տ. Օհանի և Գաւթ վարդապետի սրանք աւելի լոյս կը սփանն և որոշ գաղափար կուտան Զէյթունցիի ընտրութեան և յանդգնութեան, անսոց ասպետական ըմբոստեան, կրօնական համոզմունքին վրայ՝ այնպէս որ այդ անհատական պատկերները կարող են առատ նիւթ և բազմատեսակ ընդհանուր եզրեր հայթայթել — միացնելով միջնակարգ կազմութեան հետ — Զէյթունը ուսուցմասիրել ուղղորտուն համար: Աշխատած եմ նաեւ տեղական բարքերու մասին, ճշգրիտ ծանօթութիւններ առ: Զէյթունը զիս նահագետական շրջանին մէջ է, բայց կամաց կամաց սկսած է արդէն մեղմացնել իր կարգ մը աւանդական խտապահանջութիւնները՝ սրանք անհամապատասխան են ժամանակի սղուն և մարդկային ընտրութեան:

Երկայ բազաքական հանգամանքները որքան որ տեսն, որքան տան Տաճկաստանը սխիւթ թշնամի կը հանդիսանայ իր հոգատակ քրիստոնեայ ազգերուն, Զէյթունը կայ ու կը մնայ «արծիւներու բոյնը», անվիանդ, անպարտելի, ջերմ ախոյեան իր գարաւոր իրաւունքներուն, և ուր միշտ պիտի լսուի Զէյթունցի «հայ բաջորդին» լիսնարձականդ ցնծութեան երգը:

«Թրքացի մայրեր թող լան ու գուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն»:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

ՅԱՌԱՋԱՐԱՆ.

Զէյթունի 1895 պատերազմին պատճառները	1-7
Գարանիւզ-Տէրէի ժողովի մանրամասնութիւնը	7-35
Հայոց կոտորած, Ահաբեկչական զործողութիւններ	35-38
Գլ. Ա. Բերդիզ Չայի պատերազմը	39
Գլ. Բ. Զօրանցի գրաւումը	40
Գլ. Գ. Զուգուր-Հիսարի գրաւումը	44
Գլ. Դ. Էսյուօ սլուի յարձակումը Անտրանի վրայ	45
Գլ. Ե. Էնիսէ Գայէի բլուրին կռիւր	48
Գլ. Զ. Կասանի վրայ յարձակում	50
Գլ. Է. Էզիուէրի պատերազմը	54
Գլ. Ը. Սանաուխի կռիւր. գերեաց սպանումը	56
Գլ. Թ. Բէճիլի փաշայի պահանջումները	59
Գլ. Ճ. Զօրանցի սլուումը	60
Գլ. ՃԱ. Վանքին ուղղակիութիւնը, Էնի-Տիւնեա Էզիա	62
Գլ. ՃԲ. Հայ թնդանօթածիղը և թուրք թնդանօթածիղը	64
Գլ. ՃԳ. Աւի Պէյի բանակին խորտակումը	66
Գլ. ՃԴ. Պատերազմին հետեւանքը	68
Գլ. ՃԵ. Զէյթունի հաշտութեան պայմանագիրը	71

Երգ մը՝ Զէյթունի շէրտով 77. — Երգ Զէյթունի 79. — Զէյթունի Տէսթանը (Թուրքերէն) 80. — Զէյթուն մէրսիէսի (Երկրորդ աւսթան թուրքերէն) 91. — Զէյթունի աւսթանը (հայերէն թարգմանութիւնը) 98. — Զէյթունի դովասանքը (հայերէն թարգմանութիւն) 109. —

Գլ. Ա. 1.	Զէյթունի պատմութեան առաջին ձգտութեանը.	116
	2. Հին գաղթականը Զէյթունի մէջ 118. — 3. Սուրենեան, Էպղուպեան, Իէնիախանեան և Շովրոյեան գերբաւաստանք 119. — 4. Յուցակ Զէյթունի ամբողջ պատերազմներու և դէպքերու 121. — 5. Զէյթունի շուկան և Զէյթունցիներու առօրեայ կերակուրները ու իրենց առողջապահութիւնը 123. — 16. Զէյթունի անտեսական դիճակը 128. —	
Գլ. Բ.	Զէյթունի նշանաւոր խոնտ ըստած անտառը, Ռիտատեղի մը, Մեղուի փեթակներուն հովիտը և խաշնարածներու նշանաւոր Էպլլան (արտաւայր)	130
Գլ. Գ.	Զէյթունի ընտանեկան սովորութիւններ	134
	1. Մկրտութիւն 134. — Խնամախօսութիւն, նշանադրութիւն, Պսակ և Բարդաղկան խրատ 135. — Հարսանիքի մը ընդհանուր ծախքին միջին հաշիւը 140. — Մահտան և Թաղման սովորութիւններ 147. —	
Գլ. Դ. 1	Ձեռնադրութիւն և կարգապահութիւն Զէյթունի բահաններուն.	150
Գլ. Ե.	Զէյթունի շրջակայ տեղեկէյիները (աւտակներ).	163
Գլ. Զ.	Զէյթունցի համբաւաւոր Տէր Օհան (Տէլի Քէշիշ) Ղափուզը Պէղյուքեանի կենսագրութիւնը.	175
Գլ. Է.	Կենսագրութիւն և գործունէութիւն Դաւիթ վարդապետի	198
Գլ. Ը.	Մանաւոր դէպքեր, Կեսարիոյ ուխտաւորք.	206
Գլ. Թ.	Քիլիս քաղաքի մէջ կիրիւնցի Քիրքեան գերբաւաստանի սանկիտը և Զէյթունցիներու ձեռքով աղատուիլը.	218
Գլ. ժ.	Զէյթունցոց Աֆշարներուն հետը Չինչին Պողազըն (Տանճի) բերդի կիրճը) ունեցած կռիւներուն պատմութիւնը.	221
Գլ. ժԱ.	Զէյթունցի Ռիտատեղիներ.	229
Գլ. ժԲ.	1877ի Զէյթունի պատամբական շրջանը.	231

ՎԵՐՁԱՐԱՆ

Գլխաբ մը ֆրնուզի մէջ	232
Սոյլ կաթողիկոսներու անուններուն ցանկը.	237





Յրևուզի վանահայր Տ. Բարրոդիմեոս վարդապետը :

ՉԼՅՔՈՒՆԻ 1895Ի ՊԱՏԵՐԱԶՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մենք այս ատերով պիտի աշխատինք քիչ շատ թուեի այն գլխաւոր պատճառները, որոնք ցաւալի անթիմ եղան ՉԼՅՔՈՒՆԻ կրկին պատերազմի թաւադարեւմ գարձնելու, 1895 թին ։ ՉԼՅՔՈՒՆԻ մէջ կ'իշխէին մի շարք Գալմագամներ, որոցմէ մէկն եղաւ թեւփեք պէյ, որուն գազրելի բնակարանական գործոց մանրամասնութեանց մէջ չ'իջնալու համար, պէտք է ըսենք՝ որ սա պաշտօնանկ եղաւ կիլիկիոյ հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսի ազգու բողոքներուն շնորհիւ և երկար ժամանակ անգործ թափուցեց Հալէպի փոխոյններուն մէջ ։ Այս բանը կատարուեցաւ 1893ին ։ Ասոր տեղ յաջորդեց Պէյրանու Գալմագար, որ 12 օրէն յեանոյ հիւանդութեամբ մեռաւ, առանց իր խկահան գոյնը կարենալ ցոյց տալու ։

Վերջինիս փոխանորդարար յաջորդեց տեղւոյն գատին (թաւրբաց շէրքի օրինաց հսկողը, կրօնապետ) ։ Այս մարդ 30 տարեկան մոլեանդ թուրք շրջանաւարաներէն էր, սա երբ կրօնապետութեան հետ մէկտեղ գալմագամութիւն ալ ձեռք բերաւ, իւր խորամանկ անդթութիւններով՝ նախորդները գերազանցեց և նորանոր տուրքերով և այլանդակ խիստ պահանջներով սկսաւ նեղել ժողովուրդը ։ Սա թէ իւր լրբութեամբ և թէ զօրբերի թող տալով ջանաց փճացնել ՉԼՅՔՈՒՆԻ մարտը բարոյականը և բնասանկան պատիւր որոնք շատ բարձր տեղ կը բանին ՉԼՅՔՈՒՆԻ մէջ ։ Այս բաներուս իրիւ ազացոյց բաւական է մէջ բերել մի բանի դէպքեր, որոնք կը կատարուէին կամ այլ Գատի-Գալմագամի ձեռքով և կամ անոր անուղղակի թելադրութեամբ ։ Այս գատին այնքան չարացաւ իւր հարկահաւարութեան մէջ, որ մի ազբաթի երեք էջ վերցուց, որոնց ամեն մէկը կ'արժէր 200ական գահեկան, և ի հաշիւ տէրու-

Թեան գանձուն երեքը մէկտեղ ծախեց Մարաշցի Թուրքերուն 50
 դաճեկանով: Զէյթունի Ազգ. խառն ժողովը արդար գայրոյթ զգաց այդ
 բանի համար և Առաջ փոխանորդ Տ. Կարապետ քահանայի մի-
 ջնցաւ բողոքեց զատիին թէ « այդ բանը շատ մեծ անգթութիւն է » .
 և պահանջեց որ այդ էջեր տիրոջ հազարձուին . իրենք կը վճա-
 րեն աղքատի 50 դրշ. պարտքը . հակառակ պարագային սպառնա-
 ցան զատիին՝ որ « եթէ իրենց այդ օրինաւոր պահանջքին չ'լսէ՛ ,
 մեծ փորձանքներ կուգայ իւր կանաչափածած գլխուն » : Սակայն
 զպահանջած դատին պատասխանեց . « ես հրահանգ ունիմ իմ
 սիրելի թագաւորէս՝ այդպէս վարուելու , որպէս զի զուր ակ զբը-
 գուիք մի խլրտում հանէք , այն ատեն թագաւորը բարկանայ և
 զՁեզ ալ Սասնոյ տառտոսին (վիճակին) հասցնէ » :

Ղաթին յիշեցնելով Սասնոյ կոտորածի թալմ ինդիրը՝ երկու
 գլխաւոր հրէշաւոր միտք ունէր , նախ՝ ի սրտէ կը ցանկար խոռ-
 վաթեան սը պատճառ գանել և Զէյթունցիները ջարկել տալ , եր-
 կրորդ՝ կը մտածէր այսպէս սարսափեցնել անվեհեր Զէյթունցիները ,
 որպէս զի իւր շարագործութիւններուն աչք փակեն և լսեն : Սակայն
 այս անիւր և լիրբ յայտարարութիւնը հակառակ սպաւարտութիւն
 թողուց քաջ Զէյթունցիներու վրայ : Արոնք զատիի սճրագործ
 բերնէն կրկին լսելով Սասնոյ նահատակներու կոտորածը՝ վրէժ-
 ինպրութեամբ բորբոքուեցան և սկսան վիճոցներու վրայ մտածել :
 Այս զէպքը պատահեցաւ 1895 թուականի Մայիս ամսուն , թէև
 հայեր կը մտածէին իսկոյն լաւ պատասխան սը տալ զատիի այդ
 շփացած պատասխանին , սակայն ինչ ինչ պատճառներով կը սպա-
 սէին իրենց ցանկալի Գեկեամբեր ամսուն : Մանաւանդ քաղաքական
 հորիզոնի վրայ կ'երևնային լուսատու աւպեր , որոնք կը ստիպէին
 անհամբեր Զէյթունցիները մի քիչ ալ սպասել :

Ինչպէս ըսինք , թէ՛ տեղական այդ շարագործ զատիի , թէ՛
 կառավարական այլևայլ անդամներու և թէ՛ զօրքերու ձեռքով ան-
 պակաս էին քսամեցուցիչ զէպքեր , որոնք պայթեցուցիչ սոււրներու

նման խոստովանանքի և ապստամբութեան կրակը կը վառէին Չէյ-
 թունի խաղաղ ազգաբնակչութեան մէջ : Ղատիի բռնակալական
 գործէն քիչ յետոյ առաջ եկաւ մի ուրիշ գեպը, որ իր գրպոնէ պատ-
 ճաս պահաս չէր առաջինէն : Տեղւոյն Մարմխախրիի (Սրբունական
 դանձու տեսուչ) մեծ որդին մի անգամ Ալի ըստած աղբիւրի վրայ,
 որ կէս ժամ հետի է քաղաքէն, ակնարկներով և սուլոցներով կ'ա-
 նարդէ Չէյթունցի մանկամարդ հարս սը, սակայն արիասիրտ
 հարսը պարտախնները (կուժ) վար գնելով կը սկսի հայհոյել և բար-
 կոճել թուրքը, բնկով. « լիբը սրիկայ, ինչ որ կը բերէք ուրիշ տե-
 դեր մեր բոյրերու գլուխ, կ'ուզէք այս տեղ ալ գործ գնել, չ'զի-
 տէք որ այս տեղ Չէյթուն է և ձեզ պէս շուներուն երես չ'ենք
 տար մենք, սպասիր, մարդուս բնմ, տես ինչ կը խաղայ քու գըլ-
 խին » : Հարսը շիտակ տուն կը գանայ և եղելութիւնը կը պատմէ
 իւր էրկան : Մարդը զինուելով աղբիւրի գլուխ կը վազէ լիբը սրի-
 կան պատժելու : սակայն նա շատոնց չքացեր էր այն տեղէն :
 Էրիտասարդը չի հանգստանար, գիշեր ժամանակ գաղանի Մարմխ-
 ախրիի տունը կը մտնէ և պատէն կախուած բոլոր զէնքերը կը
 հաւաքէ և իւր տունը կը տանի : Ասիկայ մեծ ցոյց մ'էր որ բնկ
 կ'ուզէր, եթէ մի անգամ ալ այդպէս լրբութիւններ բնկու ըլլար,
 գձեզ անով տեղով սրէ կ'անցնեմ : Ասոր համար ալ կառավա-
 րութիւնը հետեւեալ օր՝ կարող սը անմեղ երիտասարդներ բանտար-
 կեց : Ան տանն հարսի էրիկը կառավարութեան ներկայացաւ և
 Մարմխախրիի սղուն անբարոյականութիւնը մէջտեղ բերելով, ըստ
 որ զէնքերը ինքն գողցած է : Ղատին բարկացաւ և զինքը բան-
 տարկեց : Ազգայիններ պահանջեցին որ Մարմխախրիի սղան բան-
 տարկուի և կամ արքսորուի այդ տեղէն, սակայն դատին դարձեալ
 յամասեցաւ, այն տանն հայեր ի ցոյց՝ դատիի ննջասենեակի օ-
 ճախէն (բուխերիկ) հրացան պարպեցին, ձիուն պոչը կարեցին և
 սկսան հրատարակային կերպով ծագրել և անարգել զինքը, որ
 վախէն մի շարաթ հիւանդացաւ և չէր կարող գուրս դալ : Սա-

կայն հազիւ անցաւ մի քանի շաբաթ, պատահեցաւ աւելի մեծ
զէպք սը:

Զլլժունի Պօզպայիր թաղեցի Շերամեան Պօղոսի տղան, եր-
կրորդ անգամ ամուսնացեր էր մարաշցի մանկամարդ զեղեցիկ կնոջ
սը հետ. ինչպէս էր եղեր, այս կինը իւր բաց երեսութեամբ ծա-
նօթացեր էր տեղական քանի մի զինուորներու հետ: Տեղացի երի-
տասարդներ տեսնելով որ զինուորներ կը յաճախեն այս կնոջ տունը,
ձու աննելու պատրուակով, նախ քաղաքավարի կերպով կը բողբոջեն
դատիին և հազարապետին, որ զինուորները զգուշացնեն և այլ կինն
ալ արքորեն Մարաշ. սակայն դատին թուրքական վաւաշտութեամբ
կը պատասխանէ. « Ի՞նչ ընեմ, միթէ զինուորներ ալ մարդ չեն, եթէ
այլ կին չի սիրեր զինուորներ, թող չթողու սը երթան իւր տուն »:
Վերջապէս երբ հայեր շատ կը պնդեն, դատին կը պատասխանէ
որ « ես տրիշի կինը չեմ կարող արքորել »: Հայերը այս տխուր պա-
տասխանը աննելով դատիէն, կ'ըսեն. « լաւ, սպասեցէք թէ ինչ
կ'ընենք »: Չանցնիր մի քանի օր, հայ երիտասարդներ այդ ան-
մէջ կը բռնեն մի քանի զինուորներ և մի լաւ դաս տալով (ծեծելով)
կ'ըսեն, « զէ՛, գացէք ինչ սը տեսաք պատմեցէք ձեր ազաններուն »:
սակայն զինուորները իրենց վախէն մէկու մը չեն պատմեր:

Անցնելով քիչ մը ժամանակ, զարձեալ անբարոյականութեան
շարունակութիւն կը տեսնուի: Այս անգամ Զլլժուցիք զիմե-
ցին վերջնական նպատակին. մի քանի երիտասարդներ հաւարուե-
լով զազանի, գիշերով կրակ կը ձգեն այդ տունը այրելու. ըն-
տանիքը լեղապատաս դուրս կը փախչի, իսկ երեք երիտասարդ-
ները, « հրդեհ է » ըսելով կը սկսին տունը հիմնիվեր քանդել, որ-
պէս զի կրակ չը տարածուի միւս տուներու վրայ: Երկրորդ օրը
կառավարութիւն բռնելով ինգիրը՝ իւր սուր հոտատութեամբ այն
եղբակացութեան կուզայ որ տեղացիներ գիտմասը այրած են այդ
տունը՝ որ ազատին այլ կնոջ զարշնչի ներկայութենէն: Այս բանը
կառավարութիւն իրեն նախասինք համարելով՝ բռնեց 10-12 աչքի

կննդ կրիստոսարդներ, բանտարկեց, բսելով. «երբ հրդեհ էր, ինչո՞ւ մեզ լուր չտուիր» : Ասոր վրայ հայեր աւելի ևս յազուեցան և սկսան այլևայլ խիստ բողոքներ և ցոյցեր բնել. վերջնապէս յաջողեցան այդ փճացած կինը հեռացրնել Զէյթունէն, սակայն երիտասարդները Հիրցան ազատել բանաւն : Հայերը կառավարութեան հետ այսպէս լարուած էին երբ դուրս եկաւ մի աւելի դրգուիչ խնդիր :

Զէյթունի դօրքերու հազարապետ Ճիւղիմ էֆէնտին, թէ հայերու համարձակ բողոքներէն վախցած կամ այլ ինչ չար դիտաւարութեամբ, բարձրագոյն հրամանաւ, սկսաւ գործնոցի շարս կողմը մեծ խրամներ բանալ : Հայեր ուժգնութեամբ բողոքեցին այս բանի դէմ. բայց երբ իրենց ձայնը անլսելի մնաց, սկսան յայտնի ցոյցեր բնել : Ասոր վրայ Մարաշի կառավարիչը՝ հայերը հանդարտեցնելու կամ լաւ ևս է բսել, բնացնելու համար, թէ՛ դատին, թէ՛ պաշքեաթիպը և թէ՛ Մարմխտիւրին պաշտօնանկ բրաւ. կամ աւելի ձիւղ, աւելի բարձր պաշտօնով ուրիշ տեղ դրկեց : Ասոնց յաջողեցին բոլորովին նոր պաշտօնեաներ, զատիի տեղ Գայմագամ եկաւ Ալեի պէյ : Այս նոր Գայմագամի օրով մի քանի շաբաթ հայեր յոյս ունեցան որ խողաղութիւն պիտի տիրէ Զէյթունի մէջ, բայց շուտով համոզուեցան որ բոլորովին սխալներ են : Այս Գայմագամն ալ սկսաւ ծանօթ զատիի փոզը հնչեցնել և այլևայլ միջոցներով ժողովուրդը նեղել : Այն ստան Զէյթունցիք իրենց վաղմի սովորութեան համաձայն սկսան այս Գայմագամի և տեղական կառավարութեան գէմ ալ յայտնի և համարձակ ցոյցեր բնել, որոնք թիչ ժամանակէն այնպիսի բարդ դրութեան հասան, որք պատմութիւնը մկրտեց Զէյթունի 1895ի պատերազմ անունով : Այս միջոցներուն՝ այսինքն՝ Յուլիս ամսոյ վերջերը, երբ հայ ժողովուրդը այսպէս բորբորած և լարուած դրութեան մէջ էր, Արեգին գիւղը յայտնուեցան մի քանի օտար հայեր : Մարաշի կառավարութիւնը երբ հոս ասաւ որ օտարականներ կան Արեգին գիւղի մէջ, իր

Գրք—սէրգար (չրջան զինուորական) Չերքէզ Ասլան պէկը խումբ
 ար ստաիկաններով հոն գրկեց, կերսով սը այդ օտարականները
 ձեռք բերելու համար: Ասլան պէկ Օդոստոս Ծին՝ եկա Արեղին
 տուրք պահանջելու պատրուակով, գիւղացիներ պատասխանեցին՝
 որ «այժմ գրամ չունինք, երբ ունենանք՝ կը վճարենք»: Աս-
 լան պէկ բարկացաւ և ուղեց ծեծել և բանտարկել խաչեր բէ-
 հեան (գիւղապետ): Տեղն է բսել որ այս խաչեր բէհեան հաւաք-
 ւաւոր կարապետ բէհայի սրբին էր, որ 1862 թուին մեծ անսն և
 համբաւ հանած էր Ազիզ փաշայի պատերազմին, Քէթման գիւղի
 մէջ. (երկար ժամանակ է յեր ասոնց տունը և թէ ներկայ ար-
 ժանաւոր յաջորդ խաչեր բէհեան մեծ համարում կը վայելէին
 ժողովրդէն): Ահա թէ ինչու բոլոր Արեղինցիներ սաք ելան և Աս-
 լան պէկը անարգանօք գիւղէն վանեցին, իսկ երբ Ասլան պէկ
 բացարձակ յայտնեց որ այդ սեղ օտարներ կան և պէտք է յանձ-
 նուին իրեն, այն ասան գիւղացիներ բսին. «մենք այժմ ոչ տուրք
 աւրու ժամանակ ունինք և ոչ ալ կրնանք մեր սիրելի հիւրերը ձեռ
 անգութ կատախարութեան ձեռք յանձնել, աւելի լաւ է բոլորս
 միասին ջարդուինք բան թէ այդ վատութիւնը կատարենք»: Ասլան
 պէկ կորագլուխ և ամօթապարտ ետ գնաց:

Անցաւ մի բանի շարաթ, Օդոստոս ԾՕին խաչեր բէհեան կրկին
 Չահան գետի եզերքը թեթեւ ընդհարում մը ունեցաւ Չախալցի բ-
 սուած Աշիրաթ թիւրաբու հետ, որոնք Ասլան պէկի թեղադրու-
 թեամբ գաղանի խումբով եկած էին Հայոց գրութիւնը լրտեսելու
 և օտարահայերը ձերբակալելու համար: Փակագծի մէջ պէտք է
 բսենք՝ որ այս թիւրքեր հայոց հնազանդ էին և միշտ ձի, կով
 ընծայելով հայերուն, թոյլատուութիւն կը ստանային Եայլա (Ամա-
 րանոց) գնալու: Սակայն այժմ Մարաշի կատախարութեան զրդու-
 մով կ'ուզէին նոր պատուոյ և փառքի հասնիլ:

1. Պէտք է գիտնալ որ մենք ամսաթիւեր կը գործածենք մեր ամբողջ պատմու-
 թեան մէջ ըստ հին տոմարի:



Հագոր իշխան Գօրոյեան :

Այս միջոցներուն՝ Արեղին գիւղի և Չահան գետի եզերքի գէպքերը և այն տեղեր երևան ելած նորեկ օտարամուսնիքու շուրջ խորտուտ և իրար անցում ձգած էին Զէյթունի ժողովրդեան մէջ: Չորս իշխաններու ներկայացուցիչ պատահանիլ ժերունի Ծօլուրջեան Հազոր (Ղազար) իշխան իրեն կանչելով Ֆրնուղի փոխ վահանաչար Տ. Բարթողիմէոս վարդապետը, գաղտնի հրահանգներով գրկեց ի Գարանլըբ-տէրէ ըսուած տեղը՝ նորեկներու հետ բանակցելու և ճշգրիտ եղելով թիւեր իրեն տեղեկադրելու համար: Վարդապետը հնազանդեցաւ ժողովրդական այս քաջարի իշխանի հրահանգին և գաղտնի գնաց ի Գարանլըբ-տէրէ:

ԳԱՐԱՆԼԸԳ-ՏԷՐԷԻ ԺՈՂՈՎԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻԻՆԸ

Զէյթունի գիւղապետաց հաւարուի ի Գարանլըբ տէրէ՝ 1895 Սեպտ. 16ին օտարահանաց հարցաքննութիւնը. Գիւղապետաց խորհրդակցութիւնը. թիւերի հետ պատերազմելու որոշումը. Տէր Բարթողիմէոս վարդապետի ստեղծարարութիւնը:

Մի կողմէ 95-ի սկիզբէն ի վեր Հալէպէն մինչև Զէյթուն Հայոց վրայ ի գործ գրուած թրքական անարդար դատաստանը և հարստահարող միջոցը, միւս կողմէ հայարնակ գաւառաց մէջ թիւրք ժողովրդեան կողմէ ի գործ գրուելու համար Բ. Գանէն գրուած խեղր-ժութեանց հրահանգներ՝ թէև սթափեցուցած էին Զէյթունցիները և տեղի տուած խորհելու իրենց երկրի պատուոյն և ազգութեան վրայ, մասնաւորապէս ստեղծելու 6 հայ օտար հիւրերուն գալուստը

1. Գարանլըբ տէրէ (մուծ ձոր) ըսուած տեղը Զէյթունէն 6 ժամ հեռու՝ հարաւային կողմէ է:

աւիթ առին Հագար իշխանին՝ Բարթուղիմէոս վարդապետը խնկելու
Ձէյթունի գիւղապետները՝ հաւաքելու ի Մոթ ձոր, հասկնալու
հաւար անոնց պաշտօնը և խորհելու իրենց վերջին կացութեան
վրայ: Ահա թէ որոնք էին ի Մոթ Ձոր հաւաքեալք:

Պրնուգի վանահայր Տէր Բարթուղիմէոս վարդ. 40 Պրնուգի
ներսի, Արեղին գիւղէն խաչեր քահա՛նա՝ 30 Արեղինցիներով, Ա-
ւարալ գիւղէն Գոճահան Բարութիւն Աղա 30 Աւարկալցիներով:
Հոն առեան կազմեցին 100 անձինք, իրենց նախագահ ունենալով
Պրնուգի վանահայր Բարթուղիմէոս վարդապետը և անհնապետ
Աւարկալ գիւղի Գոճահան Բարութիւն Աղան:

Ասանք բացուած էր Տ. Բարթ. Հօր Ս. աղօթիւք:

Հաւաքման նպատակն էր, ինչպէս վերև ըսինք, կացութեան
վրայ խորհիլ, և գործելու եղանակը վճնել:

Ըստ այսմ՝ իրեն սկիզբն այս խորհրդակցութեան՝ ժողովը պատ-
շած դասելով նախ հասկնալ 6 օտարականաց սիլ ըլլալը, որի՞
զալը և ինչ պաշտօն և նպատակ ունենայր, կանչեց զանոնք իւր
ներկայութեան:

Ասանապ. Յար. Աղա, օտարականաց ուղղելով խօսքը.

Բարի եկեր էք. Գուր սիլ էք, պարոններ.

Գաղափարական բարոգիչք: Մենք ընկերութեան մը գործիչ-
ներն ենք.

Յ. Աղ. — Քանի՞ անձ էք.

Գ. — Վեց.

Յ. Ա. — Ո՞ր ազգութեան կը պատկանիք.

Գ. — Հայ ազգութեան.

Յ. Ա. — Հայ ազգութեան ո՞ր կրօնին.

Գ. — Հայաստանեայց, այն է՝ Ս. Լուսաւորչի ուղղափառ կրօնին.

Յ. Ա. — Անունիդ ի՞նչ է.

Գ. — Աղասի, Հրաչեա, Ապահ, Նշան, Մլէհ, Կարապետ.

Յ. Ա. — Պետերնիդ ո՞րն է.

- Գ. — Աղասին է.
- Յ. Ա. — Դո՞ւս ես ասոնց Պետր (Աղասիին ուղղելով խօսքը).
- Գ. — Այո, ես եմ.
- Յ. Ա. Անուննիդ կե՞ղծ, թէ ստազանի անուն է. ճշմարիտ խօսէ՞ր.
- Գ. — Աւազանի անուն է.
- Յ. Ա. — Ամենքդ մէկ բաղարէ, թէ ստորեր բաղարնեք է՞ր.
- Գ. — Տարրեր բաղարնեք.
- Յ. Ա. — Ո՞ր բաղարնեքն է՞ր.
- Աղասի — Այդ մանրամասնութիւնները չենք կրնար յայտնել, որովհետեւ ընկերութեան երբուեալ անդամներն ենք.
- Յ. Ա. — Էս կասկած սենիմ՝ Չեր անունաց ճշութեան վրայ ալ, թէև ճշմարիտ խօսքը հարցուցի.
- Աղասի. — Անուննիս ուղից խօսած ենք, բայց ծննդավայրնիս չենք ըսեր.
- Յ. Ա. — Ծննդավայրնիդ անյայտ պիտի մնայ, փոյթ չէ, թէ անուննիդ ալ լինի ուղիղը կամ կեղծը : Ըսիք թէ մենք ընկերութեան սր քործիչներ ենք, ի՞նչ ընկերութիւն է այդ և ո՞ր կը գրասուի.
- Աղասի. — Լ՛սնո՞սն, Անգլիոյ մայրաքաղաքը.
- Յ. Ա. — Ի՞նչ է այդ ընկերութեան նպատակը, ո՞վ է անոր վարիչը.
- Աղասի. — Նազարէկեան և նպատակն է ազգը փրկել թուրքի գերութենէն.
- Յ. Ա. — Ի՞նչ եղանակաւ.
- Աղ. — Դրամ հաւաքելով, և ի ձեռն առաքելութեան հայկական գաւաաններու հայերուն զրկելով, որ զէնք և ուսեստ գնեն, և այս կերպով զօրացած՝ թրքական բնութեանց զիմազրեն.
- Յ. Ա. — Մինչև ո՞ր աստիճան.
- Աղ. — Մինչև սպաննուելու և նահատակուելու աստիճան.
- Յ. Ա. — Լա՞ւ, հայր ունեցաւ զէնք և ուսեստ և անց անց

բննաւոր թիրքերու հետ մարանչելով սպաննեց և սպաննուեցաւ ,
հետեանքը՝

Աղ. — Չորս մեծագոյն պետութիւնք՝ հայոց օգնելու խոստումը
տուած են, թրքական լուծը խապստ թօթափելու և տաննձին կտա-
վարուելու համար.

Յ. Ա. — Ո՞ր շորս պետութիւնք.

Աղ. — Ռուսիա, Անգլիա, Գաղղիա, և Իտալիա.

Յ. Ա. — Շատ կանոնաւոր և օգտակար ընթացք, եթէ են-
թադրութիւն չէ՞ ինձ սակայն անհաւաստի կը մնայ Եւրոպական
շորս պետութեանց հայոց ի նպաստ գործելու կարողութիւնը.

Ազատի. — Ի՞նչ կ'ըսես, ուրեմն աշխարհալարութեան և քա-
ղաքականութեան վրայ լուր չունիք. այսօր բոլոր Եւրոպա Հայկ.
ինգրոյն վրայ կը խորհի և յիշեալ շորս պետութիւնք միարան անոր
յաջողութեան օգնելու արամաղիր են. արդէն Իսկէնաէրունի ծովա-
խորշը լեցուած են Անգլիայ մարտանաւերով և հազարաւոր զօրքե-
րով, ո՞չ սպաքէն զմեզ զրկողն այլ այն է.

Յ. Ա. — ՉՉեզ Անգլիան զրկեց.

Աղ. — Ոչ միայն Անգլիա այլ և վերոյիշեալ պետութիւնք
միանդամայն.

Յ. Ա. — Ըսել է թէ պատգամաւոր ալ էք.

Աղ. — Այո՛.

Յ. Ա. — Ո՞ւր են ձեր պաշտօնական գրութիւնները.

Աղ. — Թուրքիա մտնողին այրպիսի գրութիւն կրելը վտան-
գաւոր է և բնուած ատենը՝ պատկանեալ պետութեան նախապինք
բլլալով՝ հարկ չէ տեսնուած. այլ մօտ օրէն կ'ապացուցտի այն,
երբ հայկական ընդհանուր շարժուք տեղի ունենայ և փոքրիկ պա-
տերազմ մը հետեի, շորս պետութեանց ծովային և ցամաքային օգ-
նութիւնը շուտ կը հասնի.

Յ. Ա. — Չեր յատակագիծը բաւական մեծ է, որովհետեւ կ'ը-
սէք թէ ամբողջ Ազգը պիտի փրկուի. այդ ամբողջ ազգը զինելու
և պարենաւորելու բաւական գրամ ունի՞ ընկերութիւնը.

Աղ. — Ընկերութիւնը շատ հզօր է, միլիոնաւոր դրամ ունի
և ամեն օր ալ հաւաքելու կրայ է.

Յ. Ա. — Ուրեմն դուք մեզի եկած էք իբրև պատուիրակ և
օգնական.

Աղ. — Այո.

Յ. Ա. — Ինչ կը հրամայէ մեզ ընկերութիւնը.

Աղ. — Զէնք ամենէ.

Յ. Ա. — Յետոյ.

Աղ. — Զէյթունի սահմաններու թիրքերը հալածել և սպաննել.

Յ. Ա. — Ըսել է պատերազմիլ.

Աղ. — Այո.

Յ. Ա. — Լաւ, բայց երբ պատերազմիլ հարկ ըլլայ թիրքին
հետ, աղէն սկսեալ ամեն ինչ կանխապատրաստելու է. այժմ ինչ
պէս կը յաջողի այդ, երբ մենք անպատրաստ ենք և պատրաստու-
թեան ժամանակը անցած է, մանաւանդ որ դրամ չունինք. երկու-
սաք մանանայտի պիտի կերակրուին պատերազմիկները.

Աղ. — Զեր ուզածը դրամ թող ըլլայ, երկու ամիս է որ մենք
Զէյթունի շուրջ դրամ կը սփռենք անինսայ և սակաւին պիտի
սփռենք. ահա նոր դրամ կը հասնի մեզի. և որպէս զի գաղափար
մ'ունենաք մեր հերոսութեան վրայ, կը յաւելունք թէ ցարդ 400
ոսկի ծախսած ենք.

Յ. Ա. — Այո, ըսած եմ, բայց ոչ 400 այլ 200 ոսկիի չափ.
այսինքն 100 ոսկի կէօյէրչիլէ (բօրակ) և 100 ոսկի ցօրեն ու
ազ. (աղը Արեղին գիւղի համար, և ցօրենը Ֆրնուզի): Հաճեցէք
հասկցնել ինձի, ինչ ըսել է հերոսութիւն, զոր պահ էր ստաջ
արտասանեցիք.

Աղ. — Ազգին անձնուէր, ամէն կերպով զոհուող բաջ և նա-
հատակուող ըսել է.

Յ. Ա. — Եւ այդ գո՞ւր էք.

Ա. — Այո.

Յ. Ա. Չարմանք, որ ի գմին ծնեալ սնեալ և անեալ Չէյ-
թունցին շունենայ այդ սնունը և դուք՝ այսօրեայ պլուզներդ ունե-
նաք, որ թշնամիի հանգեպ երած չէք տակաւին, ոչ մէկ գնդակի
կուրծք առած կամ վառօդի հոտ կլլած էք.

Աղ. — Այո, Յար. Աղա, շիտակ է ձեր բածը թէ Չէյթունցին
գործնական հերսս է, բան մը գոր Ազգը ընդունած է պարծանօք,
բայց և մենք ազգէն ընտրուած վաստահացուած և այնպէս կոչուած
ենք այս պաշտօնին, մեր պաշտօնը կը պարտաւորէ գմեղ ոչ միայն
խրատուեակ հայը, այլ և առաջնօրեկ անօր ամենավասնագաւոր պա-
րագային, թէև Հայկական այս ընդհանուր շարժում չպիտի ունե-
նայ այնքան վտանգաւոր պարագայ, ի շորհս անմիջական օգնու-
թեան Եւրոպական մեծագոյն պետութեանց, երբ մանաւանդ Եւրոպ.
պետութեանց օրէնքով, տէրութիւնը իւր հզատականց վրայ չպիտի
կրնայ դօրք զրկել կամ թնկանօթ դարձնել:

Յ. Ա. — Հը՛, հը՛, հը, ինպալս կու գայ Չեր խօսքին վրայ,
Սասունի վրայ զրկուածը դօրք և թնկանօթ չէր. Սասուն մարթինի
և թնկանօթի գնդակներէ չաւերուեցաւ. մաս մը կարիճ հայ՝ որ
Չեզի պէս գործիչներու՝ պատուիրակներու և հերոսներու հաւա-
տաց, այսօր թշուառ վիճակի մէջ, իւր մարտիրոսները, սունը, տե-
զը կուլայ, կը նսաի անօգնական. Եւրոպացիք ոչինչ չեն խօսիր
և Սուլթանը Չէրի փաշայի քաջութիւնը կը պսակէ նշանով:

Հոս Յարութիւն ազան հառաչ մը քաշելով և խորհրդաւոր
բտութիւն մը անցընելով, խօսքը ընդհանուրին ուղղեց և բտաւ.

— Երած հարցուփորձը ամենքդ լսեցիք. լսեցիք նաև թէ այս
պարաններ ո՛վ են և ինչ պաշտօնի ու կամքի տէր. սասնք պար-
զապէս կ'ըսեն մեզ՝ թէ նխթականապէս կ'օգնենք Չեզի, պատե-
րագմեցէք թուրքին հետ: Իմ կարծիքով թուրքին հետ պատերազ-
մելու հաշիւ չմնաց. նկատի ամենելով վերջին ինդիքները՝ սրանք
արդէն մեր խորհրդածութեան նիւթ եղած էին, և մեր նախնիքնե-
րուն սովորութեանց համեմատ, հարկ էր այդ շարիքները խափա-

նկրու միջոցներ ձեռք աննել. այն ալ գրեթէ գոհացուցիչ կերպով լուծուած կը համարուի : Պամասկացի դատրին , մարմխախրիս սղուն բարբարոս արարքներուն , որոնք մերև յիշուած են , վրէժն ալ լուծուեցաւ ուղածուս պէս : Թիւրքին հետ պատերազմելու ալ ոչինչ ունինք : Այս պարսններուն խօսքին նայելով մեզի կը մնայ ազգային պատերազմ մը կը թիւրքին դէմ : Թէև այդ խորհուրդը լաւ է , ինչ օգուտ որ նախնայատրաստութիւն չունինք . պարսնները սակայն մեզի կ'ուզեն համոզել որ եւրոպացիք թէ՛ գրամով և թէ՛ զինու զօրութիւնով պիտի օգնեն :

Եւրոպացիներու գրամին և անոնց օգնութեան վստահել , ըստ իս ձախորդ ձեռնարկութիւն է : Եւրոպացիք գրամով լեցուն շատ պանքաներ ունին , շատ գօրք և զէնք , շատ գրահատր և թընդանօթ ունին , ստոյգ է , բայց թէ սասնց բոլորը հայոց փրկութեան պիտի գործածուին , ինչպէս այս պարսններ կ'ուզեն հաստատել , բոլորովին անհաստատլի է ինծի համար և ինչպե՛ս Չեզմէ , կղայրներ , որ դուք ալ այդպիսի կեզմիքներու հաստացող չըլլաք : Եւրոպացիք ապստամբող ազգերու ապստամբութեան գործի համար գրամ չեն տար , բայց արկած հախներու օգնութեան կը վստահան , գիտենք , անոնց մարտանաւերը ծովերու մէջ , հոս հոն նաւահանգստի առջև կը կենան , իրենց կառավարութեան հրահանգաւ և ծովակալներու հրամանաւ՝ այսպէս կրնայ ըլլալ որ վերջին ի հրամանաւ Միջերկրական գանուած ըլլան կամ Իսկէնաւերունի առջև խարսխած . այս սովորական երեոյթին ուսուցիկ մեկնութիւն առ և ուղղակի Հայոց համար հոն եկած են ըսել , ըստ իս ոչ միայն աղայական այլ և յիմարական է : Ազգային շարժման միայն ազգը պարտաւոր է օգնել , որովհետև անոր օգուտը իրեն կը պատկանի . Ազգը՝ ըսելով , անշուշտ ազգի կարողները պէտք է հասկընալ : Իսկ անոնց համար Ազգային փրկութեան բնաբանը օտար կը հնչէ . վասն զի նախ իրենց զիրքը պէտք չունի այդպիսի նորութեան , և երկրորդ՝ իրենք շահերով կապուած ըլլալով թիւրքիոյ կառավարութեան հետ , ոչ կ'ուզեն և ոչ

կրնան՝ այրողի տնորոյ ար պրամ՝ առաջ : Պատճով այլ կարգի ազ-
գայնոց՝ որոնց օրինակ է մեզի համար 5000 տունէ բաղկացեալ
Հաճինք, նա ալ թխտող հաւերու նման հաւիթի զրայէն շերտեր, թէև
նխմապէս մեզմէ կարող է : Ինչ կ'ըսէք, աս ամենուն հետ մէկտեղ
հաւասանք թէ Եւրոպացիք զրամով կամ զէնքով կամ այս պա-
րոնները և միւս հեռաւոր ազգայինք նխմապէս և անձամբ կարող
պիտի ըլլան օգնել մեզի, սրտեհրազմի ընթացքին... Կրկնեմ թէ
ինծի համար այս կնխադրութեանց վառահիլ և գործի ձեռնարկիլ
մեծ սխալմունք է, և յոյժ ազիտարեր հեռեանք կ'ունենայ. վասն զի
մենք այսօր մեզմէ միայն 24 ժամ հեռաւորութիւն ունեցող մեզի
զրացի և նխմապէս մեզմէ կարող Հաճինքներուն շինք վառահիլ,
անսնկով իրենց անփութութիւնը, ուր մնաց հեռաւոր ազգայինք
կամ Եւրոպացիներ : Զգաստօրէն խորհեցէք, վասն զի հարսանիքի
և կոչունքի խնդիր չէ, մահու և կենաց խնդիր է պատերազսը : Տէր
մի արասցէ, եթէ մենք ջարդուինք, մեր արեան գինը փնտոող
չըլլար, և մեր ընտանիքներ ու զաւակներ թշնամեաց ձեռք զերի
կ'իյնան, կը լլկուին և կը թշուառանան :

Աղասի, Յարութիւն ազայի խօսքը ընդմիջելով, բռաւ . Էս
զԶեղ խելահաս մէկը կը համարէի, բայց այժմ խենթ մ'ես պիտի
ըսեմ :

Յ. Ա. — Պատճան...

Աղ. — Վասն զի մեղկութիւն, գասալքութիւն կը քարոզես՝ ի
բնէ քաջարի ժողովրդին :

Յ. Ա. Դու կը սխալիս, պարոն, որովհետև մեր ժողովուրդը
այնպիսի խօսքերով չ'իտուարաիր. բայց իրօք խենթ դուք էք, որ և
անուննիդ և քաղաքնիդ կը պահէք և Եւրոպական պետութեանց
կողմէ զրկուած պատուիրակներ և հերոսներ կ'առուանէք զձեզ :

Աղ. — Քաւ լիցի, եթէ խենթ կամ խարերայ ըլլայինք այսքան
զրամ չէինք վասններ այս սահմաններու ժողովրդեան վրայ :

Յ. Ա. — Զէյթունցիք Ձեր հիւրութեան վարձ պահանջող չեն :

Այլ. — Մենք իրեն վարձ գրամ սը տուած չենք, այլ բորակի, աղի և ցորենի: Ձէյթունցոց հիւրասիրութիւնը և իրենց նազակեանքան գրութեան հետեղ ըլլալը, մեր հետ բոլոր ազգը գիտէ, այլ մասին ըսելիք չունինք. շնորհակալ ենք Ձեզի:

Յ. Ա. — Ձէյթունցին 200 սոկիով չի բաւականանար և շնորհակալութիւն ալ չի մատուցաներ, պարոն, դուք լաւ խորհեցէք. 1500 տունէ կը բաղկանայ Ձէյթունք, 800 ալ Արեզին, Ֆրնուզ, Աւագիալ գիւղեր, ըսել է որ 2300 տունէ կը բաղկանայ ընդամենը, որոնք 6000 պատերազմիկներ կրնան հանել, ասոնց համեմատ սոկի կրնաք տալ. մարդազուտ առ նուազն 20 սոկի պէտք կ'ըլլայ. և 6000ին ալ 4000ը թէև հրացան ունին հին տեսակներէն, 2000 մարդ բաց կը մնայ, դանէ 5 տարի ասաջ սոկիները պատրաստ ըլլային որ հրացան գնէինք, պատրաստէինք, այն ատենը շնորհակալ կ'ըլլայինք. հիւս մազը դուր բերիր էք, ինչէն շնորհակալ ըլլանք, չէ որ ձախորդ շարժում ունեցար: Բնաւ ու լոնց:

Նախագահ Տէր Բարդուղիմէոս վարդապետը լոնցոց ներկաները և ներկայից ուղղելով խօսքը ըսաւ.

— Յարութիւն ազան լաւ պարզեց մեր համախմբութեան նպատակը. մենք այստեղ հաւաքուած ենք վերջին անցքերուն և լուրերուն վրայ խորհելու, այսինքն վճռելու թէ ինչ պէտք է մեզի ընել, եթէ նմանօրինակ անցքեր յաճախեն և առնուած լուրեր իրականանան: Այդ շատ ստոյգ է թէ թուրքը յոյժ կասողած է հայոց գէմ, և եթէ ձեռքէն գայ Սէլճուղեան բնաւորներէն թիմուրլէնկին Սերասախոյ մէջ ըրածին պէս հայոց արեաստ աւազան սը պիտի լինեն և մէջը լողանայ. թէև Յարութիւն Աղայի խրատներուն ալ կատարելապէս համաձայն եմ, այսինքն ձախորդ հետեանք չի կրելու համար խոհեմութեաւ շարժելու, բայց ինձի թուի թէ ասանց պատերազմի չպիտի կրնանք մեր երկիրը ապահովել թրքական բնութեան գէմ և խաղաղութիւն ունենալ այս մեր շուրջ տեղի ունեցած պարագաներուն հետեանք: Երբ մեր բոլոր Հայ եղբարց նկատ-

մամբ անդադար ի գործ դրած ըրդաց և թրքաց խզգժութեանց վրայ խորհինք, այն ժամանակ անշուշտ յոյժ աւելի իրաւունք անեցած կ'ըլլանք վրէժինդրութեան: Այս նկատումներուն վրայ կ'աւելնան ներկայ պարսններուն պատերազմելու համար մեզի ըրած խախանձանքը, մանաւանդ ուշադրութեան արժանի սա խօսքը. «Չիք պատերազմելու փոքրիկ մի ցոյցին պիտի հեանի արտաքին օգնութիւն և յոյսը հայ ազգին ազատութիւնը»: Հայ ազգին ազատութիւնը, «ասկէ սիրելի ինչ կայ մեզի համար. որ մէկիս սիրաբ կը վերցընէ, Սասունցիին նկած նախատինքը. չէ որ ան ալ մեր համազգին է, մեր արեւուկիցն է, մեր եղբայրն է, դոնէ անոր պրկժը լուծենք: Էս կ'ըսեմ, պատերազմինք, որովհետեւ Ա. որպէս զի արիւթեան ուզին չմարի մեզ կեանքով, Բ. որպէս զի թուրքը մեզի սիրելու պատրաստութիւնը և փափաքը մէկրի դնէ, Գ. որպէս զի գէթ մասամբ վրէժն լուծած լինինք մեր ճնշեալ համազգեաց. Դ. ս' գիտէ՛ կարելի է մեր այս պատերազմով Աստուած հաճի ազգը փրկել թուրքին ձեռքէն: Պատերազմինք, մեզ համար հանդիսա բնել չը վայելիբը բանի որ բոլոր ազգը ծանր բանութեան տակ կը հեծէ, պատերազմինք, որ բիշ սը թուրքին բիթը խոնարհի և ախոսները թափին, որ Հայոց սոկորը չկարենայ կրծել»:

Աղ. — Ընդհատելով Վարդապետին խօսքը. «Ասրիբք, ասրիբք, հայր սուրբ, Լուսաւորիչն ալ դուն ես, Ղեւնդ երեցն ալ դու ես, քաջ Վարդանն ալ դու ես»:

Նախագ. Գովութեան արժանանալու համար չեմ խօսիր, պարոն, յուզուած եմ Հայոց ազատութեան և փրկութեան խօսքին վերայ. սի, որչափ ժամանակ է որ այս ազգը իւր ազատութիւնը կորուսած է և անհաստ ու անօրէն թուրքին բանութեան տակ կը հեծէ, բիշ մնացիբ է, որ կորսուի ու ջնջուի հայութիւնը. Հայաստան, Մայր հայրենիք, դրախտի երկիրը օր ըստ օրէ կը պարպուի. իւր հարազատ սրբիք և բնակիչք օտար երկիր կը դադրեն, օտար ազգերու կը խոսնուին, խի մէջը մնացողք կը հեծեն և կը փճա-

նան: Պատարագմինք, եղբարք, Չարդուինք հօգ չէ, թող ազգը ազատուի:

Աղ. — Ի՞նչ կ'ըսէք Հայր սուրբ, չպիտի Չարդուինք, փոքր խրատով մը բաւական է, օգնութիւն և ազատութիւն անմիջական պիտի բլլան, այս է կեղերնի հրահանգը, մեր Լոնդոնի կեղերնը չսխալիր, անպատճառ պիտի իրագործուի իւր ծրագիրը:

Նախ. — Խիստ լաւ, Ձեր սուտին իբրև իբուսի կը հաւատանք: Այս բնիով ոտքի ելաւ, և համախմբուած հայերուն այսպէս խօսեցաւ Ձէյթունի լեզուով:

« Ժողովուրդ մեր գեղացրք չիւր հումմօ շօա ծեծմիսին թուրքին հիար, չիրք բանը համըր գիտէք, իս ապիմ ձիզ պաշխօ բանը համըր չէ, իլլէ միլլաթը, ուրինքէ, և հէյուն հազրն ազատութիւնը համըր, լմնը մեր տուշմօնը բլլամօն չի կանցօնք կըշնրցրցի, էօսիւր համըր պէարէ ուր նիւրիկէն ծիծմիւնք թուրքին հիար իրինց տճախնն անցրնինք, մինչիլիւր պիտի գիտանէք ուր էս տէօկիւշը առջէ աէօ կիւշուն կիմի չէ էս շօա մինձէ, հէմ իտէմիտէննէ, չիւրքիս պիւթիւն հէյուն ազատութիւնը համըր պիտի ծիծմիւնք, էս աէպէն ամէն մտղ մէնրըր Չարդուլըրը ճակօտը թաղ սանու մէնրնըրնը հէյո համըր է, էկէր էս աէպէն իւժէօլ իլլինըրնը պիւթիւն օզգը ազատով կօնը, էկէր Ասպոժ չէնէ Չարդուլըրը նը նահասակ, մէրտիւրիս կանրնք, բմմըր պիւթիւն օզգը մտրն իզրէն կանը, դօրէ ինտէս աէօկիւշիս մէջ չոց գրանրիլը պէարէ գիտէք, ուր օզգը չրկըշնրըր ու ազատութիւն գրաննօ, չոց ուր անրթըր սաշօն ուր օլըր գրանիւր համըր կու բլլըրը ու կու բրլլըրը իբուր գրաննօնը իւժէօլմըր վիրէն կու չուրէ գինտէն կիմի պէարէ չուրէք տուշմօննըրնը վիրէն, էս բօրնա գիտացէք թուրք չրսպանօժ մէննէօզը նէ մէրտիւրիս կանը նէտէ արքալուսթիւն կանը իրթօ, նէ օզգ կու հէտէպլը, ծրծ կըրթիցէք հօա ուր իպիլ բսպանիլլօ, չոց ուր ամէն մտղ էս ասօժիս կիմի ծիծմիւնըր մինըր միւժէրթէթ պօզմաշ կէնինըր տուշմօնըր, էաիւր համըր հիւզ մէնէք:

Հէար գիտացօծ նրբ ուր մէկար գինաէս տէօկիւշիս մէջ խմէօլ չէ կանր նր, Քիւրխաստիւսի վիրօ խղիւրղ հալասը շուսնօ նր. էօ տիր համար հումնօ ալայուտէ կօսիմ պէտքէ բլլամօն հալասը ուսնէք: Էտէ թէսպէհ կէնիմ ձիղ ամսէն մուրղ, էրիկ, կընըկ, հէլլիւր, պատօպ, տէլիղանլը, էրիկէն, Աղջիկին, չիւր մօնարը մանարբուէք. ալայիտէ պէտքէ հարօխ շալիէք: Թիֆօնը ունցնէօղը թիֆօնը, սապանշալու ունցնէօղը սասպանշալու, փալապանոկ ունցնէօղը փալապանոկ, դամօ ունցնէօղը դամօ, վից գնգուն ունցնէօղը վից գրնգուն. էս բանիրը շունցնէօղը կիւշիւշէօլ, ճըկիւռէօլ, մօնարը դանկէօլ, շամիրբէօլ, փիտէտէօլ, մանկըպէօլ, հիւսիսցէօլ, բէրէօլ, փէտէօլ. շարտչէօլ. սիւահէլանմը՝ թուղ նր. խնշ վսիս ուր սաւշմանըն խասնըվընքնը հըմնըն շասըխ շասըխ փիրիրը խէթիցէք, խէթիցէք, հանիցէք. աղըքնը. մաղմըղըքը գօրս վէզիցէք. հէշ մի մախէք Քիւրխաստիւս մէր դէհօն է. զաթը գիտէք ուր թուրքը վէխկիւս կանր, էօտիր համար հէշ սրթը մէնէք. խմէօլէ կիլլինք:

Հասիկ Աւետարօնը Քիւրխաստիւս կօսէ թէ խլիւր ինծէ համար ինք գընք կըշնրցընէնր էն կասըր. խլուր ինք գընք պէհէ չի սէսնըմ տէյի էն կու կըշնըվը. հումնօ հասկըցէք Քիւրխաստիւսի շուսիրը. էօտիր համար կարհնիմ րղձեղ ուր՝ Քիւրխաստիւսօ շուսիւրէն գօրս չէք իլլէք. հէմ օղգնէ իր փառքէօլը կու մինծույ հէյսուն հէսիրութըննէ հէշ չէ մընօ: Հումնօ մինծ թէմպէհմէ ուսնըմ ձիղ թիֆօնը փըսիիլօ սախիւ ըտընս նիշօն սուէք. մի հասիւրէք գաքըլու փըսիիլօ կիմի փըսիիցէք. հէմ խըտուէն մի փըսիւրէ. շօս միւտէն փըսիիցէք ուր թիֆանըին թիւթիւնը սախի փիւրը սըսնօ էսճիճին հիւրը մէկտեղ:

Մեր գեղջէ տէօկիւշին մէր սպապիրուն էտէթնէ ինտէս էք, էկէր չէք մասցի նր. իլլէ իլլէ մէօտէն փըսիիցէք: Հը էտէ թէնպէհ կէնիմ ձիղ. էս գըրսըցը միսաֆիրնին ուր մէր աշխօրը իկոծին բէրէօլ հինք հազար բէրէօլ իկիրին. հէսէպինք թէ Աստուծոյ թա-

բաժին իկոմին՝ չէ թէ սատանին գէհնն. շիրք պիտինքնը էն կունը:
Մէկ սըտքէօլ էրք: Եկօսինց սրաքնէ բէօթիս չէ:

Թարգմանութիւն

Ժողովուրդ, մեր գեղացիք՝ սինչի հիմայ շատ պատերազմ
ուղեր են թուրքին գէմ. ինչ բանի համար, գիտէք... Ես լսեմ Ձեզ՝
տրիչ բանի համար չէ, այլ՝ ազգի, օրէնքի, հայու հոյի ազատա-
թեան համար, բայց մեր թշնամին լսան սր չկրցանք ջնջել. ա-
տոր հասար պէտք է որ այս պատերազմը անցեալ պատերազմե-
րու հմանցնենք. առիկա շատ մեծ է և վերջինն է, վասնզի բու-
լոր ազգին ազատութեանը համար պէտք է պատերազմինք, այս
անգամ ամեն մարդ մտնիլը, ջարդուրուրդ ըլլալը աչքին թող
ստնէ, առկէ հարք մտնինք հայու հասար, սպրինք հայու համար:
Եթէ այս անգամ յաղթանակը մերը ըլլայ՝ բոլոր ազգը ազատած
պիտի ըլլայ. եթէ Աստուած մի արասցէ յաղթունք՝ (ջարդունք)
մարտիրոս կ'ըլլանք. բայց և այնպէս ազգը թշուառ կը մնայ:

Այսպիսի պատերազմի մէջ ինչպէս գտնուիլ պէտք է գիտէք՝ որ-
պէս զի ազգը չկորսուի ու ազատութիւն գանայ. ինչպէս որ անօթի
տոխձ մը կելլէ իրեն որսը գտնելու համար կ'ըլլարտի և երբոր
գտնայ ուժով մը վրան կը վազէ, անոր պէս զուք ալ թշնամիին զրայ
յարձակելու էք. այս լաւ գիտնաք՝ թուրք չսպաննած մեծնոզը ոչ
մարտիրոս կը սեպուի, ոչ ալ արքայութիւն կրնայ կրթալ, ոչ ալ
ազգ կը սեպուի: Աշխատեցէք մի հատ առիլի սպաննելու:

Եթէ ամէն մարդ իմին բաժիտ պէս կը պատերազմի, մենք
անպատճառ կը յաղթենք թշնամիին, ատոր համար հոգ մ'ընէք:

Բայց և այնպէս՝ գիտցած ըլլաք, որ մարդ մը այսպիսի պա-

1. Զէյթունի անունը Զէյթունցիք գեղ կ'արտասանեն իրարու հետ խօսած տեւն-
նին:

տերուզմի մը մէջ յազթող չկրնար ըլլալ՝ եթէ Քրիստոսի գրայ կատարեալ հաւատք չունենայ. սնոր համար է որ ամենուզ ալ ահա կը խօսիմ, պէտք է ըման հաւատք ունենաք:

Այս ալ կը պատուիրեմ Չեզ՝ ամեն սարդ, էրիկ մարդ, կնիկ մարդ, ծեր և սրտաւ, երիտասարդ թէ օրիորդ, մինչև փոքր մանկունք, ամենքդ ալ պէտք է զինուիր. հրացան ունեցողը՝ հրացան, սարճանակ, դնշոյն ունեցողը՝ գաշոյն, երկասյրի ունեցողը՝ երկասյրի, վեցհարուածեան ունեցողը՝ վեցհարուածեան, այս վերոյիշեալները չունեցողը՝ հեռեկալ գործիքներով բաւականանան, հատուցով, կացկնով, մանր դանակով, շամփուրով, փետասով, մանդաղով, մանր հատուցով, քարով, մինչև անգամ մորճով, զինուեցէք. որ ժամանակ որ թշնամիին խառնուինք՝ արագ-արագ փորենին խօթեցէք, թշնամուին գոլիքները դուրս թափուին. ամենին մի վախնաք. Քրիստոս մեր կողմէն է. արդէն զիտէք որ թուրքը վախկոտ կ'ըլլայ, ստոր համար բնաւ շմտածէք, մենք ուժով կ'ըլլանք:

Ահա Աւետարանը. Քրիստոս կ'ըսէ. «Մի որ ինք զինք ինձի համար կը կորսնցունէ, անիկայ կ'անդրի. ո՞վ որ ինք զինք չմանիմ՝ ըսելով պահէ, անիկայ կը կորսուի»: Հիմա հասկցա՞ք. Քրիստոսի խօսքէն դուրս չէք ելլեր և ազգն ալ կը փառաբորուի ու կը մեծնայ, հայն ալ սարկութենէն կը խայրուի:

Հիմա մեծ պատուէր մ'ալ ունիմ ձեզի: Հրացանաձգութեան տակն լաւ նշան տուէք, մի արտօրնաք, կարտի որտի նեակու պէս՝ նեակեցէք, ու հեռուէն մի նեակէք, շատ մօտէն նեակեցէք, որ հրացանի ծախը կապարին հետ միատեղ փորը մտնայ: Մեր Զէյթունի կոխները այսպէս կ'ըլլային, չէ՞ որ պապենական սովորութիւն է՝ եթէ մոռացած չէք. ահա սսիկայ ստիպեալ կը պատուիրեմ, մօտէն ըլլայ հրացանաձգութիւննիկ:

Հա՛, շմոռնամ, այս ալ կը պատուիրեմ ձեզ. այս դուրսէն եկող հիւրերը որ մեր երկիրը եկեր են՝ բարով, հինգ հազար

բարով եկեր են¹, համարինք որ Աստուծոյ կողմէն եկեր են՝ ոչ թէ սատանայի կողմէն. ինչ որ պիտի ըլլայ՝ այն կ'ըլլայ. միամիտ եղիք, ասոնց նպատակն ալ գէշ չէ: — Ձեր զբայ Պահպանիչ մըն ալ բռնմ, բռա, ու վերջ առաւ ժողովին: Ժողոպը ծափահարութեամբ ցրուեցաւ, վասն զի Ձէյթունցոց համար պատերազմի որոշումը հարսանեաց հրաւեր կը սեպուէր:

Իսկ գործին բնարանը չ'մտնանք: — Վերոյիշեալ ժողովոյն մէջ՝ որ տեղի ունեցաւ Գարանչոյ տէրէ բուսած տեղը, Ձէյթունի Մեծագործ իշխան Շովրայեան Հազար ազան² արդէն յանձնարարած էր Ծրնուզի վանահայր քաջասիրտ Տ. Բարդուղիմէոս Վարդապետին նորեկ հիւրերը հարցաքննել և բոս այնմ շարժիլ: Հայր սուրբ՝ բոս հրամանի պատկառելի իշխանին, պէտք եղած քննութիւնը ի գործ դրաւ, ինչ—ինչ գաղափարներ հասկցաւ, անմիջապէս տեղեկագրեց առ իշխանն: Իշխանը գրութիւնը կարգաց, շտապով մը հանգուցեալ Պապիկ փաշայի եղբայր Նազարէթ չափուչը³ բովը կանչեց ու պատուիրեց. « Հրաժարէ, բռա, թուրքին ծառայել. այսուհետեւ հայու և հայրենեաց հասար պէտք է ծառայես, խուսը սը հայ զինուորներով գնա՛ ի Գարանչոյ տէրէ Բարժեղիմէոս Վարդապետին, անոր աջակցութեամբ պէտք եղածը խորհրդակցեցէք: Նորեկներու ինչ ըլլալին հասկցուեցաւ: Վարդապետը մեզ չհարցուցած պատերազմի որոշումը առեր է. արդէն իմ գաղափարս ալ

1. Ձէյթունցու սովորութիւն է որ մարդ բարեկեղու համար մեկէն՝ հազար բարով եկար, կամ թէ հինգ հազար բարով եկար, կ'ըսեն: Հայր սուրբն ալ նոյն սովորական լեզուն գործածածէ:

2. Այս իշխանը Յին 4 իշխանաց մին էր և կը կոչուէր Հազար (Վազար) ազա. միւս 3 իշխանը մեռած էին, ու պատկառելի Տերունին 75 տարեկան հասակին զեռողջ էր ներկայիս:

3. Նազարէթ չափուչ (փարոջաւոր) Եէնի սիւնեա Աստուածատուր աղայի հօրեղբոր թուրք Մարկոս աղայի ազան ու Պապիկ փաշայի եղբայրն է. մինչ ցարդ այս քաջարի երիտասարդը թուրք կառավարութեան ձեռուոր չափուչն էր. բայց ներքնապէս հայրենեաց նուիրուած մի հերոս էր. և չորս թաղեցոց ալ ալ միանգամայն սիրելի:

այլ էր. չի մերժենք վարդապետի սրտուար. ես ընդունեցայ, կարծեմ դուք ալ կ'ընդունիք» : Դա ալ. « — Այո՞, կ'ընդունիմ » բառ . — « Սա լծուրքին հետ անգամ մ'ալ չափուինք. գրգռուած եմ թրբաց զեմ սրտնք, Սասունցի՝ եղբայրներուն քիչ չարիքներ չհասուցին. այս անօրէններէն մի քիչ զրէժ լուծենք. ծերութեանս մէջ լծարուն և լծարեալ մնացած վասօյներուն անուշահոտ բուրման անգամ մըն ալ ևս արժանանանք. գոնէ երբոր մեռնիմ՝ միւս և բեր իշխան եղբայրներուս լուր տանիմ. անոնք անպիի աշխարհը գաղթեցին աչքերնին բաց. աչքի լոյս աւետեմ ու բտեմ, « Հանուր հայ ազգի համար պատերազմեցանք ու յաղթեցինք, նախախնամութիւնը գմեզ կատարեալ պաշտպանեց, Դորին ամենակարողի շնորհիւ յաղթող հանդիսացանք աշխարհի առջև » . բառ ուրեց : Անոր խօսքերուն մէջ մարգարէական շեշտ սը ու հաւատք մը կար : Դազարէժ չափուչը պատասխանեց. « Արդէն ես ազգային խնդրոյ համար խմորեալ մարդ մ'եմ, իմին ալ փափաքս նոյնն է, ընդունած եմ ձեր հրամայածը, վաղ առաօտ անպատճառ կերթամ կգրանեմ Բարձուղիմէս վարդապետար. եթէ կ'ուզէք նամակ մ'ալ գրեցէք վարդապետին. անոր հետ աջակցելով պէտք եղածը կը խորհինք և ձեզ կը հազորենք » : Հազար ազան նամակ մը գրեց և առաւ հերոսապետին ձեռքը : Հայրենասէր չափուչը պատկասելի իշխանին ձեռքը հարուրեց և բառ, « Մնաք բարով » : Դա ալ անոր փայլուն ճակատը համբուրելով, « Երթաք բարով » մտղթեց : Միւս օր մի խուսը հայ զինուորներ գնացին հասան ի Գարանլոյ տերե (մութ—ձոր) Զէյթունէն վեց ժամ հեռի : Վարդապետը և Դազարէժ զիրար տեսածնուն պէս ողջագուրուեցան մեծ ուրախութեամբ, ցնծալով, հիւրերն ալ նոյնպէս բրին : Վարդապետը նամակը բանալով կարպաց որուն պարունակութիւնը հետեւեալն էր . « Արժա-

1. Այն ժամանակ Սասունէն զատ կոտորած եղած չէր, ատոր համար իշխանը Սասնոյ անունը կու տայ միայն :

նապատիւ Հայր պատուական: Սասցանք ձեր տեղեկագիրը նորեկ պարօններուն մասին, գրածիդ լիպին տեղեկացանք: օրչափ որ ատանց տուած տեղեկութիւններու շինք հաւատար՝ հոգ չէ. անանք ալ չէ՞ որ մերայինք են՝ հայ են, արենակից են, Հիւրեր են, խաթիւնին չգոչիք: իբրի սիրելի հիւրեր՝ զիրենք պատուեցէք. կարծեմ թէ ատանք պատերազմի համար նորրնծայ կը սեպուին. այս ալ վարժութիւն մ'է, թող տուէք որ սորվին:

Ատանց սուտերուն իբրի իրաւ հաւատանք ու գործներ, վանզի միջոց շիկայ, ժամանակը լրացած է. եթէ հոգ սը անինք՝ այն է որ՝ անպատրաստ ենք. այս հոգն ալ նախահամարութեան ապաւիշ ներսով, նորին անհուն սղորմութեան, գթութեան, զօրութեան թագանք, նա կարող է գմեղ փրկել մեր թշնամիներէն: Երբոր մենք և մեր պապերը կը պատերազմէինք, միթէ մեր օգնութիւնը Լճագոնէն կուգար, կամ թէ օտարականաց խումբերը կուգային, կ'օգնէին. ո՛չ, ո՛չ, այնպէս չէ. «մեր օգնութիւն ի Տեառնէ եկեցել որ արար գերկինս և գերկիր» . այս անգամին գործը ուրիշ օրինակի չեմ կրնար նմանցունել, այն է՝ որ անպատրաստ բարը կուգեմ նմանցունել Հայր Արքահամու գէպրին՝ երբոր իւր սիրելի զաւակ Իսահակին հետ կ'երթային սրպէս թէ մատաղի զինման համար: Սահակ զգտածուելով հարցուց հօրը բաւ. «Հայր, ահա հար և ահա փայտ, ո՛ր է ոչխար յողջակէզ» . Հայրը պատասխանեց. «Որպեակ, Տէր պատրաստեցէ» : Բաւ հօր Արքահամու մեր պիտոյքը Աստուծոյ խնամքին կը ձգենք, անիկայ հօր Աստուած է, կարող է իրեն հրեշտակներով մեր բանակը պաշտպանել: Այս կատրին վրայ կատարեալ վստահեմ. զուր ալ վստահեցիր. «սուր Տեառն և Գէղէօնի» եղաւ Խորայեղացուց ժամանակ, հիւսա ալ սուր Տեառն և Զէյթունի պիտի կանչուի. սպառնով եղիր: Յաղթութիւնը մերը պիտի բլլայ, այս յուսով, այս հաւատքով, այս սիրով պէտք է ապրինք ամենքս ալ, որով մնալու եմք առ այս: Ես ևս կը մնամ Չեր Ս. Աղօթքի օժանդակութեան ջերմ փափաքող. Խ. Ծ. Հագոր Շոգրայեան:

Յ. Գ. — Ասոցիալ գիւղացի Ատենասպետ Յարութիւն ազա
 Գօճայեանի սիրով կարօտով բարեւ յիշեցէք: Կը գովեմ իրեն հե-
 առտեսութիւնը. ինքը այժի հօտերու հասիւր սը ըլլալով հիւրերուն
 պես պարսն Ազասին կատարեալ հարցաքնններ է. զուք ես լաւ
 քնններ էք. ուրեմն ապրիրք: Այլ մասին խորին շնորհակալիքս
 կը յայտնեմ Ձեզ: Ինէ Պ. Ազասինն ալ բարե ըրէք: տեղեկու-
 թիւն կը հաղորդեմ իրեն, վազը տեղւոյն թիւրք գայնագամը մի
 քանի պատգամաւոր պիտի խրկէ իր քով, աչքը կարապետն ալ
 հետը միասին, ազուէսութեամբ հարցումներ պիտի ուզէ իրեն՝ այլ
 ազուէսին պատասխանը շէնքով — շնորհքով պէտք է տայ, չըլլայ
 որ խոր քնացող ազուէսը արթնցունէ. ստիկայ նուրբ քաղաքակա-
 նութիւն մ'է, իրեն այսպէս զուրցեցէք. այսչափ»: Վարդապետն
 ալ մէկէկ մէկիկ զրուցեց այս նամակի պարունակութիւնը պրն. Ա-
 զասին:

Միւս օրը խրկուեցան պատգամաւորները՝ տեղակալի կողմէն:
 Տէր կարապետ հայրը տեղակալին զուրցած հարցումները հաղոր-
 դեց պարսն Ազասինն սասկէս. «Տեղակալը կը հարցունէ, ինչ
 է ձեր պահանջը. խլրտումներ կը տեսնեմ ձեր մէջը, պահանջնիկ
 բռնէք. ընդհուպ գոհացում տանք. Թագաւորի մը դէմ գնելը՝ ա-
 զէկի բան չէ, ինչու զուր տեղ արխն թափուի: Պատասխանեցէք,
 որ տեղակալին հաղորդեմ»: Տէր կարապետի այս հարցման՝ Ազա-
 սին պատասխանեց.

«Մեր պահանջները խր ձեռնհատութեան տակ գանուող փոքրիկ
 խնդիրներ չեն, որոնց ինքն կարենայ գոհացում տալ. անոնց գո-
 հացում տալը միայն սուլթանին անկ է: Տէր հայր, Գուք չէք գի-
 տեր մեր պահանջը. չէք յիշեր Պերլինի Վահաթուղլի 61 հրօրդ

1. Պատգամաւորները՝ ստանք են. Տ. կարապետ քահանայ, կէսխանեան Ա. ետիք
 պատուելին, և Էջեղիէլեան Աստուածատուր ազան: Աստը Սեպտ. 23ին տեսնուե-
 ցան Ազասին հետ, Անդրէասեանց գիւղը:

յողուածք . ահա մեր պահանջը ստոր իրագործումն է » : « Խօսա
 ազէկ , գաւակս , ինչ որ է պահանջումնիդ՝ բա՛ւք , իրեն հագորդեմ ,
 կրցաւ կը կատարէ , չի կրցաւ , կը պատասխանէ » : — « Լաւ ,
 լսեցիք մեր պահանջը , հաղորդեցէք ուրեմն , կ'ուզէ կատարէ , կ'ու-
 ղէ պատասխանէ . միայն բանի որ ինքը զձեզ պատգամաւոր նշա-
 նակած և մեղի խրկած է մեր կարքը խմանայաւ , հագորդելէ յետոյ
 ձեզ մեր պահանջը՝ 12 օր միջոց կուտանք վճարական պատասխան
 սր անելու : Կէմէ այս 12 օրուան մէջ կրցաւ մեր պահանջին
 գոհացում տալ , լաւ , թէ չի կրցաւ՝ կառավարութեան պալատը
 թող սրարդէ , և մեզ յանձնէ . վասնզի վեց հզօր տէրութեանց մեզ
 ստած հրահանգը և կարքը այս է . հակառակ պարագային հե-
 տանքն շար սլօտի բլլայ և տղաշանք ու սղաթաւանք անօդաւ
 սլօտի մնան » : Քահանան հարցուց . « Խնդրեմ վեց տէրութեանց
 հրահանգի պաշտօնագրերը ինձի ցոյց տաք , որ ես ալ տեղակա-
 լին հագորդեմ » — « Տէր հայր , բաւ Աղասին , զազդիերէն լե-
 գուաւ գրուած են անոնք և կարծեմ գծրախտարար դուք ալ զազ-
 դիերէն չէք կրնար կարդալ » : Տէրտէրը պատասխանեց . « Գու
 կարդա , տղաս , ես բեզի կը հաւանամ » : Աղասին բաւ . —
 « Գուք ևս Ալագկալցի չօպան Յարութին աղայի պէս կուզէք զիս
 յոգնեցնել . ան տէլի Արթինը (խնթ Յարութին) խնթախելաւ
 խօսքերով ու հարցերով շատ ու շատ յոգնեցուց զիս , արգարև
 յոյժ յոգնած եմ , տէր հայր . պատուոյս կ'երկնում , թէ նոյնքան
 ճշմարիտ է վեց սխտութեանց կողմէ իմ անեցած հրահանգը , որ-
 քան ճշմարիտ է ձեր բահանայական կոչմամբ առ Աստուած անե-
 ցած հաւատքը » : Տէրտէրը բացազանչեց . « Է , հէ , այդպիսի խօս-
 քերով չեմ խարտիր ևս , պարոն , զու պահ մը առաջ գրութիւն-
 ներ ֆրանսերէն են կ'ըսէիր , բայց թուղթի կտորն անդամ չի տե-
 սանք . հոգ չէ , միայն ևս տղայ չեմ և պատերազմի ինդիրը տը-
 զայի խաղալիք չէ , այլ կենաց և մահու ինդիր . պէտք է հետևա-
 պէս կատարեալ խօսք խօսիլ և ոչ սուտ ու պատիր բաներ . որով-

Հեռե սրչափ որ գայեազամն է հարցնողը, պէտք է նկատել թէ այլ մինակ չէ և իրմէ վեհագունի միջոցաւ մինչև թագաւորի կապուած է, որու հրամաններ կայծակի՝ արագութեամբ կը հասնին ամէն կողմ՝ անակնկալներ ստեղծելով. պէտք է նկատէք հրամանի մը գալը, բանակի մը կազմութիւնը, Չէյթուանի զրայ քաղիւր, և ստրակոծուք ամենակարճ միջոցի մէջ ըլլալու բաներ կն. զգտչացէք որ այսպիսի մանկական ու սողայական խաղերով ազգին ու հայրենեաց գլխուն վրայ վաանդ չը բերէք. մանաւանդ այնպիսի պահաւ մը, յորում Չէյթուանցիք ոչ պաշար և ոչ կատարեալ զէնք ունին գիմարելու. արդ, թէև ձեզի չափ չենք զիտեր ներկայ քաղաքականութիւնը, քանի որ դուք էրբայայէն կուգաք, բայց թրքի քաղաքականութիւնը և բնաւորութիւնն ալ մենք խիստ լաւ գիտնք. սուտի սրպէս զի ձեզի վստահինք, պէտք է բացարձակ խօսիք մեզի, թէ ձեր զօրութիւնը և սլը ո՞ր կը կայանայ. քանի որ Հեռագրութիւնը կ'սլ և եթէ ձեր զրուցածները նայնութեամբ հաղորդենք գայեազամին, սրչափ վտանգաւոր կը լինի. գոնէ Հեռագրութեւնը կտրաւ լինէինք, սրպէսզի գէթ հաղորդակցութիւնը խափանուէր, և այս կողմէն գործ մը տեսնել կարելի ըլլար» ։

— «Տէր հայր, պատասխանեց Աղասի. թեւ կտրելու հարկ չի կայ, եթէ կ'ուզեն երկինք Հեռագրեն, օգուտ չունի. ներկայ քաղաքականութեան բերմամբ կանոնաւոր զօրք և թնորանօթ խրկել Չէյթուանի վրայ անհնար է. ասանց բոլորը սուսմասիրած և այնպէս եկած ենք այս տեղերը» ։ «Ուրեմն, վրայ բերաւ տէրտէրք, բոլոր ձեր ըսածները նայնութեամբ հաղորդեմ տեղակալին և ըսեմ 12 օր միջոց կայ ասանց պահանջները գոհացնելու, հակառակ պարտալին պաշտպ պարպելու և իրենց յանձնելու ևս» ։ «Այո, Պատասխանեց Աղասին. մի առ մի հաղորդէ, բնաւ մի քաշուիր. երբեք վնասակար հետեանք տեղի չի պիտի ունենայ» ։ Տէրտէրք ըսաւ. «Շատ լաւ, միայն եթէ չար ըլլայ, թափուելիք արիւնը ձեր գլխուն վրայ, իսկ թէ բարի, ի Հօրէ Ամենակալէ օրհնեալ

ըլլաք» : Եւ մնաք բարով բսելով՝ ընկերներովը Զէյթուն վերա-
դարձաւ :

Տէր Կարապետ Զէյթուն հասնելով՝ շունչը չ'առած խկոյն ժու-
ղով մը կազմեց Զէյթունի առաջանիէն, սուրբ Աստուածածնայ ե-
կեղեցիին առաջնորդարանը : Պատմեց անոնց՝ պարոն Աղասիին
բոլոր զուրջածնները, որո՞ւ վրայ, աստնապետ Շալրայեան, խօսքը
ներկայից ուղղելով՝ « Ես, որ առաջ լուր խրկած էի այդ պարո-
նին (Աղասիին), շէնք շնորհք պատասխան տալով՝ պատուիրա-
կաթեան կողմէ ըլլալիք հարցմանց, ասոնք են ասոր շէնքով շնորհ-
քով պատասխանները, հաղոր ափսոս : Ինչ տեղի փայ այդպիսի
գտող պահանջումներ բնելու, այդ կերպով խօսիլ՝ ամենաճգօր ա-
րաթեան մը միայն անկ է, որովհետեւ « Մօսկօֆ թէքլիֆի » է այդ
բսածնները¹ » :

Եւ պահ մը մտածելէ ետքը. — « Տէր հայր, 12 օր պայ-
ման գնել ի գահացումն պահանջից ե հակառակ պարագային կա-
ռախարական պաշտօնարանը պիտի գրաւենք, բսելը՝ անշուշտ բացէ
ի բաց աղայամտութիւն է ե վտանգը փութացնելէ, ուստի չ'ըլլայ
որ այդ կարգի փաստակար խօսքերէն որ ե է բոս մը խօսիս տե-
ղակալին, մինչև մենք մեզի սրտներ ընկելքնիս ե պատրաստ
ըլլանք » :

Այդ ստայգ է թէ մենք բոլորս ալ թրքի անզգամութենէն զը-
գուած ե խր անհեթեթ արարքներէն յուզուած ենք, խեղճ Սա-
սունցոց ինչեք շըրին, արդ, իմ մասնաւոր կաւքս է, ոչ թէ խօսք,
գոնէ մեր Սասունցի եղբարց վրէժը լածելու համար զէնք վերցը-
նենք, թուրքին վրայ իյնանք ե Աստուծոյ ապաստանած անոր հը-
պարտութիւնը խոնարհեցնենք, ու ախանները խորտակենք, որպէս
զի նուազ կրճէ հայու ոսկոր, ինչպէս ըսի, իմ կամքս այս է ե ոյ

1. Զէյթուն առածի կարգ անցած է այս խօսքը, մեծարաններուն պայակն
կ'ըսեն :

որ պատերազմի կողմն է՝ միայն ձեռք բարձրացնէ» . ներկայը այնքան համաձայն գանուեցան Շովրայեանի առաջարկին, որ խրաբանչիք սնձ փոխանակ մէկ ձեռքի կրկու ձեռք վերցուց, և ծափահարութեամբ վճռեցին պատերազմը: Առանապես Շովրայեան բաց աստի ի լուր ամենեցուն հեռուեալ հրահանգը արտասանեց. —

«Նախ պէտք է թիրք պաշտօնեայր հոկոգութեան տակ գրբալին մեր կողմանէ, որպէս զի ասոնք ժամանակ գանկով չի փախչին և հետաւոր իշխանութեանց չ'հաղորդեն բլլալիբը, ապա զօրանոցը կը գրաւենը: Եսրեկ պարսններն ալ կանչենը հաս, հանգիստ ընեն» — հերիք է լինները թափափին:

«Բ.» Արեգին, Ֆրնուզ և Աւագ—կալ գիւղերը պարպտին հաս մեզի գան, իսկ պատերազմի գործողութեանց ձեռնարկելու համար հարկ է որ ամէն մէկը զատ զատ արթուն ու զգայուն լինի, որպէս զի շփոթութիւն չլինի. նաև խոհական՝ և ոչ ամբարտաւան ու յանձնագաստան, միշտ բնկերի հսկելով և մեծի անսաղով: Վասնզի Զէյթունցոց համար թէև ազգային հարստնիք մ'է պատերազմը, և մի և նոյն ժամանակ սակայն՝ անշուշտ չէք մտնար մեր պապերուն խոհեմութիւնը:

«Երկու օր ստաջ Նազարէթ շափուշը խումբ մը զինուորով Բարթուղիմէոս վարդապետին խրկած էի Մութ—ձոր, որ Բարթուղիմէոս վարդապետ ալ խրայիներուն հետ խորհրդակցելով իմ որոշմանց համանման որոշում տուած էր, զոր լսելով շնորհակալ եղայ, ըստ որում ինձ կատարեալ գազափարակից գանուած էր» : Էջ 8 էր հօր գաննալով ըսաւ, — «պատուէրս մի մտնար, Ազգասի խիզախ պատասխաններէն ոչ մին տեղակային չի հաղորդէր, ետքը սուղի կը նստի մեզի, և «ուղար պոչէն վերցնել հարկ կ'ըլլայ¹» : Ասոր վրայ ցրտեցաւ ժողովը:

Նոյն գիշեր իշխան Շովրայեանի հրամանաւ խուսր—խումբ մար-

1. Այս առած մ'է Զէյթուն և գործը գժուարութեան մասնէ կը նշանակէ:

տիկներ գրկուեցան Զէյթունի հեռաւոր կիրճերը, թիւրք պաշտօնէից փախուստը խափանելու: Այս պահուստ Տէր կարսպեան ալ տեղակալէն կանչուեցաւ եղած քննութեան արդիւնքը հաստատելու, տեղակալը մանրամասնաբար հարցուց տէրութիւն օտարականաց կամքն ու գաղափարը, տէրութիւն որպէս թէ նոյն միջոցին մտայած ըլլալով Շոյրայեանի պատուէրը¹ և տեղակալին « շիտակը զօրցէ » հրամանէն զայրանալով ասանց բան մը վերապահելու օտարի գրայ կելլէ և ցասմնալից կը խօսի հետեւեալը. — « Պայմադամ էֆէնտի, երկար խօսքերու տեղի չկայ, վերջերս Էւրոպայէն եկած իշխաններուն հրամանն է. — տասներկու օրուան մէջ ինչ որ պիտի ւտածէք՝ մտածեցէք. այստեղը պէտք է որ պարպէք և յիշեալ իշխաններուն յանձնէք. այս ալ բռնի, որ այս օրէն սկսելով այս պալատը ձերք չէ, այլ ազգին է, ազգի գիտցէք, ուրիշ բռնիք չունիմ »: —

— « Տէր հայր, այսպէս ասանց պայմանաժամի դործ կ'ըլլայեալ չէի կրնար կատարել, ինչ որ իրենք կը պահանջէին »: — « Ասանց պահանջը փոքր բան սը չէ, բայց զօրք կարող էք գործադրել »: — « Ախ, տէր հայր, ինչպե՞ս մի անգամ ըսէք սա բանը »: — « Պերլինի գաշնազրին պայմաններուն համեմատ Հայաստանի անկախութիւնը »: — « Ասկէ զիտին ինչ կայ, տէր, հիմա հեռազրին զլուխը կ'անցնիմ, եթէ իրենց փափաղն այս է, կատարումն ալ ինձնէ ինչպէ՞ս. ինչպէս որ ձեզի յայտնի է՝ մեր վեհափառ տէրը շատ գլխատիրա է, մանաւանդ թէ զիս շատ կը սիրէ, միմիայն տեղեկութիւն մը բաւական պիտի ըլլայ »: — կը սխալիք, զօրք կը կարծէք թէ ասանք միայն Զէյթունի մասին կը մտածեն, այդպէս չէ. — ասրոզջ Հայաստանի անկախութիւնը կը

1. Սակայն մենք կը կարծենք որ դա աւելի համոզուած և ազդուած է եղեր Ազատի տուած յանդուգն խորհուրդէն քան մեր իշխանի վերջի պատուէրէն. թէ « մի բան մի յայտնէր Պայմադամին »:

պահանջին, այդ, գուք այոքան մեծ գործի սր կարող էք» : — « Այս, կարող եմ, չբռնի ձեզի թէ, տերութիւնը զիս շատ կը սիրէ, այս խօսքին զնաահ եզիք » : — « Պարոն գայրագամ, թուրքն ու հայը հայրենակից լինելով՝ իրարու բնութիւնը լաւ կը ճանչնան, բայց և այնպէս ձեր աղաէսի հաշիւները մենք ալ ունինք, եթէ շունենանք ալ՝ հասկնալու կարող ենք, ինչէն յայտնի է, թէ հիմա երբ հեռագրի գլուխն անցնիք, մեզի գէմ՝ շպիտի խօսիք, չէք գիտեր թէ օտմանցին անխտահելի մարդ է, սխա՞ս, այս բանը օրօրոցի մանուկն ալ գիացաւ, սակայն, ես բռնու մտցած էի ձեզ թէ անկարելի է հեռագրին գլուխն անցնիլ, սրտհեռի բաւ սրտշման ազգային ժողովոյն այդ բանը արդիւտեցաւ, այս ալ չմոռնամ ըսել, թէ չըլլայ որ իմ ըսածներուս կարեորութիւն շատ լով հեռագրատուն՝ երթալու համար ձեռնիս, որտհեռի այս ու այն անկիւնը գտնուած պահապաններէն մէկէն անպատճառ գնդակ մը կուտէք, մեզք էք, բարեկամ էք՝ անոր համար կը մեզքնամ ձեզի », ըսաւ ու մեկնեցաւ : Էջ տուն երթալով փութաց անմիջապէս քանի մը հերոսներ խրկիլ զօրանոցի ճամբան, որ հսկին տեղակալի անցքին, թէև տեղակալը չի կրցաւ զօրանոցը երթալ՝ Տէրտէրին խօսքերուն համազուելով, սակայն խորամանկութեամբ փոզահար զինուորին հրամայեց փողով եղելութիւնը միրալային հազարել, զինուորը ըստ հրամանաց Փայմագամին հնչեցուց փողը հասկցնելով միրալային որ զօրանոցը ընդհուպ պիտի գրաւուի հայերէն, գիացած ըլլաք : Միրալայը լսածին պէս՝ Մարաշ հեռագրեց, երեք օր վերջը Բէլուիզ շայ՝ ըսուած տեղը կանոնաւոր զօրքով լեցուեցաւ, միայն այսչափ չէ, նաև կը պատրաստուէին Զէյթունի վրայ բալել, (հակառակ մեր պարոն պատգամաւորի (Ազատի) խոստու-

1. Հեռագրատունը կը գտնուի զօրանոցին մէջ որ քառորդ ժամ հեռուէ Զէյթունէն :

2. Բէլուիզ շայ 7 ժամ հեռի է Զէյթունէն գեպի արեւելահարաւ :

մին, որով կը համոզէր Զէյթունցիները, թէ օսմանեան կատարաւթիւնը բնաւ կանանաւոր զօրք չի կրնար քաղեցընել ձեր վրայ՝ թէ պետութեանց կամքին կը դաշի, մինչդեռ թուրք զօրքը կանանաւոր բանակի վերածուելով Բէրդիզ չայ կ'աւարանար, զոր Զէյթունցի լրտեսները տեսնելով եկան և հազարեկցին Նազարէթ չափուշին, և հիւրերու պէս Պ. Ազասին)։ Ահա պատերազմական գործողութեանց սկիզբը կամ Զէյթունցոց հարսանիքը։ Եւ որովհետեւ ոչ անտարրեր մնալ կարելի չէր, Նազարէթ իշխան Արեղին գիւղացիներէն խումբ մը կազմելով ճահան գերի ապրի եզերքը ամբանալու և պահպանելու գնաց, որպէս զի թուրքաց արգիլէ այն դժով Զէյթունի զբայ քաղելը. իշխան Նազարէթի հետ կը գտնուէին հետեւալք, Փանոս Շամու Քէշիշեան, Խաչեր քէհեա կարապետեան, դարձեալ Արեղինցի Փանոս Միքայելեան, կոկիսանի թաշօլուի գիւղէն կարապետ Ղլփանոսեանց (ճէլլաս) և Պ. Ազասի իրեններով։

Թրքական բանակի ներկայութիւնը և յատաճխաղացութիւնը անշուշտ հետեանք եղաւ մեր Պ. Ազասի գոտողութեանց և Մօսկովական առաջարկին, այն է՝ 1 օր պայմանաժամին, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ թիւրքի հացին եղբոսել, և աժանը սուղի նստեցնել, ինչ օգուտ ուսուսը և քաղաքագիտութիւնը, կրբ ասանք պատերազմական ձեռնարկութեանց և գործանուութեանց չին պատշաճիր. աւելի լաւ էր փոքրիկ փորձառութիւն սը, բան այսպէս յիմարական գիտութիւն։ Որչափ լաւ պիտի ըլլար ակրտէրի առաջարկը, հեռագրաթիւրքը կարելու մասին, որով թուրք բանակը թէև երևնար, սակայն խիստ ուշ մնալուն Զէյթունցիք պէտք եղածին չափ միջոց պիտի ունենային լաւ կերպով պատրաստուելու. ինչորէ, եղածը եղաւ՝ օգուտը միայն սա չափ է, որ ապագայ սերունդը այսպիսի ձախորդ ձեռնարկութեանց փնասակար հետեանքները կարգալով պատմութեան մէջ գաս մը պիտի անէ և զգոյշ ըլլայ)։

Արդ, երբ լուսեցաւ թէ Բէրդիզ չայ թշնամի բանակեցաւ, Շո-

գրայեան փութաց ժողով մը հաղմել և Տէր Աբրահամը կանչելով
 հարցուց. « Տէրաւէր, դուն խօսեցար գայմագամին ինչ որ քեզի
 պատուիրած էի չբխօսիս »: Տէրաւէրը չ'ուրացաւ. « Այո, դուրցեցի
 բռաւ, բայց ներեցէք որ պատմեմ եղևութիւնը. « Ձեր սրբման հա-
 մեմատ երբ գացի գայմագամին հագորդել հիւրերուն կասքը, թէև
 մոռցած էի ձեր ինծի պատուիրածը, բայց նոյն ժամանակ իւր
 հարցապնդումն ալ զիս շափազանց նեղելով առանց բան ուր պա-
 հելու արողջ եղածը գուրցեցի: այստ ամենայնիւ ինք չպիտի եր-
 թար հետագրասունը, սրովհետև չափէն աւելի ահարեկեցի զինքը
 և չեմ ալ յուսար թէ գացած է, որովհետև պահնորդներ զբաժ էի,
 անպատճառ պիտի իմացուէր այդ. ինչպէս կ'ըլլայ այս կը վար-
 մանամ և սակայն գաղանիրք մը բլլալու է ասոր մէջ: Գայմագա-
 սը կանչուեցաւ. Ծովրայեանը հարցուց գայմագամին. — « Գո՞ւն
 տուիր այս հետադիրը »: — « Ո՛չ, աէր իմ, հետագրատունը գօ-
 բանոցին մէջ է, իսկ ես՝ ինչպէս որ աէր հայրն ալ զիտէ,
 գօբանոց չգացի »: — « Աւրեմն այս հետադիրը ո՞վ գարկաւ »: —
 « Աստուած միայ՝ չ'գիտեմ »: — « Լաւ, կարող էք երթալ. այս
 անգամ միտալայր կանչուեցաւ՝ ասենապետը հարցուց »: — Գո՞ւն
 բերել տուիր այս գօբըը. գո՞ւն գարկիր հետադիրը »: — « Այո,
 աէր » — « Պատճառ »: — « Ձեր ժողովքի երեկոյին սլարն
 գայմագամը փողով գօբանոցը լուր տուաւ, թէ զիշերով հայերը
 գօբանոցը պիտի գրաւեն, ես ալ իմ պաշտօնէս վախնալով իրն-
 զիրը Մարաշ յայանեցի »: — « Կեցցեն, ճշմարիտը բսելուզ հա-
 մար սիրեցի քեզ, գնա, բայց չըլլայ որ գայմագամին հետ աես-
 նուիս, հսկողութեան տակ ես »: — « Նորէն գայմագամը կան-
 շուելով հարցուց իշխանը, — ինչո՞ւ համար այս վատութիւնն ըրիր,
 մինչպէս մենք կ'ուզէինք ինզիրը անուշ տեղը կապել, դուն ինչո՞ւ
 գործը մեծցուցիր և այսչափ զինուոր մեր վրայ բերել տալ կը ջա-
 նաս. գէշ մարդիկ էք վերջապէս, խաղաղութիւնը չէք սիրեր, բայց
 հող չէ, ինչ որ պիտի ըլլայ՝ այն կ'ըլլայ, տեսնենք, դուք ձեր

Թագաւորին ու ձեր անբութեան կը վստահէք, իսկ մենք, որ թագաւոր և իշխանութիւն չունինք մի միայն Աստուծոյ կ'ապաւիրնինք:

Գոյնագամ. — Երեցէք Տէր, ես խորհողութիւնը կը սիրեմ, խոտութիւնը կ'աւանտ, դուք ինձ հարցուցիք, թէ հետագրատուն գացի՞ւ ես ալ երդամ ըրի, թէ չը գացի: Եւ իրօք ալ այսպէս է:

Իշխանք. — Փողահարի միջոցաւ տեսեր էք գործը:

Գոյնագամ. — Այո, աէր, երկիւղը գիտէք, երկիւղէս ըսը տուի. այս պատճառաւ յանցաւոր կամ խոտարար չեմ համարուիր: Եթէ դուք զիս յանցաւոր կը համարէք, ձեր ներողութիւնը կը խնդրեմ, ահա ձեր սուրբ, ահա մեր վիզը, կարող էք ձեր ուղածն ընել: Գարձեալ ներողութիւն կը խնդրեմ: Այսպէս կը քթեկը Գոյնագամը:

Իշխան. — Մենք ձեզ պէս չենք, արդէն ներուած է, ապահով եղիք, միայն մի մտնաք, թէ հսկողութեան տակ էք և ձեզ արդիւուած է միրալային հետ տեսեցիք, մինչև որ տեսնենք թէ վերջը ձեր կը հասնի: Գուք կը վախնաք, այս ձեր խօսքէն յայտնի է: Գուք կը վախնաք, թէ մէկը ձեր վրայ գնդակ արձակէ, բայց ապահով եղիք, ձեզ սպաննող չըլլար եթէ դուք ձեզի արուած հրամանին համեմատ շարժիք: Կրնաք երթալ:

Գոյնագամը հրածեշտ տալով մեկնեցաւ: Յետոյ իշխանը:

Ապա իշխանը կանչելով եկեղեցականները հրամայեց որ եկեղեցին մեծ պահքի պէս սպաւորուի, բոլոր ժողովուրդը ապաշխարութեան աղօթքներ ընէ և նախախնամութեան օգնութիւնը հայցէ: Քաջալեր կարգաց նաև ամէն կարգի մարդոց, այրերուն ու կիներուն, աղօթել ու պատերազմիլ, մասնաւորապէս բաջասիրտ և հուժկու կիներուն կը յորդորէր որպէս զի ազամարդու պէս զէնք տանեն ու կոտին, որովհետև առիւծին որձը և էգը չըլլար կըսէր: Իսկ եկեղեցականները երկու պաշտօն ունէին հոգեւոր և մարմնա-

տր, ազօթել եկեղեցիին մէջ և դարսը խրախուսել հայրենիքի գինւորները, իրենք իսկ քաջասիրտ կուսուղի օրինակ հանդիսանալով աշխարհականներուն: Մեր նախնիք, կրտէր իշխանը, իրենց ազգութիւնը, հայրինիքը ու կրօնքը զէնքով միայն պաշտպանեցին, ևս մտած, եմ, որ Աստուած այդպիսիներու չի ինայեր իր օգնութիւնը. սերեմն մեր հայրերու յիշատակը թող առաջնորդ բլլայ մեզի:

Քահանաները միաբերան և սիրով բնդունեցին իշխանին առաջարկը, ապա օրհնելով ժողովուրդը և համայն ազգը ցրուեցաւ ժողովը:

Ժողովը ցրուելէն ետք չորս եկեղեցիներու կոչնակները սկսան հնչել: Քահանաները բազմութեան հարկ եղած յորդորները առէլ յետոյ սեղաններու վարագոյրները գոցեցին, ի նշան սգոյ, մինչ և չորս ամիս, 1895 հոկ 12 էն մինչև 1896 փետրվ. 1: Այս սգոյ օրերուն հարսեր ու օրիորդներ քուրձ հագած ու իրենց դարդերէն մերկացած էին, այնպէս որ բոլորին ուշադրութիւնը կուսին վրայ կեդրոնացած էր միայն:

Հայերը յաղթակահօրէն կը ղխնադրէին թշնամիին և մեծ ջարդ կուտային, այն պահուն երբ թիւրք կառավարութիւնը ամբողջ հայաստանը արիւնով կը լեցնէր: Հայերուն կողմէն կուղ 6000 հոգի էին, որոնց 4000ը միայն հրացանով զինուած էին և 2000ը տուպարով, դաշունով և ուրիշ մահացու գործիքներով. թշնամին ունէր բոս թրքաց վկայութեան 110,000 կանոնաւոր ու պաշխպօզուր գօրք, անթիւ ռազմամթերքով ու 13 թնդանօթներով, որոնց մէկ փոքր մասը բաւական էր Զէյթունցիներուն՝ ամբողջ հեռաւոր շրջականներուն տէրը դառնալու համար: Հակառակ այդ ահեղ զօրութեան, Զէյթունցիք բաւական զօրք սպաննեցին, զօրանոցը՝ գրաւեցին,

1. Զօրանոցը գրաւուած պահուն մէջը զօրք և պաշտօնեայ գրեթէ 600 հոգի կը գտնուէին. պաշտօնեաները իրենց ընտանիքով ազատ արձակուեցան: Իսկ զօրքերու ջարդուելուն պատճառը Զէյթունի կիներուն կողմէն, կը պարզենք իր կարգին:

միրալայ Իֆիէլթ պէյը և յիսունի շափ սպայ, 600 զօրք և Չէյթունի գայմազամը՝ Ալիի պէյ, գերի բանեցին:

Այս գեպքերու՝ Չէյթունցիներուն համար յաջող և պատուաւոր վախճանէն հարք, Չէյթունցիներուն միակ խորին և անկեղծ սուգ պատճառող բանն եղաւ Հազար Շտրայեանի մահը, Չէյթունի ժողովրդին շորս սիրելի իշխաններէն մէկը որ իր հեռատես խոհականութիւնով ու փորձառու իմաստութիւնով, թէ խաղաղութեան և թէ պատերազմի ասան կաշխատէր ժողովրդին ետանդը, հաւատքը, հայրենասիրութիւնը, արթուն և վառ պահել: Մեռաւ 1896ի Յունիսի վերջերը 76 տարեկան, և որուն, Չէյթունի երախտագէտ ժողովուրդը, ամենափառաւոր թողում սը քրաւ, անոր մարմինը ամփոփելով Չէյթունի դիմաց մեծ գերեզմանոցին մէջ:

Իշխան Շտրայեանի մահը, Նեստորը Չէյթունի, անփոխարինելի կորուստ սըն էր իր սիրած ժողովրդին համար:

Այս վերջի կոխը, միանգամ ընդ միշտ ապացուցեց թէ Չէյթունցին զբաւնն եկած քարոզներու և խորհուրդներու շատ չի կարտաիր կռուի ժամանակը և տակտիկը գիտնալու համար: Արդէն եօթէն եօթմասսուն տարեկան ամէն մարդ գիտէ՝ զէնք գործածել և գիտեն նաև իրենց երկրին բոլոր պայմանները, գաղտնիքները: Ինչ որ կը պակսի իրենց զբամն է ուրիշ ոչինչ:

Հայոց կոտորած, Անարեկչական գործողութիւններ

Մինչդեռ Չէյթուն գերմարդկային ճիգեր թափելով կը մաքաւէր այսպէս բռնակալութեան դէմ իւր իխոտ սահմանափակ ուժերով, և իւր զարաւոր իրաւանց ու ազատութեան պահպանութեան համար յօժարակամ կը զոհէր իւր կեանքն ու ինչքը, այն ատեն թուրք կառավարութիւնն ալ Սուլթան Համիտի նախագահութեան տակ իւր կոտորածի ծրագիրը կը պատրաստէր աւելի ընդարձակ յատակագծով սը:

Ազատասիրութեան սոյն և ինքնալարութեան ձգտութիւնն ոչ միայն Զէյթունի, այլ և ամբողջ Հայաստանի Հայ ժողովրդեան մէջ երթալով ընդարձակ ծառայ կը ստանար. ժամանակի բերուել, քաղաքական հանդամանքները և ազդին հեղհեղեղ ունեցած մտաւոր ու բարոյական զարդացումը յառաջ բերած էին հոգեկան այս նոր փոփոխութիւնը և նպատակի այս նոր ուզողութիւնը խաղաղութեան այնքան սիրահար Հայ աարքին մէջ:

Միւս կողմանէ թուրք բնապետութեան աճեցումն ճնշումները բրիտանեկց ղէմ և Հայաստանի ամեն գաւառաց մէջ իրենց շահատակութիւններն արձակ համարձակ գործող կիսալայրենի ցեղերու հարստահարութիւնները մեծապէս կ'օգնէին այս հոսանքը մայցնելու ժողովրդեան ամեն խաւերուն մէջ:

Հայն ու թուրքը սկսած էին այլ ևս ծուռ աչքով նայիլ իրարու, իրար թշնամի նկատել և իրարու սպառնալ: Լոյսի ու խաւարի, յառաջադիմութեան ու յեաադիմութեան, ազատութեան ու բնակալութեան սոյններն էին, որ ղէմ առ ղէմ կուայային. պէտք էր վերջապէս որ մին կամ միւսը յաղթանակէր:

Սուլթանի ծրագիրը սարգ էր ու բացայայտ. — ջարդել, փշրել ինչ որ կը հակառակէր իւր բնապետական սկզբունքներուն. արդ, հային ձգտումները չէին երբէք համարատաստաներ իւր ուզողութեան, ուստի վճռեց ընդհանուր կոտորածով մը վերջ տալ ամեն գայթակղութեան և զինքն անհանգիստ ընող հայկական խնդրոյ, որու հիմը դրուած էր նախ Սան Սահֆանօի գաշնազրին և ապա Բերլինի վեհաժողովին մէջ:

Հոտաւ վերջապէս 1895ի աղէտալի թուականը, և մայրաքաղաքէն զնացած բարձրագոյն հրամանին համեմատ սահմանադրութեան սկսած մինչև կ. Պօլիս ամեն քաղաք և ամեն գիւղ, որ որ հայ կար՝ սկսան կոտորել անխնայ, ոչ հասակի ինայեցին և ոչ սեռի, ոչ աստիճանի և ոչ գիրքի. մանուկը իւր մօր գրկէն, կինը իւր ամուսնէն, հայրը իւր գաւակներէն անջատելով անսնց

աչքին առջև խողխողեցին, յօշոանցին գազանարար. ոչ մանկական արտասուքները, և ոչ ծնողական պազատալից հառաչանքները կ'ազդէին անոնց քարացեալ սրտերուն: Թուրք խումանը, որ սուլթանի կամակատար գործիքն էր, մուխանոյ շէյխերու զրգոյիչ բարոզութիւններէն աւելի ևս բորբոքած մէկ ձեռքով կը ջարդէր, միտով կը կոզոպսէր, և ինչ որ չէր կարող իրեն սեփականել՝ կը քանդէր և փշրէր, կը վառէր, մոխիր կը գարձնէր:

Այս վիճակին կուզէին ենթարկել նաև Չէյթունը որ վաղ իսկ զգացած անոնց այս չարագուշուկ միտումները՝ մանաւանդ Չէյթունէն և ժամ հեռաւորութեամբ դէպի հարաւ գտնուող գարանլուղ տէրէի (մութը ձոր) Բարդուղիմէսս վարդապետի տուած ազգու յորդորներէն խրախուսուած՝ ասպարէզ չի տուաւ թուրքին անակնկալ յաճակամներով իրագործել իւր կործանարար խորհուրդը, այլ անկէ առաջ ինքը պատերազմ հրատարակեց անոր դէմ հետեւեալ տեւորակեան գործողութիւնները կատարելով յաջորդաբար:

Ա. Երկու հայազէա թուրք ոստիկաններ, որոնք կանխաւ շատ չարիք գործած էին շրջակայ գիւղերը հարկապահանջութեան պատճառաւ և դամասկոսցի շարասիրտ ու հայասեանց դատաւորին հրաւմանաւ չարագործութիւնները իրենց զազաթնակէտին հասցուցած էին, որպէս թէ տեղահալ իրենց պաշտօնէն՝ հրաժարած ըլլալով ոստիկանութենէ կուզեն հայ հրոսակներու խումբին մէջ մտնել, ուստի առաջարկեցին յեղափոխականներէն միոյն, որ հաճի գոհացում տալ իրենց փափագներուն. անմիաները կ'ուզէին այս կերպով լրանել յեղափոխականաց շարժումը ու աւելի հիմնական շարիքներ հասցնել Չէյթունի՝ բայց երկու գնտակի հարուածներ երկուքն ալ շատ հասուցին իրենց փառքին: Արեղինցիները իսկոյն անհետացուցին ասոնց գիակները, զորս ի գուր փնտսեց երկար ատեն մեր աշարարք կառավարութիւնը. այս դէտք պատահեցաւ Սեպտ. ամսուն:

Բ. Ճալլատ անուն հայ հրոսակը սեպտեմբերի մէջ կապանէն գալու ժամանակ Ալի կոչուած կիրճը խումբ մը Ղումարլուցի

Թուրքմէններու հանդիպելով կոտեցաւ անոնց հետ երկու ընկերներով
և անոնցմէ երկու հոգի սպաննեց ու երկու ալ միբարոբեց, և բո-
լոր ունեցածնին գրաւելով՝ Յեզաիսիական խումրին յանձնեց:

Գ. Հոկտեմբեր 9-ին, ուրբաթ օրը Հաճընէն թուրք հարիւ-
րապետ մը Մարաշ երթալու համար Ֆրնուզ եկաւ իւր ընտանեօք
և սկսաւ խիստ լեզուաւ մը անարգել հայերը ազատ հայհոյու-
թիւններ ընելալ անոնց կատախարոյթեան զմ' բռնած իրենց լմ-
բոտա վարմունքին համար, և կը սպասնար իրենց արժանաւոր պա-
տիժը տալու համար՝ կատախարոյթեան ձեռք աննելիք ազդու մի-
ջոցներուն զխաւոր գործազիրներէն մին ալ ինքն ըլլալու: Յիմար
արարածը յայտնի կերպով մահուան հրաւեր կը կարգար: Այս
նախատինքներուն ունկնդիր Ֆրնուզցիք չի կրնալով հանդուրժել՝
տեղն ու տեղը սպաննեցին զայն իւր կնոջ և երկու զաւակաց
հետ մէկտեղ:

Դ. Դուամարտի թուրքերու սպանութեան զէպքին քննութեան
համար Մարաշէն հազարապետ մը գալով՝ Աէկ գնաց և այնտեղէն
Ֆրնուզ գալով հոկտեմբեր 10-ին տեղւոյն հայ միտախրը և ուրիշ-
ներն ալ քննութեան ենթարկել կուզէր, մինչդեռ կարգ մը անմեղ
հայեր արգէն ձերբակալած էր իբրև կասկածելի կամ իբրև հեղի-
նակ սճրին և անոնց շատ նեղութիւններ տուած: Ֆրնուզցիք լսե-
լով զայս՝ Սոս շարք կաշուած տեղը անոր զէմը ելան ու չարա-
չար սպաննելով զայն հետը գտնուած 7 թուրք ստախաններով
մէկտեղ, ազատեցին կալանաւորները:

Այն միջոցին այնտեղէն կանցնէին խումր մը շերքէզներ, որոց
սպաստանեցան ստախաններէն երկուքը, անոնք ալ ազաչեցին
հայոց, որ իրենց սիրոյն համար խնայեն անոնց կենաց, և որով-
հետև Զէյթունցիք կանխաւ խաղաղութեան դաշինք կապած էին
շերքէզաց հետ, չուզեցին երկու թուրքի համար տրել հաստա-
տուած դաշինքը ու թող տուին, որ երթան խաղաղութեամբ:



G. NAHABED.

Յրևուզի վանանայր Տ. Բարբողիսեան վարդապետը :

ԳԼ. ԽԱ.

ԲԵՐԿԻՉ ՉԱՅԻ՝ ՊԱՏԵՐԱԶՄԸ


Մարաշի կառավարութիւնը տակաւին անդէտ այս վերջի պէտքերէն, սակայն իւր առաջադրած չար խորհուրդը ապահովապէս ի գործ գնելու համար պէտք եղած նախահոգ միջոցները ձեռք առնելով՝ կուզէր աւելցնել Զէյթունի զօրանոցին ուժը: Երբ որ Զէյթունի զօրանոցի զնդապետէն ալ հեռագիր ստացաւ փաշան ամենայն կատաղութեամբ գունդ մը զօրք ճամբայ հաննց Մարաշէն, որոնք մինչև Չահան գետին միւս եզրը Բերդիզ շայր կոչուած տեղը հասան Սեպտ. 26ին:

Այս լուրը հասնելով յեղափոխականաց պետ պ. Աղասիի և Էնի-Տիւնեա Նազարէթ իշխանի՝ մճոնցին անոնց մուտքն արգիլել զինու զօրութեամբ Շամլ-բէշիշեանի, Խաշէր բէշեայի, Մխայէլեանի և Ճալլապի հեա միասին, և անմիջապէս 150 քաջարի հայոց զլուին անցած գնացին մինչև Բերդիզ շայր, որ տափարակ դաշտ մ'է, յարձակեցան թուրքաց վրայ. կոխը տեսց երեք ժամ և անոնցմէ 33 հոգի սպաննեցին ու 12 ալ վիրաւորեցին, մնացեալները ամեն բան թողլով փախչելու կը սպարաւստուէին՝ երբ Բերդիզցի հազարաւոր զինեալ թուրքեր սկսան Զէյթունցոց վրայ քաշել. այդչափ բազմութեան զիմադրել խիստ զժուար էր, մանա-

1 Բերդիզ կամ Բերդուս նշանաւոր էր Ռուբինեանց ժամանակ իբրև իշխանանիստ քաղաք: 1107ին կը գտնուէր Գոյ-Ալայի ձեռքը, որպէս մահէն յետոյ 1157ին Թորոս Բ. առաւ զայն Գըլլըճ Ասլանին՝ իբրև երաշխիք խաղաղութեան: Ասոր բնակիչները, որ ժամանակաւ հայ էին, բռնութեան և հալածանաց երեսն մահմեդական կրօնը ընդունէր են:

ւանդ տեղւոյն զաշտային զիրքին պատճառաւ ապաստանելու տեղ
 չի կար, ոչ մարտկոց և ոչ պատնէշ ունէին հայերը, ուստի լա-
 տագոյն համարեցին մէկ կողմէն կուսիլ, միւս կողմէն յետս նա-
 հանջել. այս կերպով անցան Չահան գետը գրեթէ անփնաս, վասն
 զի 150 հոգիէն ճալլապը-կարապետը և երկու ալ ուրիշ Արե-
 զինցիներ նահատակուեցան և Նազարէթ իշխանը ուրիշ երեքի հետ
 ստըն վիրաւորուեցաւ, որ ապա առողջացաւ իւր մօրը սարած
 դարմաններու շնորհիւ: Այս առաջին նահատակ ճալլապի գլուխը
 թիրքերը կորեցին տարին Մարաշ՝ «Նազարէթ չափուշի գլուխն
 է» ըսելով, թուրքեր մտիթարուեցան ոչ սակաւ:

ԳԼ ԽԲ



ՉՅՐԱՆՈՅԻ ԳՐԱՒՈՒՄԸ

Բերդիզ չայի կուռն գիշերն իսկ որոշուեցաւ գրաւել զօրա-
 նոցը, ուստի խումբ մը պատերազմիկներ առաջ գրկուեցան, որ
 երթան զօրանոցի շուրջը պատնէշներ կանգնեն, իսկ մնացեալ
 զօրքը Ալապաշի Օյնախ կուռած տեղը քիչ զաղար ասեր է ու
 կերակրուելէ յետոյ 100ի չափ ֆրնուզցիներով իրենց օգնութեան
 եկող աէր Բարգուղիմէոս վարդապետի ընկերակցութեամբ արշալոյսի
 մօտ հասան զօրանոցին քով, զոր ամեն կողմանէ պաշարեցին և
 պատնէշներու վրայ կանգնեցին խաչանիշ զրօշակները: Ապա հոգ
 տարին հեռագրական թելերը խզելու, որպէս զի Մարաշի հետ
 ունեցած յարաբերութիւննին կտրեն: Թէև այս գործողութիւնը
 կանուխէս հարկէր ընել զոր Աղասիի անսալով չբրին:

Հոկտեմբեր 12ի առաւօտը երբ կատարելապէս լուսացաւ՝ եր-

կու կողմէն սկսաւ հրացանաձգութիւնը: Զօրքը — թուով 540 — զօրանոցի մէջ ամբողջած, մանուսնոյ պէտք եղածէն աւելի ստանա ու սաղմամթերք սենեակով բովը՝ չէր սեղեր անձնատուր բլլալ, իսկ մերայինք պատնէշներու հետ կանգնած ու յաղթանակի սիրովը վառուած յամառութեամբ կը կռուէին. պաշարողաց թիւը հետզհետէ ստուարանալով գրեթէ 1000 հոգիի հասաւ, այսու սովնային տակաւին սարսուտիւն չէին խոստովաներ թուրքերը. և հարկ եղաւ երեք օր անըողհաս կուտլ, միևնոյն ժամանակ կառավարական պալատն ալ, ուր 60ի շափ զինուոր կը գտնուէին, պաշարուած բլլալով՝ երկու օրէն անձնատուր եղան անոնք, և Գայմագամ Ալիի պէկ գերի ստարուեցաւ և յանձնուեցաւ Բասիլոսեան Մ. Կարապետ աղայի տան հսկողութեան, որը տեսնելով թէ ո և է վնաս չի հասնիր իրենց՝ լուր տուաւ զօրանոցը զինուորական փողի միջոցաւ, որ անոնք ալ անձնատուր բլլան, գիտնալով որ հակառակ պարագային կրակ պիտի տրուէր զօրանոցին: Հրամանատար գնդապետն ալ, որ արդէն սրատրաստ էր յանձնուելու՝ սակայն իրենց կեանքէն կը վախնային, այս ասպահովիչ տեղեկութենէն խրախուսուած անձնատուութեան նշանը տուաւ և խնդրեց մէկը, որ երթայ խը մօտ այս մասին պէտք եղած բանակցութիւնները կատարելու համար:

Թէ՛ յեղափոխականաց և թէ՛ իշխանաց կողմանէ պատշաճ և արժանատուր դատուեցաւ Ֆրնուզի վանքի արիասիրտ վանահայր Տ. Բարդուղիմէոս վարդապետը, որ սուրբ կշտին և խաչը կտրծքին վրայ, պաշտօնական վեզարն ալ գլխին սպիտակ ձիւտ վրայ նստած անվեհեր ու համարձակ գնաց թուրք սպայից մօտ, որոնք արժանաւայել յարգանք ընդունեցին զինքը: Բանակցութիւնը աւարտելէ յետոյ դուրս ելաւ հայրենասէր եկեղեցականը, սուսերամերկ կանգնեցաւ զօրանոցի գրան մէկ կողմը, իսկ անոր հանդէպ՝ փոքր ինչ հեռուորութեամբ կանգնեցան « Հնչակեան » պարսնայր Աղասի, Ապահ, Հրաչեայ, Մլէհ, Նշան, Կարապետ և Զէյթունի իշխանք ու իշխանագունք՝ նոյնպէս սուսերամերկ: Այնուհետև սկսան

մի-մի գուրս հինել սպայք և զօրքեր վարդապետին բարձրացուցած սուրին սակէն անցնելով հայկական զրօշակին խոնարհութիւն կ'ընէին «Էջրալահ» ըսելով: Միկնոյն ձևակերպութիւնը կատարեցին նաև զօրանոցը ապաստանող թուրք տիկնայք, որք է միջի այլոց կ'ըսէին «Եշաշարն Էրմէնի միլլէթի վէ Զէյթունն իկիտէրի, զիրս տիւրազարը թէմիզ տիրէր, տէյիլ պիզիմ թիրքըէր կիպի պօզադ. — կեցցէ հայ ազգը և կեցցեն Զէյթունի բաջագունք, մասն զի մարութ բարոյսիանի տէր են և ոչ մեր թրքաց նման սպա-կանուած»: Զօրանոցի կատարելագուս գրաւումը կատարուեցաւ հօկա. 17ին չորեքշաբթի օրը:

Բալոր գերի ինկած այս զինուորները² Զէյթունցիք իրենց տուներուն մէջ տեղաւորեցին մաս-մաս, կիներն ալ կանանց մօտ զնելով հանգիստ ու ասպհով սպահեցին, ընտանիք սննեցողներն ալ իրենց ընտանեաց հետ միասին քիչ վերջը Ալալուսիան գրկեցին: Իսկ Զօրանոցի Միրալային Խֆֆէտ պէկը, կիւլ մանէսիան Նազարէթ աղայի տունը գրուեցաւ իրրև գերի հսկողութեան տակ:

Զօրանոցի գրաւումը շատ օգտակար եղաւ Զէյթունցոց, ոչ միայն իրրև ասպաստան և իրրև մարտիոց ծառայեց նա հայոց, այլ և անոր մէջ գանուած զէնք, պաշար և այլ սազմամիները երկու

1. Զօրանոցի մէջ 650 հոգի զօրք, կին և երախտներէ զատ, Զէյթունցիք գրաւեցին 120000 փամբուշա. 2 կրօրի թնդանօթ. 600 մարթին հրացան, 170 սուժը. 2 տակառ վառօղ. 2 գարիի ամբար լիքը. 2 բրինձի և լուրիայի ամբար. 30 հատ վառարան. 40.000 քիլօ ալիւր. 30 տակառ ձիթախիղ. 1500 գուլպայ. 300 զօրքի համազգեւտ. 6 ջրի. երեք ձի. 1 զեզարան:

2. Զօրքերու անձնատուր եղած ժամանակ, հայերը բարձրաձայն «սպաւինեցաք ի իսաչ քո» կ'երգէին զօրանոցի մինարէի գազաթէն, ի նշան ուրախութեան ուրիշ կողմակ մըն ալ կտխած էին իսկ զինամասի զինուորները, միրալային հրամարով «ողբաձայն նուազ» ածելով, յաղթական հայ սպատերազմիկներու առջև ինկած Զէյթուն մասն: Թրքաց համար սրտաճճիկ տեսարան մընէր, հայոց համար ազգային հին փառքերու յարսթիւն մը:

[Թագանօթներով հանդերձ հայոց ձեռքն անցնելով՝ ի վերջոյ սաստկացող պատերազմին մէջ մեծապէս նպաստեցին մեր յաջողութեան:

Ի պատիւ Չէյթունցոց պէտք է այստեղ նշանակենք այն կարևոր պարագան, որ ամեն օտարաց և նոյն իսկ թշնամի թուրքաց կողմանէ մեծապէս գնահատուեցաւ, այն է՝ որ զերի ընկող պաշտօնէից և սպաներու կանանց պատիւն կատարելապէս անլիար պահուելէ զատ՝ անոնց վրայ գտնուած մեծաքանակ դրամներն և կանացի գոհարեղէններն ու զարդերը նոյնպէս իրենց թողուեցան, ոչ որ ձեռք երկնցուց անոնց, թէև ամեն հայ գիտէր, թէ թուրքք ամեն տեղ հայ կանանց և օրիորդաց պատիւը բնորոշելէ յետոյ՝ ոչ միայն անոնց ամեն զարդերը, այլ և իւր մերկութիւնը ծածկող միակ զգեստն իսկ լրբարար և անլիարար քաշած ատած էր անոր վրայէն, գլխովին մերկ թողլով զայն: Ահա դուրանի սրղուց՝ և զէյթունցոց միջև եղած անհուն տարբերութիւնը:

ԳԼ . ԽԳ

ՉՈՒԳՈՒՐ—ՀԻՍԱՐԻ ԳՐԱՒՈՒՄԸ

Զօրանացի գրաւուած օրը լուր կհաւ, թէ Ֆրնուզի վերաբերող Չուգուր—Հիսար գիւղի թուրքերը շրջակայ շերքեզներու ալ հրաւեր կարգաւորվ պատրաստուած են իրենց մէջ գանուած 20 տուն հայերը¹ ջարակելու:

Մեծամեծաց իւրհարով Ֆրնուզի հայ միախորը հետը 100ի շտի մարդ առած գիմեց նոյն գիւղը, յորդորելու թուրքերը, որ հանդիստ կենան, հասկցնելով մանաւանդ, թէ հայերը թուրք հասարակութեան հետ գործ չունին, կուզեն հաշա ապրիլ անոնց հետ, իրենց վէճը կառավարութեան գէմ է և այլն:

Այս խօսքերս չի ներդարձեցին բնաւ անոնց գրգռեալ մտքին վրայ, և անոնք բացէ ի բաց յայտարարեցին իրենց ունեցած հաստատ մտազրութիւնը: Մերայինք պնդեցին, թէ թոյլ պիտի չի տան, որ այնպիսի ցաւալի գէւոր մը տեղի ունենայ Ֆրնուզէն 3 ժամ միայն հեռաւորութիւն ունեցող գիւղի մը մէջ, և այս մասին ապահով ըլլալու համար կուզեն թուրքաց զէնքերը ժողվել, անոնք մերժեցին իրենց զէնքերը յանձնել կեալուրներու, ընդհակառակն յարձակման ալ սկսելով Ֆրնուզցի սը սպաննեցին և ուրիշ մը վիրաւորեցին: Այն ատեն հրամայեց միախորը, որ փոխադարձ կրակ անեն անոնց զրայ, որոնք բիշ սը ատեն զիմազրելէ յետոյ անձնատուր եղան, ոմանք ալ այլ և այլ տեղեր փախան: Այս կուսին մէջ թուրքաց կորուստը եղաւ 40 մարդ: Այս գէւոր, այսօրինքն Չուգար—Հիսարի գրաւումը կատարուեցաւ հոկտ. 19ին:

1. Անոնք Ֆրնուզէն եկած փոքրիկ զաղթականութիւն մըն են, և Չուգուր—Հիսարէն կէս ժամ հեռու կը բնակին:

ԳԼ. ԽԴ

ԵԱՅձ ՕՂԼՈՒԻ ՅԱՐՉԱԿՈՒՄԸ ԱՆՏՐՈՒՆԻ ՎԸԱՅ

Չուգուր—Հիսարի թուրք փախստականները ստեղծելի գոյներով նկարագրեցին Չէյթանցուց և Ֆրնուզցուց արարքները՝ ամեն կողմ գրգռելով թուրքերը, մասնաւորաբար Էշաճօղլի տէրէպէյին, որ կատարելով բազմաթիւ պաշար պողոպաններ հասարեց զլուխը ու եկաւ շիվիլիկ կոչուած հայ գիւղին վրայ, որ Անարունի գալստագամութեան տակն է՝ անկէ երեք ժամ հեռաւորութեամբ և կուղեր այնտեղի հայերը ջարդել Չուգուր—Հիսարցուց վրէժը լուծելու համար. հայերը ազաչեցին, որ այդ շարիքը չի գործէ իրենց դէմ, վասն զի իրենք տէրութեան հաւատարիմ են»։ — Եթէ հաւատարիմ էք՝ յանձնեցէք ուրիմն զէնքերնիդ « բաց պէյր »։ — Ո՛չ, պատասխանեցին նորա, չենք կուտիր ձեր հետը, բայց չենք ալ յանձներ զէնքերնիս»։

Այս պատասխանին վրայ թուրքաց կողմանէ սկսաւ հրացանաձգութիւնը, հայերն ալ սուներու և պատնէշներու ետեւն փոխադարձաբար կրակ անելով անոնց վրայ՝ կռուեցան ամբողջ երեք օր։ Այդ միջոցին տէր Յարութիւն անունով քահանայ մը ինքզինքն ազատելով անոնց մէջէն, խոտորնակ ճամբաներով հոտաբարդուղիմէոս վարդապետին մօտ և իրենց նեղ վիճակն անոր հասկրցնելով օգնութիւն խնդրեց։ Վարդապետն առանց փամանակ կորսնցնելու հետն առաւ 200 ֆրնուզցիներ ու աճապարեց իւր սիրելի հօտի պաշտպանութեան։ Բարերազգաբար կէս ճանապարհին հանդիպեցան Շիվիլիցիի հայերու, որոնք աւետեցին իրեն հայոց յաղթանակը և թուրքաց փախուստը՝ սպաննելոց ականջները թաշկինակով ներկայացնելով վարդապետին որ թէպէտ աւրախացաւ այս յաջող ելքին համար, սակայն սպահով չի սեպեց այլ ևս անոնց՝

գիւղին մէջ մնալը, և իրենց անասուններովը մէկտեղ գիւղէն հանելով դանոնք բերաւ ֆրնուզ ամենայն ապահովութեամբ:

Տակաւին ճանապարհէն մէջ էին՝ երբ իմացան թէ Անտրունիի գայմագամութեան կեդրոնը 150-ի չափ բանաարկեալ հայեր կան, զորոնք թիրքերը պատրաստուած են սպաննելու՝ եթէ չ'ազատուին: Ուստի արդէն զբանուած զինուորներուն վրայ 100-ի չափ շիվիւկիցիներ և 100 ալ Զէյթունէն օգնութեան եկող հայեր աւելցնելով գրեթէ 400 հոգով գնացին Անտրուն և թուրքի մը ձեռքով նամակ գրեցին գայմագամին, որ կալանաւոր հայերը անմիաւ արձակէ և իրենք պատրաստ են առանց զէնք մը պարօնելու վերադանալ իրենց տեղը՝ բայց ո՛չ նամակին պատասխան արուեցաւ, ո՛չ ալ բանաարկեալներն արձակուեցան, ընդհակառակը կանխապատրաստուած պատնէշներէ սկսան կրակ թափել հայոց վրայ: Մերայինք ալ արդէն անձնուբաց զինուորներ՝ եկեղեցական-զօրավարի կենդանի օրինակէն ասաւել ևս խրախուսուած մէկ ժամի չափ ամենայն քաջութեամբ կուսելէ յետոյ սաստիկ աղաղակներով յարձակեցան թուրքաց վրայ, որոնք իրենց զիրքերը թողլով փախան: Սրտերնին վախ ինկաւ մանաւանդ երբ իրենց հրամանատար Ալպազ օղլու Տարտու պէչին և Եուսուֆ չալուշին մէկ զընտակի հարուածով սպանուիլը տեսան վարդապետէն: Այն ատեն մերայինք կառավարութեան պալատին վրայ քալելով զբաւեցին ու բանաարկեալ հայերը ազատեցին: Այսօր որ անոնցմէ 40-ի չափ սպաննուած էին արդէն և կարգը միւսներուն եկած էր, որոնք տեսնելով իրենց ազատարարները՝ անբացատրելի ուրախութեամբ լեցուած կը համբուրէին վարդապետին ձիուն ոտքերը: Երեք զեղանի օրիորդներ ալ բոնի կրօնափոխ ընելով ամուսնացուցած էին թուրք երիտասարդաց հետ: Այս օրիորդները 7 ամիս վերջը Էնիճէ Գալէ փախցնելով ֆրանսական հիւպատոսին յանձնեցին Մուրսալեան Տէօլլէթ և Սանդուրեան Աղէքսանդր անուն երիտասարդները:

Հայերը այնուհետև կառավարական շէնքը այրելով և ասրողջ գիւ-

զը աւարի տալով՝ մէջը դանուած բոլոր հայերը ֆրնուզ փոխադրեցին: Այս հուսն մէջ Բարդուղիմէոս վարդապետն զառ-որուն դէմ ուղղուած բազմաթիւ թշնամի գնդակներ կարծ հրաշխք իմն պարսպը կ'երթային՝ մինչդեռ իւր գնդակներ անվրէպ հասնելով նպատակին՝ իրարու ետեւէ կը տապալէին թշնամիները, — նշանաւոր հանդիսացան նաև Ենի-Տիննեա Նշան, Չաքրեան Փանոս, Թեմակերեան, Ալաճաճեան Մանուէլ, Պրաբ, Ալլոյ Նշանեան և Հաճի Չինիկէօղեան և այլն՝ անուրանալի է արդէն ամեն պատե-րազմիկներու ալ քաջութիւնը: Թուրքաց փախուտի ժամանակ Տաշ օլուպցի Ճօղատը օղլի Մարտիրոս քեհեան և Քիրէճճեան Հաճի Կարապետ ծաղըկով զանսնք կը պոստյին» Գապագճը առ-մուզլար, գաչմայրն, կէլէն էրմէնի աիբ, Պմուզու սալմալը Չէյթուն-լու սուր. — գլմակեր իողեր, մի փախչիք հայն է որ կուզայ, Սլոքաւոր *) Չէյթունցին է որ կուզայ»: Անարունի գրաւումը տեղի ունեցաւ նոյնմբ. Տին:

1. Սուր (թեգաներ) շապիկի թեկերուն երկայն մասն է, որոնք իրարու կապելով գլխինն ետեւն անցուցած ուսերուն վրայ կը ձգէ Չէյթունցին, թուրքերէն կը կոչուի Սալմա:

Պ. Լ. ԽԵ:

ԵՆԻՃԷ ԳԱԼԷԻ ԲԼՈՒՐԻՆ ԿՈՒՆԸ

Անարունի յաղթութիւնը ստանելէ վերջ երբ Ֆրնուզ կը վերան-
 դասնային հայերը՝ Պունտուս գիւղին մէջ նամակ մ'ըստացաւ Բար-
 դուղիակնս վարդապետը Էնիճէ գալէի լատինաց Մանուէլ վարդա-
 պետի կողմանէ հայերէն գրուած, որ թխրք զինաւորներու ձեռքով
 հայր Սարվատորի և ուրիշ 12 անձանց կենդանայն այրած և
 վանքը աւարի տուած ըլլալը ծանուցանելով անմիջական օգնու-
 թիւն կը խնդրէր, հակառակ պարագային իրենք ալ կը սէր» ան-
 խուսափելի կորստեան պիտի մատնուին»:

Նամակը կարդալուն պէս վարդապետը այնպէս քովը գտնուող-
 ներէն 200 հոգի գտանց, մնացեալները իրենց յոյնութեան պատ-
 ճառաւ թողուց. Զէյթունէն Շամլ-բէշլիշեան Պ. Փափուսի առաջ-
 նորդութեամբ 100 զօրք օգնութեան եկած ըլլալով Պ. Հրաչեայ
 ալ ասոնց հետ մէկտեղ-ընդամենը 300 հոգի-գնացին Էնիճէ գա-
 լէի վանքը զիշերեցին: Թէ՛ գիւղին և թէ՛ վանքին մէջ բնաւ մարդ
 մնացած չէր, ամենն ալ խոյս տուած էին ձորի մը մէջ, ուր ոչ-
 խարի նման պիտի մտնուէին բարբարոս զօրաց և խուժանին կող-
 մանէ՛ եթէ պատահմամբ այն կողմը հասնող 20 Զէյթունցիներու
 կողմէն պաշտպանուելով անոնց լրաց կողոններն ի փախուստ գար-
 ձուցած չ'ըլլային:

Այս զիշեր թուրք զօրքն ալ Մուսուր տերեսի կոչուած լատի-
 նաց վանքը կը գտնուէր. այս երկու վանքերու հոռաւորութիւնն էր
 2 ժամ և մէջտեղը կը գտնուէր բարձր բլուր մը:

Հետեւեալ օրը հայերը բլուրին մէկ կողմէն վեր կը բարձրա-
 նային թուրքաց արշաւող խումբը գտնելու և անոնց լաւ գաս մը

տալու համար, իսկ թուրք զօրքը միտ կողմէն կը բարձրանար
 սրիշ գիւղերու վրայ իւր արշաւանքը շարունակելու համար: Եւ
 ահ՛ս բլուրին վրայ յանկարծ իրարու պատահեցան մէկ քառորդ
 հեռաւորութեամբ, ու պատերազմն սկսաւ երկուստեք, սաստիկ կա-
 տազութեամբ. թուրքաց զիբքն աւելի նպաստաւոր էր, քան զէյ-
 թունցիներունը, այսու ամենայնիւ դարձեալ յաղթական ելան Չէյ-
 թունցիք և Ֆրնուզցիք ասանց կորստի, այնպէս որ հայու մը
 բիթն անգամ չ'արխնեցաւ, իսկ թշնամին Տ ժամ տեսզ այս
 կուռյն մէջ 41 զիակ և 10 վիրաւոր թողլով ի փախուստ գար-
 ձաւ:

Եթէ Չէյթունցիք պէտք եղածին չափ զէնք և այլ սաղմամթերք
 ունենային այս կուռյն մէջ՝ ամենայն շարժութեամբ կարող էին
 մինչեւ Մարաշ իջնել, ինչպէս նաև նոյն պայմաններով Անտուռնէն
 ալ մինչև Ղարս—պազարի և անտի Սիս հասնիլ:

Այս փառաւոր յաղթութենէ առաջ տեսնելով, որ խումբ մը
 փախրատականներ ձիերով լատինաց մէկ վանքին դոյրբեր կը փախց-
 նեն՝ իսկոյն մի քանի հայեր՝ անոնց ետեւէն հասնելով բոնեցին
 զանոնք, ու բոլոր կողսուսները ետ առնելով, երեք թուրք ալ
 վանքին դրան առջև բերին՝ սպաննեցին:

Իբրև կողոպուտ այս պատերազմին՝ վեց ձի մնաց հայոց: Յետ
 կուռյն, երբ կը վերադաննային հայերը, նախայիշատակեալ ձորին
 մէջ ապաստանող հայերը և կաթողիկ հայերը հետերնին առած
 ողջամբ հասուցին Ֆրնուզ: Իսկ հայոց մեկնելէն յետոյ թուրքերը
 լատինաց վանքերը և հայոց եկեղեցին ու գիւղը այրեցին, մոխիր
 դարձուցին: Հայր Սարկատորի նահատակուիլը նոյ. Տին, իսկ Էջնիճէ
 Գալէի կոխը նոյեմ. 9ին էր. իսկ թուրքերը այրեցին վերոյիշեալ
 հայ Գիւղեր Նոյ. 10ին:

ԳԼ . ԽԶ .

ԿԱՊԱՆԻ ՎՐԱՅ ՅԱՐԶԱԿՈՒՄ

Ասանայի կանոնաւոր և անկանոն զօրաց բնդհանուր հրամանատար քէլ հասան փաշայի աղան Ալի պէյ (յետոյ փաշա) խրբանակը բերելով կապան—որ Զէյթունի արեմտեան կողմը կը գտնուի անկէ 15 ժամ հեռաւորութեամբ, — թէ նոյն անուամբ զիւրը, որ 300 տունէ կը բաղականար, և թէ Պանատխը ամբողջ կողոպտել աւել յետոյ այրեց, 150—ի չափ ալ մտադ կատարեց: Մնացեալ փողովուրդը սարսափահար հազիւ կրցաւ կեանքն ազատել Ֆրնուզ ապաստանելով:

Այս զէպը ծանր ապաւորութիւն գործեց հայոց վրայ, յետի մերայինք 1500 հոգիէ բաղկացեալ բանակով մը Շամը Քէլիշեան փոնտսի հրամանատարութեամբ նոյեմբերի 19ին զիշերը մտան կապան՝ Ալի պէյի բանակը խորտակելու համար: Սակայն թուրքերը նախատեսելով այս յարձակումը՝ բանակը այնտեղէն Սիսնէ փոխադրած էին. Զէյթունցիք ալ չուզելով ձեռնունայն վերադառնալ՝ յառաջապահ գունակն միայն 50—ի չափ անձինք կապանի թուրք զիւրին վրայ յարձակեցան, ամեն բան խորտակեցին ու ամբողջ զիւրը աւարի տունն, 50—ի չափ թուրք սպաննեցին ու գրեթէ նոյնչափ ալ կանայք և աղջկունք գերի վարեցին, զորոնք քիչ մը ատեն պահելէ յետոյ անվաստ արձակեցին իրենց տեղերը:

Բոլոր այս խառնաշփոթութեանց ատեն իրենց կեանքը ապահովելու համար Անտունի և Ֆրնուզի շրջապայքը գտնուած զիւրերէից հայ բնակիչքը Ֆրնուզ ապաստանեցան հետեւեալ թուով և անուամբ. —

40	աուն	Կէօքսիւն	} Կոկիսոնի դաշակն
50	»	Տէրմէն տէրէսի	
20	»	Կէօլ փունար	
90	»	Քիթէճ	
100	»	Տաղ օլտի	
300	»	Կապան	} Կապանի դաշակն
40	»	Թալուժլա	
20	»	Անտուռնի կեղրոնէն	
100	»	Շիվիլի	
60	»	Պունտուի	
10	»	Սիսնէ	
120	»	Եէնիճէ գալէ	
30	»	Չիւրիսի գօզ	
35	»	Մուճազ ակրէ	
25	»	Տիքիլի թաշ	

Ընդամենը 1040 աուն, որոյ վրայ աւելցնելով 300 աուն Ֆրընուզի բնակիչքը՝ ընդամենը կ'ըլլայ 1340 աուն:

Այսքան հօծ բազմութեան սը ահագին բեռան տակ ճնշուած Ֆրնուզ ամեն զսհոգութիւն բրաւ խեղճ փախտատկաններուն սպա-
հօծութեանն ու հանդատութեանը համար, Ս. Կարապետի վանքին հետ մասնաւորաց շէնքերն ալ անոնց արամադրութեան տակ զնե-
լով: Սակայն թուրքը այնտեղ ալ հանդիստ չը թողուց զանոնք, վասն զի 1895 զեկտեմբեր 1ին Ալի սէյ 30,000 հոգիէ բազ-
կացեալ ահագին բանակով մը երեք կողմէ յարձակեցաւ Ֆրնուզի վրայ, որ 1500 պատերազմող միայն ունէր, անոնք ալ չախմախ-
լա հրացաններով զինուած, հազիւ 50-ի չափ մարմին հրացան կը գտնուէր անոնց ձեռքը, իսկ վառօղ, զնտակ խիտ տակաւ բա-
նակութեամբ: Այստ ամենայնիւ անոնք մեծ քաջութեամբ զխմադրե-

ցին թշնամոյն անհամեմատ բազմութեան, և Յօր անրնդհատ տեղ արխնահեղ ու սոսկալի պատերազմի սը մէջ բազմաթիւ թուրքերու, մանտանոց ախանաւոր տնձանց զխակներով ծածկուեցաւ պատերազմի վայրը, սակայն վերջնակէն յազմութիւնը մնաց թուրքին, վասն զի հայոց սազմամթերքը սպառելով Օսմարաւորեցան, խոյս տալ և ապաստանիլ լեռներն ու քարայրները*, սմանք ալ Զէյթուն անցան. հոն զխեցին նաև Ֆրնուզ ապաստանոց բոլոր զազմական բնասանիքները: Հայոց սարաութեան պատճառներէն մէկն ալ Նեախորցի թուրքերուն վրայ արշաւանքի երթալով իրենց մեծագոյն մասին պատերազմի վայրէն նախապէս բացակայ մնալն էր, որով թշնամին պատահութիւն գտաւ կարևոր դիւրքեր գրաւելու:

Գէլպի Զէյթուն տանող ճանապարհը, որ ի սկզբան բաց մնացած էր, փախուստի ժամանակ այն կողմն ալ փակելով թուրքերը՝ սկսան յետամնաց ժողովուրդը, մեծ մասամբ ձերուսի, աղայ ու կին, անխնայ կտորել լգրու սոր կոչուած տեղը՝ 600—է աւելի անձինք, որոնք անձնապաշտպանութեան համար ոչ զէնք ունէին և ոչ փախչելու կարողութիւն. 400—ի չափ ալ գերի բռնեցին: Ասոնց մէջ էին Կապանի Շահան—բէշիշեան Տ. Թորոս, Պունաուիի Տ. Օհաննէս, Լինիճէ գալէի Թախանճեան Տ. Կարապետ և Տ. Գրիգոր քահանայները, զորոնք սպաննելէ յետոյ ծառերէ կախեցին, մի քանիներ ալ վանքին ետի կողմը պատին վրայ խաչաձև դամեցին ի նախատինս բրիսաննէութեան, իսկ շատ կիներ և օրիորդներ, որոնք չուղեցին զազանաբարոյ թուրքին ձեռքը իյնիլ, բարձր ժայ-

1. Լեռներն ապաստանող այս ֆրնուզցիներն էին, որ Ատանալէն Ալի պէյի բանակին զրկուած նպարներն Ալիի մտա Աղալը կոչուած տեղը գրաւելով Ֆրնուզ բերին ու անոնց շնորհիւ ապրեցան երկար տակն, վասն զի իրենց ուսեսաները արդէն սպառած էին ու սաստիկ կարօտութեան մէջ կը գտնուէին: պաշարի կարգմանը տեսնելով հետուէն սազմամթերք կարծեր էին, և թէպէտ 200—է աւելի էին բեռնակիր կենդանիները, սակայն հազիւ 40 բեռը կրցան գրաւել 4 հոգի միայն լինելով սրբ յանդուգն զործին ձեռնարկողները:

ներու վրայէ ինքզինքնին վար նետելով անձնատգան հզան: Թըշ-
նամուշին ձեռքն անցան բացի այս գերիներէն բազմութիւ կենդանի-
ներ և մեծաքանակ նոգարեղէն ամբարտաժ վանքի և գիւղերու մէջ:

Ֆրնուզի հայոց այս նահանջի ժամանակ երկրորդ անգամն բլ-
րացով անխուսափելի մահէ մը ազատեցաւ Տ. Յարդուգիսէաս վար-
դապետը իւր ընկերակից Պ. Ազահի և Պ. Նշանի հետ, զորս
ճանչնալով թշնամին իրենց արտաքին կերպարանքէն առանձին ու-
շաղթութեամբ գնասկներու տարածի սը տեղալ սկսաւ իրենց զբլ-
խուն, ինչպէս ի վերջոյ խոստովանեցաւ հրամանատար Ալի պէյ
ի ներկայութեան Էտհէմ փաշայի և օտար հիւպատոսաց ու այլ
բազմութիւ անձանց, սակայն այն գնասկներէն և ոչ մին հանդի-
պեցաւ անոնց, և վարդապետն իւր ընկերներով անվնաս հասաւ
Զէյթուն՝ պարզ կարկուտէ սը բանուոց մարդու սը անտարբերու-
թեամբ:

Ֆրնուզէն գաղթելով Զէյթուն սպասաւնոց վերոյիշեալ

1340 տուն Հայոց հետ հոն ազատինեցան նաև

150 » Աւագ—կալ (Մխալ), որ կը բազկանայ 14 մանր
գիւղերէ

30 » Ֆենկ

300 » Արեղին՝ 44 կտոր մանր գիւղերէ բազկացեալ

15 » Գօզճուղազ

15 » Հաճի տէրէ

առոր վրայ աւելցնելով 1500 տուն Զէյթուն
բաղաքին բնակիչքը՝ կը ստացուի ընդ ամենը

1500 Զէյթուն

1750 գուրսի եկուրներ

3250 տուն

Այլուստի բազմութիւն հաւաքուելով Զէյթունի մէջ, միւս կող-
մէն գերի ինկած թուրքերն ալ սնուցանելու հարկին մէջ գանուելով
հայերը՝ Պ. Ազատի խորհրդով գնդապետ Իֆֆէմ պէյի (գերինե-

բուն գլխուորը՝ համակ դրել սուին մեծ հրամանատարին թէ՛
 «հայ ջոթեպաններու հետ տեսնա գրկեցէք մեզ, որ ազրինք, հա-
 կատակ սրտազային սովամահ պիտի լինինք, նոյնպէս եթէ շարու-
 նակէք այրել հայ գիւղերը՝ այս տեղի իշխաններն ալ տարրեր դիրք
 պիտի քանեն մեզի դէմ»։ Գերիներու այս համակը գրուեցաւ Գեկ-
 տեւերը 7ին։

Այս համակը ասնոց թուրք զօրքերուն այսպէս պատասխանեց
 հրամանատարը. «Կորիք, անմիաներ, աւերութիւնը շատանց աչքէն
 հանած է ձեզ»։

ԳԼ . ԽԷ

ԵՋԻՏԼԷՐԻ ՊԱՏԵՐԱՉՄԸ

Մինչդեռ Ալի պէյի բանակը Ֆրնուզի կողմէն այսպէս կը յա-
 աջանար Զէյթունի վրայ, Մուստաֆա-Բէէմզի փաշան ալ խը մեծ
 բանակովն Զահան գեան անցնելով եկած բնակած էր վարդանլը
 կոչուած բլուրին զիմաց՝ Զէյթունէն 5 ժամ հեռաւորութեամբ։

Կը մօտենար վճռական ժամը, յորում պիտի սրոշուէր Զէյ-
 թունի ձակատագիրը՝ յաղթութեամբ հասնելու խը ցանկացած ա-
 զատութեան կամ պարտութեամբ ամեն ինչ կորուսանելու, անցեալ
 փառքը, ինչպէս և ազագայ յոյսը, մանաւանդ ներկային մէջ վա-
 յերած իրենց անսահման ազատութիւնը, շնորհիւ հայկական նորա-
 հաստատ վարչութեան, որ հիմնուած էր իրաւանց, արպարութեան
 ու հաւասարութեան սկզբունքներուն վրայ։ Ռուսի բոլոր ժողովուր-
 դը ոգևորուած պատրաստ էր խը անձը զոհելու ի պահպանութիւն
 այս երջանկաւէտ ու բարերար գրութեան։

Որչափ մեծ էր թշնամոյն նիւթական սյժը, նոյնչափ և ուելի

եւ մեծ էր հայոց բարոյական ոյժը, որ կ'ապահովէր իրենց վերջնական յաղթանակը: Այս բարոյական ոյժը կը ներշնչէր իրենց գաւառը պատերազմական սպին, երկրորդ՝ կրօնական անկեղծ ու ջերմեանդ հաւատքը, որով Զէյթունն անմատչելի և անբռնարարելի կը դառնէին շորհօն նախախնամական բացառիկ պաշտպանութեան, երրորդ՝ քահանայից ազատասիրական ոգեւով առած բարոյները, մանաւանդ մինչև այն վայրկեանին զանազան կէտերու վրայ սղուած մասնաւոր պատերազմներու մէջ իրենց ունեցած յաջողութիւնը:

Յեղափոխականներու և Զէյթունցի խելահաս ու կարեւոր անձնաւորութեանց խորհրդով ու համերաշխ գործակցութեամբ սարսափազդուական ամեն կարգադրութիւնը եղած էին և ամեն սը կը սպառնար արուելիք հրամանին: Էւ ահա գեկեմերը Էջին շարթ օր թշնամի բանակէն դուրս մը ձիաւոր զօրք յանդուգն սպայի սը հրամանատարութեան տակ Էջլալեր կոչուած հայաբնակ զիւղին դրայ բալել սկսաւ, սակայն զիւղը ապաստանող Պօզպայիբցի և կարկալարցի հայոց կողմանէ զօրաւոր զիմադրութիւն անհեղափոխ ընկրկեցաւ: Հետեւակներէն 5000 զինուոր ալ 4 հաւ կրտրի թնդանութիւնով Ս. Փրկչի վանքին կողմը յառաջացած՝ սկսան ամրակոծել զայն ու երկու անգամ յարձակում գործելով այնտեղ սարացած հայ ձիախումբի կողմէն սաստիկ զիմադրութեամբ եւ մղուեցան. իրիկուան դէմ երրորդ անգամ ընկելով անովհէր սպայի առաջնորդութեամբ միւս անգամ յարձակեցան, բայց Չօլագեան Փանոսի մէկ գնատին յերկիր տապալելով հրամանատար սպան՝ անոր ետեւէն երկու զինուորակներ ալ տրիշ երկու պաշտօնատարներ իրարու ետեւ ձգելով՝ պարտաւորեց յարձակող բանակը խոյս տալ՝ հրամանատարի սպիտակ ձին յիշատակ թողլով մեր քաջ Փանոսին:

Խոյս տուող բանակը վերագարծաւ սակայն իրեն օգնութեան հասնող 2000 զօրքերու ներկայութենէն խրախուսուած և առաջիններէն աւելի կատաղութեամբ յարձակեցաւ վանքին վրայ շրջանակաձև, անոր հագորդակցութիւնը ամեն կողմանէ կարելու զխառ-

մով: Շատ տաղնապալի էր մերայնոց վիճակը և ներքիլ չէր այլ ևս մնալ հոն: Սրտախ հերոսական բաջաթխասը ճեղքելով թշնամեաց շղթան ասարախի նման անդադրող գնտակներու մէջէն անցան ու ապաստանեցան Մարթապար կոչուած հայարնակ դիպր, կրակ սարէ յետոյ վանքին շուրջը դանդաղ բարբ շէնքերուն, իսկ վանքն ալ թիւրք զնտորերն պրեցին, ինչպէս պրած էին Քրնուզի վանքը, և այսպէս ձմեռնային կարեւոր ապաստանէ մ'ալ գրկուեցան:

ԳԼ ԽԸ

ՍԱՆՏՈՒԻԻ ԿՈՒԻԻԸ, ԳԵՐԵԱՅ ՍՊԱՆՈՒՄԸ

Հեռեկան օրը կիրակի դեկտեմբեր 3 ն էր. հայկական դառն Գր 1500-ի չափ պատերազմիկներ Սանտախ կոչուած արեւելեան լեռան զրայ մարտիացներ շինելով պատրաստեցան նոր ձախատամարտի մը, որ անդի տնեցաւ նոյն օրը խնու կատայու թեամբ և արխնահեղ կերպով:

60,000է. տեղի զօրաց ահագին բազմութեան առջև ողի ի բռին չորս ժամ պատերազմելէ յետոյ հայերը ընկճուեցան ուր ուրիմն և սկսան խոյս աալ դէպ ի Ս. Աստուածածնի վանքը և զօրանոցը, սակայն Սարէնեան ցեղէն բասիլոսեան կարապետ ազան, որ իւր 70-ամեայ ծեր հասակին մէջ իսկ չէր ուզած գուրկ մնալ

1. Այս բասիլոսեան էր, որ սոյն պատերազմին ժամանակ Զէյթունի մէջ բնակող 26 տուն թուրքերն ժողովելով տարաւ իրեն բերդը պատուպրեց ու մինչև հաշտութեան կնքութիւն մարդասիրական ամեն խնամք և հողածափիւն ցոյց տալով անջնաս արձակեց զանոնք իրենց տեղերը, մինչդեռ շատ մը անպաշտօնական վայրերու մէջ թուրքերը իրենց տունը ապաստանող զրակից հայերն ամենատար ցածու թեամբ իրենք իսկ սրախողիսող ըրած են:

այս մեծ պատերազմի փառքէն ալ, իրբն տեսար ճշարտաւ Չէյ-
թունցիի մը՝ որ երբէք կանակ դարձուցած չէ թշնամոյն առջև՝ չի
հանդուրժելով այս վիճակին՝ բարձրաձայն ազագակեց. «մի փախ-
չէք, տեղէք, մեր կնկոցը քէտքը մեռնելուն խէ՛ հէօս չեսք մեռ-
նանք նր բարբէ» :

Գաջ ծերունայն սոյն առպետական խօսք սլաքի մը նման թա-
փանցեց բոլոր փախչողներու սրտին մէջ և ամենը մէկէն վերադառ-
նալով մարտիոցները՝ սկսան շարունակել կոխը աւելի մեծ եռան-
գով։ Թշնամիք հակառակ իրենց անհամեմատ բազմութեան կամաց-
կամաց կը թալնային և պատերազմին վայրը 400-է աւելի գիակ-
ներ և մէկ թնդանթ թնդլով սկսան նահանջել. բայց անոնց մէկ
մասը Պերզինկայի գաղթածէն միտ անգամ յարձակելով հայոց
մարտիոցը մէջտեղ առին։

Էրկու կրակի մէջ մնալով իսպառ ջնջուելու վտանգն ակներե
կը նշմարուէր, ուստի այլ ես առանց ժամանակ կորսնցնելու գո-
րանոցը և վանքը փախան ամենն ալ իրիկուան ժար 10-ին ա-
սեները։ Այս ահեղ կոտորն մէջ նահատակութեամբ ինկած էին
Պասլիկ փաշայի որդին Աւետիքը, տէր կարապետ քահանայի որդին
Վարդեգաբը և ուրիշ 4-5 անձինք։ Միշտ պատերազմը կատարի
կերպով կը շարունակուէր նաև Աթլրիս, Ռզօր, Ատաղ-Կէտիկի,
Ախ-տաղ, Էշէք-մէյտանի և այլն տեղերու մէջ։

Նոյն կիւրակէ օրն էր, որ Չէյթունցի կանայք գայրացած գե-
րի ընկող թուրք գօրաց վատութեան վրայ, որոնք հակառակ իրենց
տեսած մարդասիրութեան և վայելած հանգստութեան՝ կ'աշխատէին
զաղանի հրդեհել Չէյթունի տները կառավարական շէնքին կրակ
տալով, բոլորն ալ սպաննեցին կացիններով և միտ կարելու գա-
նակներով։ Գիւցազն այրերու արժանասօր գիւցազնուհի կիներ ու-
րոնք այդ արինահեղ ճգնաժամին փրկեցին Չէյթունը մոխիր ըլլալէ
և ներքին սպաննացող թշնամիէ, որ այդ պահուն կարող էր պղտա-
րեր ըլլալ Չէյթունի շարժման։

Այն օրն էր, որ Յրնուզէն փախչող տէր Բարդուղիմէոս վարգապեա Չէյթուն հասնելով Շուշրի կամուրջին աղբիւրին առջե տեսա կին սր արեւնաշաղախ, որ բան որ կը լուար նոյնպէս ա-րիւնտա: Սալորական սղջոյնէն վերջ վարդապետը հարցուց անոր. «Մինձ անա չի բք է վրլացոծդ»: — «Ղանախըն մէջը կինոդ էս-կերը ջարդիցոնք. էօնխնց սուտուժուտը կոսիւցնք¹», պատասխա-նեց կինը հայրենասիրական գործ մ'ըրած բլլալու գոհունակութիւնով: Դեկ. 4ին վերոյիշեալ տեղեր պատերազմը կրկնուեցաւ սաստիւ-թեամբ: 5ին կատարուեցաւ Քարթժոչքօրին պատերազմը: Դեկ. 1ին կրկին Քարթժոչքօրի պատերազմը. Դեկ. 7ին Մարաշի կառավարիչ Փաշան մի քանի պատգամաւորներ զրկեց Չէյթուն, պատուիրելով անոնց որ աշխատին համոզելու հայերին անձնատուր լինելու, զերի գօրքերին ազատելու և եթէ հնար լինի հայոց դիրք և զիճակ քննելու համար: Մարաշի պատգամաւորներ ասոնք էին: Թորոզլու բաշանայ, Պետրոս Սալաթեան, Յարութիւն Մարատեան, Յուսէփ Տիշէքէնեան և Կօստան Տ. Յովհաննէսեան: Ասոնք Չէյթունցոց կողմէն մի քանի օր բանտարկուեցան և ձեռնունայն եւ զրկուե-ցան: Ասոնց հետ Աղասին նամակ գրեց Մարաշի կառավարչին. թէ Չեր զրկած մարդիկ խաբերայ լրտեսներ են և մենք կարեւոր-թիւն չ'ենք սար սչ Չեզ և սչ Չեր Առաքեալներին: Փաշան կա-տազած խեղճ պատգամաւորներուն բանտարկեց, «թէ դուք գնա-ցիք, տեղի բաջալերեցիք Չէյթունցոց»:

1. «Մեծ մայր, ի՞նչ է լուացածդ: — Պալատին մէջը կեցող գօրքերը մեռու-ցինք. անոնց զգեստեղէնք կը լուանք»:

ԳԼ . ԽԹ

ԲԷՄԷՉԻ ՓԱՇԱՅԻ ՊԱՀԱՆՁՈՒՄՆԵՐԸ

Սանտուխի կարևոր դիրքերը գրասեղով Հայոց ձեռքին՝ Ձէյթունի գրասեղով ալլ ևս ապահովուած կարծեց թշնամին, սաստի ընդհանուր հրամանատար Մուսաաֆա-Բէնգի փաշա բանակը հրատիրեց հայոց գլխաւորները նոյն պատերազմին հետեւել երկուշարթի օրը՝ սուլթանին իրատէն անոնց հապորդելու համար: Մերայինք արդէն պատեհութիւն կը փնտռէին թուրք բանակը լրտեսելու համար, զիստի որոյ սիրայօժար յանձն աննելով այս հրաւերը՝ բանի մը գլխաւոր անձինք իրեն պատգամաւորք զնացին փաշային մօտ:

Հրամանատարը ցոյց տալով անոնց կայսերական պատգամագիրը՝ բաց. «Վազը Ձէյթուն պիտի մանեմ և 15 տարուանէ վեր ու 60—էն վար եղող բոլոր ժողովուրդը սուրէ պիտի անցընեմ՝ բաւ բարձրագոյն հրամանի, և կենդանի մնացածները Պազարճը պիտի բնակեցնեմ, և որպէս զի այս ստեղծի պատահանէն զերծ մնաք՝ փաթացէք կատարել հետեւել պահանջներս: —

Ա. Ետզարէթ իշխանը (առաջ չախուշ) և յեղափոխական առաքելութեան բոլոր անդամները պէտք է ինծի յանձնէք.

Բ. Այն Ձէյթունցիները, որ ալ յեղափոխականաց գործակից ըլլալով կարևոր զիր կատարեցին այս պատերազմին մէջ, նոյնպէս յանձնէք.

Գ. Զօրանոցը՝ մէջի եղած ամեն սպամամթիրքներովը, վանքը և զերի ինկած զօրքերը ինծի յարձընէք:

Չ. Պազարճը Մարաշու հարաւային կողմը կ'իջնայ՝ 7 ժամ հեռու. զարմազամ լեզ մընէ և ապականեալ օդ մ'ունի:

Գ. Ամեն ունեցածնիդ—զէնք, ստացուածք, կահ—կարասիք և անասուններ թողլով՝ մի միայն ձեր կանանց ու զաւակաց հետ բանակը գալով անձնատուր ըլլաք:

Մերայինք առերես յանձն անելով այս պայմանները թողտուութիւն խնդրեցին մեկնելու, հրամանատարը բիշ մը զգկամակութեամբ թողուց զանոնք, սակայն բանակէն քառական հետանալէ յետոյ զնսակներ արձակել տուա անոնց վրայ, ամանց ալ ժամացոյցը և ստակները կողոպտեցին անարգալից խօսքերով, զնսակներէ վիրտորուեցան պատգամաւորաց հետ բանակը գնացող Մարաշի հայ կաթողիկ վարդապետը թեէն և բողոքականաց բարոզիչ պատուելին սարէն, և առանց սրիշ ֆեսա սը կրելու կարողացան հասնիլ Զէյթուն:

ԳԼ . Ծ

ԶՕՐԱՆՈՑԻ ԱՅՐՈՒՄԸ

Ի հարկէ այս ծանր և անպատուարեր պայմանները անկարելի էր որ ընդունուէին, ընդհակառակն վճռեցին նորա միաբան կուռի մինչև իրենց վերջին շունչը և արեան վերջին կաթիլը: Այս ոգով հարկ եղած նորանոր կարգադրութիւններն ալ արին անյապաղ, խրախուսուելով մանաւանդ պատգամաւոր Քատիլոսեանի և խը բնկերաց քաջալերիչ խօսքերէն, որք Զէյթունցոց սովորական եղած ձևով կը կրկնէին անպար «հիշ մի վախէք, տեղէաք, չիրբուր պիտի նընը՝ էն կուռը—ինչ որ պիտի ըլլայ՝ այն կ'ըլլայ»:

Բէմզի փաշան տեսնելով, որ խը պահանջներն անգործադրելի մնացին և անձնատուութեան համար ո՛ր և է շարժում չի տեսնուիր հայոց կողմանէ՝ վճռեց վերսկսիլ պատերազսը և բախել նախ զօ-

բանոցին վրայ, որ հայոց ձեռքը անցնելէն յետոյ սազմագիտական կարևոր փոփոխութեանց ենթարկուած էր, և այժմ՝ իբրև մարտկոց կը ծառայէր հայոց: Յարձակումն սկսաւ գեկաեմբեր 6 չորեքշաբթի օրը սաստիկ ուժով, բայց մեծ կորուստով ետ սզուեցաւ. շարունակեց խոր յարձակումներն այնուհետև ամեն օր տարբեր փամանակներու մէջ, մերթ առաօտը, մերթ երեկոյին, մերթ գիշերը, և ամեն անգամին ալ խոր զօրքը սասանորդելով ետ կը գտնուար ձեռնունայն: 20 օրի շտի գրեթէ այսպէս շարունակ աշխատեցան գրաւել զայն. բայց չի յաջողեցան:

Վերջապէս օր սը օդին մէջ տիրող թանձր մտաախուղէն օգտակելով զազատագողի ու լաւիայն մեծ թուով եկան ապաստանեցան զօրանոցին մօտ գտնուած երկու մեծ շէնքերուն և սզկիթին մէջ: Չայր աննկելով հայերը զօրանոցը կրակեցին ներսէն և իրենք զազանի դռնէ մը—որ վերջը բացած էին—փախան Չէյթուն առանց անսնուելու՝ ընդամենը 400 հոգի:

Թշնամիք կարծելով թէ այլ ևս թակարդին մէջ բռնուած են հայերէն իրենք ալ դուրսէն կրակ առին զօրանոցին, և այսպէս երկրորդ խիստ կարևոր գիրքէ մը և ձմեռնային ապաստանէ մը զրկուեցան: Ամբողջ երկուք ու կէս ամիս մնացած էր այն հայոց ձեռքը:

ՊԼ. ԾԱ.

ՎԱՆՔԻՆ ՌՄԲԱԿՈՒՄՈՒԹԻՒՆԸ. ԵՆԻ-ՏԻՆԵԱՍ ԵՂԻԱ.

Թշնամիք հետզհետե յառաջ գալով Պերզինկայի ստորաք Ղաթ անուն անղը՝ գիրքեր բռնեցին Զէյթունէն մէկ ու կէս ժամ հետաւրութեամբ ու սկսան այնտեղէն արտակածել Ս. Առաքածածնի վանքը: Էյլէնճեցի խաճք մը հայ գիւղացիք, որ Պերզինկայի քարայրին մէջ արացած էին կանխաւ ու վրաններէն դուրս ելլող ամեն զօրքերը գնտակահար կը առաքուէին, տեսնելով այսպէս վանքին արտակածութիւնը՝ թնոյնութեամբ ալ սրբանեցին: Այս բանը սեծ վախ ձգելով թշնամեաց վրայ՝ թնոյնութիւն ալ հոն ձգեցին փախան, ու վանքն անվնաս ազատեցաւ:

Այս անակնկալ օգնութենէն առաջ վանքը ապաստանող հայերէն ոմանք կը մտածէին կրակ տալ անոր՝ որ թշնամեայն ձեռքը շիյնի, ստեղծեց Ենի-Տինեա Աւետիս աղայի որդի Եղիա ազան հակառակելով այս խորհուրդին՝ արդիւնց զայն:

Յախանական անմահ յիշատակաց արժանի է այս ազնիւ ու ճշմարտապէս հայրենասէր անձի օրինակելի քաջագործութիւնը, որ խիստ վհատեցուց թշնամին իւր մղած վճռական ճակատամարտի մէջ, և որ թերեւս ամենամեծ ազգեցութիւնը սնեցաւ Զէյթունի ճակատագրին վրայ:

Եղիա ազան ձմրան այն սաստիկ ցուրտ եղանակին գիշեր տան 50 արիասիրա հայերով Պերզինկայի լեռնէն «Ես սուրբ Փրկիչ» բսելով յանկարծ յարձակեցաւ թշնամեայն բանակին վրայ, սուսերամերկ իյնելով շփոթած զօրքերուն մէջ 400-էն աւելի զիակ փոսց գետնը և 20 հաս մարթին ու մէկ վրան իլելով անոնցմէ՝ հեռացաւ. իւր քաջարագուկ ընկերներէն 3 հօգի միայն զոհ տա-

լով իրենցը արտաքոյ կարգի յանդգնութեանը համար: Այս ճակատամարտը տեղի ունեցաւ Գեկ. 10ի զիշեր: Ասանց մեկնելէն վերջն ալ զօրաց մէջ տիրոջ խառնաշփոթութիւնն ու սարսափը շարունակուելով իրար կը ջարդէին անգիտարար, որով մեծապէս փաստեցան և խիստ շատ վհատեցան: Այն ատենն էր, որ Մարտչի Հաճի Եասին օգլու հարիւրապետը և չերքէզ պէյերը յայտարարեցին Մուսաաֆա-Բէմգիի, թէ անկարելի է ամենէ Զէյթունը. և նոյն իսկ անոնց նահանջը թակարդ մ'է Օսմանեան բանակին: «Այս եղանակաւ, կ'ըսէին պէյերը, 30 տարի առաջ ջարդեցին 756 չերքէզներ կոտորածի ձորը՝ Ալիզ փաշայի պատերազմին ատեն»:

Գոռոզ հրամանատարը, որ քիչ ժամանակ առաջ կը մտածէր ամբողջ Զէյթունը հիմնայաւան կործանել ու ժողովուրդը սուրբ անցրնել, այժմ սկսաւ գլխիկոր ու սրտաբեկ խորհիլ, թէ Բնչպէս կրնար եւք մը փոնել այս դժուարին կացութեան. խը երկնաստիճան բարձրութեանէն խոնարհեցաւ մինչև հաշտութիւն ինկրելու նսաստութեան:

Խը կողմանէ վերոյիշեալ Հաճի Եասին օգլու հարիւրապետը նամակ գրելով Նազարէթ իշխանին՝ կ'ազաչէր որ աշխատի հաշտութիւն գոյացնել Զէյթունցոց և թուրքաց միջև, որուն ի վարձատրութիւն կը խոստանար սուլթանին կողմանէ հազարապետ կացուցանել զինքը Զէյթունի: Եղիա ազան, որ Նազարէթ իշխանի մերձուոր ազգականն էր, համոզեց զայն որ չի պատտօխանէ անոր: Նամակը կրկնուեցաւ ու երրորդուեցաւ՝ բայց զարձեալ անպատասխան մնաց:

Այս ատեն Բէսզի փաշան յուսակաւոր հետազրեց սուլթան Համիտի, թէ 110,000 զօրքով անկարելի է գրաւել Զէյթունը, եթէ 50,000 զօրաց նոր բանակ մնալ օգնութեան չի հասնի:

Սուլթանը սրանեղած պաշտօնանկ արաւ Բէմգիին սրպէս ապիկար զօրապետ սը և անոր տեղ նշանակեց Էաճէմ փաշան ընդհանուր հրամանատար Զէյթունի բանակին:

Քլեմիսի փառացի յուսակառուր եղած էր ոչ միայն արևելեան բանակի այրալէս տկարանալէն, այլ նաև Ալի պէյի հրամանատարութեան տակ զանազոյ արևմտեան բանակի ծանր կորուստներ կրելէն: Վասն զի բարգր բիշ մը ժամանակ Համիտի այս հաւատարիմ գործակալին ալ բթին խնդալէն վերջը՝ կրեմ գարձուցած էր անկէ:

ԳԼ ԾԲ

ՀԱՅ ԹՆԴԱՆՕԹԱԶԻԳԸ ԵՒ ԹՈՒՐԲ ԹՆԴԱՆՕԹԱԶԻԳԸ

Ալի պէյ Ֆրնուզը գրաւելէն յետոյ եկաւ Ալազ-կալ, որուն բնակիչներն արդէն զաղթած էին Զէյթուն, և ամառացած բոլոր գիւղերն այրեց ու սկսաւ գէպի Զէյթուն բաւել: Ետն ուղղաթիւնը բռնեցին նաև չերքէզները հիստիային արևմտեան կողսը կէտիկ կոչուած տեղէն իրենց հրամանատար Մէհմէմէա պէյի առաջնորդութեամբ, ու հասան մինչև Հէնիւնց բարբար կոչուած տեղը, ուր գեկաւները 7 հինգշարթի օրը սաստիկ պատերազմի բանուելով՝ հրամանատար Մէհմէմէա պէյը սպաննուեցաւ 25 հոգի ուրիշ չերքէզներու հետ: Ասով մեծ լքում առաջ եկաւ չերքէզաց մէջ, վասն զի անոնց համար մէկ պէյը 1000 մարդ կ'արժէր: Հայք կորուսին միայն Ռսկանեան Խաչերը Զէյթունէն և տէր Յովակիմի սրբի Պօղոսը Ալազ-կալ գիւղէն:

Գեկաւները 8, ուրբաթ օրն ալ նմանօրինակ կոխ մը տեղի ունեցաւ Երզուպեան թաղի գերեզմանատան մօտ, ուր հասած էին Ալի պէյի 35,000 զօրքերը Քերէր տիկեր (քարայր տներ) կոչուած տեղէն և ամբողջ Մօլապ-աէաէի լիւր գրիթէ ծածկած էին մարդով, մինչդեռ մեր մարտիոցներուն մէջ կը գանուէին միայն 1000-ի

չափ հայեր: Պատերազար տեղեց 4 ժամ յոյժ արիննահեղ կերպով,
բայց սակաւին ոչ մին և ոչ միւսը կ'ուզէր պարտութիւն խոստ-
ովանիլ:

Այս անհաւասար կուռնի ի հետուստ հանդիսատես եղող Տ.
Բարդուղիմէոս վարդապետը այն պահուն գործնոց կը գանուէր
իրեն ընկերացող Պ. Ապահի, Շամբ-Քէշիշեանի և այլոց հե-
տատերազմի սկիզբէն մինչև վերջը իրեն միակ զօրավոյ հանդիսացող
անկեղծ ու ջերմեանոց հասարակ գորութեամբ ուղեց վերջ սայ այս
կուռնի ալ՝ ահարեկեղով լծնամին:

Թուրքաց բազմամիտ թնդանօթներուն զմ գօրանոցի բակին
մէջ կար միայն մէկ թնդանօթ (միւսը Քերծեր տարած էին), զոր
մերթ ընդ մերթ կ'արձակէր Շամբ-քէշիշեան լծնամի բանակին
միայ: Վարդապետը «Պահպանիչ» մը կարգալով բաջարի հերուս-
պետին միայ՝ առաջարկեց անոր, որ թնդանօթին բերանը ուղղակի
թուրք սմբաձիպին միայ դարձնելով կրակ տայ: Կատարուեցաւ վարդա-
պետին խնդիրը և սուսբը ստանց վրիպելու գնաց ջարդակոտոր արտ.
Այլ պէյի սմբաձիպը՝ մեծ սարսափի մէջ ձգելով հրամանատարը
և բուր գօրբերը, սրանք սկսան նահանջել օդնութիւն խնդրելով
միանդամայն Բէմդի վաշայէն: Այս պատերազմին մէջ 30 հոցի
կորսնցուցին թուրքերը և 3 ալ հայերը:

Հասաւ պահանջուած օդնութիւնը, սակայն օրը պարտամած
բլլալուն չի կրցան շարունակել պատերազմը և երկուստեք զազար
տանելով հեռեկալ օրուան համար ծրագիրներ կը պատրաստէին:
լով: Գաշինքը այն ժամանակաց սովորութեան համաձայն կատարուեցաւ ատրճանակի փոխանակութեամբ, և հետեւեալ պայմանները ընդունուեցան. թէճիրլիցիներուն ամարանոց չուիլը Զէյթունի մէջէն պիտի ըլլայ. նոյնպէս աշնան՝ ասին ալ Զէյթունի մէջէն պիտի վերադառնան Չուզուր օլլա: Այս աշխրթները այն ատենները 800 տուն էին. գրեթէ նոյնքան, թերևս բէշ մը աւելի էր Զէյթունցիներուն ազգաբնակիւթիւնը: Ծնորհիւ այս գաշնակցութեան՝ հայերը ազատեցան Չիլլաաբըր օղլուներու լուծէն և Զէյթունցի ջարհալանները սկսան անվտանգ երթնելիլ: Այսպէս մօտ յիսուն տարի տեկց այս գաշնակցութիւնը մինչև իօճա ֆէհեա օղլու Հանիֆի աղայի մահը: Յետոյ թէճիրլիցիները սկսան թշնամութիւններ ցոյց տալ: Քաղաքէն ժամուկէս հեռաւորութեամբ՝ Ս. Կարապետ վանքին միտրաններէն վանաճայր վարդապետը սոսկալի տանջանքներով շարշարեցին (տես Ա. մաս, էջ 17): Այս դէպքին հետեանքով Զէյթունցիները խզեցին իրենց գաշինքը և բացարձակապէս արգիլեցին Աշխրթներուն քաղաքին մէջէն անցնիլը, ու երկրորդ անգամն ըլլալով ստիպուեցան Զիլլաաբըր օղլուներուն հպատակիլ առաջուան պայմանով: Առանց որեւէ միջակէպի խաղաղ ապրեցան մինչև 1618 թուականը: Այդ տարին էր որ Հեթում քահանան Պուլիս երթալով՝ յաջողեցաւ Սուլթան Մուրաա Գ. Էն Զէյթունի ազատ հռչակուելուն հրովարտակը աննել (տես Ա. Մաս, էջ 30): Եւ 1865ին, Սուլթան Աղիլի օրով թիւրքերը յաջողեցան, տիրապետել ոչ պատերազմով, Զէյթունին: Այդ թուականը ամենատխտուն է Զէյթունցիներու պատմութեան մէջ: 1875-78, երեք տարի Զէյթուն նորէն վայելիլով իր նախկին ազատութիւնը՝ յետոյ կրկին կորսնցուց զայն: 1895 թուա-

1. Քաջարի Հեթում քահանայի Պուլիս գնալուն առիթ եղաւ Պէշէնու Պէկերէն կրած մէկ ծանր անարգանքը: (Փոխանակ Հեթում ասելու, «կէօթիւմ» ըսեր էին իրեն):

կանին 5 տմիս ևս ազատ մնաց՝ պատերազմին մէջ բանակելով անոնց ղինուորական և պաշտօնական հաստատութիւնները: Եւրոպական կառավարութիւններու միջամտութեամբ, 1896 է սկսած Քրիստոսնեայ գաղղամներով կը կառավարուի տաճկական գերիշխանութեանը տակ:

Այս պատերազմներու պատմութեան մէջ Զէյթունցի կիները իրենց մեծ և զեղեցիկ զերը ունեցեր են: Ոչ միայն կը բաւականանան իրենց զաւակները խրախուսել պատերազմի գնալու տանն, այլ և սմանք ալ յաճախ կը մասնաջկին այդ պատերազմներուն: «Գնա, կրտէ Զէյթունցի մայրը իր զակին, գնա կուսուր և ջանա զուրանդը վառօղ և գնտակ շապահել, ազգի և հայրենիքի օգտին երկու թուրք աւելի սպաննէ. զիակդ թքնել տուր, երեսդ թքնել մի տար»:

Հին գաղբահարք Զէյթունի մէջ հետեւեալներն են

- | | | |
|---|------|---------------------------------|
| 1 | Տուն | Փայտացի |
| 1 | » | Զաթցի (պօղօթ) |
| 1 | » | Մաղնիսացի |
| 3 | » | Կիւրիւնցի |
| 1 | » | Տարէնտացի |
| 4 | » | Թէյեկցի (կեալուր տաղ) այժմ |
| 1 | » | Շիվիլիկցի (Անաէրուն) Անտաղըն |
| 2 | » | Կապանցի » » |
| 2 | » | Շամցի |
| 1 | » | Պազտասացի |
| 1 | » | Մոսկուլացի |
| 1 | » | Շահպէնտէրեանք (պարսկաստանցի) |

19

1 » Պրզմբշէնցի (Խարբերոյ

1 » Ասանացի

1 » Հածրնցի

6 » Պօղօխցի

5 » Մարաշցի

1 » Ամբըցի (Անտիոքի կողմ)

1 » Տէրէցի (Մարաշու գեղ)

24 » Լազ թուրք (Տրապիզոն)

1 » Կեսարացի

60

Վերոյիշեալ դասթականները ժամանակին Զէյթուն եկող ապաստանողներ են, իբր ազատ երկիր։ Ասենով շատ տեղերէ մարդիկ երբ յանցանք մը գործէին, փոխանակ թիւրք բանակում մէջ տանջուելու, կը վազէին Զէյթունի պաշտպանութեանը կապաստանէին։

ՍՈՒՐԷՆԵԱՆ, ԵԱԳՈՒՊԵԱՆ, ԵՆԻՏԻԻՆԵԱ ԵՒ ՇՕՎՊՈՆԱՆ ԳԻՐԻԱՍՏԱՆՔ

Սուրենեան իշխանի գերդաստանք

1 Սիւրէնինք¹ (Սուրենեանք)

2 Սիթինք (Սէթեանք)

3 Բէսիլիսինք (Բասիլոսեանք)

4 Կէյիոնք (Կէյիկեանք) (Գէորդեանք)

5 Մրխար վարդապետինք (Մահաեսի վարդապետեանք)

6 Աղպաշինք (Աղպաշեանք)

7 Թումիկոնք (Թումիկեանք)

1. Փակագծի մէջ անուած անունները գրական լեզուով են, իսկ նախորդները Զէյթունի բարբառով։

Եւարուպեան իշխանի գերդաստանք

- 1 Խնչիրինք (Խաչերեանք)
- 2 Տէր Սահակինք (Տ. Սահակեանք)
- 3 Թիւրխւսինք (Թորոսեանք)
- 4 Սըրըրպինք (Սերովրեանք)
- 5 Կարապիտինք (Կարապետեանք)
- 6 Ասպրծատուրինք (Աստուածասուրեանք)
- 7 Մնացակնինք (Մնացականեանք)

Եկեխոխնեա իշխանի գերդաստանք

- 1 Ասատուրինք (Աստուածասուրեանք)
- 2 Աւետիսինք (Աւետիսեանք)
- 3 Փէնիւս փէշինք (Փանոս փաշայեանք)
- 4 Նշանինք (Նշանեանք)
- 5 Փիրշինք (Քրիշեանք)
- 6 Մըխըր փէնիւսինք (Մահտեսի փանոսեանք)
- 7 Մարկոուսինք (Մարկոսեանք) (այժմուս Նազարէթ իշխանք
Մարկոս Աղային սրղին է ե Պապիկ փաշայի եղբայրք):

Շօրոյեան իշխանի գերդաստանք

- 1 Սարգըսինք (Սարգիսեանք)
- 2 Պուտուսինք (Պոտոսեանք)
- 3 Չափառինք (Չափառեանք)
- 4 Հարապիտինք (Հարապետեանք)

ՅՈՒՅԱԿ ԶԷՅԹՈՒՆԻ ԱՄԲՈՂՋ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒ
ԵՒ ԴԷՊՔԵՐՈՒ

1780-1895

Ք Ո Ւ Ա Կ Ա Ն

Բիւ	պատերազմ. դեպք		
1	Լօսէր փաշա	1780	
2	Ալի փաշա	1782	
3	Գալէնտէր փաշա	1808	
4	Չափան օղլու Մէհմէա փաշա	1810	
5	Քէօսէ փաշա	1829	
6	Պայազլիա օղլու Սիւլէյման փաշա ներքին խոսիւթիւն	1831	
7	Իպրահիմ ուշազիններու ջարդը և Սիւ- լէյման փաշա	1832	
8	Մարաշցի պէյերու զերութիւնը և թօսուն փաշա	1835	
9	Մարաշի իշխան թոփալեանի սպանումը. Իպ- րահիմ փաշա և Տէլի բէշիշ	1836	
10	Աղճա տաղի պատերազմը	1840	
11	Խասէքիի պահանջումը	1841	
12	Թէճիրլիցեաց կոխը և Եիւսիւֆ փաշա	1842	
13	Զէյթունցեաց թէճիրլիցիներու հետ թշնամութիւնը և հինգ տարի շա- րունակ սղած պատերազմը	1850	
14	Ալպուստանցի հաճ աղա	1842	
15	Թոփալ Սատո	1847	
16	Հայթանները և Աթօլուղի կոխը	1847	
17	Ալշարներու հետ պատերազմիլ կո-		

	կիսոնի Չինչին պողազը (ճանճի բերդի կիրճը) ըսուած տեղը	1848
18	Պայազիտ օղլու Ահմէտ փաշա	1853
19	Խուրշիտ փաշա	1860
20	14 Բէկթմանցի Թիւրքերու սպանումը	1862
21	Ազիզ փաշա	1862
22	Պայազիտ օղլու Ահմէտ փաշա	1862
23	Պոյամեանի սպանումը	1863
24	Տափուսու Նիսպի էֆէնտի միականի գայ- մագամը	1875
25	Վէզիր օղլու հաճի Մամբրէ և Եայճ օղլու	1878
26	Պասիկ փաշա, փոյրազ Ալի	1878
27	7 փաշա Նիկողայոս Խաչ. Չարբեան. Պասիկ փաշա և Նոխուտեան փանոս	1878
28	Պասիկ փաշա և բանտարկեալը	1878
29	250 Չէրքեզներու ջարդը	1879
30	Տէտէ փաշա և Արեղինցիներ	1884
31	Քացախ փանոս	1886
32	Սալէհ փաշա	1890
33	Տերօրական գործողութիւնը Արեղին գիւղա- ցիներէն	1895
34	Թիւրք հազարապետի և հարիւրապետի քրո- նուզցիներէն սպանուիլը	1895
35	Բերթիզ Չայի պատերազմը	1895
36	Զօրանոցի գրաւումը	1895
37	Զուբուր Հիսարցուց անձնատուութիւնը	1895

1. Մինչև 1890 եղած պատերազմները կը գտնուին Ա. մասին մէջ բացի Այ-
չարներու պատերազմէն. որ գրուած է այս թ. հատորիս մէջ:

- 38 Անարդնու գրաւումը Բարդուղիմէոս
վարդապետի ձեռամբ 1895
- 39 Եէնիճէ գալէի բլուրին կոխը 1895
- 40 Կասպանի վրայ յարձակում 1895
- 41 Եէզիաւէրի պատերազմը և Բէմգի փա-
շա 1895
- 42 Սանդոխի կոխը 1895
- 43 Թխրք գերեաց սղանումը կանանց
ձեռամբ 1895
- 44 Չօրանոցի այրումը 1895
- 45 Վանքին ամրակոծումը, Եէնիտինեա
Եզիայի յարձակուար Թխրք բա-
նակին վրայ 1895
- 46 Հայ և Թխրք թագանօթաձիգները . . . 1895
- 47 Ալի պէյի բանակին խորտակումը ևն .
և Էահէմ փաշայի գալուստը (*). 1895

Թիւ 13 ի մէջ ցուցուած Զէյթունցիներու և Թէճիբլիցիներու
հնգամեայ պատերազմը, 10 կանսնաւոր բախումներով 10 զատ
պատերազմ բնդուսուած է:

Համարումարն է 41 պատերազմ և 16 դէպք:

Զէյթունի շուկան և Զէյթունցիներու ստորեայ կերակուրները
ու իրենց ստոյշապահութիւնը:

Բացի թաղային մի բանի խանութներէն Զէյթունի մէջ կայ
շուկայ (Պեգար տեղական լեզուով) մը, որը կը գտնուի բաղաբին
ճիշտ կեդրոնը Սուրէնեան իշխանի պատականած միջին թաղին մէջ:
Այս շուկան գրեթէ 60-ի չափ խանութներէ կը բաղկանայ և որոնց
մէջ կը վաճառուին ամեն տեսակ ապրանքներ, սակայն խրաբան-

չիւր խանութի մէջ կը ծախուին խաւն ի խուռն մէն մի տեսակ ապրանք, — Կոպրեղէն¹, մանիֆաթուրայի տեսակները (Քամ պակեղէն, Բրդեղէն և մետաքսեայ կերպասներ) մանրալվաճառի առարկաներ, ծխախոտ և թէմպէքի, մրգեղէնք² և Բանջարեղէնք: Ծուկան կը գտնուի հաս մը հացի փուռ: Կան նոյնպէս ամեն տեսակ արհեստաւորներ՝ բացի դարբիններէն՝ որոնք մասնաւոր տեղեր կ'աշխատին, նաև կան շուրջ վեց հաս հաստատուած մաս վաճառ՝ բացի Աղձիօցոս բուռած տեղւոյն մնալվաճառներէն (Շոյթոյնիան իշխանին թաղին մէջ պղատիկ շուկայ մը):

Կերակուրներ. — Ի բաց առեալ քանի մը տեսակ կերակուրներ՝ Չէյթուռնի մէջ կը պատրաստեն հետեւեալ կերակուրները. — Մսով քիֆրէ³, սրբ առօրեայ սոյորութիւն գարձած է. բաց ի պահէր օրերէն՝ այս կերակուրը երեք տեսակի կը բաժնուի, հում բուֆոս, Գրլէօր բուֆոս, Մէջէօլ բուֆոս, ասոնք կը պատրաստեն ձաւարով (պուլլուր), փուխ (խղազուրի թարմ միս) մսով, միսը կը ձեծեն և խմորի պէս բնելէ յետոյ ձաւար, սոխ, ազաաքեղ, հաւէճ (պղպեղ) խառնելով կը շաղեն և պղատիկ վարունկի ձեւով կը շինեն հում քեօփոտէ և առանց եփելու հում հում կ'ուտեն:

Բ. Կլոր քեօփոտէ կը շինեն բնկուզի մեծութեամբ, յետոյ գլորօրի (մսի ջուր) մէջ կ'եփեն և նոյն մսի ջրին հետ կ'ուտեն:

1. Չէյթուռնի արտադրութիւններէն յիշելու արժանիներն են, իւրը, պանիրը, մեղրը, ուսուպը, շամիչը. միայն ասոնց շարքէն մածուցը կը պակսի. զի քաղաքին շուրջը արօտաանեղի չը լինելուն համար, Չէյթուռնի մէջ կաթնատու ետիւր չի պահուիր, տարուան մը մէջ հազիւ ամիս մը (ապրիլ 15էն մայիս 15) մածնափաճառութիւն կրնայ ըլլալ, վասնպէ խաշնարածները կը հետանան քաղաքէն 5-6 ժամ հեռուն գէպ ի հիւսիս Պերիտ լեռան ստորոտները:

2. Չէյթուռնի խաղողը, նուօը, խնձորը, տանձը, նոյնպէս մէն մի ծանօթ պտուղ և բանջարեղէնները խիստ գովելի են: Կան քանի մը տեսակ պտուղներ, որոնք Մարաշ քաղաքէն կուգան բնպէս. — ծիրանը, ձմերուկն ու սեխը և բարբրձանը, այս վերջինները թէև Չէյթուռնի մէջ կը բուսնին բայց սակաւ են:

3. Փոքր Ասիոյ հարուստին պատկանեալ կերակուր մը:

Գ. Մէջէօլ քոփրէն զնպաձև նարնջի մեծութեամբ կըր կը շինեն և յետոյ գրչմա (միւր մանր կարնիւրու վերածած և սոխի և անուշահոտ ծաղկանց հետ խզի մէջ տապկած) ալ մէջը լեցունելով վերոյիշեալ մտի ջրին մէջ կ'եփեն և կ'ըլլայ մէջէօլ քիֆտոկ, ինչպէս որ վերև ըսինք, ասոնց երեք տեսակներուն ալ խմորը (ծեծուած միս և ձաւար) մի և նոյնն է:

Մանաւանդ Հում քիֆտոկն կարմիր պղպեղով (պիպէն) մեծ ախորժակ կուտայ զայն ուսողներուն. արիօք բժշկները այս կերակուրը տարօրինակ պիտի չը գանձն: Գալով Գրչմաի և խորովածի մասին, ասոնք պատրաստելու տեղն կրնամ ըսել թէ խրանուշահոտ բուրմը քանի մը վայրկեան հեռաւորութիւններէ զգալի կ'ըլլայ. ասոր համեղ լինելուն պատճառն ալ այն է որ մնասու կենդանիները խտաւէտ և ծաղկաւէտ արօտանոցիներու մէջ կ'արածութն հեռեկալ լերանց մրայ, զոր օրինակ. Պէրիս, Ռիզոր, Խէէճ. Աւաղ-Կէտիկի, Աթլլիս, Անկըզոկ, Ալաչայիւր ևն. Այս վայրերուն խոտն ու ջուրը մինչև անդամ կենդանեաց ակուսներուն սկիւղ փայլ մը կուտան:

Գալով Հերիսա ըստածին՝ թէ և հայաստանի ծանօթ կերակուր մ'է, գրեթէ չի կայ հայ մը որ զայն չը գիտնայ, բայց և այնպէս Զէյթունցոց համար այն ալ խր մասնաւոր օրերը ունի. ինչպէս, Վարագայ խաչի, Հրեշտակապետի, Յիսնակաց, Ս. Յակոբայ և Ս. Սարգսի պահոց շարաթ օրերը և մանաւանդ Բարեկենդանի, Վարդանանց հինգշաբթի օրը ամեն տուն այս կերակուրը կը պատրաստէ, նոյնպէս նոյն օր ճիրիտ կը խաղան և նշանաուժեան համար հրացանաձգութիւններ կը կատարուին: Օրուան խօտակցութեան նիւթն ալ Ս. Վարդանանց մասին կը լինի: Մինչև անգամ Հերիսային համար ալ ծերերը զանազան մեկնութիւններ կուտան, բայցով որ Հերիսան Հար գտա ի աղաւթօւնն է. երբոր մանկունք կը հարցնեն իրենց նախահարց սոյն Հար գտաի նշանակութիւնը, մեծ հայրերը կ'ըսեն այսպէս. Հար գտա, գարկ

ասիկայ, այսինքն զարկ պարսիկը, ինչպէս որ Ս. Վարդանանք զարկին պարսիկները: Նոյնպէս այլ նպատակաւ է որ այս օրը Ձէյթունցիներս ալ նշանառութեան և մականաձգութեան (ծիրիտ) խողեր կը խաղանք և կերակուրնիս ալ Հերիաս կ'ըլլայ, մինչև անգամ մեր ժողովուրդը նոյն օրը Հիրիսիսէ կորը (Հերիսային օրը) կ'անուանեն, այսինքն ընդհարումի օր:

Նոյն գիշեր որ ուրբաթ պիտի լուսանայ՝ խանձով փայտի կտորներ տանց վրայ, և փողոցներու մէջ կը նկանն. սոյն գիշերուան տեսարանը հիանալի կ'ըլլայ, կարծես թէ գիտաւոր աստղեր կը տեղան քաղաքին վրայ, այս սովորութեան համար ալ ծերունիները սա հետեեալ մեկնութիւնը կուտան. — Ժամանակաւ հայերը երբ կրակապաշտութիւնը մերժելով անոնց նախրական կրակները եկեղեցեաց մէջէն ցիրուցան ըրին և մոպերն ալ վնասեցին, այս է պատճառը որ սոյն պատմութեան իբր յիշատակ այդ խանձոցները ասոյ անդ կը ցրուեն:

Պատ. ընթերցողքս թող չը վարմանան այս աւելորդապաշտութեան վրայ, իրողութիւն մ'ըն է որ կը պատմեմ ես. արդեօք այս հին սովորութիւնը բոլոր հայեր կը կատարեն թէ մենակ Ձէյթունցի հայերը, այլ ալ ինձի համար մտած է: Բայց և այնպէս այս սովորութիւնը Ձէյթունցիք զազրեցուցին 1864 թուէն ի վեր՝ հրակէներէ զգուշանալու համար:

Ասողջապահութիւն. — Թերևս ընթերցողք պիտի գտնանան երբ ըսեմ թէ Ձէյթունցիք բժիշկէ ալ զուրկ մնացած են: Երբ Ձէյթունցին հիւանդանայ, ամենից քահանան կը կանչեն, նա կուգայ և չորս զլուխ բշկութեան աւետարան և «Փարատեա» ազօթքը կարգալէ յետոյ՝ կը մեկնի, հիւանդը ասոր վրայ թեթևացայ ըսելով կը քաջալերուի և օրըստօրէ կ'ազգկնայ, թէև ամանք ալ կը մեռնին, և այս վերջիններուն համար ալ կ'ըսեն՝ աճալը թկիջ մեռով (Ճակատազիրը այս է եղեր):

Ձէյթունի մեծամասնութիւնը համամիտ էր բժիշկ մ'ունենալ

նախապաշարմունքներէ զերծ մնալու համար, և այլ առթիւ 1890 թուին գիտնեցին Մարաշու կառավարիչ Սալէն փաշային՝ որ իրենց ինդիրբին համեմատ անոնց իրկեց Մարաշարնակ Այնթապցի Հէրիմ-Ապուհան հայ Բժիշկ մը, որը դրուած էր փաշայի կողմէն Զէյթունցոց սեւ փնաս մը հասցնելու համար, և սոյն ախմար և աստիճանոյ բժիշկին գործածած թունաւոր զեղերէն հինգ հարիւրէ աւելի անմեղ մանուկներ զոհ գացին քիչ ժամանակի մէջ (մանրամասնութիւնք տես, Զէյթունի ներկ, և անց, Ա. հատոր 152-րդ երես)։

Ահա այս ազեառալի և մահաբեր դեպքէն յետոյ Զէյթունցիք բժիշկ ունենալու նպատակէն ետ կեցան։ Այժմ ոչ բժիշկ կայ Զէյթունի մէջ և ոչ ալ զեղարան, բաց ի մի քանի նախնի վիրաբոյժներէն։

Բայց և այնպէս նորէն բժիշկ ինպրոզներու թիւը մեծամասնութիւն կը կազմէ, ըսելով թէ. — Հիւանդին համար բժիշկ պէտք է, իսկ հոգևոր միտիթարութեան համար ալ Տէր պապա (քահանայ)։

Զէյթուն ոչ թէ միայն բժշկի կը կարօտի, այլ նաև ահագին հիւանդանոցի մը. Զէյթուն իւր գիւղորայքով հանդերձ կզարու նակէ իւր մէջ 2370 տուն զուտ հայ. ինչու չունենայ մի հիւանդանոց։ Մըշափ կարիճներ հասակնին շատած՝ կը յանձնուին սե հոգին, հիւանդանոցի չլոյսութեան պատճառով։

ԶԼՅԹՈՒՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Զէյթունցիք ընդհանրապէս աղբեղործ, երկամազործ բանուորներ և ջորեպաններ են: Մանաւանդ այս վերջիններր կարեւոր տեղ մը կը բռնեն: Խրաբանչիւր տուն հարուստէն սկսեալ մինչև աղքատը ջորի կամ էշ կը պահէ, եթէ ոչ՝ չկրնար աղբիլ, վանդի ցորենը, դարին և այլ ընդդէմները դուրսէն պիտի բերուին, այսինքն՝ Ալպուսմանէն, Եարփուզէն, Կոկիսունէն (կէքսիւն): Ամէն ասուն վերոյիշեալ բնանակիր անասուններէն 1-8 հաս կը պահէ: Զէյթունցիք սեպտեմբերէն սկսեալ մինչև գեկա, 10 երթևեկութիւնը կը շարունակեն հացահատիկներ քաղաք կրելով: Հարուստը կ'ունենայ 1-2 հարմանտ, որ տեղական լեզուով կը նշանակէ վարձեալ ջորեպան:

Այս կարիճներու շտրբաշ ճամբորդութիւնը կը նկարագրեմ ձշգրիտ իրողութեամբ: Ըստ թրքաց գիշերուան ժամը 4ին կը մեկնին քաղաքէն, 8, 9 և 10 ժամ¹ տևող լիննային օձապայտ ուղիներէ և դժնդակ բարձր ապաստաններու, ելեկներու մէջէ անցնելով կը թողուն լիննային ճամբան, ալ անոնց առջև կը պարզուին Կոկիսունի, Եարփուզի և Ալպուսմանի ընդարձակ դաշտերը: Գիշեր ցորեկ անդադար քաղելով² Յօրուտն մէջ կը կարեն այդ հեռաւորութիւնը և անասունները բնաներով բարձած կը վերադառնան, մէկ բեր 8-18 ըլլօ³ կը կշտէ, էն օժեղ ջորին 18 ըլլօ

1. Զէյթունէն մինչև Կոկիսուն լիննային ճամբան 8, իսկ դաշտայինը 4 ժամ կը տևէ, ընդամենը 12 ժամ:

2. Զէյթունէն մինչև Ալպուսման լիննային ճամբան 9, իսկ դաշտայինը 4, որով ամբողջ ճամբան 13 ժամ կը տևէ: Զէյթունէն մինչև Եարփուզ լիննէն 10 ժամ, իսկ դաշտէն 2, ընդամենը 12 ժամ:

3. Այդ Զէյթունի բարբառով ըլլօ ըսուած շաբը 6 օկկայի (քաշ) արժէք ունի, Ալպուսմանի թուրքերուն լեզուով Սիլմէ կը կոչուի:

կրնայ կրել, որոնք այժի մտղէ հիւսուած երկու քարձերու մէջ գետեղուած են: Որովհետեւ մեր լեոնապաւտի քարերը մեզ հաց չեն տար, սակայնուած ենք մենք անտեսական աննախանձեցի վիճակի մէջ ապրիլ: Եթէ բարերար ազգայինք Չէթմուսի անտեսական վիճակը բարոքելու նպատակով իրենց ջանքերը չինայն, Չէթմուսցին խեղճ և ողորմելի կացութեան մէջ չապրիր: Եթէ մի քանի կէտեր մեր բարերարները ինկատի առնեն և գործադրեն, Չէթմուսցին բաւական կ'օգտուի թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Մին այն է, որ Չէթմուսի մէջ երկաթի գործարան մը բացուի, որով տեղւոյն ժողովուրդին միջոց կը արուի իր նիւթականը ըստ կարելոյն անպահովել, երկաթը թէ առատ է և թէ լատ: Երկրորդ՝ զինի գործարան մը բանալ Չէթմուսի մէջ: Չէթմուս ունի 21 տեսակ պատուական խազող, միմէ շէ՛ կարելի ատոնցմէ Պօստօ և Շամբանիտ գինիներու պէս ազնիւ գինի պատրաստել, մինչդեռ տեղաշրջոց պատրաստած պատուական գինին երկար չլիւննար: Թէև Չէթմուսցին պանդխտութիւնը՝ չսիրեր, և այդ շատ գովելի է, թալհետեւ Չէթմուս ի հարկին կարիճի պէտք ունի, բայց լատ կ'ըլլայ, իր անտեսական վիճակը բարոքելու համար, մի քանի աշիմ պատանիներ կարողա խրկուին երկաթագործութիւն, գինեկործութիւն և կաշեկործութիւն սորվիլու: Անոնք՝ քարձեալ վերապահուալով իրենց հայրենիքը շատ օգտակար ծառայութիւններ

1. Այդ պատուական և անպահուելի մետաղը Պերիտ լեռը կը գտնուի: Կրծիք կը յարմարի նաև թէ այդ շեռանք մէջ քարածուխ ալ կը գտնուի, բայց տակաւին պեղումներ եղած չեն, բայց Չէթմուսցիք իրենց անտաններու առատ փայտով մը այդ պակասը լեցուցած են փայտածուխ պատրաստելով: Ասկէց 30-40 տարի առաջ Չէթմուսցիք այդ հանքը կը շահագործէին նահապետական ձևով, այժմ գրեթէ զարգրած են, զի Արտոյայի մէջ պատրաստուած երկաթը աւելի անսն գնով կը ծախուի:

2. Միայն 30 տարի է ի վեր Չէթմուսցիք փոքր թուով (60-70) Ատանայ կ'երթան աշխատելու և 3 ամէն կը վերադառնան իրենց պաշտելի հայրենիքը:

կրնան մնաուցանել: Ուրիշ հարց մը, Չէթունի գաղտնիքը ստեղծ-
կան ընելու համար, որովհետև հաստատ եկամտո չըլլալով, երբեմն
շարունակութիւնը կրնդհատուի, խորհուրդ կուտամ կրթմասէր Աղլալ-
նոց Չէթունի մէջ բաղնիք մը բանալ: Եթէ միայն 1000 սոկի ծախ-
սուի՝ շա բաղնիք մը կարելի է շինել և Չէթուն ջուրով ու փայտով
ստատ երկիր մը ըլլալով, կրնայ այդ բաղնիքին հասոյթով գաս-
տունները ապահով կերպով ապրեցնել: Վազարը կը բաղկանայ
1500 տանէ:

Ուստի կոչ կ'ընեմ ներկայիս ազգասէր բարերարաց այս ծրու-
գիրը իրագործել: Եթէ բարերարք կամին՝ կարող են այսպէսով
մեծ ծառայութիւն մը մատուցած ըլլալ մեր ժողովուրդին:

Պատ. ընթերցողաց մէջ գուցէ գանտին այնպիսիներ, որոնք ա-
ռարկեն թէ Չէթունցիին ինքն իր գլխուն ճարը լծող գանէ և գուրմէն
օգնութիւն չսկսկալէ: Բայց ինչպէս վերք յիշեցնիք, Չէթունցիք
նիսթապէս անկարող են, բառին բուն նշանակութեամբ ազբատ.
ինչպէս առածը կ'ընէ. Հար սաղի հաւկիթ չէ կարող ածել:

Բ

Չէթունի նշանաւոր խաւօս ըստած անտար, Ռիստատեղի մը,
մեզուի փերակներուն նովիտը և խաւարածներուն
նշանաւոր Էսայրան (արօտաւալար):

Չէթունի արեմուտքը, երկու ժամ հեռաորութիւնով, խանոս
ըստած տեղը կը գտնուի զէթունցիներու վանելու փայտի ան-
ատար: Անտարը գնալու ճամբան Սախօր Էղէէն կանցնի, և ան-
ատուն կէս ժամ ապին իսկի Ազրբրէկ (Մոկեպրբիւրեկ) անուն
պաղ ջուր մը կայ ճանապարհին ճիշդ մէջտեղը, բոլոր անցնող
գարձողները անպատճառ այդ կենդանարար և մարտեցնող ջրէն կը

խմեն, մանաւանդ հիւանդները այդ ջրէն խնամմունն պէս իրենց մարմնոյն մէջ ասողջութիւն մը կ'ըրգան և գրեթէ բժշկի պէտք չեն սենենար:

Հարսնիքներու ասին հարսնեարներ այդ ջուրէն շիշ մը ջուր կը տանին հեռերնին ու կը խմցունեն հարսին ու փեսային, որպէս զի սակին շատկեկ շահին իրենք կամ իրենց գաւակները: Այս սովորութիւնը պէյթունցոց մէջ բնականաբար չէ, այլ այն պարագային մէջ կ'ընեն, երբ մտակայ Հաճի-տէրէ և Ղօզանարագ հայ պիղիբըն իրենց քաղաքը հարս բերին:

Վերոյիշեալ խանսս ըսուած անտառը խորունկ և աարաւ-րոտային ձոր մ'ընէ Անտաղ պեռին երկու կողմը: Անտառը լե-ցուն է խիստ աս խիստ հինաւորց կեղեակթափ, խոշոր ու հսկայ ծա-ւերով՝ սրունք այնքան զառամած ու փտած են՝ որ այլ ևս փայ-տահարը կացինի քանի մը հարուածներով զարաւոր կաղնիները գեռին կը տապալէ: Կը պատմուի՝ որ այդ անդնդային ձորէն հո-սող Անտաղ պեռակին մէջ շատ թէ՛ ճիւղիցի թիւրքմէններ իրենց վերջին բունը քնացած են, Զէյթունի հերոսներու ձեռքով:



Զէյթունէն արեմտեան հիսիս՝ երկու փամ հեռաւորութիւնով ուխտատեղի բնական քարայր մը կայ, որ կը կոչուի Սուրբ Մինէ կիսնիւց (Միայնակեաց): Աւանդութիւնը կ'ըսէ թէ այնտեղ փամա-նակով մեռաւոր մարդ մը կը ճգնէ կղեր: Էրբ Զէյթունցիք կ'ըս-տիպուէին պատերազմներ սենենայ թշնամիին պէմ, ճգնաւորը զի-նուած ու ձերմակ ձիւս մը վրայ նստած կը վազէր հայ մարտիկ-ներու բանակին մէջ և կը խրախուսէր զանոնք ըսելով. «Մի վա-խէք, աէղէք, սուոր (յաղթութիւն) մերն է, մինք խժէօլ պիտի իւ-րինք, էս պիշիբ Գարբիէլ հրեշաւակապիտ, Ս. Սարգէս, Ս. Գեօրգ, Ս. Մինսս, Ս. Մէնկէնչօս, Ս. Թիւրխոս, Ս. Վարդօն իմ քէօ-

վրա իկին՝ ասոն թէ՛ ըզմից Գիւրիստեան ուզարկից ձեզ եւր-
 արմ՝ Էնիւօ համօր, զօզը ալայիսէ ձեր օրսուրն մէջը կու գանը-
 վընք ըմմը՝ ալայուսէ չ'ինք ըրվըննօ, պազը մարդկոնց կըրվըն-
 նանք, թիւֆէնինուց բորնա մութայէթ-լըք, դեզը, Էոճիճը պա-
 րաքաթըամըչ կէնինք, հէչ մի քէշվէք, կըզըցէք ուր բամպակն
 իլլէ: (Մի վախնաք, աղաք, յազթանակը մերն է, մենք ուսով պի-
 տի ըլլանք, այս գիշեր Գարբէլ հրեշտակապետ, Ս. Սարգիս, Ս.
 Գէորգ, Ս. Մինաս, Ս. Մէրկեոիոս, Ս. Թէնգօրոս, Ս. Վարդան
 քօյս եկան և ըսին, սր Գրիստոս զմեզ խրկից ձեզի օգնելու հա-
 մար, վազը ամենքս ալ ձեր բանակին մէջ կը գանուինք, բայց
 ամենուն ալ չ'ենք երևար, մէկ բանիներուն միայն կ'երևանք: Հրա-
 ցաննուց լաւ հսկողութիւն բրէք, ձեր վասօղը, արճիճը կը շառ-
 ցունենք, բնաւ մի քաշուիք, զարկէք սր բամպակը գուրս ելլէ):

Այլ նկատարան քարայրը արու գաւակ չ'ունեցօղ կիներուն ուխ-
 տավայր է, ուր կ'երթան մանչ գաւակ խնայելու: Երբ մանչ ունե-
 նան, երախային անունը կը գնեն Մինէկիւսնիւց:

Սոյն քարայրէն ժամ մը անդին, գեւ ի հիւսիս, ապատաճոս
 և անասիկ ճանապարհներէ անցնելով, աչքից առջև կը պարզուի
 գեղեցիկ տեսարան մը. մանաւանդ գարնան եղանակին, այլ վայ-
 րը կը կոչուի Աղաձ-աւր, Պէրիա լեռան ստորաք: Զէյթունցիք
 ստօրարար, մեղուի փեթակները, ամբան երեք ամիսները այրակոյ
 կը փոխադրեն՝ ուր մեղուները կը սնանին ամենահասուսէա և գրախ-
 տարոյր ծաղիկներու հիւթով: Աղաձ-աւրի մէջտեղէն կը վազէ Շու-
 գուր արծաթափայլ և վճիա գետակը՝ կազմուած Պէրիաէն բղխօղ
 կենդանարար ջրերէն: Շուգուրը կ'անցնի Զէյթունի բովէն և կը
 հայթայթէ քաղքին պատուական խմելու ջուր. մեղուներն իրենց
 ծարաւը կը յագեցնեն ծծելով այլ անուշ ջուրէն, ատոր համար է սր
 ամենալաւ մեղրը կ'արտադրեն, բխրեղի պէս ճերմակ և խնկարօյր
 ու անուշահամ: Զէյթունէն Երափուց (Էփեսոս, Արփրոս) ճանա-
 պարհը աղաձ-աւր էն կ'անցնի:

*
* *

Իջևոյք (ծովք), Չէյթունի արեմտեան հիւսիսը, երեք ժամ հետո, խաշնարածներու հովիտ մին է, տափարակ դաշտ մը, Սօրախտեակ լեռան հտեր, չորս կողմէն շրջապատուած լեռնաշղթայով մը, այնպէս որ պարսպապարտ շրջափակի մը ձև առած է: Չմեռ ատեն այդ տեղ ձիւն կը հաւարուի. երբ դարունը կուգայ, կուտակուած ձիւնը հալելով ահագին լիճ սը կը կազմէ, արիկց առած է իւր Իջևոյք անունը: Յունիսին լիճը կը ցածքի և այդ ցամքած տեղը կը մերձուի գրախտի պէս մարդպեհան հովիտի սը պննուած գոյ՛ զոյն նունուֆար ծաղիկներով: Չէյթունի խաշնարածները, մերի եայրաները (արօտատեղի) խընրիկօզ, Ալաշայիր ըսուած տեղերը ձգելով, Յուլիս 15ին, 50-60 տուն կուգան իրենց վրանները կը հաստատեն այդ գալարաւէտ արօտավայրին մէջ, սը կը մեան մինչև օգոստոսի վերջերը: Այդ տեղի բնակիչ և գով ջուրը խմողները համեմատաբար շատ կ'ապրին: Սեպտեմբերին կանկրօտ կ'իջնան, Սօլախտեակ լեռան ստորօրը, սը կէց Չէյթունը սանդխաձև կ'երևայ, մինչև անգամ տուններն կրնան մի առ մի համբուլլ մէկու կէս ժամ հետուն:

Այդ ժամանակն է սը հայ հովիտները առաւօտեան արշալոյսին իրենց դաւալները (սրինգ) կ'ածեն այնքան բաղցր և ներդաշնակ՝ որ զմայլում կը պատճառէ մտիկ ընողներուն: Նոյն իսկ Չէյթունի մէջ կը հասնի գաւալի ձայնը, Չէյթունցի բացօդեայ սառնիկուն տանիքներու վրայ գիշերելով այն տունները հրճուանքով կը վայելեն առաւօտեան սրինգներու բաղցր հնչիւնը:

1. Չէյթունի մէջ մարդիկ առ նուազն 70, 80, 90, 100 և մինչև անգամ 120 տարի կ'ապրին: Արեգնի Ալաշայիր գիւղին մէջ Չիլի-Մէրտիւրիւս (Մարտիրոս) անուն մարդը 125 տարեկան է և բաջաուղջ: Նոյնպէս և Չէյթունի Նաղուպեան թաղէն Մեացական կիւհիկեանը 105 տարեկան է, իսկ մըրսը (մահտեսի) ֆոֆան 95 տարեկան՝ որոնք զեռ կ'ապրին, և զեռ շատեր...:

տարը կպագնէ. իսկ եթէ մկրտուածը ազջիկ է՝ կբռնէ. Աստուած
խայրու (շնորհաւոր բնէ. Քաճանան և տիրացուները մի շարա-
կան կերպէն, հանդէսը կը վերջանայ քաճանայի մի պահպանելով
որ շնորհաւորելով ծննդակիանը և անեղինները, կերթայ սեղանի
դուխ կը նստի և կը հրաւիրէ հանդիսականները որ ամէնքը
նստին: Կնունքի հացը (ճաշ) աւարտելէն յետոյ ամեն ոք կրկին
և կրկին շնորհաւորելով երեխայն և ծնողքը՝ կը մեկնին և
կ'ընդականը մինչև ցմահ անխօս է կնքահօր հետ և նա քա-
սասունն օր անէն գորս շէններ, արե շիտեաներ: Սանաէրը (ծնն-
դական) գրեթէ ամեն տարի, սկան (նշանաւոր) օրերու մէջ մէկ
մէկ ծրար նուէր կը դրիէ կնքահօրը՝ որու մէջ կը լինի, մի շիշ օղի,
գինի, մի քանի տեսակ մրգեղէն, թաշկինակ և այլն: Ասոր փո-
խարէն, ինչպէս տեսանք, կնքահայրն ալ կը հոգայ մկրտութեան
ժախոր (այսինքն 1-5 դահեկան քաճանային մկրտութեան վարձք,
1-5 դահեկան եկեղեցուն, և մի ծածկոց երեխային համար:

Ինամախօտութիւն, Նշանադրութիւն, Պսակ և Քարոյական խրատ:

Ձէյթունի մէջ ինամախօտութիւնը կսկսի երբեմն օրօրացէն: Շատ
անգամ աղայի մայրը երբ կը տեսնէ մի նորածին գեղեցիկ ազջիկ,
կը խնդրէ Ազջիկայ մօրմէն զայն խր աղին նշանելու. երբ նա ալ
հաւանի, այն ատեն երկուստեք մէկմէկ բերդ (նշան) կանեն աղայի
և ազջիկայ օրօրացի վրայ. սա կը լինի նշան անոնց ինամախօտու-
թեան, և այնուհետեւ այլ երկու մայրերը, հետևաբար երկու առնները
կսկսին աւելի և աւելի իրարու մօտենալ և միշտ իրարու ինամի
կանուանեն: Պէտք է բռնել որ այս տեսակ գէպքեր շատ չ'են, սա-
կայն երբ երեխաները անվտանգ կը մեծնան (այտուկ չափահա-
սութեան տարիքը բնութնուած է ազջիկան 12-14 իսկ աղուն
15-17) ծնողաց կողմէն կամուանացուին: Այժմ՝ զանք բուն

Հարսնախօսութեան գործին: Երբ ազան վերոյիշեալ տարիքին կը հասնի, անոր մայրը կակսի ազջիկ փնտտել աղայի համար, պէտք է ստել որ սիրահարութիւն չ'կայ այտանդ, ազան սրտառարտած է ծնողաց հնազանդիլ և այս ինչ կամ այն ինչ ցոյց տուած ազջկան հաւանութիւն առլ: Երբ մայրը աղայի հաւանութիւնը առտ, այս անգամ կ'սկսի Հարսնախօսութեան կամ զրուցութեան (խօսք կամ) գործը կարգի գնել, երբ մայրը խօսք առա, այն ատեն տան երէց կը գրկէ խնամախօսութեան: Տէրտէրը աղայի կողմէն կուտայ ազջկայ ծնողաց կամ մի զոյգ ապրածօն (ապարանջան) և կամ մի զոյգ դագի սկի (մի սկի 20 դրչ. արժէ), սա կը համարուի ազջկայ Հարսնախօսութեան նշանն, տէրտէրը պահպանիչով մը կը հետանայ տունէն: Հարսնախօսութիւնը կը տեւ մի տարին մինչև 3 տարի: Այդ ժամանակամիջոցին մինչև Հարսանեաց օրը ազջիկը և ազան չ'են տեսներ զիրար: Եթէ պատահմտօր աւստնք իրարու պատահին, երեսնին ծած ամեն մէկը մէկ կողմը կը փախչին: Միայն երկու տուները իրարու խնամի կրսեն և գնալով իրարու կը մօտենան ու կը բարեկամանան և աղայի ծնողքը միշտ գլխաւոր տեղը օրերը, իրենց ազգականներով և բարեկամներով, հանգէտով և բնձաներով, հարստեսի կ'երթան, որ տեղական լեզուով կանուանի Նշանծիւնց (Նշանածան, երեսան), սակայն ազջրկայ նշանը չ'են օրհներ մինչև Հարսանեաց օրը, սաածելով թէ մի զուցէ մահ պատահի աղային, այն ատեն նշանածը կը բերեն փեսացուի փոքր եզրօր կամ եզրօր աղային, կամ վերջապէս ազջրկը ձեռքէ չ'փախցնելու համար կը պահեն տան մի որ ևէ տէլիզան լիի (երիտասարդի) հետ: Նշանադրութեան ժամանակ Հարսնցուն միշտ անխօս է աղայի ազգականներու հետ և անսնցմէ կը փախչի, երեսը կը ծածկէ:

Հարսակիր. — Սկսելէն առաջ՝ տան երէցը ազջկայ ծնողաց տունը կ'երթայ Հարսնախօսութիւնը կարելու, տէրտէրը կը յայտնէ որ այս ինչ ազան Հարսնիք լնելու կը պատրաստուի, եթէ

մի բան ունին խօսելու՝ խօսին։ Երբ աղջկայ ծնողքը հաճին, այն
 տանն աղայի ծնողքը կը սկսին պատրաստուիլ, ասոր հասնոր նախ
 աղայի հօր հրամանաւ, գրացի ջարեպանները 15-20 ջորիով շեր
 կերթան հարսանեաց փայտ բերելու։ Ասանք փայտ կը բերեն ձրի,
 բայց գնալու և գալու ծախար աղայի հօր վրայ։ Այս ջարեպանները
 ասա մտով, օգի ու գինիով կերթան Զէյթունի արեմատան հա-
 բուային կողմը 2 ժամ հետադրութեամբ խանութ բուսած ան-
 սառք, մի գիշեր այնտեղ ձր միան քէֆ կ'ընեն, հետեւալ ասաւ-
 սուն, բենաւարսած, քաղաքի գիւնաց բարձր բլրակի սր վրայ
 հասած ժամանակ կսկսին հրացանաձգութեամբ կիւրքենկ (հրա-
 խաղութիւն անի) բնել, յետայ տախուլ ու գունան ասանց բնգա-
 սաջ գնալով մեծ սերտութեամբ և լծմիկահարութեամբ բնները
 կը բերեն և աղայի սունը կը խափեն։ Ախլոյն 2 ջարեքս փայտ
 կը գրկեն աղջկայ տանը։ Այս փայտը հարսանեաց սկսելու նշանն
 է։ Հարսանեաց տէրը մեծ և ասատ ճաշկերպիմով մը ջարեպանները
 ճամբայ կրկնէ։ Այս օրը ջարեպաններու քէֆի օրն է։ Ասանց երթալէն
 յետայ անցելի կսկսին մեծով պղտիկով և բազր գրացիներով հար-
 սանեաց պատրաստութիւն տեսնել։ Այս օրը ամբողջ տանը շարժ-
 ման, իրարանցման մէջ է, անիկա կը նմանի մի գործարանի.
 մի աղջիկ ալիսը կը մաղէ, միւսը կը շագէ, մէկը կը գնտէ, մէկը
 սճախ կը վառէ, միւսը հաց կեփէ, միւսիդը միւսը կը ձեծէ, միւս-
 ները առջմա, քէօֆիժէ և այլն տեսակ տեսակ կերակուրներ կը պատ-
 րաստեն։ Վերջապէս մի քանիներ կան որ տանը կաշին կը մա-
 րրեն, ոմանք ալ կան որ միայն սիկարէթի և նարիկիէի (կրկրլակ)
 պատրաստութիւն կը տեսնեն։ Հարսանեաց սկիզբէն արդէն հարս-
 նացան և փեսացուն ներքին-հսկեկան պատրաստութեան մէջ են,
 անոնց ամին մէկը ծախ և պահք կը պահէ, կը խոստովանի, կա-
 պաշխարէ, և կիժէ հարուստ են՝ սղորմութիւն կը բաժնեն ազբասաց։
 Հարսնացուն և փեսայացան շատ գուրս ներս ալ չ'են ելներ։ Այս
 պատրաստութեամբ վերջապէս կը հասնի ցանկալի սերտի օրը. այլ

օրը, լոյս շարած առաւօտեան, բուն հարսանեաց, այսինքն պահկի օրն է: Ռերբաթ կէս օրին հարսնեորները քահանաներով, ախրացուներով և իշխաններով աղջկայ տունը կերթան ճարդում (գարգարանք) կատարելու: Հանգիստահանները հարսնացուի դուռը հասած ժամանակ կսկսին «կերպէնի» (հրախաղութիւն) անել: Աչապ-պաշին, սկեռքը գլխուն վրայ դրած՝ փեսայի կողմէն հարսին կրտսնի մի ձեռք դալմնի՝ խամաշ, աստի զգեստ և զոյգ մը գեղին կօշիկ: Կիները աննկուր այդ սկեռքը՝ տան մէկ անկիւնը կը ասնին ուր աղջկայ տաներէջ կինը կը հօգցունէ հարսին այդ լալծերը, ձեռքերն ալ կը ներկեն հինայով: Այլ ասնն քահանայը և տիրացուը կերպեն հետեւեալ երգը. «Խնկի ծախի նման ես, բարի պտուղ բերկրեալ ես, դու քաղցր պտուղ համ ես: Աստուածածին, մեղայ բեզ »: Հանդէսը կը վերջանայ քահանայի մէկ պահօտանիչով, այս տեղ ճաշ չ'կայ, բոլորը ուղղակի կը վերապառնան փեսայի տունը: Թաղուորը և թաղսրեղբայրը մեծ մեծ զրկւումներու (կոնք) մէջ ասք ջրով և սապոնով լաւ մը կը լողացնեն «Այս օր անձառ» շարականը երգելով ծնծգաներով: Յետոյ թաղսրը և թաղուրեղբայրը տունը թողնելով իրենք խմբովին կը դիմեն եկեղեցի՝ նշանօրհնութեան հանդէսը կատարելու: Սեղանի վարադոյրները կը քաշեն և հանգիստահանները ծնկաչօք կը նստին ամեն մէկը իւր տեղ: Նշանը մէջ տեղ կը գնեն, օր կը լինի մի ապարանջան փեսայէն արտած հարսին և մի մատանի՝ հարսէն նուիրուած փեսային: Այս նշանները իրարու կապուած են մի գունատուր մետաքսեայ թիւով: Ա. քահանան աջ կողմը կը կայնեցնէ աղայի կնքահայրը, իսկ ձախ կողմը աղջկանը, և խօսքը ուղղելով աղջկայ կնքահօր կրտէ, «Աստուածային հրամանաւ, Առաքելոց կանոնաւ, Սրբազան Հայրապետաց օրինապրութեամբ, գասք քահանայից և երասք ժողովրդոց վկայութեամբ, այսինչ աղայի, այս անուն աղջիկ, այս ինչ աղայի այս անուն աղային տուր: Կնքահայրը կը պատասխանէ, Այո, Աստուծոյ հրամանաւ, աստի: Յետոյ քահանան միննոյն խօսքերով կը հարցը-

նէ ազայի կնքահօրէն լմէ ստիր, Այս, առի: Եւ բահանան կրեք
անդամ միենոյն խօսքերով և շեշտով կը հարցնէ կնքահօրերէն և
անոնց հասանաթիւնը անելով կ'սկսին նշանի օրհնութիւնը «Նշանա-
տմենայտղթ խաչիդ բո Քրիստոս» շարականը կրգելով ծննդայով:
Հանգւար կը վերջանայ պահպանիչով մը: Եկեղեցոյ այս արարու-
ղութիւնը լմնալէն յետոյ, Ազապ-պաշին եկեղեցոյ գոան կոյնած մէկ
մէկ բուռ շամիչ և լեպկնուր կը բաժնէ հանդիտականներուն բու-
լով, առօրը ձեր գաւախին, և այլն:

Այդ օրը բոլոր ներկաները կերթան փետային սաւնը թագօրը
հագուեցնելու: Այդ օրուան ընթրիքին պահոց կերակուրները կը
պատրաստուին թագաւորեղբօր կողմէն: Այդ առան Ազապ-պաշին
հագած ակզական կարմիր թանկագին տպակ, վրայէն կապած թա-
րապուլուս գօտին, ծացիքը կը լեցնէ շատ մը մանր գաթիաներ,
և կ'սկսի բոլոր թագերը բաժնել կոչնականներուն իբրև հրատիրացի:
Այդ օրը ամենէն աւելի բազմութիւն կը շեցուի փետայի սաւնը, սը
փառաւոր կերպով աւել խնելուց յետոյ, Ազապ-պաշին մի պնակով
փոց կը հաւարէ բահանաներուն և տիրացուներուն համար, սը-
կէ յետոյ թագաւորը և թագաւորեղբայրը մէջ ակց կը բերեն և կոկոխ
հագուեցնել, բահանայք և տիրացուք ծննդանբով կերպին «Աւ-
սօք կրկնային» շարականը: Թագօրի լաթեր սաւնը են, պա-
րեգօս սը (Շամդաթնուսի), գօտին Շամթարապուլուսի, անոր
վրայէն կը հագուեցնեն վարդապետական սև վերարկու մը¹, գլուխը
կը գնեն գալուսի (ակրօւրի մի տեղակ սև դլխարկ, սրու բոլորք փա-
թաթուած է 2-3 կանդուն սև փօշուն (մետարեայ սեպոյն կերպաս)),
խոկ սանտամանկին են Այնթապու կիսլ շէֆթալի կօշիկ: Թագ-

1. Այս գաթա ըստածը փոքրիկ կըր անիւղ հաց է, որ կը պատրաստուի
յատուկ այդ օրուան համար, մասնաւոր փուռերի մէջ: Չէթնուի ամեն թագի մէջ
կայ մէկ մէկ փուռ, որ միայն կը գործածուի հարսանեաց և կազանդի օրեր:

2. Այդ վերարկուն կոտանան փանրի փանահօրմէն 5 գահեկան վճարելով, յա-
նուն Աթուի Սոյ կաթողիկոսութեան:

ւորեցրայրը, որ միշտ կը լինի 8-10 տարեկան, միննայն ձեռք կը հագսեցնեն, միայն անոր սե մերարկուի տեղ կարմիր մերարկու կը հագսեցնեն: Այս արարողութիւնէն յետոյ Ա. քահանան թագու-
րին, թագուորեցրայրը և Աղապ-պաշին ծունր կը շորեցնէ և անոնց
զլխուն պահպանիչ սր կրակ, յետոյ թուր մը աննելով պահպա-
նիչ մ'ալ թուրի մրայ կրակ և թագուորին տալով կրակ. «ԱՅ զտուր
ընդ մէջ քո հօր, որպէս վայելչութեան և զեղոյ քո», սովառ յազ-
թեցես զթշնամիս քո, առ և ամուր պահիր: Թագուորը ընդունե-
լով սուրբ խր ընկեկներով կը համբարէ բոլոր կոչնականաց ձեռքը.
անոնք ալ կրակն: «Աստուած շնորհաւոր արասցէ»: Կոչնական-
ները կը ցրտին: Այնուհետեւ երեսասարդները առանձին, հարսներն ու
աղջիկներն ալ առանձին, կսկսին տալու լով, զուսնալով պարել, եր-
զել մինչև լոյս: Բայց զեռ չ'լրացած՝ Աղապ-պաշին գարձեալ կը
հարարէ կոչնականները և քահանաներով և փեսայով մէկ տեղ կեր-
թան հարսնացուի տունը. քահանան աննելով հարսի ձեռքը փեսային
կուտայ և կը կատարէ նախապատկը: յետոյ հարսը ձիւ մը, իսկ
թագուորը և թագուորի եղբայրն ալ ջորիներու վրայ հեծցուցած՝ կը
տանին ժամ (եկեղեցի):

Այնտեղ պատարազի ժամանակ, ըստ կանոնի, աղջկայ տա-
ներէջը կը կատարէ պատկը: Թագուորի զլխուն մեաքսէ ժա-
պաւնով մի փոքրիկ խաչ կը կախն և վրայ կը փաթաթեն խա-
չաձև մի ուրար, ձեռքը կուտան ծայրերը մեաքսեայ ծայրերով
մի թաշկինակի մէջ զրուած նարինջ կամ խնձոր, սրը բլի առաջ
կը բռնէ մինչև հարսնիքի գալը: Հարսի զլուին ալ կը կախն
մի փոքր խաչ: Պատկի ժամանակ Աղապ-պաշին միշտ թուրը պա-
տեանէն հանելով խաչաձև կը բռնէ թագուորի և թագուհու զլխու
վրայ: Պատկը աւարտելէն յետոյ բոլոր ժողովուրդը կարգով կանցնի

1. Երեսասարդներուն բոլորովին արգիլուած է կենթու մէջ գնալ. եթէ յանդի-
նի մէկը ուր բռն անել կը պատժեն նախաքննարգ և տուգանքով:

պատկեացներու առջևէն, մարդիկ թողութիւն խաշը կը համբուրեն և կը շնորհաւորեն, իսկ կիներ՝ հարսի խաշը: Պէտք է ըսել որ հարսը ծածկըւած է միշտ սպիտակ մեծ բօղբով մը: Եկեղեցիէն դուրս գալստն երգեցիկ գասր կը բաժնուի երեք խումբի. 1. տէրտէրներ և տիրացուներ: 2. գպրոցականներ, 3. երիտասարդներ: Առջին անգամ քահանայը կերպեն «Արեգական արդարութեան» շարականը ծնծղաներով: Գպրոցականները կերպեն մի սեւ ազգային երգ, իսկ յետոյ երիտասարդները՝ հետեալ թարգերէն խաղը: Ետգմուր ետգար եէր ետշ օլուր, ճեմի գուշլար պիր խօշ օլուր, կիւզէլ սէփէն սէրխօշ օլուր, կէլին սալլանը, սալլանը (անձրև կը տեղայ, երկիր կը թացնայ) բուր թաշնոց հաճոցը կըլլայ, աղտոր սիրտը գինով կըլլայ, եկէը շարժելով, շարժելով և այլն): Յետոյ բոլոր երիտասարդները միաձայն կը բացականչեն, *գճե, լճե, լճե, լճե, լճե, լճե, լճե...* որ կը նշանակէ կեցցէ՛ հարս ա փեսան: Այսպէս իրախճաններով, մեծ ազգականերով, սրահեւոյ՛, երգիչով, թափօրը կանաչնարդուի գէպի փեսայի տունը: Ընտասարհին անցած ատեն ամեն մի ծանօթ տանէն օդի և սրտեղէն կը հանէ թափօրի գիմաց: Երբ թափօրը փեսայի տան բակի դուր կը հասնի, գետ հարսը ձիւ վրայ, ազապ—պաշին կանը սը կը ներկայացնէ հարսին, սը ձեռքերը կը շարժէ կանքին մէջ, խմոր շաղկու ձեով: Այլ ատեն փեսայի մայրը վերէն մի բուռ փէնէզ՝ կը ցրցքնէ հարսի և փեսայի վրայ: Իսկ աղքատները փէնէզի փոխարէն դարի կը ցփնեն: Այլ ատեն իշխանը կը հարցնէ փեսայի հօրմէն, ահա հարօղ, ի՞նչ նուէր—կուտաս, բռէ անսններ: Փեսայի հայրը ըստ իւր կարողութեան կը նուիրէ հարսին 300—1000 թուփ (սրթ) խազողի: Այս նուիրում սրտ թիւր մինչև վերջը, նոյն իսկ եղբայրներու բաժանման ժամանակ, կը մնայ հարսին գուտ բաժին: Յետոյ հարս ա փեսան կիջեցնեն իրենց ձիերէն և կը բարձրացնեն սուն: Բայց սան գուտը փակ է հարսին առաջ, նուս մը կուտան հարսին ձեռքը, որը սրբան

ոյ՛ գ անի կը դարնէ գասն և նուօր կը լինի կտար կտօր և հա-
տկրը կը ցրտին: Քնոյրը միտսին կազգաղկեն « կեցցէ հարսը », և
իրարս մէջ կը խօսին թէ նոան հասեր շատ թափուեցան, իշալ-
լահ մեր հարսը շատ գուակ կուեննայ, Անտուած ապ աղայ շատ
լինի: Տան գօօր կը բացուի և գոյցը ներս կը մանէ: Հարսը կը
գաանն, կը տանին հարսնետունը, սրը կանանց կոզսը վարա-
գոյրով մը բաժանուած է էրիկ մարդոց կոզմէն: Հանդիսականնե-
րը և կոչնականները կը բազմին սեղանի շուրջը: Թագուորը թու-
րը մէկ ձեռքը, խնձօրը թաշկինակով միս ձեռքը, սաի կը
կենայ իշխանի կամ Աւագ քահանայի հետ, թագուօր եղբայրն ալ
անօր բով: Ազատ-պաշին և երիտասարդները ծառայութիւն կրննն:
Հանդիսականները առատ մատաղն ուտելէն և զինի խմելէն և հարսին
ու փետային համար բիւր բարեմազթու թիւններ ընելէն յետոյ կը մեկ-
նին: Վերջին անգամ կը մեկնի քահանան պահպանիչ մը բե-
լով բոլոր անեցոց և զերդաստանի մրայ: Այն ատեն կը նուսին
թագուօրը, թագուօրեղբայրը և հարսանեաց սպասաւորները: Կուխին
ուրախ գուարթ ճաշէլ: Վարացոյցի հաան ալ կնիկներ կաշխատին
հարսը կերակրել: Ճաշէն յետոյ երիտասարդները և աղջիկները ա-
սպնձին խումբերու բաժնուած՝ նուագարաններով ուրախութիւն կը-
նեն մինչև կիրակի երեկոյ: կիրակի հարսի սաւնէն պոպրը (օձիտ)
կը բերեն մի մեծ սնտուկով, սր կը լինի շապիկ, թաշկինակ,
գուլպա, քսակներ, և այլն. նսե մանր գործուածքներ, սրանք կը
բաժանուին փետայի ազգականներուն:

Երկուշաբթի հարսանիքը կը գազարի, սակայն հարսն և փե-
սան պսակի ժամանակ հագորդ աննելու պատճառաւ մինչև ութ
օր չեն կարող ստազաստ գնալ՝: Փետան միշտ կնքահօր սունը կը
զիշերէ և հարսանեաց սպասաւորները ամեն օր անօր հրաւէր կու-
տան ճաշկերթոյ: Ով որ այդ ութը օրտան մէջ սխալելով փե-
սային թագուօր չ'ըսէ և զայն կոչէ խոր բան անանոյթ, տուգանք
կուտայ մի ոչխար կամ մի տաւար, սրը կը մտրթեն և ընկերնե-
րով քէ՛թի կ'ընեն:

1. Այն վրէժ յեղաց պատկոյ քահանան կուգայ և ըստ կանոնի ամուսնացողներու գրայնն ուրար և խաչք վերցնելով, նախ քան առաջառու մանկելին, նորասընակներուն—որոնք ծնկաչար պատկոսանքով կը նստին քահանային առջև — չեաւեկայ խրատները կու տայ:

Ձուակներու, չիմս դուք գրեթէ նոր աշխարհ եկար, ասկէ առաջ երախտներ կը սեպուէիք, իսկ այժմ խելահաս մարդերու կարգն անցար, և ինչպէս Աստուած բար է և աշխարհ և բազմացարուք և լցէք զերկիր, այնպէս ալ դուք պիտի աճիք և բազմանար, զուակներ պիտի ունենար, որոնք հոգւով և մարմնով առաքինութեամբ պիտի կրթէք, անոնց համար, իբրև ծնողներ, Աստուծոյ առջև պատասխանատու դուք էք: Ձեր զուակները հոգեւոր գինուորներ պիտի ըլլան եկեղեցիին համար, իսկ ազգին ու հայրենեաց համար ալ մարմնաւոր գինուորներ պիտի հանդիսանան: Պատկազրութեան ասկէ տուած խրատներու համառոտելով այս սեղ կը կըրնեմ, որ Աստուծոյ առջև երկուք ալ հասաւար մարդիկ էք, այնպէս որ մեկդ միսի գրայ պէտք է որ շիշխէք, մասնաւորապէս դուք, վեհայ, ձեր կողակիցն իբրև սարուք կամ ծառայ շարտի նկատէք: Այժմ խօսիմ ձեր մերձաւորութեան պայմաններու մասին, և, իբրև խոստովանաչայր, հոգեւոր հայր մի քանի անհրաժեշտ խրատներ ևս տամ այդ մասին, որոնք մինչ ցարդ ձեզ համար գաղտնիքներ են, և օրոնք սակայն պէտք է գիտնար, իբրև չմարտա ճեակողներ մեր եկեղեցիի Ա. օրէնքներուն:

Առաքելի չբամանով ամուսնութիւնը սուրբ է, սակայն ոչ սանձարձակ ու արտակարգ ճշտասէր ամուսնութիւնը. մեր հայաստանեայց եկեղեցին, արդիւններ գնելով արտակարգ ճշտափրութեան դէմ, իր հաստատեցնելը զէպի առաքինութիւն կը մղէ, և մերձաւորութեան այդ արդիւնները ճեակեցանք են: Մէկ շարժումս մէջ երեք օր — շորեքշարթի, ուրբաթ և կիրակիամուտ օրերը, պէտք է որ մուծկալութեամբ անցնէք ու չմերձենար, ինչպէս նաև մուծկալութեամբ պէտք է անցնէք շարժապահերուն, մեծպահքին, յիմանց և այլ տերունական օրերուն: Արդիւնք մը ևս, որը անհրաժեշտ է որ գիտնար: Երբ յղութեան յայտարար նշաններ տեսնուին, պէտք է նոյնպէս անպայման կերպով զազրեցնէք ձեր յարեւրութիւնները. յղութեան երևան զալու օրէն սկսեալ մինչև ծննդաբերութեան օրէն քառասուն և ալ օր յետոյ պէտք է մուծկալութեամբ անցնէք: Անստիպ ասկէ եկեղեցիի օրէնքները, որոնք եթէ շարժէք՝ թէ եկեղեցիի և թէ Աստուծոյ առջև մեղանշամ պիտի ըլլաք, և եթէ զուակներ ունենար, փոխանակ բազաւոր ըլլալու՝ արտաւոր կ'ըլլան — ապուշ, գմբազդ, անխել, փորձանքուտ և ջրախաւար կ'ըլլան. քաջասիրտ չեն ըլլար, այլ վախկուտ և թուլամորթ, վերջապէս նաղատ, կող, կոյր, զօտացեալ ու արտակարգ խենթ կ'ըլլան: Անս հաղորդելով այս խրատները, կատարեցի իմ պարտականութիւնս, որով անպարտ եմ առաջի Աստուծոյ, դուք այլ ևս ինչ որ արժանի է խորհեցէք:

Այսպէս քահանան վերջացնելով իր խրատները, կը շնորհաւորէ նորասընակները և պահպանիչ մըն ալ ըսելով կը մեկնի:

Պատկազրի քահանայի խրատ տալու սովորութիւնը մինչև այժմ ալ գոյութիւն ունի, սակայն ճեակաբարութեան համար աւելորդ չենք համարիր այդ սովորութեան ճեականք եղող իրողութեան մը պատմութիւնն ընել այս սեղ:

Բողոքարկանութիւնը Անժմայ և Մարտշ նոր մտայ գտած ասեմները, Չէյ-
 թմունի մէջ քահանայ մը մի նորագոյն երիտասարդի իր սովորական խրատները սա-
 չով՝ երբ կ'ուզէ սեկնել, երիտասարդ փեսան տէր չոր քգանցքէն պիտոյ մը բանելոյ
 կը կեցնէ և կ'ըսէ: Տէր հայր, ուր կ'երթաս, խնդրեմ նստիր, եթէ չբաժան կուտաս
 մի քանի խոտք ալ ես ունեմ ըսելիք: Խոտք, դառակ, կը պատասխանէ քահանայ:
 Չէր խրատներն ուշի ուշով մտիկ ընելով մի քան յաջացաւ միտքս-կուզեմ նա-
 քան սեկնելիք, հաշիւներս վերջացնել մեզ հետ: Քահանան, այլ այլո՞ւ, կը պատաս-
 խանէ: Ինչ հաշիւ, դառակ: Ան թէ ինչ հաշիւ կը յաւելու, փեսան-հարա-
 նէրը 5, 600 զրբի նստեցաւ մեր տան վրայ, սա փողերը տուր, հարն ալ առ և
 ուր կ'ուզես այն սեղ տար: Մեր եկեղեցին այդքան խառնապահանջ է եղեր՝ աճու-
 նացողներու նկատմամբ, ես կը կարծէի որ երբ աճունանան, կ'աշխատին կարելի
 եղածին շարժառ պատգամներ ունենալ, իսկ ձեր բաժնեկրը մեզ սրբեկնութիւնէ զբ-
 կելու խրատներ են, նոյն եկեղեցին իր ժողովրդին թշնամին է եղեր, բան մը, ո-
 բուն խելքս չհասաւ: Երբ եկեղեցին մէջ ժողովուրդ չիլի, այդ սրբավայրին ին-
 քուտն: Ինչ է այս, այսօր շրեքշրեքի, վաղը չէ միւս օր ուրբով, իսկ առեկի միւս
 օր կ'իրակուտուս, շարժմանակար, մեծպահ: Յիտունք և տէրունական օրեր և այլն:
 Ասանկներուն համակերպելով, իսկ սա մեծպահին և յիտունքին ինչ կ'ըսէք, տեր
 հայր, կուզէք որ ասանց հաշիւը տամ մեզ, ա՛ն: Յիտունք որ մեծպահը, յիտունք
 ալ յիտունք, կ'ընէ հարիւր օր, մասուրբապէս 31, ամիս ասիկա կը տարուի թէ
 փեսային և թէ հարսին համար մասնագամայն անասանելի է այդ արդէլքը: Յղութեան
 մասին բան մը չեմ ըսեր, սառը ստիւ տան օր ասեմասրբութեամբ կը պահեմ այդ
 պատուէրը, անասուններն անգամ յղութեան ժամանակ չեն մերձեանք միմեանց,
 օրինակ ձին երբ յդի է, ոչ օրուն կը մտնենայ և ոչ ալ էկը թույլ կուտայ որ իր
 մտարտ ձի երթնայ, և թէ մեր յղութեան մասին օրինադրանց ըլլանք՝ անասուններն
 ալ վարձոց կը սեպուինք: Ես ալ լաւ, դառակ, կ'ըսէ քահանայ, բայց մեր եկեղե-
 ցին օրներներն այսպէս են, և մեր իշխելոյ ժողովուրդը բոլորն ալ եկեղեցին օրնը
 ներք յարգելով աճունացած են, չէ որ քու հայրդ ալ այս սովորութիւնները յար-
 գելով աճունացած է և գուր ի՞՞թէ կը բարձր էք, ես թող ալ կարեմ երիտասարդներ,
 բացի այդ, Յակոբ նահապետի նման, 12 եղբայրներ ունեցողներ ալ կան, այնպէս
 որ եթէ մեր եկեղեցին սանձարձակ և հեշտասէր աճունութեան դէմ արգելներ
 գրած է, այդպէսով մեր իշխելոյ ժողովուրդը առեկի օգուտեր է քան թէ զիտունք,
 ասկէ դաս մեր երկրի կ'ինքը ընդհանրապէս քաջապաշտ և արտ դառակներ կը
 ծնանին: Իրական սեռը նուազ է Չէյթմունի մէջ, շատեր հարսերը գուրակն կը բե-
 թեն, և այդ քաջ սերունդի շնորհիւ է, որ այս ազգաստիկ լեւոնտ երկրին մէջ
 մենք՝ աճ մը Չէյթմունցիներս, կ'արողացած ենք մեր ազգաստիկները պահել: Փեսան
 դես ես չ'ամառուելով տէր չոր բաժնեկրուն՝ իր բաժնին վրայ պիտոյնով կը շարու-
 նակէ: 1 սեղի որ Անժմայ, Մարտշ, տեսակ մը միլլեթ (ազգ) եկած է, շատ հայեր
 անանց կ'ընքին կը յարին եղեր, այդ միլլեթը փրօթէթմանի կ'ըսուի, որոնք ոչ պահէ
 ոչ տէրունական օր, ոչ ալ յղութեան աստիւ պահեցողութիւնն ունին, ոչ եկեղեցի
 մէջ արարողութիւն, ոչ պատարագ, ոչ կանուխ երեսէլ եկեղեցի երթաւ և ոչ ալ երե-
 կայեան ժամերգութիւն ունին եղեր, միւսն կ'իրակէ կ'իրակի նախահաշիւներն ընելով
 ժողովարան ըսուած սեղ մը կը հասարակին ու մէկը երեսելով աւետարան կը քար-

զէ եղեր, կարդացածնին ալ աւետարան է կ'ըսուի, որիչ շարական, մեղեդի կամ որիչ ներդաշնակ բաներ չունին. ժողովուրդին այսպիսի ծանր պատուէրներ ալ չեն ցուցներ եղեր, ես եղբայրներես կը զատուիմ, կերթիմ Մարաշ և փրօթէսմանիմ կ'ըլլամ, ասոն (տակաւին) բռելիք մը ունիք ինչէ :

Քաջանան երբ փրօթէսմանիմ անունը կը լսէ, կը թուլանայ և գրեթէ բուրբոխի զունձափ ըլլալով կ'ըսէ. — Չաւակ, կ'ախտաւ քու վրայ, կրօնդ եթէ փոխես ազգութիւնդ ալ մեկտեղ կը կորսուի, գոնէ կրօնդ մի փոխեր, եկեղեցիի պատուէրները քու կամացդ կը ձգեմ, քարին քո ի գլուխ քո, անպարտ եմ քուուն զատուանի : միայն սախօսքն ալ ըսեմ ու երթամ, երեսուն տարի է որ քաջանութիւն կ'ընեմ, այսպիսի զփութութեան չէի բաղիս : Այդ միջոցին երիտասարդը սուրի ելնելով տէր չօր ձեռքէն բռնելով կը նստեցնէ ու արտասուելով կ'ըսէ. — Տէր հայր, ներդաշնակիւն, երբ ազգութիւնդ ալ կրօնքիդ հետ կը կորսուի բռիք, նպատակ փոխեցի, ինչ բռի է, հաշտիս համար. ազգութիւնս և կրօնս մեկ տեղ փոխեմ, երբէք, թոյլ և անմտածկալ մարդ մը եղած պիտի ըլլամ. տէր հայր, ասկէ յետոյ ապահով եղիր, բոլոր փրօթէսմանութիւնը մեր եկեղեցիի «Նորաստեղծեալ» երգին հետ չեմ փոխեր. ես (հապա) : Այսօր անձառչը... ինչդրեմ, տէր հայր, ձեզ շատ ձանձրոյթ պատճառեցի, ինչ ողորտեցի մը բռէք ու գնացէք : Տէր հայրը անհուն ուրախանալով հայաստանեայց եկեղեցիի հաւատացեալի մը չկորուսելուն, կ'սկսի բողոքականութեան մասին մի քանի տեղեկութիւններ ալ իր կողմէն տեղեցնել : Չաւակ, զեռ դուք ինչ գիտէք. ասոնց բողոքական ալ կ'ըսուի, Վատերական ալ կ'ըսուի Համայն Վատեր անուն կախօղակ փարդապետ մը փրօթէսմանիմ բուսած կրօնը նստից, Մատթէոս արարեալը «բարի մարդ, բարի Քրիստոնեայ» անուն գիրք մը հեղինակեց, անոր մէջ բողոքականներու բոլոր արարքները գրուած են, թէև անոնք ալ մեր հաւատացած Քրիստոսին կը հաւատան, բայց մեր եկեղեցիին անոնց եկեղեցիէն շատ տարբեր է : Աւետարանը գաւազնութիւն բրած է արդէն, սուտ Քրիստոս պիտի գայ, հրաշքներ ալ պիտի գործէ, բայց չհաւատար, աւելի սոսկալին ըսեմ, որ պիտի գայ որ մեր հաւատացած իրաւ Քրիստոսին ալ չհաւատացողներ պիտի ըլլան և մինչև անգամ Արտաշէս զոյութիւնը ուրացողներ պիտի ըլլան, ոչ թէ դամիկները, այլ բարձր ուսում ունեցողներն անգամ. այդ մասին Ս. Գրքին մէջ մարդաբէութիւններ կան, պէտք է որ մենք հաստատ կամքի տէր մարդիկ ըլլանք, զանազան կրօններու չհետեւնք, զեռ ևս «սկիզբն է երկանց», միթէ ամենուն ալ հետեւելու է, չնիկներուն՝ ամպիշուքի ետեւէն հաշտելուն պէտ : Մենք ժամանակաւ հեթանոսի կրօնքով ազգընէ էինք, Ս. Գրքիզը հայրապետը մեզ Քրիստոսի կրօնքը սովորեցուց, որով Վատարիչ կոչուեցաւ. պէտք է այս շախիզէն քանիք ու ըլլէնք Վատարիչը բոլոր ազգեր ալ կը նանչնան և յարգանքով կը վերարներին, մենք պէտք է մեր եկեղեցիի օրհնչներուն հաւատարիմ ու նախանձախնդիր ըլլանք որպէս զի աշխարհի և թէ նաղերեմալի մէջ վախիւնք նախնախնամութեան բարիքներն : Քաջանան վերջացնելով իր յարգանքները, ողորտեցին կրտայ և տեսնելով փեսայի զէպի հարստանեայց եկեղեցիին հաւատարիմ մնալու փափաքը, շնորհակալութեամբ և զոն սրտով կը մեկնի :

Հարսանիքի մը բնդրանուր Գրքի միջին սալիք:

250	Ղրուշ	Մէկ զանժար՝ զինի
160	»	20 լիար օղի 50 բաշ (օխա)
160	»	8 տաւար ութը օրուան մէջ
100	»	Ծխախոտ, Սիկարա (զլանիկ)
200	»	Թէմպէքի, Նարկիլիկի (կլկլակ) համար,
200	»	Գեղ (ժառոց)
200	»	Հաց
100	»	Իւղ
100	»	Պրշոր (ձաւար)
100	»	Ըռուզ (բրինձ)
200	»	Մեղր, մրդեղէն կամ անուշեղէն
200	»	Նուագածուններու վարձը
100	»	Գահանայից ² , արքայացեաց և վանքին
50	»	Սախ, պղպեղ և այլն, և այլն:
2120	Ղրուշ	Ընդհանուր Գումար.

Միայն պէտք է այսանդ զիտել տալ որ Հարսանեաց համար այս մեծարանակ ծախսը հին է, այժմ՝ դոյուլթինն չուրին այդ բաները, զրեթէ բոլորովին վերջացեր են, այնպէս որ հիմա համար մատարար կէս ծախսով և միայն մէկ զիշերուան մէջ հարսնի և պատկազութիւն կ'ընեն և կը վերջացնեն. հին բարի ծամանակները այս մեծ հարսնիքներու առեն բանի մը աղբատ և բատարդներ ալ կը պատկուէին ի հաշիւ ունկորաց, առանց իրենց ստակ մը ծախսելու:

1. Մէկ զանժարը 100 լիար է. մէկ լիարը $2\frac{1}{2}$ օխա (քաշ իսկ մէկ օխա ալ 400 արամ է,

2. Զէյթունի եկեղեցականը զրեթէ ձրիարար կ'աշխատին ժողովուրդը հովուլու համար, և անոնք միշտ կ'ապրին իրենց սեփական կալուածներովը:

Հարսին մեղրալուսինն անցնելն յետոյ 40-րդ օրը զայն կը
տանկին իւր հօրը տունը. տեղացիք այս դարձն կ'անուանեն ի
տան, այսինքն իւր հօր տուն գալը: 15 օր, հարսը իւր հօրը
տունը մնալն յետոյ՝ տան երէց կիներ կ'երթայ հարսը կը բերէ փե-
տային տունը: Հարսը չի խօսիր սկեսուր պատի (կեսրայր) և սկեսու-
րին հետ, մինչև զառակ ունենալը. կեսրայրին հետ կը խօսի միայն
խորին ծերութեան ժամանակ. այսուամենայնիս հարսը մինչև խո-
րին ծերութեան կեսուրին և կեսրայրին խոսարհ և հլու ծառան է:
Մնանց ձեռքին ջուր կը լեցունէ և անկողինը կը մաքրէ: Երբ
տունը հիւրեր գան, հարսը անոնց ստրեբը կը լուայ, փեսան
ալ փոխադարձաբար զրքըչպոպին (աներ) և զրքըչմէրին (գո-
քանչ) հետ չի խօսիր, և անոնց տունն ալ չ'երթար մինչև որ
ոտիպողական հարկ մը պատահի (Հարստնիք են). այն տան
հարսոյր մեկտեղ կ'երթայ աներոջ տունը, այնտեղ անթիմեր
կ'ունենայ հարսի նման խոնահարար գօքանչին և աներոջը հետ
խօսելու: Իսկ եթէ հարկեր պատահին, նա կըսպասէ մինչև զա-
ռակ ունենալը. ինկ եթէ զառակ ալ չ'ունենայ՝ երէք տարիէն յետոյ
կ'երթայ աներոջը տունը:

Մանուսն և քաղնակ սովորութիւններ:

Մահամերձ հիւանդին ակրտէրը կուգայ խոտտփանցնելու և
հաղորդելու: Մեծ մեղք և դժբաղդութիւն է ով որ ատանց հաղորդի
կը մեռնի: Այս արարողութեան տեղացիք կ'անուանեն վերջին թա-
շակ կամ տեղական բարբառով իտէմիտէ պէշօր, այսինքն, վերջի
պաշար: Մահուան ժամանակ կաշիսաթին իսկոյն բերանն ու աչքերը
փակել, ձեռքերը խաչաձև կտրծքի վրայ դնել և մարմինն ուղղել
դէպի արևելք: Այդ տան քահանան կուգայ մի հոպոց կրտէ, և յե-
տոյ զիակը կը տանին տան մէկ կողմը լայն տախտակի մը վրայ

տար, ջրով և սաղմոնով լուս մը կը լուսանէ։ Այն կրակը, որով ջուր-
 հալոցողցին, խոխոյն կը մարեն և խանձողները, (այբուսած փայտե-
 րը) դուրս հեռու տեղ կը ձգեն և ոչ որ չի վերցնելու այդ փայտը
 իրենց տանը տանելու որ մօտ ժամանակին իրենց տունն ալ
 մահ՛ չ'պատահի։ Գիտակը 7 կանգուն անլուսայ կտառով կը պա-
 տանքին։ Լուսացող և պատանք կարողը սղամարդաց՝ աղայ, և
 կիններուն՝ կին կը լինի։ Պատանքի կարած ժամանակ գիտակի բե-
 րանը կը դնեն մի կտոր նշխարք և ձեռքի փեղուտ մէջ կրուսաղե-
 մի խունկ ու մօտ։ Պատանքի վրայէն ալ կուրծքի դրայ կը կարեն
 Երուսաղէմի լուսայ պատանք (լոյս պատանք), բաճանայք և փրա-
 ցուք, կու դան տանը կարողը կը կատարեն և գիտակը «լէշփետի՛»
 (գազազի) վրայ կը դնեն և «Չարհոյրեալ դագաղ» օրտանմէիկ
 շարականը կրկնով կրտանին եկեղեցին։ Էթէ հարուստ է ննջեցեա-
 լը երկրորդ օրը պատարագէն յետոյ կը տանին թաղելու, եթէ ոչ՝
 նոյն օրը եկեղեցույ ստիբրական կարողը կը կատարեն և եկեղեցական
 հանդէսով օր կրտանին գերեզմանատուն, ճանապարհին երգելով
 « տեսալ գրեզ մահու լուծաւ » շարականը։ Այժմ խաչէլէմով
 թաղոււր նոր ստիբրութիւն է. 15 տարի առաջ աշխարհական
 ննջեցեալը անշուք կերպով կը թաղէին, միայն բաճանաներուն
 վերապահուած էր խաչէլէմով թաղումը։ Ննջեցեալի թաղման կու-
 գեկցին մինչև գերեզմանատուն, նոյն թաղի հարուստ թէ աղքատ
 մարդիկ անխափր։ Արարողութիւնէն յետոյ գիտակը կիջեցնեն
 գերեզման։ Նորամուտ ստիբրութիւն կայ, որ երբեմն հարուստ
 ներք սնտուկով կը թաղեն իրենց ննջեցեալը։ Երեկոյնան բարբ
 թաղեցիք, ծանօթ անձանօթ, իշխան իշխանապետօք և բաճանա-
 ներով ննջեցեալի տունը կ'երթան և « սուրբ հօգուով մխլթարուիք »

1. Չէլթանի գազաղը կը լինի շինուած երկու ձողէ, մէջը սանդուղի ձևով կարգ-
 կարգ երկաթե շղթայ։ Գիտակ մէջը կը դնեն այդ սանդուղու ձև գազաղի վրայ, և
 շոր մարդ ուսերով կը տանին մինչև եկեղեցին և անկէ գերեզման։

ըսելով: Իրափոխին ննջեցեալի անբոյժ Այր երեկոյեան կը արտի «քա-
հանայեց և արեալսաց մեռելանոց: Միւս օրը քահանայք գերեզ-
մանաանուն կերթան Այրուց կատարելու, այնտեղ ներկայ կը լինին
արդէն սգաւոր կանայք և ծանօթ ու անծանօթ թաղեցիներ: Այր
օրը եթէ օրը սարգ է՝ մեծ ճաշկերպութ կը լինի կերակուրները կը
բերեն գրուցիները և ազգականները: Իսկ եթէ օրը լաւ չէ՝ այս
ճաշկերպութը կը կատարուի ննջեցեալի տունը և այդպէս արարուի-
թիւնն ալ եկեղեցիին մէջ կ'ընեն:

Էպիփանէսեր. — Չէյթունի մէջ լալու սովորութիւնը շատ խիստ է,
ննջեցեալի մայրը, քոյրերը և ազգականուհիները, անոր զգեստի
ամէն մի մասը ձեռքը առած գոխասանքներով և բարձր երգեցողա-
կան եղանակներով լալով կերթան մինչև գերեզմանատուն: Այս
ընդհանուր սովորութիւնէն բացառութիւն կը կազմէ պատերազմի
մէջ մեանոցը այն ատեն բարձր ձայնով լալ՝ ամօթ և նախաանգ
կը համարին նահատակի յիշատակին, ատուր համար գերար
կը զգուշացնեն որ բարձր չըլան, ձայն չ'հանեն որ նահատակը (նա-
հատակ) չը վիրաւորուի, առանց լացի նա երջանիկ է իր փառքի
մէջ: Սովորութիւն կայ որ երբ ջրկիր կանայք կ'էս ճանապարհին
կամ նոյն իսկ մինչև իրենց գոան առջը հասած ժամանակ լսեն
որ մահ սպատակ է, սափորին ջուրը կը թափեն և կը վերադառ-
նան նորը բերելու, սա նշան է նոյն թաղի ննջեցեալի արեւջ սգա-
կից լինելուն: Թաղման այս ընդհանուր սովորութիւնէն շատ կը
տարբերի քահանայի թաղումը: Քահանայի թաղմանելու նշանը
այս է որ խոյն նոյն եկեղեցոյ կոչնակը՝ (Չէյթուն խոշոր
զանգակէ զուրկ է) կ'ըսուի ախար և երկար զօղանջիւնով զուժել
ժողովրդեան քահանայի մահը, որտ նշխարքը նոյն օրը եկեղեցի
կը տանեն և եկեղեցոյ գաւթին մէջ լուանալով զազազով կը

1. Ար լինի սոցոգատեայ և ընկառի տախտակէ, որոնց վրայ Մարտի կը գար-
նեն ժողովուրդը եկեղեցի հրախրելու համար:

դնեն եկեղեցւոյ մէջ, շրջագնառուած մտնականերով, որոնց վրայ մինչև ըյս մտեր կը վառեն: Երկրորդ օրը կը կատարուի պատարագով վերջին օծումը վանաչօր ձեռամբ: Քահանայի թաղման օրը կը լինի արտաքայ կարգի ախուր Հանդէս. զրեթէ Ձեյթունի շորս թաղեցիքն ալ, թէ, արհեստաւոր թէ՛ բանօր թէ՛ վանառու կան և նոյն խոկ գորբինները ու երկաթագործները՝ կիրակի կը պահեն և կը մասնակցին թաղման Հանդիսին: Քահանայի կողմ պուտը, Փիլոն և զգեստեղէնը, կը խրկուին վանը: Քահանայի թաղման Հոգեհաշր կը պատրաստէ և կը Հոգայ, նոյն քահանայի օրհնութեան կնքահայրը իւր մասնաւոր ծախրովը:

Դ

Ձեռնադրութիւն և կարգապահութիւն Ձկրուի Քանաններուն:

Ձեռնադրութիւն. — Ձեյթունի քահանանաներուն ձեռնադրութեան խնդիրը, Ձեյթունցիի աւանդագաւթութեան և ներքին ստիւրութիւններու տեսակէտով, սննի նաև իր Հետաքրքիր կազմերը, որոնց ամփոփ նկարագրութիւնով մեր բնթերցողը որոշ գաղափար կազմած պիտի բլլայ Ձեյթունի քահանաներու թէ՛ մասաւրական և թէ՛ բարոյական յատկութիւններու վրայ:

Ձեյթունի սեղ թաղի եկեղեցիին մէջ, երբ քահանայի մը պա-

1. Որիչ ամեն արհեստաւորի համար աշխատանքը գաղաբեցնելը համեմատաբար աւելի զիւրին է միեւնոյնը չէ սակայն գորբիններու և երկաթագործներու համար, որոնց աշխատանքի ձևը տարբեր է միմեւերէն. եթեմական հոգիք բազկացած խմբեր են առանք, որոնք կէս զիշերէն առաջ կակսին գործի մինչև երեկոյ: Առանց համար աշխատանքը գաղաբեցնելը զրեթէ անկարելի է, որովհետև մեծ կորուստներ կուենեան. սակայն խիստ կրօնասէր բլլանուն՝ անոնք ալ կը գաղբին գործելէ կուշակի սուր ձայնը լսածնուն պէս, ի յարգանս քահանային:

հանջը զգացուի, այդ թաղի իշխանը, թաղակահանները, երէցփոխանը և քահանաները հաւաքուելով, նախնական ժողով մը կը կազմեն և իրենց թաղեցիներէն քահանայութեան արժանի մէկը կը ընտրեն, (առ հասարակ քահանայական օճախէ կընտրեն), յետոյ այդ որոշումը վաւերացնելու համար, կրկին ժողով մը կը կազմեն, որով մէջ ձայն ունին բոլոր թաղեցիները: Իշխանն աւ երէցփոխանը կը յայտնեն իրենց ընտրած կամ քահանայութեան արժանի դատած անձնաւորութեան անունը, և կանոնարկեն ժողովուրդին որ եթէ թեր կամ զէժ կարծիք մը ունին այդ անձի նկատմամբ՝ յայտնեն: Քահանայական պաշտօնն այնքան սուրբ և նուիրական է Չէթուեցիներու համար որ, որ և է մէկը քահանայ ձեռնագրուելու համար, այդ անձին ամբողջ անցեալ կեանքը նկատի կ'առնեն, և այդ պատճառով ալ թաղի ամբողջ բնակչութիւնը ժողովի կը հրաւիրեն, սրտէն զի դան և տեղեկութիւններ տան բնաբխիի արժանաւորութեան մասին, և այս կերպով ի հարկէ աւելի լայն բնուած թիւն մը կատարած կ'ըլլան ընծայացուի մասնաւորապէս բարոյականի նկատմամբ, որ մեծ կարեւորութիւն ունի Չէթուեցիներու աչքին: Պէտք է գիտնալ նաև որ քահանայական բնարութիւններու մէջ, մեծամասնութեան և փոքրամասնութեան խնդիրը զանց կ'առնեն Չէթուեցիները, մինչև իսկ ժողովրդի մէջէն միայն մէկ հոգի եթէ զժողովութիւն ցոյց ապ որոշուած անձի քահանայ ձեռնադրուելուն զէժ, ամբողջը կը հետաքրքրուին և կը պնդեն որ անպատճառ յայտնէ իր զժողովութեան պատճառը, ամեն կողմէ կը պահանջեն թէ ինչ յանցանքի մէջ որ տեսած է քահանայացուն՝ բացէ ի բաց յայտնէ ժողովին: Կը հարցնեն թէ արդեօք մարդասպանութիւն բրած է, կամ գողութիւն կամ հայհոյութիւն, թէ ոչ իր կիներ ծեծած կամ նախատած է: Եթէ զժողովութիւն յայտնող անհասար այս յանցանքներէն մէկը տպացուցանէ և կամ նոյն իսկ ասպացուցանէ որ, այդիէ մը մինչև իսկ սղոյթ մը խազող փրփրացած է տասնց արտոջ գիտութեան, իսկոյն բնարութիւնը կը բե-

կանեն, իսկ ընդհակառակը, երբ բազմաթիւ յայտնէ որ այս յան-
ցանքներէն և ոչ մէկը գործած է, բայց այս ինչ պատերազմի ա-
տեն, իր ներկայութեան թիւրք մը սպաննած է, այն ատեն ամենն
ալ կը ծիծաղին, պատատխտաներով միանգամայն թէ՛ շատ ուրա-
խալի է որ հայրենիքի վրայ յարձակող թշնամի մը սպաննած է:
Ստիկա յանցանք չէ և ոչ ալ սփրազործութիւն: Այլմասնային
բահանայ կը ձեռնադրէ այնպիսի մէկը, որը ոչ թէ միայն բիշ
թէ շատ սուսած և Հին ու Նոր կտակարան ծանօթ ըլլայ, ոչ թէ
միայն իր գազափարսերը գրչով կամ խօսքով յայտնելու կարող
ըլլայ, այլ Ֆիզիքապէս ալ ասոցջ և բաջատիրա պէտք ըլլայ, վե-
րոյիշեալ ասմունքներէն զարկ ըլլայ ալ նէ հոգ չեն ըներ, հե-
լիք է որ ազգասէր, հայրենասէր և մանաւանդ պատերազմասէր
ըլլայ:

Ժողովը որոշեց իրականացութեան հասնելէ յետոյ կը կանչեն ըն-
ծայացուն և կը յայտնեն որ սրտած են զինք բահանայ ձեռնա-
գրել, բայց արդեօք ինք համաձայն է ժողովութիւն կամբին, որը
զինք բահանայութեան արժանի գատած է, որովհետեւ կ'ըսեն «բա-
հանայութիւնը բաւ հուզոյ կեանք է և բաւ մարմնոյ մահ» ինչպէս
եթէ երբ սեւ պատերազմ տեղի ունենայ, զուր որ հիմայ բա-
հանայ պիտի ըլլաք, զուր իրեն տուջամարտիկ զինուոր, մահեր-
նիկ աչքերնիկ աննելով պիտի կոտիք թշնամիի դէմ և խաչ ու
սուր բարձրացուցած պիտի խրատուէք ժողովուրդը, որպէս զի յա-
նուն հայրենիքի պատուով մեռնին, զպատիւր չզանան և այլն:

Երբ մտազգայնաց ձեռնարկ որ ձեռնարկուի յայն իմ մտազգայնաց
արտազգայն յայն ձեռնարկ որ մտազգայն յայն իմ մտազգայնաց

1. Տէր Բակուր Տէլի Փէշիշեանի ընտրութեան ատեն արտաբերութիւն եղաւ թէ
ընծայացուն մարդ սպաննած է, բայց տէր Բակուր, որ Մղսի Թորոս կը կոչուէր, ա-
ռանց շաշուէլու յայտնեց թէ, այո, թշնամին իմ վրայ հրացան պարպեց, ևս ալ
սպաննեցի, թշնամիի գնտակը դեռ սրունքիս մէջն է. մոզովականները տեսան և ու-
րախացան, աւելցնելով միանգամայն թէ թշնամիի գնտակը բեզ հանգիտեք ալ, ե-
թէ սպաննած ըլլայի՞ր՝ դարձեալ մեզք գործած չէիք ըլլաք և արժանի կ'ըլլայիք բա-
հանայութեան:

Չէլժմանցիի համար պատերազմի և զէնք կրելու հարցերը սովորական լաներ ըլլալով, առ հասարակ այդ խնդիրներու համար բնծայացումները առարկութիւն չեն բներ և չեն բրած և բնող հանրապէս ժողովուրդի կամբին կը զիջանին, միայն թէ նախապէս թոյլատուութիւն կը խնդրեն խորհրդակցիլ իրենց կնոջ հետ, որը կրբնայ ըլլալ որ չհամաձայնի իր ամուսինին հետ, և եթէ ո և է բնծայացուի կինը համաձայն չէ իր ամուսինին քահանայ ձեռնարգրուելուն՝ ժողովուրդը այդ պարագային բնա չպնդեր և ոչ ալ համոզելու ձեռնարկներ կ'ընէ, բնգհակատակը, նախ քան ձեռնարկութիւնը, կրկին հարց ու փորձերով քահանայական պաշտօնի ծանրութիւնները մասնանիշելով թէ քահանայացուին և թէ իր կնոջ կատարեալ յոժարութիւնը աննկրով՝ ձեռնարկութիւնը կը կատարեն: Այսպէս կը թողուն որ մի ամբողջ օր բնծայացուն խորհրդակցի իր կնոջ հետ, մտածէ և յետոյ պատասխանէ թէ համար միայն է թէ ոչ: Բնծայացուն ժողովի ցանկութիւնն իմանալով կրթւածայ իր կնոջ կը յայտնէ թէ՛ ժողովուրդը կուզէ զինքը քահանայ ձեռնարկել, կինը երբ հաւանութիւն տայ, միւս օրը կուզայ ժողովին կը յայտնէ թէ, ինչպէս ինքը նոյնպէս և կինը համաձայն են կատարել ժողովուրդի ցանկութիւնը: Ժողովը այս պատարախանր զեռ ևս բաւական չհամարելով՝ մի առանձին պատահիակութիւն ևս կուզարկէ իր կողմէն, բնծայացուի կնոջ յոժարութիւնը ստուգելու, ուստի քահանայացուի տան խոստովանաճայը երէցը բնկերանալով երէցփոխանին հետ կ'երթայ բնծայացուի տունը և աննախակով անոր կնոջ հետ կրկին հարց ու փորձ կը կատարէ, իր կողմէն աւելացնելով և բացատրելով քահանայական պաշտօնի ծանրութիւնը կ'ըսէ որ այս օրուրնէ՛ ամուսինդ քեզ համար մեծածէ, իսկ դուն ալ ամուսինիդ համար, ամուսինդ քահանայ պիտի ըլլայ, իսկ դուն երէցկին, և եթէ զժողովութիւն մը պատահի, այսպէս կամ այնպէս ամուսինդ մեռնի, կրկին ամուսնութիւն չկայ, երբէք մի ամուսնիք, խորհէ և համարձակօրէն պատասխանէ »:

Ընծայացուի կինը, եթէ չուզեր իր ամուսինին քահանայ ձեռնա-
 գրուիլը, կը յայտնէ իր խոստովանաճօր, իսկ եթէ համաձայն է,
 բաղարձակապէս ամեն գծրազգուծիւն Աստուծոյ կամքին յանձնե-
 լով նայնպէս կը յայտնէ իր յօժարութիւնը, այդ պարագային քա-
 հանան մի քանի օրհնութիւններ կուտայ, և մէկ բարձի վրայ
 ծերանար ըսելով դարձեալ երէցփոխանին հետ կուգայ ժողովին
 յայտնելու ընծայացուի կնոջ պատասխանը: Ժողովը երկուսը մը
 գրելով Ս. Աստուածածնայ վանքը, կպիտկոպոսին կը յայտնէ որ
 այս ինչ թաղի մէջ քահանայ պիտի ձեռնադրուի, սետի թող
 հաճի խորտաւիլակ վարդապետ մը և առաջնորդական փոխանորդ
 քահանան խրկել, որպէսզի անոնք ալ վաւերացնեն ընծայացուի
 արժանաւորութիւնը:

Հետեալ օրը խորտաւիլակ վարդապետը և առաջնորդական փո-
 խանորդ քահանան կուգան իշխանին տունը և միանալով երէցփոխա-
 նին, թագակահութեան քարտուղարին և ընծայացուի տան երէց քա-
 հանայի հետ կը կազմեն վեց անդամներէ բաղկացած միջնորդ ժողով,
 կրկին կը կանչեն ընծայացուն և այս անգամ խորտաւիլակ վար-
 դապետը կսկսի քննութեան հարցումներ ուզել ընծայացուին,
 Հին և Նոր կտակարանի մասին, եկեղեցական օրէնքներու և
 կանոններու մասին: Երբ ընծայացուն գահացուցիչ պատասխան-
 ներ տայ, խորտաւիլակ վարդապետը կը վաւերացնէ ընծայա-
 ցուի արժանաւորութիւնը, հիմնուած իր քննութեան և նախորդ
 ժողովներու մէջ քահանայացուի Բարոյական արժանաւորութեան
 մասին կատարուած քննութիւններու հիմքեր վրայ: Այս վա-
 ւերացումէն յետոյ ժողովը մի ընդարձակ սեղեկազիր պատրաս-
 տելով կուգարիկ վանքը՝ առաջնորդ կպիտկոպոսին, հարցնելով
 թէ երբ կարող է զալ ձեռնադրութեան: Եպիսկոպոսը իսկոյն կը
 պատասխանէ յայտնելով թէ այս կամ յառաջիկայ շարժ թ
 իջնելով Զէյթուն՝ կիրակի կը ձեռնադրէ: Եպիսկոպոսին որո-
 շած օրը, ընծայացուի կնքահայրը, իշխանը, երէցփոխանը, ընծա-

յսցուին պատկանած եկեղեցիին քահանայական դասը, իշխանին
 տանն և երկու դասասայիները (զինակիրները, սրանք թագական կր
 սեպուին), այն եկեղեցիի ուսուցիչներն ու ձայնասու աշակերտները
 առաւօտուն խոնրոյին վանք կ'երթան եղիսկոպոսը Ձէյթուն բերե-
 լու համար: Ճաշէն յետոյ ժամը 7ին (բոս էջ. 1ին) կը դասարու-
 առնին վերադասնայ Ձէյթուն: Անքահայրը, նախ քան մեկնելին,
 վանքին ընծայ սր կրնէ և յետոյ ճանապարհ կ'ելլեն: Վանքէն
 երկու ճանապարհներով կարելի է Ձէյթուն գալ, եթէ ձեռնադրու-
 թիւնը II, I ւստուորչի և II. Առտուածածնայ եկեղեցիներու մէջ
 անկի պիտի ունենայ թափօրը վերի ճանապարհէն Աբընայ-բար-
 ասօր էն (Անրանի քարտակ) կը մտնէ Ձէյթուն, իսկ եթէ ձեռնա-
 դրութիւնը II. Յովհաննէս և II. Սարգիս եկեղեցիներու պատկա-
 նի, վարի, այսինքն II. Պետրոս Պօղոսի կամուրջի ճանապարհէն
 Ձէյթուն կը մտնէ թափօրը: Բայց նախ քան թափօրի Ձէյթուն
 մտնելը, գրեթէ ամբողջ ժողովուրդը Ձէյթունի չորս թաղերէն խումբ
 խումբ եղիսկոպոսին ընդասաջ կ'երթան, բոլոր եկեղեցիներու քա-
 հանաները, ուսուցիչները ու արտաշուները կարգով կը փութան
 գէպի այն ճանապարհը, ուրիկ եղիսկոպոսը պիտի գայ: Երբ ա-
 ստջնորդը հասնի իր ուղեկիցներով Պետրոս-Պօղոսի կամուրջը,
 ուր խուռն բազմութիւն մը իրեն կ'սպասէ, վար կիջնէ ձիէն և
 շուրջառ կ'աննէ վրան, ու մէկ ձեռքը խաչ մը, իսկ միւս ձեռ-
 քը եղիսկոպոսական դասական բռնած, պահպանիչով մը կ'օրհնէ
 ժողովուրդը և յետոյ շրջապատուած, շուրջաներով զգեստաւ-
 րուած չորս եկեղեցիներու քահանաներէն, կուղևորուի գէպի այն
 եկեղեցին, ուր պիտի կատարուի ձեռնադրութիւնը»: Չայնասու
 աշակերտները, եկեղեցական շապիկներ հագած, կտփին քաղ-
 ջրը ձայնով ծաղկազարդի «գֆրիտոս թագասը» շարականն
 երգել, իսկ ժողովուրդը ուրախ և զուարթ կը հետևի թափօրին
 մինչև եկեղեցիին գաւիթը: Եղիսկոպոսը, քահանաներու հետ կը
 մտնէ եկեղեցի և վերջին պահպանիչով մը կ'ազգարարէ ժողովուր-

գին թէ կոչման հանդիսատեսն ըլլալ փախստոյնիս կրեկոյեան և կեղեցի թող հրամանն: Այս ազգարարութեամբ ժողովուրդը կսկսի մաս մաս քաշուիլ եկեղեցիին դաւթմէն, իսկ ոմանք կը մնան բն-
ծայացուն լուգնելու արարողութիւնը տեսնելու: Ընծայացուն լուգը-
նելու համար, մեծ կաթնայ մը ջուր կը տաքցնեն և եկեղեցիի
գաւթին մէջ զրդիւշխն՝ սը դնելով բնծայացուն կը լուան: Լու-
ցընելու զործողութիւնը կը կատարէ կամ նոյն ինքը կնքահայրը և
կամ կնքահօր կողմէն նշանակուած մի ուրիշ անհատ, մինչև լու-
գանքի զործողութիւնը լմննայ, տիրացունք և քահանանք ծնծղա-
նելով կ'երգեն «Այսօր անճառ» սովորական երգը:

Երեկոյեան եկեղեցիի կոչնակները կսկսին զարնուիլ, և որով-
հետև հողերտական հանդէս մըն է որ պիտի կատարուի, երկու կոչ-
նակներ, մին սոգոգատեայ, իսկ միւսը բնկուզի փայտէ շինուած,
միասին սովորականէն աւելի երկար ատեն կը զարնուին:

Կոչնակներու հրաւրի առաջին արձագանքին, Զէյթունի չարս
թագերուն ավետահետար անկիւններէն՝ հաւատացեալներ խումբ
խումբ կը փութան եկեղեցի, ուր արդէն ներկայ են բոլոր քահա-
նաները, եպիսկոպոսը և բնծայացուն պատրաստ կոչման: Ժողո-
վուրդի խումբ բազմութեան ներկայութեան կոչուար կը կատարուի
հանդիսար կերպով «Մայր Մաշտոցի» և լուսաւորչական եկեղեցիի
կանոններու համեմատ, իսկ հետեւալ օրը, կիրակի տաւատեան,
եպիսկոպոսը պատարագելով բնծայացուին քահանայական աստի-
ճան կուտայ և կ'օժէ քահանայի նոր անուն տալով: Չեռնապրութիւ-
նը վերջանալէն յետոյ, եթէ օրը ուտիք է, այսինքն եթէ մեծ
պահքի մէջ չ'է կատարուած ձեռնադրութիւնը՝ կնքահայրը մատալ
կ'ընէ, երկու երեք ոչխար և կամ բնծող սը մտրթելով և մօտա-

1. Գրդիւշխնը մեծ կանք մընէ, որու մէջ Զէյթունցիները բույս պէքսէղ, կ'ե-
փեն, այնպիսի մեծ զըրդիւշխններ կան, որոնց մէջ մինչև իսկ երկու մարդ հան-
գիստ կարողեն լուացուիլ: Ասիկայ զազգիւնին ազատագութէ:

տնային 100 մարդու համար սեղան կը պատրաստէ։ Այլ ճաշ-
կերոյթի մէջ բաց ի եկեղեցական գտնէն և իշխաններէն մեծ տեղ
կը բռնէ հասարակ գասակարգը Սեղանի վրայ բաժակներ պարպելով
բարեմադիմութիւններ կ'ընեն նորրնծայի և երէցկիկնի արեւատու-
թեան համար։ յետոյ իշխանները կը խմեն բոլոր ուզողփառ և
պիտկոպոսաց կենացը, ներկայ եղող եպիսկոպոսին կենացը առան-
ձին չեն խմեր, այլ իրենց խօսքը ուղղելով սոյն եպիսկոպոսին
կ'ըսեն, եթէ գուք ալ ուզողփառ էք՝ այլ բոլորի մէջ գուք ալ կը
գտնուիք։

Էպիսկոպոսն ալ փոխադարձաբար կ'ըսէ, բաժակ կ'առաջար-
կեմ բոլոր Առաւուածասէր իշխաններու կենացը, և կը յուսով
թէ գուք ալ Առաւուածասէր էք։ Բաժակներ կ'առաջարկեն նաև
քաջամարտիկ հասարակութեան և բոլոր հերոսներու կենացը։ Հա-
սարակ գասակարգէն ճարտարախօս մը սուքի կ'ընելով փոխադարձա-
բար բաժակ կ'առաջարկէ հասարակութեան կողմէն, բոլոր անձնուէր
հոգեւոր հովիտներու և ուղղամիտ իշխաններու կենացը, յայտնելով
երախտագիտութիւն և խորին յարգանքներ։

Կարգապահութիւն Զէյթունի Քանանեկերու։

Չենտարութեան օրէն սկսեալ, նորրնծան բառասուն օր եկե-
ղեցւոյն խօսքը փիլոնով ծածկուած աղօթքով և ծոմապահութեամբ
կը ճգնի։ Առաւուսէն մինչև ժամը ինը (Եպ-Յ) նորրնծան առանց
բան մ'ուտելու, ծոմ կը պահէ և իր ժամանակը կ'անցնէ Սաղ-
մա քաղելով, Նարեկ կարգալով, կրեմն ալ ուսեալ քաջանայ
օր գալով պատարագելու կանոնները կը սովորեցնէ, իսկ ժամը Ծին
(բա թրքաց) պահոց կերակուրով ծոմը կը բանայ։ Նորրնծայի կե-
րակուրը 40 օր ժողովքեան կողմանէ կը մատակարարուի. ամեն
երեկոյ այլ և այլ տուներէ Յ-4 տեսակ պահոց կերակուրներ ա-

ոանց ձիվեակերի, շուշմայով կամ գահինով սրաքանտած կը բե-
րուին նորընծայի խոյր: Այս պահոց կերակուրները այնքան խը-
նամբով կը սրաքանտեն Ջէյվունցիները որ շատ անպարար և
համեղ կըլլան, որովհետև, ինչպէս լուրը, մեծ քանակութեամբ
ամեն երեկոյ այլ և այլ տուներէ միաժամանակ կ'ուղարկեն, այնպէս
որ նորընծան բիշ մը բան կարողանալով սպասել, մնացեալով 10-
20 տուն աղքատներ կը խնամուին:

Քասառունքը մինչև լմննայ, ամեն երեկոյ նորընծայի գոնուած
եկեղեցիին մէջ եկեցէի Աղօթք կը կատարուի և մի գլխի Աւե-
սարան կը կարդացուի, նորընծան փիլօնը բերնին բռնած, նոր
հարսի նման եկեղեցիի պահարանէն ելնելով կազայ և գրքակա-
լին անջև գլխիս խնամահեցացած ծնկաչօք կը նստի, իսկ Աւե-
սարանն աւարակէն յետոյ, նոյն ձևով կը վերադառնայ պահա-
րան:

Այս քասառուն օրուան միջոցին միայն շապիկը չփոխեր գրե-
թէ, գօտին ալ չքակիր, սրով անկագնոյ մէջ գրեթէ հանգիստ
չկրնար բնանալ: Խեղճը այլ խտտակրօնութեան մէջ շատ կը
նեղուի, բայց և այնպէս հոգեոր ուրախութեամբ՝ գոհ սրտով կը
աանի: Երբ որ ցանկալի 39 օրը ամբողջանայ, խոշոր կախայով
ջուր կը տաքցնեն, մեծ ալ կոնքի (զաշտիշան) մը մէջ կը նստեցը-
նեն նորընծան և քահանայ մը զայն կը լուայ, այս միջոցին քա-
հանաները և տիրացուները սովորական «այսօր անճառ» ը կ'երգեն
ծնոգաներով, ասկից յետոյ նոր ճերմակեղէններ և հագուստներ
կը հագցուին, վերջապէս պարեգօտ, գօտի, վերարկա², որոնք,
ամենքն ալ նոր են և այս զգեստեղէնները քահանային կնքահօր
կողմէ կը նուիրուին: Կնքահայրը կախկապուին ալ աջահասրոյր

1. Երանի թէ մեր կախկապուար այդ նախապաշարեայ սովորութիւնը գողթե-
ցեմէն:

2. Մէրօթն մաշաւքը բուսած, սև գառփուն կերպան մը:

մը կուտայ, որուն ժողովարէն եպիսկոպոսն ալ Փիլոն մը կը նուիրէ նորընծային. այսպէսով անուշ տեղը կը կատարուի:

Հեռեկալ առաւօս առաջին պատարագը կը մատուցանէ Հանգիստար կերպիւ, շորս եկեղեցեաց քահանաները Հոն ժողովուած կ'ըլլան, ինչպէս նաև խուան բացմութիւն կը գանուի. պատարագէն վերջը նոյն զգեստով ու շքեղ թափօրով « Աշակերտք Քրիստոսի » շարահանը կը գեղարկուի քահանային տունը կ'երթան, ուր մատաղ պատրաստուած է կնքահօր կողմէ. Հոն երկուած մատաղին վրայ նորընծան իւր անդրանիկ օրհնութիւնը կ'ընէ ու նոյն թափօրով եկեղեցի կը վերադառնան³:

Նորընծան եկեղեցական զգեստները մերկանալէ վերջը տուն կը վերադառնայ, ուր սեղանակից կ'ըլլայ Հանգիստականներու՝ որոնք այսպիսի Հանգիստներու Հացկերոյթին անուագն 50 Հոգի կ'ըլլան: Ահա այս առթիւ նորընծան առաջին անգամ՝ ըլլալով իւր պահօր կը շուծէ, բայց միայն մէկ օրուան Համար: Այսուհետև ամբողջ տարի մը իւր տունը ստը չի կոխեր, այլ եկեղեցիին սենեակը կը պատկի. այս մէկ տարուան միջօցին միշտ պահոց կերակրով կը սնանի, բաց ի շարաթմ և կիրակի օրէն, այս երկու օրն ալ ոչ թէ մտեղէն այլ իւրով կերակուր կ'ուտէ. իսկ եթէ մատաղ տեղի ունենայ, կրնայ ատոր մասնակցիլ: Զերմեռանց ժողովուրդը գրեթէ նոյն տարին մատաղը անպակաս կ'ընէ շարաթմ և կիրակի օրերը՝ սիրելի նորընծայի խաթրին Համար:

(Ընդհանրապէս Քահանայք Ս. պատարագի պատրաստութեան

1. Ասկէց 19 տարի առաջ խիստ տղեղ սովորութիւն մը կար, այսինքն թէ երբ քահանան տուն կ'երթար թափօրով, երեցիներ ուրեշ երեցիկներէ շրջապատուած գլուխը սաւան մը ու վերմակ մը առած և ական ներն ալ բամպակով զօցած կը գտնուէր և նորընծան ալ անոր զլիտուն մի քանի տուն: Այստարան կը կարգար ու այնպէս կը մեկնէր: Ար կարծուէր որ, երբ երեցիկներ քահանային ձայնը լսէ, անմի քաղէս կը մեռնի. անգամ մը պատահարար այսպիսի դէպք մը տեղի ունեցած է եղեր. արդի առաջնորդ Արարակեա եպիսկոպոսը այդ տղեղ սովորութիւնը ջնջեց:

համար հետևալ նպաստութիւնները կը կատարեն: Էջեկոյեան ընթրի-
քէն վերջ ուժը կանսն Սաղմսս կը քաղէ այնուհետև հարեկէ Գա-
տին բակել սուանով ծածկուած Անկողնոյ վրայ երկննալ պակկի
չիկայ, այն գիշեր նստած տեղը կրնայ բնանալ թիչ մը: Կէս գի-
շերուն ժամկաշին հեա կը սկսի նշխարհը, մաս գործել հետևալ
արարողութեամբ որք են «նաշու երեք ոգորման, յետոյ մի ճայն
հանդստեան շարականը, այնուհետև այսօր աննաոր» Էջմէ կեկզե-
ցին սարկաւազ ունի, նա ալ այս արարողութեանց կը մասնակցի:
Ժամկաշութիւնը կը սկսին արշաւոյսին և շարած գործի օր ըլլա-
լուն՝ դեռ արև չծագած կը վերջանան ժամկաշութիւնները, որով
ամէն մարդ կրնայ իւր գործին երթալ: Կիւրակէ օր, արիւր ծագե-
լու ատեն խղարերից անտարանը կը կարգացուի, արք և կանայք,
ձերք և այգայք եկեղեցի կը գիմեն, Զէյթունի մէջ ստօրնայ եկե-
ղեցի շերթալը անգամ ամօթ համարուած է, վերջապէս ամէն որ
եկեղեցի կ'երթայ, բացի հիւանդներէն. սա խիտ ստորութիւնն ալ
օնին սը, ժամկաշութեանց ամբողջովին շուարակէն սասջ սչ որ
եկեղեցիէն գտրս կ'ելլէ. եթէ նայն խօկ մէկը գտրս ելլէ, ժողովը-
յեան առջև ամօթահար կը մնայ: Այսքան սպասող ժողովուրդը

1. Թագին իշխանը կամ ասներէց բահանան կը հարցնեն թէ ինչու կիտա
թողուց արարողութիւնը և գտրս ելաւ. եթէ անիկա հիւանդութիւնը պատճառ
ցուցնէ, իրեն կ'ըսուի թէ՛ եթէ հիւանդ էք, պէտք չէք եկեղեցի գալ և ժողովրդեան
զայլթակղութեան պատճառ ըլլալ:

Կիւր և հրդէհ կրնան միայն պատճառ ըլլալ եկեղեցիէն գտրս ելլելու. այս
պարագաներուն բոլոր ժողովուրդը գտրս կ'ելլէ մինչև անգամ նոյն եկեղեցւոյ
ուսազ բահանան: Անգամ մը Տեառնոյ առաջի Կիրակամուտքի իրիկուն եկեղեցւոյն
նախօճակի հանդիսաւոր արարողութեան ատեն Ս. Սարգիս եկեղեցւոյ աւագ բա-
հանան համբաւաւոր Տէլի Գէշիչ Տէր Օնան, ժողովրդեան մէջ թափօրէ ինկարպու-
թիւն կատարած միջոցին մէկը ահանջէն բան մը փոփայց, որուն վրայ Տէր Օնան
բուռվաւոր միւս բանանքէն միտն յանձնելով, վրայի շուրջօտը և փիօնը ձգելով
եկեղեցիէն գտրս նետուեցաւ. նոյն եկեղեցւոյ իշխանին (Երազագեանի) հետ-
պատճառն այն էր որ շօվրոյեան իշխանի և Սէմէրճեանոց զերդաստանի միջև կոխ
մը ծագած էր. սոսկայի հրաշանաձգութիւն տեղի կ'ունենար, մինչև որ Տէր Օնան

« օրհնեալք, և զեւրք » ի միջոցին թափօրի շարքով կու գան մէկիկ մէկիկ քահանային բռնած Ս. Աւետարանը կը համբարեն սա խօսքը արտասանելով. « Օրհնեա Տէր, Մեղայ Աստուծոյ », սրուն կը պատասխանէ քահանան՝ « Աստուած թողութիւն շնորհեցէ » . ահա այսպէսով կ'արձակուին եկեղեցիէն :

Զէյթունի մէջ քահանաներուն և ժողովուրդեան կրօնասիրութիւնը իւր ծայր տասիճանին հասած է . սա ալ շմոնանք յիշելու որ սոյն խառակրօն եկեղեցականք, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, տիրացու, սարկաւազ, ամէնքն ալ թուրքի հետ պատերազմ մը ծաղկելուն պէս, մէկ մէկ առիւծ դարձած, բոլորովին զինեալ, պատերազմի վայրը կը զիմեն, յարմար պարագային սպաննել և սպաննուիլ աչքերնին տոնելով, ինչպէս 1860ին խորշիա Փաշայի պատերազմին ատեն Զէյթունի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս Էօքսիւզեան զինեալ ներկայացաւ մեր բանակին մէջ՝ Չահան զեպին, աստիի եղբրքը : Արագանը Մարաշի ապա մը հագած էր, մէջքը կը կրէր ջախտ սը սարմանակ, քովէն կախած էր սուր մը, ձեռքը արծաթեայ սպարանջանով հրացան մը, զլուխը ֆէս մը և վրան մետաքսեայ քէֆիէ մը, ոտքը հագած էր փոստայ՝, իսկ իր հետը բերած էր յատկապէս ասոր ջորիի բն՝ զանազան պաշար

և Եւզուպեան իշխանը հասած և միջամտելով զաղբեցոյցին կոխը : 12 տարեկան անեղ պատանեակ մը՝ որ շապիկ հագած, մտ ի ձեռին, կը մամուկցէր Տեասն ընդ առաջի տօնին, Պօզուպըր թաղի Ս. Յովհաննէս եկեղեցոյ զաւթին մէջ, հրացանի գնտակի մը հարուածէն վայրկեանապէս մեռաւ :

Այդ պատանեակը ծանօթ դարբին վարդապետ Մանուկին տղան էր . այս խեղճ զոհը ոչ թէ զիմամբ ալլ պատահարով եղած էր : Եթէ Տէր Օհան աւագ քահանայի և Եւզուպեան իշխանի միջամտութիւնը բիշ մը ուշանար՝ իւրաքանչիւր կողմէ 10-20 մարդ կրնար զոհուիլ :

1. Տես Ա. մաս, 101 երես :

2. Փոկով կապուած տեսակ մը կօշիկ, եթէ պատերազմի ատեն ձին վիրաւորուի՝ մարտիկը հետեան կրնայ պատերազմիլ ալլ թեթեւ սարի կօշիկով և կարաի պէս ապին անդին ցատկել :

Զէյթունի պատերազմիկներուն համար: Չորս իշխանք լսին հպիս-
կոսութիւն. «Սրբազան Հայր, թէև հինաւուրց սոխորութիւն է Զէյ-
թունի եկեղեցականաց զինուիլը, բայց դուք այլ ձանձրութիւնը
չտոնէիք, ձեր աղօթքը բաւական էր արդէն»: Սրբազան Հայրը
ստպէս պատասխանեց. «Պատարագի ատեն կ'աղօթեմ, բայց այս-
պիսի դժուարին կացութեան մը մէջ պէտք է որ մասնակից ըլլամ
ազգայնաց պատերազմին. եթէ ինծիպէսներ թոյլ գտնուին՝ ինչ
սրբապիղծ արարքներու պիտի մասնուի մեր կրօնքը, մեր եկե-
ղեցիները, մեր ազգութիւնը, և մեր հայրենիքը (Զէյթուն) որոն-
կոի պիտի ըլլայ այլ զազանարարոյ ժողովուրդէն»: Սուրբնեան
Նազարէթ իշխանը ըսաւ. «Սրբազան, երբ խորայեղացիք կը
պատերազմէին թշնամոյն հետ, Մովսէս կ'աղօթէր լեռան զազա-
թը, պէտք էր դուք ալ աղօթելով բաւականանայիք»: Բայց հպիս-
կոսութիւն սա իմաստալից պատասխանը տուաւ. «Մովսէս զրեթէ
այդ ատեն ծերացած՝ սուր և սուպար կրելու ուժը չունէր, ասոր ալ
բաժին ինկած էր աղօթք ընել, ինչ որ երիտասարդութեան ժամանակ չէր
միթէ որ էշիպատացի որ սպաննեց և աւազին մէջ թաղեց»: Իշխան-
ները թէև այս պատասխանէն գոհացան՝ Շորպայեան իշխանը սա
նկատողութիւնն ալ ըրաւ. «Երբ հայերը Պարսկաց հետ կը պա-
տերազմէին, Մեծն Ներսէս հայրապետն ալ Նպատ լեռան զազաթը
աղօթքի կեցաւ. — Օհօ, չէ՞ որ Ներսէս ալ երիտասարդութեանը
հայց թագաւորին զինակիրն էր, բնական էր որ ծերութեան ժամա-
նակ կը մնար միայն աղօթել, զի զէնք չէր կարող կրել. փասք Ա-
տուծոյ, ես գեռ ժիր եմ, յիստն տարեկան առոյց, ասոյ՞ և զէնք
կրնամ կրել. մարդ կ'աղօթեմ, պատեհ առթիւ ալ զէնք կը
գործածեմ»:

1. Այս իմ ժողովուրդի բնութիւնը սրբապէս է, զազան օգլու զազան է, Մարխա-
սա Էփիսոսին շիտակ զորքեց, համաձայն եմ, ըսաւ Զէյթունի 26 տնուոր տաճիկնե-
րուն իմամը, Մուլա Մուստաֆան, որ թէ լաւ տաճկադէտ և թէ լաւ հայերէն կիտեր:
Սրբազանին քովիկը նստած կ'ունկնդրէր: Այս ալ իմ ժողովուրդի զինեալ մեր բա-
նակին մէջ կը գտնուէր:

Չորս իշխանները շնորհակալութիւն յայանեցին Սրբազանին ազնիւ զգացումներուն և խմատալից պատասխաններուն համար:

Սրբազանին այս անձնուէր վարմունքը այնքան յուզեց հանդիսականները և հայ զինուորեալ բանակը, որ խանգալաւորէն ծափահարութիւններով ու հրացանաձգութիւններով օլը թողացուցին, այնպէս որ թշնամուն բանակը՝ որ զիմացը կը դանուէր, ահաւստաւ զգաց մէկէն:

Ե

Չէյրունի շրջակայ տէրէպէյիները (աշատակներ):

1. Մարաշ (Գերմանիկ) (Չէյթունի արեւելեան հարաւային կողմը 12 ժամ հեռու). այստեղ կը դանուին խումբ մը հին Ալաններ (մեծամեծ)՝ 1°. Տուլ գաւառը օղոտ (Չիլլատարրեանք) ցեղը՝ որ ինքզինք թագաւորական տոհմէ կը համարի սերած ըլլալ և ժամանակով երկար ատեն Մարաշու և շրջականերուն արած է, կէս սրն ալ Չէյթունի, 2°. Պայազըղ օղոտ, 3°. Լմիթ Մանուտ օղոտ, 4°. Ղասրխը օղոտ, 5°. Վէյի էֆենտ օղոտ, 6°. Ղատըլ գաւտ:

2. Ալպուտաանի (Էսլէստէյն) (Չէյթունի արեւելեան հիւսիս 13 ժամ հեռու) մէջը կան Հաճ Աղու գաւտիք և Սայր օղոտ տէրէպէյիները:

3. Էարսիւզ (Էփեսոս, Արփըսոս), (Չէյթունի հիւսիս արեւմտեան կողմը 12 ժամ հեռու), ունի մէկ տէրէպէյի Հաճի աղաթառ:

4. Սիս (Կիլիկիա), (Չէյթունի արեւմտեան հարաւը, 35 ժամ հեռու, մայրաքաղաք հայոց), ունէր Չաարընը օղոտ տէրէպէյի ցեղը:

Չաարքճը օղլու համանուն ցեղին պետք կիշխէր Սիսու, Ղարօ Պազարու և Չուխուր օվա բնակող թիւրքմէններուն սմանց վրայ: Այս տէրէպէյին էր որ մեծանուն կիրակոս կաթողիկոսը թունաւորելով մեղաց, Սիսու բանի բանի կաթողիկոսներ ասօր հրամանով գահը կը բարձրանային և գրեթէ ասօր հրամանով ալ . . . կը վախճանէին:

5. Հաճըն (Հարզան) Տօրոս լեռան մէջ. Զէյթունէն 24 ժամ հեռու արևմտեան հիւսիս կը գտնուի: Հաճընի և շրջականերուն, ինչպէս Ֆէրի (Վահկայ), Ռուսմլու, Ֆարսախ, Շար Տէրէսի (Կիլիկիոց հայոց թագաւորներուն ամառանոցը) և այլն, կիշխէր Գօզան օղլու տէրէպէյի ցեղը: 1863-4ին Չաարքճը և Գօզան օղլու տէրէպէյաթիւնները ջնջուեցան Սուլթան Ազիզի հրամանով:

6. Կեալուր սաղըն (հայու լեռ) (այժմ՝ ճեպէլի պէրէքէթ սանճաղը կը կոչուի) Զէյթունի արևմտեան հարաւը 20 ժամ հեռու, որ կսկսի Պուլանըզ գաղաէն (Պահճէ գիւղաքաղաք), Հօլաու լեռան վերջացած աղէն, և կերթայ մինչև Փայաս, Խսկէնտէրուն (հայոց ծոց) Զէյթունէն 45 ժամ հեռու: Երբեմն այս լեռան բնակիչներուն վրայ կիշխէին չորս տէրէպէյի ցեղեր. 1°. Կիւջջիս հալլ օղլու, 2°. Հաճի Լօմէր օղլու, 3°. Ալի պէրի օղլու, 4°. Ֆէզզահ օղլու:

Այս վերջինը, Ֆէզզահ օղլու Աղճա պէկ, կիշխէր Պուլանըզ գաղային, որ իրեն հպատակ ունէր չորս հայու գիւղեր՝ որոնց արևներ աղրուկի պէս կը ծծէր 1°. Պահճէ, թրքախան և ծննդավայրը Աղճապէկին), 2°. Հասան պէկի (գուտ հայ), 3°. Լափաչլլ (գուտ հայ), 4°. Խասնը (գուտ հայ):

Ալիպէրի օղլու կիշխէր Լկոկզ հայ գիւղին և շրջականերուն: Հաճի Լօմէր օղլու Տէլի Խալիլ կիշխէր Թեյէկ հայ գիւղին և շրջակայ բերտերուն, երբեմն մինչև անդամ Քիլիս քաղաքին:

Կեալուր սաղըն նուաճելու համար եկած էին Երզնկայու չոր-

բորգ բանակին հրամանատար Տէղրիշ փաշան, Ճէլաէթ Ահմէտ էֆէնասին (1864-1865), Ալաշկերտու կողմէն՝ Չերքէզ Աւլան փաշան, և նոյնտեղի բերառ աւերակներէն Սիւրմէլի Մէհմէտ պէկը իր արաւորներու խմբով։ Տէղրիշ փաշան, լիազօր իշխանութիւնով, Սուլթան Աղիզ կայսեր փոխանորդի տնտեսը կը կրէր, Ճէլաէթ էֆէնասին ալ Շէյխ իւլ իսլամէն փոխանորդի պաշտօնով եկած էր։ Կեալուր տաղիի գործը, առանց արխնահեղու լճեան կարգադրուելէն յետոյ, Ճէլաէթը՝ փաշա տնտեսով՝ Հալէպու կուսակալ եղաւ և իրեն տեղ Տէղրիշին՝ օգնական տրուեցաւ։ Գաբա խմայիլ փաշան, որոնք Կեալուր տաղիի նուաճումէն յետոյ անցան Տօրտ լիւր և բնաջինջ բրին Գօղան օղլու և Չաարծըր օղլու աւերակները։ Գօղան օղլու Եուսուֆ ազան հրացանի լանցիին, իսկ իր եղբայրը, հաճի պէկը շարաշար սպաննուեցաւ։ Գաբա խմայիլ փաշայէն, որ դայն իր երկաթապատ կօշիկներուն տակ անեկով, «աւօլլէթ խայինի» բուխով, կոխկռակով սասկեցուց։ Այդ աւերակներէն մնացածները Եօզղասու արքայրեցիին և Չաարծըր օղլու Ահմէտ պէկին ալ փաշայի տնտես տալին և արքայրեցիին Աղլիա նուազլիս։ Այսպէս այդ երկու ցեղն ալ բոլորովն ոչնչացան։

7. Փայասու աւերակի կիւջջիս հալլ օղլու Մըսարիս պէկը կիշխէր շորս հայ գիւղերու, 1°. Չօք Մէրզիսլան (աւօրթ եօլ), 2°. Օճաղլը, 3°. Էօզէրլի, 4°. Չայ, և շրջակայ մէկ բանի թիւրք գիւղերու վրայ։ Մըսարիս պէկն ալ փաշայի տնտեսով տեղ մը արքայրեցիով թէ Կեալուր տաղին և թէ Գօղան տաղին մարքեցիին աւերակներէն։

8. Անտէրուն (Անտըրն, Անտասին) կամ Գրունք Կիլիկայի, (հին աւուրց անտառու հիանալի երկիր մը, Սիսի արևելեան հիսիսը իսկ Չէյթունի արևմտեան հարաւը 18 ժամ հեռու անկից)։ Անտէրուն, Փայմազամալթեան կեդրոնատեղին, աննշան գիւղ սրն է.

կիշիտ կակիսանէն մինչև Քէշիշ բրնայր և կը պատկանի Մարաշու Սանճագին (Գաւաս) և անմիջապէս Ատանայի կուսակալութեան սահմանակից է:

Անաւերուի կիշիտին շարս տէրէպէյիներ, 1°. Ապազ օղլու, 2°. Եայճ օղլու, 3°. Զիլֆար օղլու, 4°. Կէով Ահմէտ օղլու, 1860 թուին կառավարութիւնը ջնջեց ասանց ազգեցութիւնը և տէրէպէյութիւնը, այժմ՝ կղածները զխնկաւորներ են, ծածուկ տէրէպէյիներ: Երբ Զէյթունի հետ սլաւերագմբ բնել հարկ բլլայ, կառավարութիւնը անանց զխնակը վար կաննէ, որոնք նորէն հին տէրէպէյիներու հովեր կաննեն: Այժմ Եայճ օղլուն բացելիբաց տէրէպէյի է և հարուստ ալ է շնորհիւ հայ ճորտ գիւղերուն: Գայմուգամն ալ անոր ճորտն է, զոր ուզած առնէր պաշտօնանկ բնել կուտայ, շնորհիւ Մարաշու Այաններուն (մեծամեծ), որոնք Եայճ օղլիին մարդիկն են և իր գողակիցները: Այս տէրէպէյին գեւ մնայուն է:

Կէով Ահմէտ օղլուն կիշիտը 1°. Նխրիէտ (Նորիայա), 2°. Անրճըն (Անեցիք) 3°. վարի Չօխախ, 4°. վերի Չօխախ, հայ և բանի մը թիւրք գիւղերու:

Զիլֆար օղլու կիշիտը Շիփիլիի հայ մեծ գիւղին:

Եայճ օղլու մինչև այսօր կիշիտ 1°. Աճէմի Պարսկահայք), 2°. Տրդատլը, 3°. Թափուալու հայ գիւղերուն և բանի մը թիւրք գիւղերու:

Ապազ օղլու կիշիտը 1°. Կապանու, 2°. Պունտուխու, 3°. Տէյիրմէն տէրէյի, 4°. Թաշուլուքու, 5°. Կէօրթունարի հայ գիւղերուն, որոնց միշտ ջերմ պաշտպանն է Ֆրնուգի այժմու Նիկողայոս կպիսկապոսը:

Անաւերուի տէրէպէյիները, Եայճ օղլուն, Ապազօղլուն և այլն

կը գորան հայ եպիսկոպոսէն և մինչև իսկ անունը չեն սօզեր լսել, ընդհակառակը եպիսկոպոսին դործն ալ միշտ ան կողմերն է, այն սինքն մինչև Քէշիչ ըրմազըն Յրնուզի վանքին վիճակը կը սեպուի: Էրբ եպիսկոպոսը ինքը, կամ իր ձեռնասուն Բարթողիմէոս վարդապետը վիճակին այցելութեան ելլեն, տէրևեյթիները ընդատաջ կուզան բարի գալուստ մազթեյու և կրսին: «Պունլար սոյկըրը ֆուր թունա արբ, Պունլարլա խոչ կէշինմէլի»:

Գ. Իշ-նահիէ՛ (Շուղուր անապատ), ուր կար Անապան վանքը (Զէյթունի արեմաեան հարաւ 20 ժամ հեռի) այժմ թիւրքերուն իրր գոմ՝ կը ծառայէ: 1849ին Գառնեցի Օհաննէս վարդապետը շատ ոչխարսեցաւ այդ վանքը շէնցնել, որու համար բաւական ստակ ևս վասնից իր քսակէն, բայց ոչ Սիսու Միքայէլ կաթողիկոսը ոչ ալ պատրիարքարանը աջակցելով՝ երեսի վրայ մնաց շինութիւնը և խեղճ վարդապետին բրած ծախքերը ջուրը ինկան: Եթէ վարդապետին ձեռնարկը յաջողէր, զոնէ այսօր լատինները հոն բոյն չէին գներ:

Իշ-նահիէն գաւտակ մըն է, ոչ Տորոս լեռան, ոչ Կեալուր տաղիի, ոչ Անաէրունի, ոչ ալ Զէյթունի հետ կապակցութիւն ունի: Այս Կահիէին կեդրոնատեղին Ենիճէ՛-գալէ կոչուած գիւղն է, որուն մօտերը՝ Մուճուզ տէրէտիի վայրը, լատին կղերականք 1866ին վանք մը շինեցին: Այդ վանքին վանահայրը, հայր Սալ վատոր, 1895ին Զէյթունի ծանօթ կոուի ժամանակները, թիւրք

1. Ժամանակաւ այդ տեղին անունը Շուղուր անապատ կը կոչուի եզեր, ետքն երբ տանկութիւնը ափեր է այդ երկրին՝ Իշ-նահիէ ըսուեր է: Կիլիկիոյ վանքերու շարքին մէջ, այս Շուղուր անապատի կարմիր վանքն ալ հռչակուած էր: Անիկա համբուսուոր ուսման կեդրոնեցած էր, ուր Ստեփաննոս մանուկի հոգելից գաւտաբարակութեանը տակ կը սնանէին ու կը զարգանային մարդ ու սրտով Գրիգոր Պանլունին և իր հարազատ Կերսէս Ենթուլին, որանք յետոյ հայ եկեղեցւոյ նշանաւոր հայրապետներն եղան:

գինու որնհրու կարմէն անգլիմորէն և բարբարոսորէն նահանատկուեցաւ, և յանցաւորները անպատիժ մնացին: Մինչև 1848-9 աքր Նահիէին միակնիկը (միտիր) տէրէպէթի Գալիշ օղլու Սիւլէյման սադան, իբր տէրէպէթի, կիշիւք բանի մը հայ գիւղերու մընչ, ինչպէս Ելնիճէ գաղէ, Տիքիլի թաշ, Տէճնկէլէ և ասորին մէկ անդամ ալ հեծեալներով, թմբուկներով, Ֆրնուզ կու գար, անխտիր կիջեանէր մանրը կամ զիւզը և աղքատ Ֆրն նուզցին կը կողոպտէր ու կը մեկնէր¹: Չէյթմունցիք սկուայ կը կրճատէին այս թիւրքին բրածին գէմ, բայց հին Նիկողայոս կախսկու պոռն, խոհեմութիւնով չէր ուզեր որ Չէյթմունցիք օգնութեան դան իրեն, ըման սը գաս ասն: Նոր Նիկողայոս կախսկուպոսը, հինին կըրօբողին, որ այն ասան տիրացու Եղիա կը կոչուէր և փոքրատուն էր իր հօրեղբօր, կատիպէր այս վերջինը որ Չէյթմունցիներուն զիմէ և գանգաններան ազատը գաս սը աալ տայ: «Չէ, կըսէր ծերունի կախսկուպոսը, դուն չես գիտեր, ձանիդ ես, մալոգ մը պէտք է հեռաանս բլլայ»: Չէյթմունցիք խնիթ ջորիի կը նամնին, արացին պակաս չեն ըներ թիւրք կառավարութեան, երբեմն ալ կը անանես, թիւրք կառավարութիւնը բանակ կը կազմէ, Չէյթմունը բնաջինջ ընկու համար: Շատ փաշաներ փորձեր բրին Չէյթմունցիներուն գէմ, թէև բան մը չի կրցան ընել, բայց և այնպէս Ֆրնուզի ալ չի գպան, եթէ Չէյթմունցիներուն զիմենը, մեզի գէմ սինանալով մեր փաքրիկ զիւզը բար ու բանոց կընեն: Թուրքերէն առածը կըսէ: «աթլար թէփիշիր, արնատա էշէկ էօլիւր (ձիերը զիրար կաքացին, մէջտեղը էշը կը սասկի)»:

Գառնանք մեր նախկին պատմութեան: Կերունի կախսկուպոսը,

1. Բայց ուզածին պէս չէր կրնար կողոպտել, գան զի Ֆրնուզցիք հին Նիկողայոս կախսկուպոսէն գազանի կզիմէին Չէյթմուն՝ Կաղուպեան իշխանին, նա ալ եղբօր սրբին կզրիէր 5-6 մարդով: Տէրէպէթին կատուի պէս կըբժնէր իշխանագունին սորին առջև և բիշ կողոպտւածով մը գոհ բլլալով կը քաշուէր Ֆրնուզէն:

ինչ ըլլայ ըլլայ՝ կողեր Գայիչ օգլու աւրէպէյին հետացնել Ֆրնու գէն. ուստի Թախտանեան Եօլհաննէս վարդապետը կանչեց և խորհարկ հարցոց՝ գաղանք հետացնելու համար։ Այս ալ նայն բտանին որ ըսած էր արքայու Եզխան, այսինքն Չէյթանցիներուն գիւմել։ Եզխիսկոպոսը նոյն խոհեմ բարոգները կը կաղար նորէն։ «Սրբազան, յարեց վարդապետը, բամբակով ակոսյ շի բաշուիր, այլ պողպատէ արքանով կը բաշուի, կամ գիմելու ենք Չէյթանցիներուն, որ բոլոր ակոսները գան փեղզեն, կամ Պօլիս երթալու է որ այս գործը կարգադրուի»։ Եզխիսկոպոսը այս վերջինին համակերպեցաւ. խեղճ կանչելով Ֆրնուզի Պըլարբեան Ատաբել աղան՝ որ վաստակաւոր Պօղոս պէյի աղտրակին Յ տարի տեսչութիւն ըրած ըլլալուն, Պօլիսը լաւ կը ճանչնար։ Երեքը մէկ եղած Պօլիս գացին և Տասան Պօղոս Պէյի հիւրերն եղան, որ մխիթարեց և ապահովեց զանոնք ըսելով որ ինքն ալ պիտի աշխատի գործին յաջողութեանը և մինչև իսկ խոստացաւ Եզխիսկոպոսը Սուլթան Մէլիխան ներկայացնել։

Բարեբաղդարար այլ ժամանակ Սուլթանը գործի մը համար Պօղոս պէյը բոլր կը կանչէ և մինչև իսկ կը հրաւիրէ որ իր հետ ճաշի նստի այլ օրը։ Ճաշի տանն, տաքաբը, Սուլթանին կը յայտնէ պատգամաւորութեան մասին. «Վհհափան Տէր, կրտէ, այս օրերս ծառայից հիւր եզխիսկոպոս մը եկած է Մարաշու կողմէն, Ֆրնուզի վանքէն։ Ալիկարդ, հիւանալի և փառաւոր մարդ մը, ազամորովներուն մէջ եզական գէմք մը եթէ չը տեսնէք և յետոյ խմանաք որ այլ ակոսի մարդ մը եկեր և ձեր վհհափանութեան չեմ ներկայացուցեր, կը վախնամ որ ձեր բարկութեան կարծանանամ. ահա սաար համար, խանարհարար, փափաքեցայ խնացալ, մանաւանդ որ ինքք, եզխիսկոպոսն ալ, կը ցանկայ Չէր վհհափանութեան ներկայանալ»։ Սուլթանը խեղճ հրաման կրնէ որ եզխիսկոպոսը իրեն ներկայացնեն։

Խեղճ եզխիսկոպոսը հիւանալի գէմքով պատկառելի և հոյս-

կապ ծերանի մըն էր, այդ ժամանակ տարիքը թէև 75 էր, բայց վարդի պէս երես, ձիւնի պէս ճերմակ մօրուք ունէր, բիշ մը մեծաքիթ և աչքերը բազէի աչքերու կը նմանէին, մօրաքը, ընես, բառանկիւնածե սյնքան փառաւոր որ մինչև ծանկերը կիջնէր: Մարդ էր կշտանար անոր երեսը նայելէ:

Պէկը կուգայ Այ Ստեփանոս, իր տունը և Սրբազանին կաեստ ա կրտէ անոր. «աչքդ ըսյս, վաղը թագաւորին պիտի ներկայանաս, ինչ բարեմաղթութիւններ որ պիտի ընես, կը գրեմ թուղթի մը վրայ, կը կարդաս»: յետոյ կը քաջալերէ և խորհուրդ կուտայ պէկը Սրբազանին որ համարձակ ըլլայ և չի ծամծմէ ըսելիքները, ազուր ձեւը մըն ալ հազուստ հազոյնելով՝ երեքշաբթի որ մը կը պատրաստուին ներկայանալ թագաւորին: Մեկնէլէ առաջ՝ Թախանեան Յովհաննէս վարդապետը կը կրկնէ Սրբազանին այն կէտերը՝ զորս պէտք է խնդրեր կայսրէն 1°. Մեր վանքը 14 հայ զիւզ ունի իր վիճակին մէջ, որոնց տարբը վանքին յատկացուի, վագրքի ընէ, 2°. Գայիշ օղլու Տէրէպէյին ալ ցմահ պաշտօնանկ ընել, որպէս զի անգամ մըն ալ Ֆրնուզ և ուրիշ հայ զիւղեր ոտք չի կտիէ: Եւ պիտկուպսը՝ կեցցե՛ս, կրտէ վարդապետին, իմ նպատակս ալ աս էր, բայց կասկած կը յայանէ թէ կը կատարուի՞ արդեօր իր խնդիրը: Պօղոս Պէյ կը խրախուսէ զայն պատուիրելով որ տանց քաշուելու յայանէ թագաւորին իր խնդիրը:

Պաշառ կերթան: Եպիսկոպոսը կը ներկայանայ թագաւորին և ազօթքը կը կարգայ: Թագաւորը զմայլած կը նայի ու կը նայի հպիսկոպոսին փատահեղ դէմքին և սա խօսքերը կարատանէ, «մաշալլահ, մաշալլահ, էլհէմատուլլահ խալիպի էգտանէ ինտիմտէ միլլէթ թէֆըրիգաթը եօզ արը, Պէն տախի թէպաամըն հիշ պիրիսինին միլլէթ, մէզհէպ թէֆրիգ իթմէմ: Ինտիմտէ ճիւմըխտէ սէպիլլիլլամ տիր»: (Աստուած պաշապանէ, Աստուած պաշապանէ, փառք Աստուծոյ, Արարչի բարձրելոյն, իրեն բով ազգի խորութիւն չիկայ, Ես ալ մինչև անգամ հպատակներուս ոչ մէկին ազգ, կրօնք չեմ որոշեր, ինձի համար ամէնքն ալ սիրելի են):

Թագաւորը կրտէ եպիսկոպոսին.

«Մտբախտաս, ախէ, ախէ, ախէ, բարեբախտ հէր նէ խտ վերիւսին»
 (եպիսկոպոս, ինչոյ, ինչոյ բարեբախտ ինչ է նէ թող կատարուին).
 Գաճգ, թագաւորութիւնդ հաստատ մնայ, կը պատասխանէ եպիսկո-
 պոսը. — Շնորհակալ եմ բարեմաղթութիւններուդ համար, կաւելցը-
 նէ կայսրը, եթէ աշխարհային ինչոյ բարեբախտ ունիս, բտէ, մի բա-
 շուիր:

Եպիսկոպոսը կը սկսի մէկիկ մէկիկ պարզել:

«Գայիշ օղյա Տէրէպէյի մը ունիւք, որ միշտ կուգայ մեր Զոր-
 նագու ծառաներուդ նեղութիւն կուտայ ու տուրք կը ժողվէ. կը
 ինչոյ բտի որ անգամ մըն ալ ոտք չի կսիւ մեր գիւզը:

— Աղ (պաշտօնանկ) ըրի, կըրտէ թագաւորը: Գեո ի՞նչ կուզէք,
 կը հարցնէ:

— Մեր գիւղին տուրքերը թիթեղնէք, զի շատ ծանր են. 10.000
 գուռուշ է. 4000ի իջեցուի, կը ինչոյ եպիսկոպոսը:

— Այլպէս ըլլայ, կը պատասխանէ կայսրը:

Մէյ մըն ալ, կաւելցնէ եպիսկոպոսը, մեր գիւղը օսմանցի թող
 չիգայ, ինչու որ աշքերնիս վախցեր է օսմանցիներէն. մենք 4000
 գուռուշը Պօղոս պէկին կը խրկենք, անկէց օտացուի:

— Գեո ի՞նչ կուզէք, կըրտէ թագաւորը:

— Մեր ցորեններէն տասանորդ ե մեր տաւարներէն յասկա-
 ցեալ տուրքը շանուի (այն ատեն տաւար գլուխ 12 փարայ կու-
 նուէր):

— Ինչոյ բտ ունիս գեո, կաւելցնէ թագաւորը.

— Այ, վեհափառ Տէր, կըրտէ Եպիսկոպոսը:

— Շատ բա, կը պատասխանէ կայսրը, բոլոր ինչոյ բարեբախտ կա-
 տարուած են, ոչ թէ մինակ բա վանքիդ, այլ իմ կատարութեանս
 մէջ եղած բոլոր վանքերուն տուրքը բաշխցի, ամէնքն ալ վազրֆ
 ըլլան, փող մը չի վճարեն:

Եպիսկոպոսը շնորհակալ, կայսրը կը կանչէ Պօղոս պէյը ե կըրտէ

« սիլվան մեմնուն օրտամ, Պօղոս, չօքճա կէօրիւ շախմ », աէյիլ մի եւ՛, աղիգ միտաֆիր էլմ մուրախիտա սպապայր » (զոհ մեացի ձեզմէ, շատ տեսակցեցայ չէ, լաւ հիւրասիրէք առաջնորդ հայրը) : Կայսեր բղանցքը համբուրելով կը մեկնին և կերթան Մեծ վէզիբին : « Մեր վեհատաւր ձեզ սիրեց, ես ալ կը սիրեմ », կրսէ վէզիբը : Եւ ի յիշատակ նաէր սը կուզէ աալ եպիսկոպոսին, սակեզօժ արծաթէ բլծախոտի տուփ մը, վրան իր, վէզիբին, պատկերը նաև սաւթնով և սպամանով յիգուսի սը :

Տուփը կուտայ, բայց Պօղոս պէկը կրսէ սը լաւ կըլլար սը լեցուն ըլլար, որովհետև եպիսկոպոսը ոչ ծխախոտ կը գործածէ և ոչ բլծախոտ : Պէյին առաջարկին վրայ վէզիբը սօկիով կը լեցնէ ու այնպէս կուտայ :

Եպիսկոպոսը և Պօղոս Պէյը կուզան տուն : Յովհաննէս վարգապետը եպիսկոպոսին կոկոխի գանդատիւ, սր իր սեւաճները չէ բսած : Ինչ կըսես, պատանձու մն Չարարիայի եղայ, գիտես թէ ես ամէն օր թագաւոր տեսած եմ, ինք եթէ չի հարցնէր, այդքանն ալ չէի կրնար լսել, կը պատասխանէ Եպիսկոպոսը : Պօղոս պէյը կը ինդայ, կը հանգարտեցնէ զանոնք լսելով, սր թագաւորը նախ պատշաճութենէն տեղի տեսնուեցաւ եպիսկոպոսի հետ և մանաւանդ սր բուրբ վանքերուն տուրքերը բաշխեց, ինչ սր պղտիկ բան չէ, բարականացէք եղածով :

Թագաւորին ներկայանալէն 11 օր ետք մենաշնորհներու ֆէրմանը, նշանը և 120 սօկի ճամբու ծախք բերին յանձնեցին եպիսկոպոսին՝ Պօղոս Պէյին աունը, սրկէ ետքը երեք ամիս ալ մնալով Պօլիս, Մայր եկեղեցին հանդիսատար պատարագ սըն ալ բրաւ և խոտն բազմութեան ներկայութեան պերճախօս քարոզ մ՛ալ խօսեցաւ, և սպա վերապարձաւ Չէյմուն :

Եթէ Եպիսկոպոսը թագաւորին առջև չի պատանձէր, կամ անոր տեղը թախաճեան վարդապետը ըլլար՝ կարող էր շատ բան լսել, բայց եզածը եզած էր :

Պօղոս Պէյ վանքին շատ մրթածակապին անօթներ նուիրած էր։ Եպիսկոպոսը՝ ընկերակցութեամբ Պրլարեան Առաքել աղայի՝ Պօլխէն Մարաշ հասաւ ասօք փառօք։ Յովհաննէս Վ. Թախաճեանն ալ գաւառները խրկուած էր աւետելու վանքերուն՝ ասորքերը բաշխուելու շուրջ։

Մարաշ, կառավարութեան պաշտօնին մէջ յատկապէս փերմանը՝ կարգացուցաւ և կպիսկոպոսին ալ մեծ յարգանքներ եղան։

Եպիսկոպոսը ժամանեց վանքը ի մեծ ուրախութիւն Ֆրնուզի ննուն և Զէյթունցիներուն։ Իսկոյն Գայիշօղլու Տէրէպէյին պաշտօնանկ եղաւ 1848ին։ Եանկարծ տարի մը հտըր նոյն Պէյը, հեծեալաօրքի սը գլուխը անցած, թմբուկներ ածելով կկաւ Ֆրընուզ մասա նորէն։ Եպիսկոպոսը ճարահատ Մարաշ գնաց բողոքեց կառավարիչին, սր պատասխանեց. «Ինչ ընենք, խտրելիք համար ասորի մը անպաշտօն թողուցինք, հերիք է, այդքան ազաշխարհներ կը բաւէ, ան ալ միտսիման է, մեղք է. խղճի դէմ է, նայէ դուն ալ աս ծերութեանդ, մինչև Պօլխ գնացիր քու ժողովարարիկ՝ քու ազգիկ սիրուն, աս ալ մեր մարդարէին Մահամէտի ազգափաւ կրօնին պատկանող ժողովրդէն մէկն է, շենք կրնար երեսի վրայ թաղուլ, պիտի ապրի, կեանքներու շնորհիւ»։ Յետայ կաւեկցնէ Մուրախիսա տայի, Էշեկին դազանճը աթ իշին տիր (իշուն շահածը ձիուն համար է), այսինքն կեանքները վառակին, թուրքերը աւան։

Եպիսկոպոսը, այս վերջի նախատալից խօսքը ըսելուն, կրնէ կառավարիչ Մուսթաֆա վաշային. «ձեր օրով հայիրուն ապրիլը հա-

1. Այդ փերմանին կրթնելով պիտի Ֆրնուզի վանահայր Կեօղայոս կպիսկոպոսը, և թէ իր ձեռնասուն յաջորդը, վանահայր Բարդուղիմէոս վարդապետը, ոչ ցորենի տասանորդ, ոչ ալ տասարի տուրք վճածը ևն կառավարութեան Զէյթունի գալմագամները քանեցս փորձ ըրին այդ տուրքերը առնելու համար և չի կարողացան առաջ տասարի գլուխ 12 փարպ տուրք կառնէին, հիմակ 3 ղշ. է։ Վանքը և Ֆրնուզ գիւղը տեսակ մը մենաշնորհեալ ևն։ Այդ փերմանը ցարկ կը պահուի ասպանակ սեղ մը։

բամբէ»։ Բուսահասու տրամա՛ նորէն գարձաւ Պրնուզ, երբ Գայիշ
օղլու գետ հան էր։

Եպիսկոպոսը իսկոյն Զէյթան հեաւ և օգնութիւն ուզեց (1849)։
Զէյթանցիք լաւ որ պատժեցին այս գաղանք (տես Զէյթ. անց. ներքի.
Ա. էջ 70) որ ալ խածնելու կարողութիւն չի մնաց վրան, և հզե-
լութիւնը իսկոյն խնայուցին Պօղոս Պէյին, որ աշխատեցաւ նորէն
Գայիշ օղլուի խնդիրը կարգադրելու։ Քանի որ ամիս հար Մարաշու
կառավարութեանէն յանձնարեալ մը եկաւ Գայիշ օղլուէն այսքան
տարուան աուրք պահանջելու, այնպէս որ Տէրէպէյին մտիրի
գրայ նստեցուցին. նոյն իսկ իր ասանք վասելիք փայտը բեռցնելու
էջ մը իսկ չանհնայալ, շարակով կերթար լեաներ փայտը կը բերէր։
Սակայն սրբան որ ալ Գայիշ օղլուն իր պատիժը ստացաւ, գրե-
բարդարար հանպուցեալ Նիկոպոլոս եպիսկոպոսին Սուլթան Մէծի-
սէն բերած ֆէրմանն ալ սպարպիւն մնաց, որսվհեակ վանքն ալ,
Պրնուզն ալ, վանքին վիճակուած տասն և շորս գիւղերն ալ, բո-
լորը քարոքանդ եղան 1895ի մեծ կոտորածին։ Թէև Սուլթան
Մէծիսի այդ ֆէրմանը մինչև հիմա պահուած կը մնայ, բայց և
այնպէս ֆէրման տեքման խտեր. հոգեւոյն Տէլիքէշի Տէր Օհանի
նշանաւոր խօսքն է այս։

Վերոյիշեալ Տէրէպէյիներէն ոչնչացածներն են հետևանքերը։

- | | | |
|-----------------|--------|---------------|
| 1. Գողան | օղլու, | Տօրոս լեան |
| 2. Չաարբը | » | Սիսէն |
| 3. Գայիշ | » | Իշ-նահիէն. |
| 4. Կէօվազմէս | » | Անարբընէն. |
| 5. Զիլֆար | » | » |
| 6. Ապաղ | » | » |
| 7. Ֆէթղազ | » | Կեալուր ապիէն |
| 8. Ալի պէքեր | » | » |
| 9. Հաճի էօմէր | » | » |
| 10. Կիսլջիւ հաս | » | » |

Ասոր կործանեցան և բնաջինջ եղան շնորհիւ Սուլթան Աղիպին :
 Մնացածներուն հետ Չէլթունցիք միշտ բարեկամ կը մնան : Իրենք
 ալ երբեմն կողման Չէլթուն, երգումներով և խոստումներով բարե-
 կամութիւն կը հաստատեն : Սակայն պատերազմի ժամանակ կը միա-
 նան լծուրք բանակին : Երբ յաջողութիւնը Չէլթունցիներուն կողմն
 է, նորէն կսկսին քծնել և սառսոսել լաելով թէ ինչ բնենք մենք,
 չէինք ուզեր կուսիլ, թաղաւորնիս մեզ զօտով բերաւ :

9

ՉԷՅԹՈՒՆՅԵՒ

Համբաւաւոր Տէր Օհան (Տէղի Բէշիշ) Ղազարի Պեռլիքեանի
 կենսագրութիւնը :

Տէր Օհան ծնած է 1763 մայիս 13ին և իր պապին Տէր
 Յովհաննէսի ձեռքով մկրտուելով անուանուեցաւ Փիւրխիսիւրխն
 (Պրոքորոս) : Իր հայրը Ուհան (Օհան), իսկ մայրը Գուհար (Գահար)
 կը կոչուէին : Ինքը, ինը տարեկան, սկսաւ տիրացու Սիմոն անու-
 նով ջուլհակի մը քով ստանիլ, սրովհետեւ զեռ այն ատեն Չէլթու-
 նի մէջ գարոց չկար : Իսկ իր կարգացած գրքերն էին Սալմաս,
 Նարեկ, Ժամադիրք ևն :

Այս համեստ պաշարով բաւականանալով վերջացուց իր ուսումը
 և տիրացու դարձաւ, սրովհետեւ զեղեցիկ և քաղցրահնչիւն ձայն
 մ'ունէր և մաքուր բարոյականի տէր էր, թէև կուտակէր և բուն
 պատահարներու և վէճերու հետեւ : Տիրացու փիւրխիսիւրխն երբ
 ասանեւոթ տարեկան եղաւ, Միսէլլիմէնց օրիորդ Անազոնին
 հետ պակուեցաւ և 27 տարեկան հասակին զուակ մ'ունեցաւ
 Սարգիս անունով : Երբոր իր հայր, Տէր Յովհաննէս մեռաւ, հայրը

և ծխականները ուղեցին գինըը քաջանայտցնել։ Սակայն այն ասան Ձէյթունի փանքին Էպիսկոպոսը վախճանած բըլալով, հարկ եղա Սիւ գնալ։ Ուտի տիրացուն՝ Էտզուլը իշխանին և արեջ տասնի չափ մարդոց բնկերակցութեամբ գնաց Սիւ և հոն երև սուն տարեկան հասակին մէջ Աջապահեան Թէոդորոս կաթողիկոս սէն քաջանայ ձեռնադրուեցաւ և իր հօրը անուամբ Տէր Օհան կոչուեցաւ։ Եորբնձայ Տէր Օհանի ստորագրութիւնն էր «Քրիստոսի ծառայ Օհան քաջանայ զալուզը պէտջուկէնց¹»։ Սինչև ցմահ իր ստորագրութիւնն այսպէս մնաց։ Իւր մեծ հօրը զալուզը պէտջուկէնց աէր Յովհաննէս կրտէին կամ օգգօրեց, որովհետև 40 տարի առաջ Ձէյթունի բուր քաջանաները գլուխին զալուզ կը կրէին (Դալուիւր սեխածի և կլոր գղակ սրն է, որ բնդհանրապէս սե կերպաւէ շինուած և բամպակով լեցուած է), և անոր վրայ ալ երեք կանգուն երկայն սե մետաքսէ փոշու² մը կը փաթաթէին և վերարկուին սեղ ալ սե մաշահ³ մը կը հագնէին, ահա այս էր Ձէյթունի քաջանաներուն տարազը։ Թէև աէր Օհան գեւ մեծ համբաւ ստացած չէր, բայց իր պարթև հասակը, շնորհալի մօրութիւր, նիստն ու կացը կը տարբերէին միւս քաջանաներէն, ասկէ զատ իրենց գերզատասանը արտաքոյ կարգի հիւրասէր էր, այնպէս որ բազմաթիւ ծանօթ և անձանօթ հիւրեր անպակաս էին իրենց աունէն։

Ձէյթունցիք Տէր Օհանը յարկելու համար, իւր պապուն Օղաբրեց տիաղոսը իրեն աունին։ Ձէյթունի մէջ վեհանձն և քաջ մարդոց Օրթօ անունը կուտան, որ բաս իրենց քաջի և կարիճի նշանակութիւն ունի։

1. Մուրճ ամսագրի 1901 նոյեմբեր, 11-րդ համար, 84 երեսի մէջ Հ. ստորագրութեամբ մի պարուն, վերոյիշեալ Քաջանային համար հետեւեալ անունը տուած էր. Երա խեղան անունն է Օհան աէր-յակօրեան, ինչոր սխալ և թիքիւնացութիւն է։

2. Սե փայլուն կերպաս մը որ Հալեպի մէջ կը գործուի։

3. Ասիկայ Քիլիք պօծի մազէն գործուած է (Մէրութն քաղաքի մէջ)։

Տէր Օհան իր թագի Ս. Սարգիս Եկեղեցւոյ վերաշինութեան համար 1802ին Սիւ երթալով Մեծանուն Կիրակոս Ս. Կաթողիկոսէն կանգակ մը ստացաւ հանդանակութեան մը ձեռնարկելու համար, Կրտս Ստանա գնաց, յառաջով որ Ատանայի Հայերը 7-8000 դրշի չափ նուաճաւ մը կ'ընեն, որով պիտի կարենար Եկեղեցին վերաշինել, որ թագին ժողովարդին համար շատ նեղ կազար: Տէր Օհան Ատանա երթալով Կաթողիկոսէն ստացած կանգակը թաղական Խորհրդին յանձնեց: Ատանացիք անոր լաւ բնութենութիւն բրին, նոյն իսկ կիրակի որ մը Մայր եկեղեցւոյն մէջ նա «Հրաշափստ» շարականը երգեց և եկեղեցւոյ աւագ քահանան բովին զբայ կոնգակը կարողալով ժողովրդին կոչ մ'ըրաւ, «Զէյթունէն մինչև այժմ ոչ որ եկած է մեր քաղաքը այնպիսի նուիրական կոչ մ'ընելու, այս առաջինն է. պէտք է որ առասաձեան լինինք»: Ասկէ յետոյ աւագ քահանան Պղտիկ օգլուին հետ մէկտեղ ժողովարդին մէջ պնտակ պատացուց և դոյացած գրամը 500 դրշ. եկեղեցւոյն աւարտումէն յետոյ բերին Տէր Օհանին յանձնելու և պարծնալով ալ կ'ըսէին, «Կեցցէ, մեր ժողովարդը առասօրէն օգնեց և մեզ Տէր Օհանին բով ամօթաճար չձղեց»: Տէր Օհան յարեց, «Համբնեցէք, նայի՛մ որքան գրամ է»: նորա համբնեցին որ 500 դրշ. ի մօտ էր: Տէր Օհան չբնութենեց և մերժելով բաւ, «ես ձեռնէ 7-8000 դրշ. կ'ակնկալէի, արդ այսքան գրամին զիջում չ'իմ բնիք «Պղտիկ Օգլուն անմիջապէս իր քսակէն 500 դրշ. ևս աւելցուց և աղաչեց որ բնութենի. բայց ի զուր, Տէր Օհան պատասխանեց թէ այդ 1000 դրշ. մեր բով ալ կը գանսի, աւելի լաւ է որ այդ գրամով ձեր ուրիշ պէտքերն հոգար»: Այս խօսքին զբայ Պղտիկեանը և աւագ քահանան մեկնեցան բովէն ամօթաճար. իսկ Տէր Օհան սրտմտած անմիջապէս դուրս ելաւ եկեղեցւոյն սենեակէն և գնաց պանոպակ սենեակ մը վարձելու և տեղաւորուեցաւ հոն: Նոյն օրը պատահմամբ պանոպակին բակին մէջ ժունետիկ մը բարձրաձայն կ'աղղարարէր թէ Մէննէն օլէյին խոնտիին (սղալաւ) մէջ

կամաւոր զինուոր կը գրուին, ով որ կուզէ թող երթայ գրուի հինգ անարի պայմանաւամբ. հազուաւ ճի և սնունդ կառավարութիւնը պիտի հողայ, իսկ ասկէ դաս ամսական 100 գրշ. կը ստանայ. երկրորդ շրջանը արդէն 7 անարի է, ամէն մարդ կ'ընդունուի ասանց կրօնի խարութեան: Տէր Օհան այս ծանուցումը լսածին պէս խորին մտասանջութեան մէջ ինկաւ, յանկարծ մարտին մէջ աս ծրագիրն յղացաւ և իւր ընկեր Միքայէլին ըստ. « քու աշխարհական հազուաբը ինձ տար, իսկ գու ալ իմ կղերական հագուար հագիր »: Խեղճ Միքայէլը շուարած պատասխանեց, « ինչպէս կարելի է ինձ կղերականի զգեստ հագնիլ »: Տէր Օհան ըստ անոր որ իր հրամանը կատարէ և իտասանցաւ բացատրել այս կերպարանախորտութեան պատճառը: Ասոր վրայ Միքայէլ հաւանեցաւ, բիշ վերջը Տէր Օհան աշխարհական մըն էր: Այժմ նա յայտնեց իր ծրագիրն Միքայէլին: Ես Օսմանցոց գիտախորին մէջ ծառայելու կ'երթամ, ով դիտէ բանի տարի պիտի մնամ. կամ կը մեռնիմ կամ կ'ազարխմ: Միքայէլ ազաշեց զինքը իր այգ որոշումէն ետ կեցնել, ասարկելով թէ բահանայի մը անվայել է այդ. սակայն բահանան իսկոյն պատասխանեց. « Է՛հ, շատ մի սքմար, տպա թէ ոչ հիմա կատարեմ. միթէ դուն կը կարծես որ ես զինուոր լինելոյ ամէն ինչ պիտի ուրանամ, կրէք սխալ մի հասկնար զիս, ես մեր կեկգեցոյ վերջինութեանը համար որակ ճարելու կ'երթամ, փոխանակ Ատանայի կեկգեցոյն մէջ ստրուկ մտրացեանի գեր կատարելու կ'երթամ կամաւոր զինուոր կը գրուիմ և ես կը շահիմ հարկեղածն իմ աշխատութեամբ: Աս ըսելուն վրայ ամիջապէս նամակ մը գրեց իր ծնողաց:

Այդ նամակն ալ սապէս գրուած էր, որ նոյնութեամբ հետեւեայն է.

1. Սուլթան Սէլիմ, Սուլթան Մուստաֆա և Սուլթան Մահմուտ թագաւորներուն օրով բանի մը տեսակ գինու որութիւն կար, երէշերի, հայթաւ օտաղը, զատը զբրտ օտաղը, աէլի օտաղը: Արջիները հիմակուան զբր սերտարբըն կը համապատասխանեն:

Պատկանելի Հայր .

Էս Տէլիներուն օճախը կամաւոր զօրքը պատեցայ, արդ զին մտպէք, բանդի գիծախմբին ընկերացայ. կամ կը մեռնիմ, կամ շատ գրամով կը վերագամնամ եկեղեցին նորոգելու: Առանայի Հայերը իմ փափաքս չկրցան կատարել: Այս չափ բաւ համարե- շով, սիրելի Հայրիկ, Չեր և մօրս Պահար խաթմունին ձեռքերը ջերմ փափաքով կը համբուրեմ, և մէկ հասիկ սիրելի գաւազն խաճնոր Սարգիսին սե աչքերը և երէցկինս Անազոն խաթմունին ալ այտերը կը պագնեմ. բանի մը օրէն հետուոր երկիր պիտի երթանք, մնա- ցէք բարեաւ, ձեզի համար ազօթոյ:

1802 Եւլ. 2

Քրիստոսի ծառայ

Օճան քանակայ Ղափուղը պեոյիւկեկեց.

Այս նամակը Մերայէլի յանձնելով զայն ճամբու գրաւ գէպի Հայրենիք (Չէլթուն) իւր քահանայական տարագոյն. իսկ ինք մըկ- րաւոր աննելով կնակց իւր փաստօր մօրուքը, բայց և այնպէս քիչ մը թողոց իւր մօրուքէն, որովհետեւ քահանայ լինելուն պատ- ճառաւ լիովին անմօրօս լինելը համարեց: Կարգը եկաւ իր զինուոր պրտելուն, բայց ասկէ առաջ հետեւեալ խօսքերն ուղղեց ինքն իրեն. «Քեզ տեսնեմ, Տէր Օհան, Առանայի Հայերուն զխեցիլ իբրև մութացկան ու անոնցմէ հազիւ հազ հազար զրշ. գոյացաւ, այլ ևս չընդունեցիր և հիմա քահանայական ատախճանով զինուոր պրտելու կ'երթաս. սա ալ առաջի Աստուծոյ և առաջի մարդկանց խնկթութիւն է, բայց ոչ, ընելիքդ խնկթութիւն չէ, այլ քաջագոր- ծութիւն. առաջ մութացկան մ'էիր, հիմա զինուոր ես. քաջալե- րուէ և միխթարուէ: Բնաւ մի արամիր, գնա, գրուէ»: Մինչև Մէննէն Պէլին Պալաւը այս մենախօսութիւնը կ'ընէր. պալաւին գրան առաջ հասաւ, աներկիւզ ներս մտաւ և գնաց ներկայացաւ Պէլին: Պէլը հարցոց անոր թէ զինուորագրուիլ կուզէ: Այս, պատաս- խանեց Տէր Օհան: Որ տեղացի ես: — Չէլթունցի եմ: Միթէ հայ

ես. — Այս, հայ եմ և բահանայ: — Իւրեմն բեզ չվայելիւր գինսսոր
 գրուիլ, ըսաւ Պէյը, իսկ եթէ կրօնքդ փոխիլ կուզես, այդ ուրիշ
 խնդիր: — Աչ, բաւ լիցի, սակայն ձեր մանկատանի ծանուցման մէջ
 կրօնքի խնդիր չիկար և այլ պատճառաւ է որ ես եկայ: Պէյը
 յարեց, ես կատակ մ'ըրի, կրօնքի խնդիր չկայ հոս. քանի՜ տա-
 բեկան ես: — ՅՅ տարեկան: Անունդ ինչ է: — ()հան բէշէշ գալուզը
 պէտլիք օղլու: — Հա, լսեր եմ այդ անունը, դու յայտնի գերպատանե՜
 մը պէտք է ըլլաս, Երզուպ օղլուի թաղէն, այնպէս չէ: Այժմ բան
 մը պիտի ըսեմ, բայց չբոխտարուիս. կ'ըսեն թէ գալուզը պէտ-
 յիւքներուն գլուխը պարապ կ'ըլլայ, ճիշդ է: — Եթէ գլուխս պարապ
 չըլլար՝ այս գիծախմբին մէջ չէի մաներ: Պէյը խնդաց այս որա-
 խօտութեան վրայ և ըսաւ, դու «տէլի բէշիշ» մը ես: — Շատ լաւ,
 կ'ընդունիմ այդ մակդիրը. բայց կ'ազաշեմ իմ բրիստանեայ և բա-
 հանայ լինելը Ձեր մօտ իրբև գազանիք Քոյ: Այդ մասին անհող
 եզիր, յարեց Պէյը, բայց Սոյ կաթողիկոսէն չե՞ս վախնար. — ինչ
 պէս չէ, և իսկապէս ատոր համար է որ անանս և կրօնքս կ'ու-
 գեմ ծածկել: Եւ հայ լինելը շահակցուելու համար, Պէյը անոր
 իր կամքով Եսուսֆ՝ անունը տուաւ: Պէյը հարցուց՝ ձխալարե՞ ես
 և կրնան ճիրիտ խոզալ: — Այո, բայց սաաջուց բեմ՝ որ ճիրիտ խա-
 դայս վտանգաւոր է, որովհետեւ իմ զարկածս կամ կը մեռնի կամ
 կ'իսամեռ կ'իջնայ: Եթէ բազուկս փոխով մը լաւ կապուի, բիշ մը
 կը տկարանայ և զարնուողը թերևս չմեռնի: Վաղը ճիրիտի փորձ
 պիտի ըլլայ, ըսաւ Պէյը, պատրաստ գտնուէ: Եսուսֆ սիրով
 ընդունեց հրաւերը պայմանով որ իր հաւնած ձին իրեն տրուի:
 Պէյը յօթարեցաւ: Եսուսֆ հետեւեալ օրը հաւնած ձին հեծած գուրս
 ելաւ, և փորձով դասս սը ձին իսկապէս իր սղածին պէս է ու
 գնաց Պէյին շնորհակալութիւն յայտնելու, և երկուքը միասին

1. Եսուսֆ անունը Քրիստոնէից Յօսէֆ անունն է. որտեղացաւ տեղակեր
 թիւրք անուն չըլլալուն համար:

ձխարչաւի հրապարակը գացին, որ Անանայի կամորջէնքիչ մը հետո տախարակ տեղ մըն է: Թէ թուրքերէ և թէ հայերէ բողկացած բաղմամբ մարդիկ հաւարած էին այստեղ, ներկայ էր նաև Ալի - Բիզա փաշան, քաղաքին առաջանիին հետ, ինչպէս նաև կոտախարակի պաշտօնեաներ: Կոտախալին (յալի) անջև մեծ ծրար մը դրած էր, որուն մէջ կը գտնուէին խիլմաներ (զգեստ) ամենաճարպիկ ճիրիածիններուն սահմանուած: Հանդէսը սկսաւ, տասը ձիաորներ շարուեցան Տէլի Եռուսեֆի կողմը, իսկ տասը ուրիշ ձիաորներ ալ անոր հակառակորդ հռչակաւոր Ասլան Ալի անուն ճիրիածի մը քով: Երկու կողմի տասնեակներն դէմ առ դէմ գալով խաղացին, կարգը եկաւ պետերուն: Ալի և Տէլի Եռուսեֆ իրարու քով երթալով համբարուեցան և հրածեշտ առին¹ և սկսան խաղալ՝ քանի մը անգամ իրարու դէմ արշաւելէն յետոյ, բայց իրրև ճիշդ խաղ Ասլան Ալին ձայն տուաւ, Ով Եռուսեֆ, ամուր բռնէ գրեզ, ահա ճիրիտս եկաւ, և անմիջապէս ճիրիտը արձակեց Եռուսեֆին դէմ, որ խիստ ճարպիկ շինելով ձիուն մէկ կողմը ծոցացաւ և հակառակորդին ճիրիտը օդին մէջ նլացաւ: Եռուսեֆ շտկուեցաւ և կանգնեց: «Ով Ասլան Ալի, պատրաստուէ, որովհետև կարգն ինձի եկաւ», և վերջին բանը գետ շարտառանած, ճիրիտը սրացաւ Ասլան Ալիին ականջներէն մէկը տուաւ տարաւ, խեղճ Ալիին արիւնը կը հոսէր առատօրէն: Հանդիսականք պահանջեցին վերջացնել այլ խաղը և Ասլան Ալի գոհ եղաւ միայն մէկ ականջով ազատօթելուն: «Կեցցէ, Տէլի Եռուսեֆ, կեցցէ» լսելի եղաւ ամէն կողմէն: Վալին անմիջապէս Տէլի Եռուսեֆը իրեն կանչել տուաւ և ըսաւ անոր, ափէրթմ, պունտան սօնրա սէնին իամին Ֆահրատ² արը (Կեցցես, այսուհետև դու

1. Օրէնքով պէտք է որ ճիրիտ խաղացողները նախապէս իրարու հետ համբարուին, որպէս զի թէ առա և թէ հանդերձելոյն մէջ իրարու մահապարտ շեւորին:

2. Ըստ թրքաց Ֆահրատ կէ նշանակէ յաղթանակամ, զօրեղ, կորիճ: Ամասիա քաղաքին մէջ մարդոց ձեռքով շինուած քարայրներ կան, որոնց համար թուրք անդու թիւնը կ'ըսէ թէ Ֆահրատ շիներ, և իսկ ըստ հայկականին Մէրզաս շինած է:

Ֆասհրատ պիտի կոչուիս : Այն օրն իսկ գիծախմբին հարիւրապենս կարգից 500 դրշ. ամսականով և իբր արցանակ խիլաթի ծարր քակից և մէջը գանուած սրմայր չէփկէնը (բաճկոն և արծաթապատ պատեանով սուր ժը նորանուն Ֆասհրատ աղային նուիրից : Մէննէն Պէյր Էստուֆին բաջուֆինը ու յարգը աւելի բարձրացնելու համար, ցոյց աուաւ վալինն անոր աջ թիւր, որ փնկով կապուած էր՝ ոչեր չափաւորելու համար, վալին իր ձեռքով իսկ քակից փակը նորանոր գովեաններով, ու բազմաթիւնը ցրուեցաւ :

Գիծախմբին հազարապեան էր Ատանացի Էլէկէն ազա Քամուզան օգլան, որ աւելը հեռեկալ չորս թիկնապահները Չնքուչցի տէլի Արթին և տէլի Խաչօ, որոնք հայ էին, և պէնկի Սհմէս ու Չէլէնկ Հասան թուրքերը : Վերայիշեալ գէպքէն հինգ օր յետոյ՝ յիշեալ հազարապեանին յանձնեցին հարիւր ձիաւոր և յանձնարարեցին որ նախ Սարը-չամ՝ բուած վայրն երթայ և Շէլէֆի աշխրէթի տէրէպէյին Մուստաֆա Պէյր իր բնկերներովը միասին ողջ կամ մեռած Ատանա բերէ : Տէլիներուն անդրանիկ գործը այս եղաւ : Այն ասեանները յիշեալ աւազակապեա Մուսթաֆա Պէյր քսան ձիաւորներով այն տեղը կը գոնուէր : Այս տէրէպէյին Ատանայի և շրջակայից սպարակապեաններն և կարաւաններն կը կողոպտէր անխնայ : Բանը հիմայ այն աստիճանին էր հասեր որ այն իսկ Ատանայի վալին կը վախնար անկէ : Գիծախմբը Ատանայէն մեկնելով գնաց Սարը-չամ բուած վայրն և սաշարեց աւազակապեան իր բնկերներով հանդերձ, առաջարկից Մուսթաֆա Պէյրն որ անձնատուր բլլայ : Աւազակապեալ յայտարարեց, — եթէ Տէլի պաշը Էլէկէն ազան ինծի գայ՝ կը յանձնուիմ : Ասոր վրայ Տէլի սրաշը Էլէկէն ազան գնաց գէպի աւազակապեալը, որը սակայն գրծելով իր խօս-

1. Այն վայրն Ատանայէն 7 մամ հեռու, անոր հիւսիս-արեւելեան կողմը կը գտնուի, չան շատ մայրի ծառեր կան, որոնց բունքը գեղին են, անոր համար տեղացիք Սարը-չամ անունը ստուած են :

ըր հրացանը պարպեց աէլի պաշի Էլէկէն աղային յիբայ։ որուն ձին վիրաւորուեցաւ, Էլէկէն աղան շկարտդաննալով փախչել գերի ինկաւ իր հակառակորդին ձեռքը։ Եւրր ձխաւորները տեսան իրենց պետի գերի տանուիլըը, ուզեցին փախչել, բայց հարկաւորեա Պահճաւ աղան խնամուեց զանոնք և յարձակում գործեց լծնամբ ներու վրայ։ Աւազակապետն այս տեսնելով հրացանի հարուածով մը լծելէ կերպով վիրաւորեց ուսէն յանպուզն Պահճաւը, որ զէպի աւազակապետն ուզուեց իր հրացանը հետեւեալ խօսքով. «Հիմա կարգըն ինձի եկաւ, առ բողբոլ», գնդակը ձիւտ աւազակապետին ազգընէ մտուեցաւ և ձիւտն վրայէն դեպի տապալեց։ Բաղդի բերմամբ աւազակապետին ձին փախչելով աէլիներուն բանակն եկաւ, հրացանաձգովներ սկսաւ կրկուսեք, որ մէկ ժամու չափ տեսց, ի վերջոյ աէլիները գերի բանեցին աւազակապետը։ Էլէկէն աղան օգտուելով պատահած խառնաշփոթութենէն յաջողեցաւ փախչել իր բանակը և այսպէս Պահճաւ աղայի շնորհիւ ազատեցաւ մահուանէ։ Աւազակներն յաղթուեցան 5 մեակալ թողնելով պատերազմի գաշար, երկուքը փախան, իսկ մնացած ԱՅ հողին իրենց պետին հետ անձնատուր կղան և շղթայակապ հանպետուր կերպով Աւանա քեւրուեցան։ Տէլիներու կորուստը Յ մարդ էր։ Եւրր աէլիները Աւանա հասան իրենց կալանաւորներով, լծէ վային և լծէ բազաքին հանաջն ժողովուրդն անհուն ուրախութեամբ զանոնք զիմաւորեցին։ Այս բողբուլովեան առջև վային զիտապետ Էլէկէն աղային ափերիմներ բռնելով ճակատը համբուրեց։ Բայց Էլէկէն աղան բաւ. «Տէր իմ, ես արժանի չեմ ձեր բարի համբոյրին, Պահճաւ աղայի ճակատին կը վայլէ ձեր համբոյրը», և սկսաւ մանրամասնօրէն պատմել պատահածը, Պահճաւ աղային քաջագործութիւնները և յետոյ աւելցուց, ելծէ կը բարեհաճիք՝ իմ պաշտօնն ամենայն սիրով Պահճաւ աղային կը լծուամբ։ Փաշան անոր խօսքին և կամքին համեմատ անոր նժոյց մը նուիրեց և հազարապետութեան տապաւոր պարգուեց ու բաւ. «Այսուհետեւ դուն ես Տէլի պաշին, կը շնորհաւոր

րեմ հազարապետութեանց պաշտօնը, խմբից՝ վրայ ուրիշ 100 ձիաւորներ ալ կ'աւելցնեմ և լիազօր իշխանութիւն կուտամ՝ րնելու անէն ինչ, որ հակառակ չէ կառավարութեան: Ասկէ գտա ձեր մտտին զովասանական նամակներ պիտի գրեմ՝ Կ. Պօլիս կեդր. վարչութեան: Այս պաշտօնց փոխնխոսին պիտի կաւարես Պաղատաս, Հալէպ, Գանիա և Ատանա, եթէ հինգ տարուոյ պայմանաժամը լրանայ՝ այնուհետեւ ազատ ես, և եթէ կրկին անգամ շարունակել ուզես՝ Բ. շրջանն 7 տարի է, այսուհետեւ բեղ իրբ ամսական 1500 գրշ. պիտի վճարուի և որ ուր գրամի պէտք անենաս, սեղուոյն կառավարութեանէն կրնաս ստանալ, իսկ երկու ամսական կանխիկ կը վճարեմ այժմ, անունը Ֆահրատ էֆ. պիտի կոչուի այսուհետեւ»: Գին բազմութիւնը ցրուած չէր, վալին անձամբ անոր վէրքն նայելով, հրամայեց բժիշկներուն որ դարմանեն: Ֆահրատ խոնարհութիւն մ'ընելով հրաման ինդրեց խօսելու, որ կատարուեցաւ: «Տէր իմ, այս է իմ առաջարկը, ձիաւորներուս թիւը 400 ըլլայ և անոնց համար երեքական ամսական կանխիկ վճարուի, ասկէ գտա 4 կտրիճներուս, Չնգուշցի 2 հայերուն և Ատանացի 2 թուրքերուն յիսնապետի պաշտօն արուելով 300ական գրշ. ալ ամսական տրուի»: Վալին Ֆահրատ էֆ. ին խնդիրներն ընգունեց և բազմութիւնը ցրուեցաւ:

Մուսթաֆա Պէյի նուաճման համբար մինչև Գանիա հասած էր, սեղուոյն վալին Միսիսիս փաշան աւլի պաշին իրեն հրաւիրեց: Ատանայի վալին ասոր հաւանութիւն ցուցնելով տասն օր յետոյ 400 ձիաւորներու գումարտակ մը Ֆահրատ էֆի. տրամադրութեան տակ գրաւ, իսկ կաշանաւոր աւազակախումբն ալ փաշտաւ բերդը գնել առաւ: Գանիայի կողմերը կը գանուէին երկու Աշիրէթներ (ցեղ), մին Դէրէֆլի աշիրէթի, միւսը՝ Պէկ-աիլլի աշիրէթի կը կոչուէր, այս երկու ցեղերուն բրած բարբարոսութիւններն այլևս իրենց գաղաթնակէական հասած էին: Երբոր աւլիներու խումբը Գանիա հասաւ, սեղուոյն վալին և թագաւորացն Մօլլա Հիւնքիար օղլուները անոնց

մեծ յարգ ու պատիւ մատուցին և Պաշրատ Էֆէնտիին պատմեցին այս երկու աշիրէթներու կատարած բարբարոսութիւններու մասին և ազաշեցին որ զանոնք բշելով ասանին և Հալէպի կողմերը բնակեցնեն: Պաշրատ նկատեց իր ձիաւորներու սակաւաթիւրը և առաջարկեց որ 400 զինուոր ևս աւելցուի խմբին գրայ: Խնդիրքը կատարուեցաւ. վալին բաջալերական խօսքերով զանոնք ճամբու գրաւ բսելով Պաշրատ Էֆէնտի, ինչալլա՜ յազմուց կր հանդիսանար: Պաշրատ խոնարհեցաւ և իսկոյն մեկնեցաւ իր խմբով: Ան ատենները գրեթէ 1000 տունէ բազկացած աշիրէթներն Գոնիայի գաշաին մէջ հասախմբուած էին: Տէլի պաշին իր գունդով յաջողեցաւ զանոնք պաշարել և երկու մարդ խրկեց անոնց հետեհալ նաւակով: « Աշիրէթներ, եթէ ձեր կամբոյր ինծի անձնատուր կ'ըլլաք, վստահ եղէք, ձեզի ֆեսա չհասնիր, իմ բերնէն ազոհուլութեան հով կը փչէ, ևս ուրիշ Օսմանցիներուն պէս սուտ չեմ սիրեր, արդ պէտք է յանձնուիք, հակառակ պարագային, ամէնքդ ալ սուրէ կանցնեմ, ձեզի օրինակ ահա ձեր Պէյը, որ Փասսու բերդին մէջ կը հեծէ այժմ »:

Ասոր վրայ աշիրէթները խորհրդակցելով, որոշեցին իրենց մէջ որ երթան խմբովին անձնատուր լինին, բանդի ամբողջ երկրագործ գիւղացիք Տէլի պաշին միանալով կրնային իրենց պատուհաս հասցնել, որով թէ իրենք և թէ իրենց բնատնիքները թշուառութեան պիտի մատնուէին. արդ, երկու շարեաց փոքրագոյնը բնարելով և աէլի պաշիի ազնուութեանը վստահելով, իրենց զէնքերը սւզակերու վրայ բեռցուցած գնացին աէլի պաշին յանձնուեցան: Պաշրատ Էֆ. ալ զանոնք անով տեղով առջևը ձգեց և բերաւ Գոնիա յանձնեց վալին: Թէ վալին և թէ Մօլլա Հիւնքեար օղլուները մեծամեծ շնորհակալութիւններով անոր բազմաթիւ թանկագին նուէրներ ատին և առաջարկեցին, որ այդ ա-

1. Հարկաւ սուտ չի սիրեր թէ հայ է, և թէ յահանուց:

շիրէլմները Ասանայի գծով տանի և Հալէպու վալիին յանձնէ և նա ալ զանոնք Րազգա ըստած տեղը խաբան՝ ընել տայ: Ֆահրատ Էֆէնտի ասոնց առաջարկին համեմատ, աշիրէլմները բշեց տարաւ Ասանա, մինչդեռ զոչոյ մը թմբկահարներ խաբին առջևէն իրենց թմբուկները կը զարնէին: Ասանացիները զայս լսելով ողորուեցան և կեցցէներով ընդունեցին Ֆահրատ Էֆէնտին: Ասանայի մէջ 5 օր մնալէ յետոյ՝ իր ճամբան շարունակեց Փաշայի վրայով գեղի Հալէպ: Հալէպու վալին զոչոյ մը արարական նժոյգներ նախընտրով 400 զինուոր ալ աւելցուց, որով խումբը այժմ 1200 զինուորներ ունեցաւ: Տէլի պաշին զանոնք զարձեայ իր առջևը ձգելով, տարաւ Րազգա ըստած տեղը և խաբան ընել տուաւ:

Այս աշիրէլմներուն բարբարոսութիւնը իր զոգաթմակէտին հասած էր այնպէս որ երկրագործ ժողովուրդը ան կը բաշէր անոնց ձեռքէն: Այս անգույթ աշիրէլմները անպատիւ կը ծեծէին խեղճ ժողովուրդները ըսելով անոնց, — արտերնից վերցուցէք մեր ոչխարներու առջևէն: Այս առթիւ շատ թուրք Աշուղներ երգեր հնարած են, որոնք ցարդ կ'երգուին:

Մբարդ—Ալի տէտի, Աշրէթ եւկինդէր, Ֆահրատ պին պաշըյա պօյուն էյէնդէր, զոյունուն էօնինտէն թասըպըր գալարըր տէլէնդէր, Րազգայատա խաբան կիթաի Շէրէֆլի, Պէկ տիլլի:

Մբարդ—Ալին ըստ, — բիտրդի ցեղեր, Ֆահրատ հազարապետին ճիա ծոսղ եղեր, ոչխարաց առջևէն արագ վերցուր ըսողներ, Րազգա հաստատուեցան Շէրէֆլի ու Պէկ—տիլլին:

Այս երգը ճիշդ հարիւր տարուայ երգ մըն է, զոր լուսահոյի տէր (Օհան երբեմն իր սենեակին մէջ ողորուած կ'երգէր իր գեղեցիկ ձայնովը: Թէև այս երգը մեզի համար մեծ նշանակութիւն չունի, բայց այդ անօրէն ցեղերը նուաճողը հայ մը բլլալուն համար, ուղեցի գրել այս մէկ տունը, իբր յիշատակ անմահ անը (Օհանի:

Այս գէղքերէն յետոյ Ֆահրատ էֆ. գնաց իր խմբովը Պաղ-
տատն և հին տարի մը բազմաթիւ քաջագործութիւններ կատարելէ
յետոյ նորէն գարձաւ Ատանա:

Ահա այս կերպով վարեց նա իր պաշտօնը 12 տարի, ամէն
տեղ կարգ ու օրէնք, սպաւնութիւն և խաղաղութիւն տանելով
իրեն հետ: Երբ թուրք կառավարութեան զինուոր պէտք ըլլար,
նա կը մտնէր տաճիկ գիւղերը և գիւղաբաղաքները և բնի գործ
կը ձեռնդէր: Նա սկսաւ իր պաշտօնն 1802 թուոյն Սուլթան Ալ-
լիմ Գ. ի օրով, 1807ին Սուլթան Մուսթաֆա Գ. ի օրով և
1808ին Սուլթան Մահմուտի ժամանակ մինչև 1814 թուականը:
Խոր վերջին օրերն էր երբ նա Անարուսի կողմերը գնաց և Քե-
շիշ գետի քովը թուրք զիւղի մէջ զինուոր կը հաւաքէր. այդ
կողմերը ներքինն անուն 80 տունէ բաղկացած գիւղ մը կար, կէսը
հայ, կէսը թուրք: Եղանակը գարնանային էր և 1200 ձիերուն համար
պէտք էր կանաչ խոտ: Տէլլիները բարակ և նոսր խոտ կ'ուզէին
ձիերուն կեր տալու համար, ուստի տեղւոյն թիւրք զիւղապետը
100ի չափ հայեր ժողովելով բերաւ տէլլիներուն քով, որպէս զի
խոտ քաղին: Ֆահրատ էֆ. ցամաք վանեց հայերը և գիւղա-
պետին ալ բնի մը խառապանի հարուստներ տալով բոսա, թէ
կեանքներուն ժողոված խաւը թրքաց ձիերուն համար պիտի կը
համարուի, ինչպէս նաև անոնց հացն ու ջուրը. թիւրքը պէտք է թրք-
րաց հացն ուսէ Ատար վրայ բոլոր ձիատրները թրքաց տաներու
մէջ հիւրընկալուեցան: Թիւրքերը ստիպեալ հոգացին անոնց կերու-
կուրը, անկողինները և ձիերուն համար խոտը:

Այս գիւղին մէջ հայերը խաբխուլ հիկեղեցի մ'ունէին, նոյն-
պէս խեղճ քահանայ մը, ասիէ զոտ հոն կը գտնուէր համեա-
զործ Մենակոսնոց անուն Զէյթունցի մը: Այս հերոսը ճիշդ Տէր
Օհանի թաղէն և իր ծանօթ ծուխերէն միոյն կը պատկանէր:
Հազարապետը հետուէն հետո լսած էր թէ այդ մարդը այս գիւ-
ղին մէջ կը գտնուի, կէս գիշերին գալն իրեն կանչել տուաւ և

գինքը անմիջապէս ճանչնալով հարցուց թէ ինքն այլ զայն կը ճանչնայ: Խեղճ արհեստագործ, թէև ճանչցաւ, բայց չէր համարձակեր յայտնելու: Քիչ յետոյ իրարու հետ առելի ծանօթանալով, համարձակեցաւ յայտնել, մինչդեռ Տէր Օհանի աչքերէն արցունք կը հոսէր, երբ խնայաւ թէ ամբողջ Չէյթուներ իրեն կարօտը կը բաշէր: Տէր Օհան լալալ համբոյր մը գրաշմեց հերոսին ճակտին ըսելով, « այո, ես այն մեղաւոր բաժանան եմ, կ'աղաչեմ, գնա անդոյս բաժանան առ և բռն անոր որ շնորհայ խորհրդաւեարն և որբութիւնն իրեն հետ առնելու, վասն զի կ'ազեմ խոստովանիլ և որբութիւն առնել »: Չէյթուցին անմիջապէս կատարեց հրամաններ, զիւզի բաժանան եկաւ և Տէր Օհան արտասուելից աչքերով խոստովանեցաւ իր կեանքի գազանիքը և որբութիւնն առնելէ յետոյ պատուիրեց բաժանային, որ ոչ մէկուն այս գազանիքը չյայտնէ ու անոր 3000 զրշ. նուիրեց զիւզին եկեղեցին նորոգել տալու: Իսկ իրեն հայրենակցին ալ տաջարկեց, որ 15 օր մինչև իր հրաժարականը տալը և վերադառնալը սպասէ իրեն, որպէս զի միտոն Չէյթուն վերադառնա՞ն: Միւս օրը զիծախուսէր մեկնեցաւ դէպի Ատանա իրեն հետ տանելով 8 թիւրք զինուորներ այլ զիւղէն:

Ֆահրատ էֆ. ի այս վերջին մտաբը Ատանա շատ փառաւոր եղաւ, իր 1200 զինուորները երկու կարգի վրայ շարած էր, իսկ թմրեկահարներն ալ գնդին առջեւն կրնթանային: Գրեթէ բոլոր Ատանացիք բաղաբէն դուրս ելած էին հրամանատարը իր գնդով զիմաւորելու:

Գունդը վալիին պալատը մտաւ, իսկ Ֆահրատ էֆ. վալիին ներկայանալով սուրճ մը լսեց, յետոյ Մէննէն Պէյին խօսախը մեծ ընդունելութեամբ հարբնկալուեցաւ: Մէննէն Պէյը և Էէկէն ազան գացին վալիին Ֆահրատ էֆ. ի հետ, որ անմիջապէս իր հրաժարականը տա՞ն վալիին Նա թէև զժխամակեցաւ և չէր ուզեր, որ Ֆահրատ ձեռքէ կնէ, զի այսպիսի մտրղ սը և հաւատարիմ խմբապետ գտնելը զիւրին չէր, բայց Ֆահրատ խոստացաւ վալիին

իր անդ ուրիշ քաջ մտալ մը գտնել և իր խոստումն ալ կատարեց, իր նիրբախ հակառակորդ Ասլան Ալին վալիին ներկայացնելով, որը զիժուպեա կարգեց: Վալին, Շէրիֆ փաշան, սը նորեկ էր, հարցուց Ալին՝ իր մէկ ակննջի պակասութեան պատճառը:

Ասլան Ալին պատմեց ինչ որ պատահած էր: Ասոր վրայ Ֆահրաւս էֆ. իր մատուցած մեծամեծ ծառայութիւններուն և քաջագործութիւններուն իրը պտրգն գովասանական վկայադրեր ստացաւ վալիէն: Բնաք բարովի առնել վարչական ժողովի ներկայութեան՝ յանկարծ ինքզինք յայտնեց հեռեկալ խօսքերով: «Փաշա էֆ., ես Զէյթունցի հայ եմ, անունս է Տէր Օհան, մենք դավուդը Պէօլիկ օղլու մեծ գերդաստանին կը պատկանինք, որ 8-10 տունէ կը բաղկանայ և տնտեսան 40-50 զինակիր քաջեր անինք»: Երբոր վալին և հանդիսականք այս անակնկալ յայտնութիւնը լսեցին, քանի մը բուռե աղշած մնացին իրարու երես նայելով (միայն Մէննէն Պէկին յայտնի էր այդ գաղանիքը, որ մինչև ցարդ իր խօսքին հաւատարիմ մնացած էր): «Ինչո՞ւ կը գալմանաք», բտաքահանան, անոնց փորձանքը տեսնելով, «Աստուծոյ բով ազգի և կրօնի խարութիւն չկայ, ուրեմն քահանայ մ'ալ կարող է քաջ և կարեմ ըլլալ»: Մէննէն Պէյը բնգմիջեց. «քահանային բտածները շատ ճիշդ են, անոր համակարծիք և համամիտ եմ»: Վալին երբոր զայս լսեց, սրտմտած քացադանջեց. «մի՞թէ այսպիսի բան կարելի է» և ապա տեղցուց. «եթէ քահանայ ըլլալով զխոնայի՝ քեզ այսքան գովասանական վկայականներ չէի տար»: Իսկ Քահանան իր կարգին պատասխանեց. «Եթէ դուք ալ այս վկայականները չտայիք՝ Ասանա քաղաքը ձեր գլխուն փուլ կը բերէի»: Երկուքին բտածները, թէև իրենց սրտէն բղխած, բայց այդ միջադէպն տոանց պատահարի անցաւ: Ապա վալին հարցուց մեր երբեմնի հաղաբտակտին թէ ինչո՞ւ համար ինքզինքը յայտնեց զեռ հայրենիք չվերադարձած. քահանան պատասխանեց յիշեցնելով անոր Ս. Աւետարանի հեռեկալ խօսքը. «Իմ անունս կուսակալներու ժողովի

ներկայութեան խոստովանեցէր», և յետոյ աւելցուց. «ես այս կերպով բառ Մ. Գրոցիմ սխալուցքը կատարած եղայ, եթէ ինքզինքս չշտջանէի, այլ գաղտնիքը ինծի համար օրոնի ցառ պիտի բլլար, իսկ այժմ խղճահարութենէ զերծ կը մնամ»։ Իսկ հաշտուեցան։

Վերջին հրատեղանէ յետոյ վաղին Պղտիկեանին յանձնարարեց որ քահանան իւր սուներ հիւրընկալէ, բայց քահանան չընդունեց, որովհետեւ ինքը Մէննէն Պէյին հիւրն էր։ Հետեւալ օրն Պղտիկեան Մէննէն Պէյին սուներ գալով լալով ներսդուծիւն ինդրեց անկէ 12 տարի առաջուայ այն հիշին հանգանակութեան համար փահանան շատ դժուարու համակերպեցաւ անոնց սուներ հիւրընկալուելու։ Մէննէն Պէյը, Եէկէն ազան և քահանան միասին գացին Պղտիկեանի սուներ, ուր հրաւիրուած էին նաև կուսակալը և քանի մը բարձրաստիճան պաշտօնեաներ։ Ճսիս էր սեղանը և սրախը։ Հրաւիրեալները դո՛ւ յարտով մեկնեցան Պղտիկեանի սուներն, ուր միայն քահանան մնաց իրը հիւր։

Տէր Օհան ունէր 3 ձի, որոնց միայն միայ կը հեծնէր, իսկ միւս երկուքը իւր ետեւէն «հասկ» կ'երթային, այս պատիւ մէկը, որ մեծ մարդոց կը տրուէր, ունէր նաև բեռնակիր ջարի սը, որուն տանկերէն սէշտանէ կ'ըսուէր Չիերուն համար ձիապան սը և ջութեցան մը բանեց և իր բնկեր Չրնբուշցի երկու հայերը իրեն կանչեց և բառ, որ իրեն բնկերածան մինչև Չէյմուս։ Անոնք այս առաջարկը սիրով ընդունեցին։ Ճամբու պատրաստութիւններ տեսնելէ վերջ, վեց օր յետոյ Պղտիկեանը երեք բնկերներով և քահանան իր սպասարներով և տասը ձիաւորներով մեկնեցան Ատանայէն զԵզլի Սիս, Տէր Օհանը ճամբու գնելու համար։ 300 շափ թէ թմորք և թէ հայ երկու ժամուան սեղ իրեն բնկերացան։ Իսկ քաղաքին մէջ այլ օրերը խօսքին նիւթը Տէր Օհանի յայտնուելն էր։ Երբոր Աիս հասան, անմիջապէս ներկայանալով Տ. կիր. Ա. կաթողիկոսին՝ մանրամասնօրէն պատմեց հոգևոր հօրը և մի օրհնութեան կոնդակ ինդրեց իր քահանայական պաշտօնի շարու-

նակութեան համար: Նորին Ս. Օծուխեան ալ հանձնեալ Սեպ կոն-
գրակը դրուած էր հետեւեալ կերպով:

«Աս Զէյթունի առաջնորդ Արհիպսկոպոս Ը. Մարտիրոս Ա-
պիսկոպոս, Սիրիլին ձեր ի Քրիստոս».

Այսու հայրապետական կոնդակաւ ազգարարներ Չեզ ժամն
քահանայի սիրելոյն իմոյ, քաջամարտիկ զօրավարին Տէր Օհան
Ղալուղը Պէօյուկենց, զի ի ժամանին առ Չեզ՝ սիրով բնկալցիք
զնա, որպէս անասակ որդի, «զի կարուսեալ էր և գտաւ»: Մի
միայն սրատուրեալ է նմա ապաշխարիչ, աւուրս քառասուն, ծա-
մապահութեամբ և սաղմասիք: Ի լրումն քառասուն աւուրց սրատա-
րաց մատուցէ ի սրբավայրի վանուցդ: Եւ ապա հրամայեալ է
նմա իջանիլ ի Զէյթուն յեկեղեցին Ս. Սարգիսի թաղին խրոյ-
անդ քահանայական սրշաօն կատարեսցէ մինչև ցմահ: Սոյլմբ
բաւականանալով ողջ լերուք աերամբ ի Քրիստոս:

Գրեցաւ կոնդակս

Ի. Սորսաւոր

ի թուն Հայոց ՌՄԿԻ.

Ս. Լուսաւորչայ Աշոյ

Հասի ամսոյ ԻՔ,

Կիրակոս Ա. Կարողիկոս Հայոց

յամի փրկչին 1814 Հոկտ. 1:

Տանն Կիլիկիոյ:

Տէր Օհան այս կոնդակը ստանալով 4 որէն հրածեշտը առաւ
թէ Նորին Ս. Օծուխեան և թէ Ատանայի Պապիկեան հանի Ա-
ւետիք աղային և անոր բնկերներուն և մեկնեցաւ իր հետեորդներուն
հետ զէպի Նիւրփէա՝ գիւղը, ուր գտաւ Զէյթունցի Մենակոմնաց հե-

1. Այս գիւղը Սեն 14 ժամ հեռու անոր արեւելեան կողմը կը գտնուի:

րոս գործաւորը Հասկեալ օրը այս Զէյթունցիին ալ հետերինն՝ 7 ձիաւոր մեկնեցան Նիւրիէա գիւղէն դէպի Ճիլիլիի, Պունաուխ, Ֆանուզ և չարս օրէն հասան Զէյթունի Ս. Աստուածածնայ վանքը, առանց իրենք զիրենք մէկու մը յայտնելու: Տէր Օհան Զէյթունէն մեկնած էր 1802 հոկա. ամսուն, նոյնպէս 12 օտարի յետոյ 1814 հոկա. ին կը վերադառնար Զէյթուն, այս երկար տարիներու ընթացքին մէջ իր ծնողաց նամակ մը անգամ չէր գրած: Շահած էր գրեթէ 100,000 դր: Զէյթունի առաջնորդը մեծ ուրախութեամբ աւանկ Տէր Օհանի գալուստը անոր ծնողացը, խկոյն հայրը, Օհան ազան, և մայրը Պոհար խաթունը, Երէցիկինը՝ Անազան խաթունը՝ և իր մէկ հափի վաւակը խամշոր Սարգիսը, ազգականը, թաղեցիք, Զէյթունի 4 իշխանները, նոյնպէս 6 եկեղեցեաց բնահանները վայրկեանապէս վանքը լեցուեցան Նորին արժանապատուութեան բարեգալուստ մտղթելու, տեսարանը շատ յուզիչ էր: Էբբոր Տէր Օհանի ծնողք և բարեկամք տեսան զինքը, անոնց աչքերէն հեղեղի պէս ուրախութեան արցունք կը հոսէր, ասկէ յետոյ սրտարուզի բաժակաճառեր արտասանուեցան Սրբազան և պիտիպոսին կողմէ պատրաստուած ճոխ սեղանին վրայ:

Տէր Օհան թէև այսքան տարիներ իբր Օսմանցի շատ տեղեր և դանադան քաղաքներ պատած էր, սակայն և այնպէս նա իր կենացը մէջ ամենեկին ոգելից ըմպելի չէր գործածած, երբոր նա բաժակաճառ արտասանէր, ձեռքը գաւաթ մը պող ջուր կ'առնէր միայն, երբ իրեն տար պատճառը հարցուէր, կը յայտարարէր թէ՛ կարգաւորի մը ոգելից ըմպելիք գործածելը անվայել է, բայց անտի մարդ պէտք է առանց ոգելից ըմպելիք խմելու ոգեւորուի, զի մահուակներն ալ կ'ոգեւորուին այլ կերպով: Նոյն ուրախութեան սեղանին վրայ Էպիսկոպոսը ի լուր ամենեցուն յայտնեցաւ կարգաց այն կոնգակը, որ ամէնուն ուրախութիւն պատճառեց: Թէև 4 իշխանները ազգաչեցին Էպիսկոպոսին որ տէր հօրը թոյլատուութիւն ընէ իր տունը իջեանելու, բայց Տէր Օհան բացէ ի բաց

մերժեց ըսելով, ես 12 սարի թիւը թաղաւորներուն ծառայցի, տասի հիմն պէտք է ինձ 40 օր իմ Աստուծոյն ծառայել ապաշխարանքին համար: Իշխանները անոր այս խօսքին վրայ համաձայնեցան: Յետոյ իր զուակր և երէցիկներ վանքէն իջան Չէյթուն, իսկ ծնողքը մնացին անոր հետ մինչև 40 օրուան ապաշխարանքի վախճանը: Նա ամենայն ջերմեանով թեամբ սաղմոս կարդալով և ծամապահութեամբ վերջացուց իւր ապաշխարանքը:

Երբոր քառասունքը լրացաւ, վանքի եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր պատարազ մատոյց, որուն ներկայ էին Չէյթունի բոլոր իշխանները և իւր ազգականք, նոյնպէս 6 եկեղեցիներու քահանաները: Այս առթիւ նա մատաղներ մտրվել տուաւ, իւր ջարին վանքին նախրեց և գրեթէ հազար անուր Չէյթունցիներու նուէրներ բաշխեց ըստ արժանւոյն և հարիւր մարդու ալ մեծ ճաշկերոյթ տուաւ: Կէս օրին խուան բազմութիւնը շարականներ կրգիւղով հանդիսաւոր կերպով եպիսկոպոսի պէս Չէյթուն՝ իր աունը իջեցուցին աւսօք փառօք: Իրեն զինակից Չնքուշցի երկու հայերն ալ, Արթին և Խաչօ, երբ Չէյթունը ազատ Հայաստան տեսան, չուղեցին անկից բաժնուիլ, սակայն յետոյ Արթին իր հայրենիքն երթալով ալ եւ չվերադարձաւ: Իսկ Խաչօն Չէյթունի մէջ ամուսնանալով հօն մնաց (այժմ անոր սերունդը կը բնակի Պօպոպայի թաղը և անոնցմէ Խաչօ անուն կտրիճներ անպակաս են) և իր սերունդը Աշնան-պարտիզինք կոչուեցաւ:

Այնուհետև Տէր Օհան Ս. Սարգիս եկեղեցւոյն վերաշինութեան ձեռնարկելու նպատակաւ վանքը գնաց խորհրդակցելու Եպիսկոպոսին հետ, բայց Եպիսկոպոսը չթոյլատրեց աւարկելով թէ օսմունցիութեամբ շահուած դրամով եկեղեցի շէնտիր, որովհետ սրբապղծութիւն կը համարուի: Տէր Օհանին ազգանքն և պա-

1. Հիմնական թիւը ան ասեղան թելերէն շատ կը սարքերի: Տէր Օհան գժբազդարար շէր գիտեր զպրօցներու օգտակարութիւնը և անբաժնետութիւնը:

դատանքը ի գերե ելաւ ու եկեղեցոյն վերաշինութիւնը յետաձը-
գաւեցաւ մինչև 1833 թուականը:

Նոյն թուոյն Տէր Օհան Պօլիս գնաց և Սուլթան Մահմուտի
ներկայացաւ ու Սուլթան Մուրադ Գ. ի հրովարտակը նորոգել
տուաւ: Պօլսոյ աղլայիք անոր հայրենիք վերադարձին ճոխ նուէր-
ներ առին Տէր Օհանին: Այդ նուէրներու շնորհիւ Եւզոկիացի ճար-
տարագետներու ձեռք նորոգել տուաւ եկեղեցին 1835 թուակա-
նին: Տէր Օհան իր օսմանցիութեամբ շահած փողը գրիթէ Ե-
րուսաղէմ երթալով և բարեգործական նպատակներու համար ծախ-
սելով շինուց: Նոյն տակնները հայ ուխտաւորներ ցամաքի ճամբով
Երուսաղէմ կ'երթային, որովհետև ծովու ճանապարհորդութիւնը
դեռ լաւ յայտնի չէր անոնց: Մարտչիք, Ախլժապցիք, Քիլիսցիք
և Ռարֆացիք Տէր Օհանի տաշնորդութեամբ կ'երթային. իսկ կե-
սարացիք, Սերասացիք, Եւզոկիացիք և Ամասիացիք ալ Հալէպ
զալով Տէր Օհանի գալստեան կը սպասէին, որպէս զի անոր լստա-
հելով երթան Երուսաղէմ:

Տէր Օհան աղքատ գասակարզէն բանի մը յտանեակ մարդիկ
իւր ծախքովը Երուսաղէմ տարաւ, նոյնպէս նա իւր ծախքով ամուս-
նացուցիւ է 6 երիտասարդներ, անոր բրած բարեգործութիւններն
հաշիւ չունէին և դեռ մինչև օրս ամէն մարդ գովեստով կը խօսի
անոր մասին: Տէր Օհան 1852 թուականին իններորդ անգամ

Եթէ նա իր դրամին զոնէ կէտը յատկացներ զպոլսոյ բանալու աւելի սգակար
հանդիսացած պիտի լինէր և նետեարար աւելի նպատակալարմար կերպով ծախ-
տուած իւր դրամը: Բայց պէտք չէ մոռնալը, նաև, որ այն տակններն Արուսաղէմ
ուխտի երթալը մեծ առարկութիւն մը և անհրաժեշտութիւն մը կը համարուէր և
հետեարար չենք կրնար գատապարտել Տէր Օհանի ընթացքը: Չմոռնալք սակայն
յիշելու այն կէտը որ Չէմսուցին շատ վնասուած է իր անուսութեան պատճա-
ռաւ, ամբողջ քաղաքի մէջ երոպական լեզու մը գիտցող չկայ բացի ճանօթ Պ.
Սէրսու Յիւրասէն, ան ալ զժբողգարար բացակայ է, և այս իր անհանգի նեղեանք-
ները կունենայ, երբ հիւզարտներ կամ երոպացիներ այցելեն Չէմսու:

լինելով Արուստակէ՛մ զնաց և անկից յետոյ 6 արի ալ ապրեցաւ և 1858 ապրիլ 3ին, ըստ թրքաց ժամը 4ը բառուղ անցած, իր ասնը մէջ յանկարծամահ հղաւ 95 ամեայ: Կոյն օրն Աւագ Չորեքշաբթի լինելով, հասեալ օր, Աւագ Հինգշաբթի, Զէյթունի ասպնուղ Տ. Գովաննէս Կախակոպոսին ձեռք յիւրջին օժման արարողութիւնը կատարուեցաւ և մեծ հանդիսով լծադուեցաւ իր վերաշինած Ս. Սարգիս Եկեղեցւոյն մէջ: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի, հանդիսա իր սահրնեբուն:

Զուգակիպութեամբ իր հօրեղբօրոջիներէն Տ. Յակար բահանան բանի օր ասրի յետոյ նոյնպէս Աւագ Չորեքշաբթի օրը վախճանեցաւ:

Տէր Օհանի ծնելէն մինչև մահը տեղի ունեցած նշանաւոր դէպքերը հետեւալներն են:

1763 թ. Երնիլն և Փիւրխիւրիւն կոչուելը:

1780 » Ամուսնութիւնն Միւսելլիմենց Անագոսինն հետ:

1793 » Քահանայ ձեռնադրուելը Սոյ Աջապահան թէկոսրոս կաթողիկոսէն:

1802 » Առանա կրթալը և օտմանցիութեամբ 12 արի աստանակահան լինելը պաշտօնով:

1814 » Առանայէն հայրենիք վերադարձը:

1830 » Մարաշու մէջ սրացեալ վարդապետար Սուլաթը ըստ սուած տեղը սպաննել տալը:

1833 » Պօլլիս Սուլթան Մահմուտի ներկայանալը:

1835 » Ս. Սարգիս Եկեղեցւոյն վերաշինութիւնը:

1836 » Մարաշու մէջ Կախակոսի Կալոյթիմ Փաշայի ներկայանալը և Զէյթունի մէջ Միւսելլիմութեան պաշտօնը ստանալը:

1838 » Երուստակէի անժամն յիւրայ Դամասկոսի մեծ արարիւթի մը հետ կուտելով յազմող հանդիսանալը. նոյն թուոյն Լուսաւորեայի օրն ալ, Ս. Գերեզմանի

- չաւրջը, կտուի մէջ Յոյներն յաղթելով՝ Չաքարիս
 պատրիարքէն ծաղկեայ լժանկազին փրօն սաանալը:
- 1842 » Էռեսուֆ Փաշայի պատերազմին մասնակցելը:
- 1849 » Գալիշ օղլու Տէրէպէլիին Ֆրնուզէն Զէյթուն բերելը:
- 1851 » Կիւրիւնցի լծրբացած Չափա թորսը Զէյթուն բերելը:
- 1852 » Մարաշ Ե ամիս բանտարկուելը Շգօտրացի Մուստա-
 ֆա Փաշայի ձեռքը:
- 1853 » Մելիքեան Յովակիմ աղան հիւրերնկալելը:
- 1855 » Խնկիւթի կամուրջին վրայ թէ՛ճիրիցի Աշիբէթներու
 Աւասականները իր սուրինտակէն անցնելը:
- 1858 » Ծաղկազարդի օրը պատարազ մատուցանելը. Աւազ
 Էրեքշարթի Տասն կուսանաց Աւեսարանը կար-
 դալը, Աւազ Չարեքշարթի առաուն կեղեցիկին
 մէջ Մանկունը Շարականը երգելը, նոյն օրը ժա-
 մը 4ր բառուրդ անցած յանկարծամահ լինելը:

- Հանգուցեալ Տէր Օհանի վրայօր շատ մը սխալ գրոյցներ
 բուռած են, որոնք բերնէ բերան պատմուած և ճշմարտութենէ շատ
 հեռացած են: Իբրև թէ Տէր Օհան պատարազի ժամանակ զոյգ մը
 ատրճանակ Ս. Սեղանին մէկ անկիւնը կը դնէ եզեր, կամ
 մէկու մը կը Քրդոցի եզեր անոր բսելով. «պատարազը շինցնելն
 վերջ գլխուզ շատ փորձանքներ կը բերեմ»: Վերայիշեալ երկու կէ-
 տերը ըսած եմ թէ Մարաշ և թէ Կիւրիւն, նաև ուրիշ տեղեր
 ալ, մանաւանդ Կեսարիա խօսակցութեան նիւթ եղած են:

Սխալ է նաև այն անգեկութիւնը, զոր անուած է նաև Հ.
 ստորագրութեամբ պարսն մը Մուրճ տմնագրի 1901 Նոյ. ամսոյ
 11րդ համարին մէջ, երես 85 «Տէր Օհան Զահան գետի կամուրջին
 վրայ պահականաց էր հաստատել և անցազարձ ընողներէց սուր-
 քեր էր անում», սոյն անգեկութեանց բոլորն ալ սխալ և շա-
 փազանցուած են¹:

1. Նաև սխալ են այն խել մը անգեկութիւնները, որոնք նոյն ամսագրին մէջ

Մենք գինքը անձամբ շատ մծալն կը ճանչնանք, երբ լուսահոգին քարոզ կը խօսէր, նա ժողովուրդը կը խրատէր բնելով. «բնաւ երբէք մէկէ մը մի գահնաք» : Կա իրեն նշանարան ընտրած էր սա խօսքը. «Չօս պիլէքատ, (ոյժը քօզկին մէջ է)» : Շատ անգամ իր ձախ ձեռքը փիլոսֆին տակէն դուրս հանելով և աջ ձեռաց երկար մատերով ձախ դաստակը թափ տալով կ'ըսէր. «Ինչէլիւրնէ հէօս է, Փէշնէ հէօս է, Կէթէօզկիւնէ հէօս է, պատրիօրքնէ հէօս է, Արիւր, Լուսունկէն տիտիր իմ ուր, Առաղիրը քանր փարօ կ'առնուս» : Արեւ թագաւորն է, իսկ լուսինը՝ պատրիարքը, աստղերը՝ մանր կառավարութիւններն են :

Ախոսս որ այս Տէր Օհանի սերունդը շնաց, հասաւ : Ինքը մէկ զաւակ ունեցաւ, ան ալ Աղճատաղի պատերազմին մէջ մեռաւ, սա ալ Չարման անուն աղջիկ մը ունեցաւ, այս ալ մեռաւ ասոր տարեկան հասակին մէջ :

Բայց իրենց պապենական ազդակցաց սերունդը, Գալուրպէշիկենք, այս օրուան օրս 7 տունէ կը բաղկանան և Չէթունի լեզուով զայսլեօկիւնք կը կոչուին :

պատմութեամբ են Տէր Օհանի մասին : Լիքն է նաև անճշգրտութիւններով միւս համարներէ մէջ ալ. 2. ստորագրութիւնը կրող Չէթունի անցեալէն և ներկայէն պատմութիւնը. այդ մասին արդէն պատրաստած եմ հարկ եղած լուսաբանութիւնները :

1. Թագաւորն ալ հօս է, փաշան ալ հօս է, կաթուղիկունն ալ հօս է, Պատրիարքն ալ հօս է, Արեւ ու Լուսինը, տեսեր եմ որ Առաղիրը քանի լուսնայ կանոնէ :

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

ԴԱԽԻԹ ՎԱՐԳԱՊԵՏԻ

Դաւիթ վարդապետ (Տղայ-Սարգիս) 1828-1875. — Տղայ-Սարգսի հայրը կը կոչուէր Առաքել, որը ընկ խորհրդի էր և ջուհահաւոթիւն կ'ընէր: 1826 թուականներուն թողլով խորհրդի կուգայ Մարաշ և ընակելով հայոց թաղին մէջ (կեափուր մահալլէսի), կ'սկսի գարձեալ ջուհահաւոթիւն ընել: Քիչ յետոյ Առաքել սիրելի ըլլալով Մարաշի Ա. Ասատաձաձնայ կկեղեցիին յայանի տէր Դաւիթ առաջ քահանային, անոր աջակիւն հետ կը նշանուի: Պատկի օրը, հարսնեւորներուն եկեղեցիէն տուն գանալու պահին, թիւրք մը մօտենալով փեսային՝ անոր ձեռքի մտմին զարնելով կը մարէ, այս անկարգութեան վրայ հարսնեւորները զրոյսուելով կը յարձակին այլ ըմբոստ թիւրքին վրայ, լաւ մը կը ձեծեն ու կրկին թափօր կազմելով կը շարունակեն իրենց ճանապարհը, իսկ թիւրքը վրէժ լուծելու համար, խսկոյն մէկ երկու սուս վիհներ գանելով, կ'երթայ կատաճարութեան կը բողբոքէ թէ՛ հայերը զինք ձեծեցին և հարսնեւորներուն մէջ գանուած ըլլալուն համար ալ փեսան հատաքին հայհոյեց: Կատաճարութիւնը ասանց ստուգելու բողբոքին իրաւացի կամ վիհներու ճշմարիտ ըլլայը, խսկոյն կը բանաւարկէ Առաքելը, որոշելով ըստ օրինի կամ լեզուն կտրել և կամ՝ տանկցնել: Քայց նախքան վերջնական որոշում տրուիլը, Տէր Դաւիթ հազար զրուշ կաշառք կերցնելով գատաւօրին — մի գումար, որը մեծ կարեւորութիւն ունէր այն ժամանակի համար — կը յաջողի ազատել Առաքելը: Աւելորդ չենք համարեր այստեղ մէջ բերել կաշառուած գատաւօրի վճիռը, մի անգամ ևս պատկերացնելու համար տաճիկ գատաւօրնելու ուղղակի տարիներ: Գատաճարութեան օրը, գատաւօրը կը հարցընէ բողբոքող թիւրքին — ո՞վ էր հատաքիլ հայհոյողը, կը ճանչնան,

այս՝ կը պատասխանէ թիւրքը, զիս ձեռնդն ու հաւատքիս հայ-
հոյսդը ու կեամբուն էր, ցոյց տալով Առաքելը: Գառաւորը կը
կրկնէ, այս կեամբուրը, և կսկսի մի բանի մաշած ու փոշուած
զբբիւ թեւթեւէ, և վերջապէս գանկելով վճիւր, կ'ըսէ Առաքելին, որ
ինք ազատ է, իսկ դաճնալով թիւրքին կը յայտնէ որ «կեամբուր
տէմէք—բեաֆիր տէմէք, բեաֆիր տէմէք—բիւֆիր տէմէք, հիչ սիր
վազմ բեաֆիր բիւֆիրդէն խալի դէյիլ» — (կեամբուր բսել—անհա-
ւատ բսել է, հայհոյանք բսել է, ոչ մի ժամանակ անհաւատը հայ-
հոյանքէ զերծ չէ) որով բնաւ կարեւորութիւն չունի անհաւատի մը
հայհոյանքը, եթէ հաւատացեալ բլլար հայհոյող՝ մեծ պատիւ-
ճերտ կ'ենթարկուէր: Այսպէսով Առաքելը թէև կը յաջողի ազա-
տիւ բանալն, բայց անյարմար բլլալով այլ ևս Մարաշ մնալ, բա-
րեկամեկրու խորհրդով նոյն օրն իսկ կը փախցնեն Չէյթուսն, և
իրօք, հեռեկալ օրը, այս տարօրինակ դատաւարութիւնը թիւրքիս
զայրոյթը զրգոնելով, կսկսին Առաքելը փնտռել, բայց խնայելով
անոր Չէյթուսն փախչիլը, շուտով կը հանգարաին: Մի բանի օր
վերջ Չէյթուսնցի ջորեպաններ Մարաշ կերթան և ազատ համարձակ,
օր ցերեկսով Առաքելի կինն ալ կը փոխադրեն Չէյթուսն, ու սյնտեղ
երկու նորապանակները, Գարկլար թաղի մէջ համբաւաւոր Տէլի բէ-
շիշ տէր Օհանի ինամբին կը յանձնուին:

Չէյթուսն հասնելէն ասրի մը վերջ՝ Առաքել արու գաւակ մը
կուսննայ, այս կրտսան Չէյթուսի Ս. Սարգիս եկեղեցիին մէջ
Տէլի բէշիշ տէր Օհանէն մկրտուելով, եկեղեցիին անունով կը կո-
չուի Սարգիս (1828): Սարգիս հազիւ 15-16 օրուան կ'ըլլայ,
երբ մայրը ծննդաբերութեան հետեանքով կը մեռնի, այսպէսով
փոքրիկ Սարգիսը կը մնայ օրը: Առաքել շուտով կ'ամուսնանայ Չէյ-
թուսնցի Անագոսն անսնն մի այրի կնոջ հետ, որմէ կուսննայ մի
ուրիշ գաւակ ևս Գաւիթ անունով: Առաքել իր օրը Սարգիսը սի-
րելու ատեն միշտ տղայ Սարգիս կը կոչէր, այս յորջորջումը Չէյ-
թուսնցիներու տարօրինակ կը թուի, որովհետև Չէյթուսնցին աղային

ադո կ'ըսէ: իսկ Սարգիսին—Սարգես, բայց սրովհետեւ Առաքել խաբ-
րեւոյցն էր, չկրնալով Չէյթունցիներուն նման խոսիլ, իր դատարի
բարբառով կը կոչէր իր երախան, ուստի Տղայ—Սարգիս բնոր
Չէյթունցիները սկսան մտկոյիլի ձեով գործածել և վախանակ Սար-
գիսին կոչել Առաքելի օրդին Տղայ—Սարգիս:

Տղայ—Սարգիսի հայրը երկար չապրեցաւ, Չէյթուն գալէն և
բեր տարի յետոյ մեռաւ, թողլով Չէյթունցիներու խնամքին իր եր-
կու սրբերն ու ալլի Ամաղսն: Այդ թուականներուն Չէյթունի
մէջ գեա վարժարան գոյութիւն չունէր, սրպէս զի այդ սրբերը վար-
ժարան գրուէին: Տղայ—Սարգիս մտաւորապէս 16 17 տարեկան էր
թէ և, բայց Չէյթունի թաղերուն մէջ անպարժ թափառելով շարու-
թիւններ կ'ընէր և օրը մէկ տան մէջ կը կշտացնէր իր փօրր:
Տղայ—Սարգիս իր սաահակութեան ու անհանդարտ բնասրութեան
վարձարութիւնը շատով ստացաւ: Օրին մէկը, Տղայ—Սարգիս
թութ ուտելու նպատակով, պարտէզներէն մէկը կը մտնէ, բայց հա-
զիւ ծառը կը բարձրանայ, պարտէզին տէրը, Տարախճեան վարդե-
վար, վրայ կը հասնի: Տղայ—Սարգիս խոյս տալու համար անա-
պարանքով ինքզինը ծառէն վար կը նետէ, բայց սրունքէն վիրա-
ւորուելով չկրնար փախչիլ, պարտէզին տէրը կ'ըսէ. չեւ գիտեր
որ մեզ համար թութը կարեւորութիւն չունի, ինչ հարկ կար
ծառէն վար նետուիլ, և ցաւելով որ Տղայ—Սարգիս վրայ իր աունը
կը տանի և կոկոխ խնամել: Բայց նա միշտ կազ մեայ յետոյ: Այդ
միջոցին Գասնեցի Յովհաննէս վարդապետի նախաձեռնութեամբ ա-
ռաջին անգամ ըլլալով Չէյթունի մէջ վարժարան բացուեցաւ:
Տարախճեան Տղայ—Սարգիսը վարժարան տանելով Յովհաննէս
վարդապետի հովանաւորութեան յանձնեց, Յովհաննէս վարդա-
պետ անիկա վարժարանի զմնացան կարգելով, սկսաւ կարգալ
ալ սովորեցնել: Տղայ—Սարգիս զմնացանութիւն ընելով հան-
դերձ մէկ սարուան մէջ հասարակ ընթերցանութիւնը բուական
սովորեցաւ, այդ միջոցին Էրուսդէմէն Չէյթուն գործող սխտա-

ւարձերս մէջ, Զմիւնիացի բարեպաշտ ազգային մը տեսնելով Տղայ-Սարգսի բնդունակութիւնը, իրեն հետ տարաւ Զմիւնիա ու այնտեղ իր պաշտարանութեան տակ Մերաստեան վարժարանը դրաւ:

Տղայ-Սարգիս Մերաստեան վարժարանի մէջ վեց տարի մնալով, Պր. Սարգիս անունով շրջանաւարտութեան վկայական կ'ստանայ: Այլ միջոցն Սերաստիայէն վաճառական մը գործով Զմիւնիա կուգայ և այնտեղի վարժարաններու բարեկարգ վիճակէն ոգևորած՝ Զմիւնիացիներէն կը խնդրէ որ Սերաստիայի համար կարող ուսուցիչ մը ցոյց տան: Զմիւնիացիները կը ներկայացնեն Զէյթունցի Պր. Սարգիսը, որն իսկոյն Սերաստացի վաճառականին հետ կը մեկնի իր պաշտօնատեղին — Սերաստիա, ու այնտեղ ազգային վարժարանին մէջ հայկարանութեան ուսուցիչ կը կարգուի:

Սերաստիայի մէջ Պր. Սարգիս այլ ևս պատուելի Սարգիս անունով կարճ ժամանակի մէջ մեծ ժողովրդականութիւն կը շահի, կը հիմնէ Սննդեբերման բնիկութիւնը, լսարաններ կը հիմնէ ու կսկսի հասնուիլն աւետարանութիւններ բնել, ստաման ու գիտութեան անունով ժողովուրդն ոգևորել, և խօսողներու մէջ պատուելի Սարգիս անունին բլլալով, առ հասարակ բոլոր Սերաստացիներէն և մասնաւորապէս ազգեցիկ ու հարուստ հայերէն շատ կը սիրուի, որու շնորհով վարժարանը կը բարեկարգուի: Սարգիս պատուելի իր երկու պաշտօնակիցներու, վարդան և Մանուկ պատուելիներու հետ ձեռք ձեռքի տուած Սերաստիայի կրթական գործին մեծ զարկ մը տալով, կուսան այնպիսի շրջանաւարտներ, որոնցմէ ոմանք հեռագրատան պաշտօնեայ, ոմանք բժիշկ, ոմանք վաճառական և ոմանք ալ բազմ հոգևոր հովիւներ եղան հայ ժողովրդի մէջ: Սերաստիայի կրթական գործի բարգաւաճումը ազդեց նաև շրջականերու վրայ, Եօզղաու և Կեսարիա, որ մինչև այն առևն մտթի մէջ էին իրենց վարժարաններով և կրթութեամբ, սերաստացիներէն սրինակ աննելով, տակաւ ոկտան հոգ տանել վարժարաններու բարեկարգութեան վրայ:

Պատուելի Սարգսի համար հասա մինչև Ձէյթուն։ Ձէյթունցիները լսելով որ Տղայ-Սարգիսը Պատուելի Սարգիս եղբւր է, ուղեցին բերել Ձէյթուն, ուստի բնիկ Ձէյթունցի տաջնորդ Էջրսիզեան Յովհաննէս եպիսկոպոսը, իր մօտ կանչելով Տարախճեան վարդեալար ազան, կ'անաջարկէ որ երթայ Սերաստիա և իր որդեգիրը Ձէյթուն բերէ, բացի այդ՝ մասնաւոր նամակով կը գրով Սերաստիայի Առաջնորդ կտրապետ եպիսկոպոսին ու մեծամեծներուն, և Ձէյթունի մէջ այդպիսի գործիչի մը անհրաժեշտութիւնը ցոյց տալով կը խնդրէ որ անպատճառ պատուելի Սարգիսը Ձէյթուն ուղարկեն։ Այս առթիւ Տարախճեան վարդեալար ազան կ'երթայ Սերաստիա Սերաստացիները՝ թէև չեն ուզեր զրկուիլ իրենց աշխոյժ պաշտօնեայէն—պատուելի Սարգիսէն, բայց Ձէյթունցիներու խնդրանքը չմերժելու համար, պատուելի Սարգիսը մեծ թափօրով մինչև Գարդաշար—Թէփէսի բուսած տեղը բերելով իր խնամակալին հետ ձանապարհ կը գնեն գէպի Ձէյթուն։

Անանիա տաքեալի տօնին օրը, Ձէյթունցիները ամեն ասրի վանք հաւարեալով մեծ տօնախմբութիւն կը կատարեն։ Այդ տօնի և ուրախութեան օրը, պատուելի Սարգիս խուն բազմութեան առջև ետանդուն և զգայուն ճառ մը կը խօսի. այն ճառը մեծ գոհունակութիւն կը պատճառէ բոլոր ներկայ եզոզներու, ասոր վրայ Ձէյթունցիները կազն պատուելի Սարգիսի սուուցչութեան պաշտօն տալ Ձէյթունի վարժարանին մէջ, բայց եպիսկոպոսը, որը նոյնպէս զգածուած էր պատուելի Սարգիսի իմաստալից անեմարանութիւնէն, կը համոզէ ժողովուրդը թէ՛ ինք Ձէյթունի համար Պօլսէն ուրիշ սուուցիչ բերել կու տայ, իսկ պատուելի Սարգիսը անելի ըստ կ'ըլլայ՝ եթէ վարդապետ ձեռնադրեն, իսկապէս, եպիսկոպոսը չնայելով որ պատուելի Սարգիսը կազ էր, և կազ մը վարդապետ ձեռնադրելը լուսաւորչական եկեղեցիի օրինաց հակառակ է, վարդապետացուն ըրարուչի մը անհրաժեշտ բոլոր անաւելութիւններն ի նկատի ունենալով կը յայտնէ Ձէյթունցիներուն բնելով թէ,

իրաւ որ կուզ մը վարդապետ ձեռնադրելը լմէ մեր եկեղեցիի օրինաց
զէ՛մ է, բայց այդ մեղքն եւ իմ վրայ աննելով պատուելի Սար-
գիսը վարդապետ պիտի ձեռնադրեմ, այսպէսով քիչ յետոյ պա-
տուելի Սարգիսը Չէյժուանի Ս. Առտաւածածնայ վանքին մէջ նախ
ստրկատագ և ապա վարդապետ կը ձեռնադրուի Գառիթ անունով,
30 տարեկան հասակին մէջ:

Գառիթ վարդապետ մէկ տարիէն ծայրագոյն իշխանութիւն ստա-
նարով Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով, իբրև քարոզիչ Չէյժուան
իջաւ և տաջին քարոզը խօսեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցիի մէջ,
որտե՛ն բնարանն էր Ս. Առտաւածնի հետեւեայ հաստաւածը « բառնք
յափշտակեն զարքայութիւնն երկնից », այս բնարանը մեկնման կէտ
տանելով սկսաւ խրատասել Չէյժուանցիները բաւելով հայրենակից-
ներ, քոջերն են որ կը ժառանգեն Աստուծոյ արքայութիւնը, եթէ
պաշտպանէք կրօնը, ազգութիւն և հայրենիք, քաջ կ'ըլլաք և այդ-
պէսով ապահով եղէք որ Աստուծոյ արքայութիւնը ձերը պիտի
ըլլայ. եթէ պատարբ ըլլաք, թիւրքերը կուզան սանակոխ կ'ընեն
ձեր հայրենիքը, կը կործանեն ձեր եկեղեցիները, կը ջնջեն ձեր
ազգայնութիւնն ու կրօնը, որոնք իրարու հետ սերտ կապակցու-
թիւն սնին: Եւ պատմութիւնէն փաստեր աւ օրինակներ բերե-
լով յայտնեց որ ազգ մը պահպանող այս գլխաւոր պայմաննե-
րը զէնքով կարելի է պաշտպանել, որեմն տէր եղէք ձեր զէնքին
և երբէք մի կատկածիք որ ձեր ազգութեան ու կրօնքին ուրանա-
ցող մը սպաննելովից զժողք կ'երթաք, առ հատարակ հայ ազգին
և մանաւորապէս Չէյժուանցիին ամենահաւատարիմ պաշտպանը
զէնքն է: Թիւրքը ձեզ ու ձեր կրօնքը նախատելու համար կեա-
վաք կ'անուանէ, բայց սրպէս զի գաւը կեալուր չըլլաք, որ ան-
հաւատ բաւ է, պէտք է պաշտպանէք ձեր կրօնքը, որով հաճելի
գործ մը կատարած պիտի ըլլաք ձեր Արարչի համար: Թիւրքը
նախատելով ձեզ, նախատած կ'ըլլայ Աստուծոյ պատիրանները,
նախատելով Աստուծոյ պատաիրանները, նախատած կ'ըլլայ ձեր

Արարիչը, սյրպիսի պարագայի մէջ, ձեր կրօնքը, ձեր Արարիչը նախատողն եթէ սոյննէք, մեզք գործած չէք բլլար, այլ յանուն բրիտաննէտիմեան՝ մի սուրբ պարտականութիւն: Եւ կեանքէն ու աւետարանէն զանազան օրինակներ բերելով, եկաւ սա եզրակացութեան թէ, եթէ ձեզ կողուպակել ուզեն, զուք կողուպակեցէք, եթէ ձեզ սպանել աշխատին, ճարպիկ գտնուեցէք՝ զուք սպաննեցէք, արքայութիւնը ձերն է, ահա վերջարանս: Գաւիթ վարդապետ ամբողջ մէկ տարի մնաց Չէյթուն և ամեն շաբաթ մէկ եկեղեցիի մէջ կը բարոզէր: Օր առօջ խրատներ իր բերանէն եկեղեցիի առաջ երէցնէրը կը ծանուցանէին թէ որ եկեղեցիի մէջ բարոզ պիտի խօսի՝ Գաւիթ վարդապետը, և այլ օրը այլ եկեղեցին խօսն բազմութեամբ կը լեցուէր, Չէյթունի շորս թաղերէն բազմութիւնը կաճապարէր գէպի այն եկեղեցին ուր պիտի բարոզէր Գաւիթ վարդապետ: Մէկ տարի յետոյ Եպիսկոպոսը զազափարական բարոզիչ անունով հրաման տուաւ Գաւիթ վարդապետին որ, երկրի որ կողմն որ կ'ուզէ՝ երթայ և բարոզ հայ ժողովուրդին: Այսպէսով Գաւիթ վարդապետ զարձաւ զազափարական մի շրջուն բարոզիչ, Չէյթունի կաթիճներէն իրեն բնկեր մը աննելով գինուած սկսաւ բազարէ բազար, գիւղէ գիւղ շրջել ու ինքնաճանաչութեան ու անյիհեհրութեան խրատոյսն երով սղուրել հայ ժողովուրդը:

Հալէպի յայտնի բաճանաճերէն մին հետեհալը կը պատմէ յանձին Գաւիթ վարդապետի: Արքայի Բակոր եպիսկոպոսի առաջնորդութեան օրով, Չաակին Գաւիթ վարդապետը Հալէպ եկաւ և ինչորեց որ թողաւութիւն ընեն իրեն, որ կիրակի առաւօտեան բարոզ խօսի: Առաջնորդի հրամանաւ Գաւիթ վարդապետ բեմ բարձրացաւ և իր բարոզն սկսաւ հետեհալ կերպով. — «Եթե ձեզ և մեզ մեծ աւետար, «Քրիստոս յարեալ ի մեռելոց» և Հագար ութ հարիւր այսքան տարի է որ Քրիստոսի յարութեան տարեկարձի սօնը կը կատարուի ամբողջ բրիտաննեայ եկեղեցիներու մէջ, Քրիստոս յարեալ ի մեռելոց, բայց ձեզի և մեզի ի՞նչ, Քրիստոս

իր աստուածային գորութիւնով յարութիւն առաւ, մենք հայերս հինգ հարիւր տարիներ է ի վեր կենդանի մտնալ ենք, մենք երբ յարութիւն պիտի առնենք և մինչև երբ Յովնանու քանը պիտի քնանանք, մենք հայերս այ պէտք է որ յարութիւն առնենք, և կի՞նէ Քրիստոս իր աստուածային գորութեամբ յարութիւն առաւ, մենք մեր բողկի գորութեամբ պէտք է յարութիւն առնենք, և կի՞նէ մենք այսօր կուրախանանք Քրիստոսի յարութիւնը տօնելով, Քրիստոս ևս պիտի սրբախանայ մեր յարութիւնը տեսնելով ։

Այս քարոզը ժողովուրդի վրայ այնքան մեծ ապաւորութիւն կը լծողու և հաճելի կ'ըլլայ որ հալէպցիները միաձայնութեամբ կը ինդրեն վարդապետն որ Հալէպ մնայ, բայց Գաւիթ վարդապետ կը մերժէ, բռնելով որ հոգևոր հայրս շիճողաբեր ինձ մէկ կէտի վրայ հաստատուիլ մնալ, իմ պաշտօնս տարբեր է, ևս պէտք է պտախմ և քարոզեմ ամէն տեղ ։ Ժողովուրդը կտաջարկէ որ զոնկ պատարագ մը ընէ ու քարոզ մը ևս խօսի ։ Գաւիթ վարդապետ ընդունելով հալէպցիներու այս առաջարկը, մտեղցի օրը պատարագ կը մատուցանէ և քարոզ մը ևս կը խօսի հետեւալ խմբագրով լծէ մեռելները Աստուծոյ ահարկու փողահարութեամբ յարութիւն պիտի առնեն, իսկ հայ ժողովուրդը իր հոգևոր հովիտներու փողահարութեամբ պիտի զարթնու իր խոր բունէն ։

Ար որ երթար Գաւիթ վարդապետ մեծ ոգևորութիւն կուտար ժողովուրդին, ամեն տեղ մեծ ընդունելութիւն կը գտնէր այդ համեստ քարոզիչը, յոյնէլ չէր գետեր բնու Գաւիթ վարդապետ, մի քանի տարի Զէյթունի վանքը մնալէն ետքը տասնհակ տարիներ իր կեանքը ճանապարհորդութեան մէջ անցուց ։ Ամեն տարի կը մեկնէր և ամիսներով կը պտախէր, օրինակ Կիլիկիայի բաժնին մէջ, Փայաս, Պէյլան, Անտիոք, Սուէյաթ, Քիլիս, Այնթապ, Ուրֆա, Վերջապէս մինչև Սերասիայի կուսակալութեան ալլ և ալլ կողմերը, մինչև որ 1875ին մահը վրայ հասաւ և Գաւիթ վարդապետ օտարութեան մէջ Սերասիայի կուսակալու-

թեան վեզիրը Եփրեզի գլխավորագրելու մէջ 47 տարեկան հասակին
 մէջ վախճանելով, թաղուեցաւ վեզիրը Եփրեզի եկեղեցիին զանի-
 թիւ Դաւիթ վարդապետի, այս անձնուէր հոգեւորականի մահը մեծ
 օուր սպանանեց առ հասարակ բարձր Զէյթունցիներուն և ամէն
 անոնց, որոնք պատեհած թիւն ունեցած էին, զոնք մի անգամ, բնի-
 ինքնաձանաչութեան քաղցր յարստներու Դաւիթ վարդապետ իր
 ստանձնած ծանր սպառնալէն զատ, ունէր անտիպ աշխատութիւն-
 ներ, Կլիլիկիայի աշխարհադրական կազմութեան վերաբերմամբ
 մի ուսումնասիրութիւն, որը եթէ տպուէր, մեծ օգտակարութիւն
 կարող էր մատուցանել ներկայ սերունդին, բայց ափսոս սր Զէյ-
 թունի մեծ հրկիհին Դաւիթ վարդապետի բարձր գրութիւններն են
 այլեցան ու չբացան:

Ը

ՄԱՍՆԱԽՈՐ ԴԷՊԵՆՐ

Կ Ե Ս Ս Ր Ի Ո Յ Ո Ի Խ Տ Ե Ի Ո Ր Ք.

Ժամանակով 15 Զէյթունցի կեանքեւոյ Մ. Կարապետի վանքը
 ախարի գնալով վերապարձին թուրքերը անսնցիւ իբր «Խարած»
 (տեսակ մը ցլիսահարկ) վախճանական գրչ. կը սգահանջին: Ասանք
 կառավարութեան կը բողբեն, բնիւով որ Սուլթան Մուրաաէն Ֆեր-
 ման ունինք սլոպիսի սուրբերէն ազատ մեղաւ համար: Կառ-
 վարութիւնը մտիկ չընեն, «գուք ազատ էք Ձեր երկրի մէջ», կրնէ,
 «այս տեղ կեանքիս է, հայտէ վճարեցէք»: Այն ասին կարաւանա-
 պետ Շէյխան Զէքիճեան Մրթոյ Էփրեմ ազան բնաւ, լաւ, թէ
 մենք ալ կրցանք կրկնապատիկը կանոնը փոխարէն: Այս յանդամն
 խօսքը կառավարութիւնը իրեն նախատինք համարելով, ասանք կը
 բանտարկէ, միայն ասանցի մէկը, խաղմունեան էջիս ազան,

ինչպէս կը լինի ազատ կը մնայ: Բարեսիրտ կենսարացի հայ մը այս մարդը իւր տունը կը տանի միտմտաբերու: Մարդը տեսնելով կենսարացու փառասուր զարդարուն տունը՝ կը զարմանայ և կ'ըսէ, «Ազա, դուք այսպէս ճոխ հարստութեան մէջ էք, ապա ինչու թողուցիք որ մեր ազաները բանասրկուին: Միթէ մեր վրայ չէք գիտար, չէ որ մենք ալ հայ ենք, արեւակից ենք, վեց օրուան ճանապարհ բշեր, եկեր ենք ձեր վանքին ուխտ ընելու համար, այսպէս է միթէ հայութիւնը, եղբայրութիւնը»:

Այս խօսքերուն վրայ կենսարացին մի բիշ մտածելէն յետոյ բռնա, դուն հանգիտա եղիր և ճաշը բրէ, տեսնենք վաղը կախաւոր արհեստ, ինչ որ կրնանք ընել կ'ընենք, սակայն այս ալ բռնա՝ բեզի որ դու մի զարմանար մեր այս հոյակապ տան շքեղութեան և արդ ու զարդի վրայ, վասն զի ձեր աղքատութիւնը մեր այս ճոխ հարստութիւնէն հազար անգամ նախամեծար է, և դուք հազար անգամ մեղմէ ունի ազատ և երջանիկ էք, ինչու որ ունիք թէն քիչ՝ ձերն է և դուք ձեր արդար բազկի ուժով և սուրի ու հրազէնի միջոցաւ կը պաշտպանէք ձեր կեանքն ու ինչքը»:

«Կը տեսնես, յարեց կենսարացին, այս մտաւանդները, զեղեցիկ ոսկեթել փողոցները և ծածկոցները, ասանք բոլորն ալ պիղծ են, բանի որ թուրքը միշտ կանարպէ, միշտ իսկ կը բանարաբէ մեր ընտանեկան պատիւը: Մենք այս տեղ մեր հարսնիքներն անգամ գողի պէս զիշերով կը կատարենք: Իսկ թէ մեր ննջեցեալներու վիճակը ինչ է՝ հետեւեալ պատմութիւնը կը ցուցնէ իրողութիւնը: Որբան կը յիշեմ Սուլթան Մուստաֆա Բ.ի (1695) օրէն մինչև Սուլթան Մահմուտի ծամանակ թէ մեր և թէ Յունաց ննջեցեալները կը թաղէին տեղական Միւսթիի հրամանով: Այդ հրամանագրի օրինակը ստացուած է եղեր Շէյխիւլ իւլամէն»:

Այդ հրամանագրին պատճէր սա և:

Լապիսի լիպասը զամբանի, համիլի թամբ Շէյխմանի: Մահրումի տէրկեհազի բապպանի, պէտ էսաս զօճափափազ,

ինչա՞ օլանսոր քի, կիրուհի բէֆէրէի, մեքրուհէնիպան ֆիւ-
լան բիֆէրանըն օզլու, ֆէլան բէֆէրէ, միւրն օլարչ օլարդըն-
տան, լաշէի մէքրուհէնի թիւրապ տախի գապուէ էթմէզ իտէտէ,
նէ չարէ, նէ չարէ, նէ չարէ քի, թէէֆիւնիւ միւհլիքէի օրթալըք-
տան գալլմասը իշխն, Շէհըին թըշարբըրնա կէթիւրիւպ պիւր
խէնտէկ գազուպ իշինէ պըրսպուպ իւղէրինի թօփըրալայիւպ շըճ-
նայուպ, թէֆէլէյուպ կէլիսին գօճա փափապ:

Միւֆրի Էֆիկնաի:

Ղաթրանի (խիտ սև) պէս տարալ հալուպ, ստատանյի զըլ-
խարի կըրոպ, Ստատոնյ ապարանքի գունէն գըրիւոպ, վատ սկզբունքի
աէր, պտտաւեալ հրէզ:

Կը ծանուցուի որ Չիւր հայհոյիչ գարշիլի ժողովուրդն, այս
ինչ հայհոյիչի աղան այն ինչ հայհոյիչը ստակած բլլալով թէի
գարշիլի պիղծ դիակը հոպ անգամ չընդունիր, ինչ օղուա, ինչ
օղուա, որ այս զգուսիլի գարշահոտութիւնը մէջտեղէն վերցուելու
համար բազաքէն գուրս հանէք, խորունկ փոս մը փորել տաք,
մէջը ձգէք, վրան հոպով ծածկէք, լաւ մը արորէք, կօխկուսէք
ու գաք, պտտաւեալ հրէզ):

Կնիք Միւֆրիի:

Մեռիլ րադիօ հրամանագիր

Թուրքին պէլէլիսրնան սուլթան Մուստաֆան Լօրէօլը Գրիւ-
տիննէ նէօզնան Մեռիլին թադիօ համօր Միւֆիլիցնէ հրամանը
թուխտ մը կտանըլէր հապօ կուլթադլէր, էաս հրամանը թուխտը
շէյիսիւլամէն ուզուրիւպիլը էր զինձօ գրվիլէօլ:

Ղաթրոն կիսի լազիլը հապնէօզ, Ստատանի թօքք, զլօիլը շաւ-

կէօյ, Աստուծոյ սպարանքին գրասնր գրիլիօյ, մօս քնարանր
տէր՝ հէլլիօր իրէց: Անհատօս գարչիլի ժողովարդքն մէջէն Քր-
չն անհատօս խշիցքին աղէն, Քրչօն անհատօսը սասկիլօն
համօր, էօնիսր փիս էէշը հիսգը պիօ չէ քնդաւնր իտ ալ՝ շէրք է-
նիս, շէրք էնիս, շէրք էնիս, մունտօս փիս հիւար մէր մըջէն
վրըճրվիլիօն համօր, Քաղաքէն գօրս հանէք խանտսկմը փիլէք
էօնիսր մէջը բձկէք, վիլէնէ հիւղէօլ ծածկէք, ստէօք կէիիստէք
թըրբտէք ս իղէք, հըրվիսր իրէց:

Միփրիս Լֆիկաի

Ահա, սիրելիս, միփթիի սուած հրամանադիրը մեր ննջեցեալ-
ներու թագման համար, միայն ասկից մի քանի տարի առաջ կե-
սարիւյ հայերը Պեղծեան Յարութիւն Ամիրայի միջոցաւ կարողացան
արգիլել սալու 1808 ին Սուլթան Մահմուտ Բ. ի հրամանաւ այլ
գարչիլի հրամանադիրը: 1695 էն սիսեալ մինչև 1808 տներ է
այլ անարդական գրութիւնը, սակայն զեռ մինչև այսօր թուրքեր
կը շարունակին ծաղրել, անարգել, հայհոյել և քարկոծել մեր
ննջեցեալներն և մեռելաբազ քահանաները, քսելով, «կեալիսր կե-
պէրիկի կիալիօր, հա (անհատաաի սատկամ կերթալ): Ճիւրմակ մօ-
րուքաւորներ փոխունակ յանդիմաններու զանսնք, հա հա կը ծիծա-
ղին՝: Էղիս աղան վերոյիշեալ հրամանադրի օրինակը իւր հեա
Ձէլթուն կը բերէ և հրապարակ եղած տեղեր կը կարգայ, ուր
Ձէլթունի բարբառով թարգմանուելով շատերը անգիր կը սորվին,
ուրիկց վերցուած է վերոյիշեալ պատճէնը: Անտաւամենայնիս գառ-
նանք մեր բուն պատմութեան: Իրաւ սր, կիսարացին կազաաէ Ձէլ-
թունցիները, սրանք ձանապարհ հեղինն և «Էլզէկ» զիւղի մօս կը

1. Ձէլթունցիք ընդհակառակն թուրք մեռեալներու հանդէպ ալ բարգաւաճարու-
թեամբ կը վարուին և շատ անգամ գրացիներուն կերթման միտթարելու, քսելով,
Աւրա՛ րանէլմ էլլէսին ճաննա (Աստուած սղորթ հոգիէն) և այլն:

պատահին, խումբ մը կեանքացի թուրքերու, մտատարապէս թուով
 50 մարդ՝ գլուխնին կանաչ ու ձերմակ փաթածաթուած: Զէյթուն-
 ցիները փարա դանակները (անասկ մը գաշոյն) պատեանէն կը հանեն
 շողշոյան կերպով, և խորածի թուղթեր անոնց յանձնելով կըսեն,
 տէր սա թուղթերը, մենք ստիկայ կարգալ չենք գիտեր. թուր-
 քերէն գրասձէ: Թուրքերը կը պատասխանեն. « Չորպաններ, մենք
 միւսիւրան ենք, այս թուղթերը մեզի չեն վերաբերիր, ասոնց «խա-
 բած քեզուր» կըսեն: Զէյթունցիք կը պատասխանեն. «մեզի ալ
 չի վերաբերիր, մենք Զէյթունցիքս գալազը թուղթու (փոշոս ա-
 կանջ) կեալուր չ'ենք»: Վերջապէս հայերը որ ամէն մէկ թուղթը դնա-
 ձէին 60 ական դահեկանի, վաթսուսնին վրայ վաթսուսն ալ շուք
 աւելացնելով՝ 120 ական դրչ: պահանջեցին խալաֆներէն, պա-
 տուիրելով որ այդ թուղթերը ասոնին իրենց կառավարութեան
 յանձնեն և փոխարէնը ևս վերցնեն իրենց տուած գրամները: Իրենց
 իրենց գրացեցինք, պիտի վճարեն Չեզի այդ ստակը՝ բոլին Զէյ-
 թունցիք: Խորաները կըսեն՝ լաւ, բայց մենք ստակ չ'ունինք, ու-
 նեցած ստակնիս տալով «Լզրէկ» գիւղէն գարի դնեցինք, ահա
 մեր բեաները դարի են՝ եկէք նայեցէք, ստակ անինք նէ ամէր, հե-
 լալ ըլլայ ձեզի պէս կործնեմքուն: Զէյթունցիք տեսան որ իրաւ
 ստակ չկայ, մի ջորի գտանցին կորուսանի մէջէն գարիի բեալով,
 և իրենց հետ բերին Զէյթուն, ջորին աճուրդի հանեցին, 20
 սակի ծախուեցաւ, որը 15 մարդ իրենց մէջ բաժնեցին խորածի
 տուած ստակի փոխարէն: Այն թուրքերը իրաւ դնացեր են կեսա-
 բիւս և այդ խորածի թուղթերը ներկայացնելով կառավարութեան
 ասեր են իրենց փաստը: Այնուհետև որքան որ Զէյթունի հայերը
